



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

199.092

1A-45



ԹԱՐԳՄԱՆԱԾ ԵՄ ՀԵՏԵՒԵԱԼ ՊԻԷՍՆԵՐԸ

Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն Ի Ց՝

1. Էմիլ Օֆիէ. «Երկու գերդաստան» կամ «Փուրջամբօանք» (Les Fourchambeault), կատակերգութիւն 5 արարուածով:
2. Էմիլ Օֆիէ և Փիլի Սանդօ. «Պարոն Պուառիէի փեսան» (Le Gendre de M. Poirier), կատակերգ. 4 արարուածով:
3. Վիկտորիէն Սարդու. «Ոգեհարցութիւն» (Spiritisme), թատերգ. 3 արարուած է: (Տպուած է):

Բ Ո Ւ Ս Ե Ր Է Ն Ի Ց՝

4. Ե. Վլադիմիրովա. «Իրաւազուրկ կինը» (Безправная), ողբերգութիւն 5 արար.:
5. Ե. Նազարովա. «Օտարը» (Чужая), թատերգութիւն 3 արարուածով:
6. Ի. Բուլացկի. «Կինը եթէ ուզենայ, իրա ասածը կ'անէ», վոք. 1 արարուածով:
7. ? «Ձուխտ ոտքով թակարդի մէջ», կատակերգ. 3 արարուածով:
8. Հ. Զուղերման. «Կեցցէ կեանքը», դրամա 3 արարուածով:
9. Շնիցկեր. «Հէքեաթ», կատակերգ. 3 արարուածով:
10. Փօրժ դը-Մորէ. «Տրիլըլ», դրամա 4 արարուածով: (Տպուած է):

Վերոյիշեալները ձեռք բերել փափագողները պէտք է գիմեն ինձ՝

Тифлисъ, Орбелиановская ул. д. № 24.

Левону Вардани Меликъ-Адамянь

Հարցիկ Կ. Պր. Քոբրե մեջ առնել

ԼԵՒՈՆ ՄԵԼԻԿ-ՍԿՍՄԵԱՆՑ

891 99 032

5-45

300

1492-06



Ի Ս Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ը

ԲԱՐՈՅԱՊԷՍ ԸՆԿԱԾ

ԵՒ

ԱՄԵՆՔԻՑ ԱՐՅԱՄԱՐՅՈՒԱԾԻՆ

1003
12162

Թ Ի Յ Լ Ի Չ

Электротпечатня Н. Аганьянцъ, Полицейская ул. № 7.

ԵՆԿՏՐԱՅԱՈՒՄ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑԵՅՍԿԻ 7.

1907

(97)

կտրելու և արհամարհանքով դէն շարտելու այն ժողովուրդ պալարներին մինը, որի անունն է Քամալեանց Սարգիս:

Ո՛վ իմանայ, գուցէ գրքոյկս պատճառ ու զբեկապատճառ դառնայ հետզհետէ նաև միև՝ ծածուկ մնացած զգուելի պալարները ևս կտրելու և դէն շարտելու:

Գիտեմ, նոյնիսկ համոզուած եմ, որ իմ այս անսովոր լեզու սրտներովը չի լինելու՝ ոչ մաքուր էտիկայի անունով ճամարտակողների, ոչ սրբազան Գրականութեան անունով պոռոտախօսների, ոչ ճշմարիտ Գեղարուեստի կեղծ երկրպագուի դիմակ ծածկողների, ի-մի բան՝ բոլոր զբաղան խուլիզանների, որոնք տարին տասներկու ամիս ի-ցոյցս մարդկանց մեղքները քամում են, բայց ծածուկ ուղտեր կլանում: Դրանք մէջներից կէս լինելու աստիճանին հասած պոռու՛մ են՝ ճշմարտութիւնը, մերկապարանոց ճշմարտութիւնը ամեն բանից բարձրն է և պէտք է լինի: Բայց այդ զբաղան խուլիզանները այդպէս ասում են ճառախօսելիս, փքուն ոճով գրած նամակների ու յօդուածների մէջ կամ ողորմելի բրօշուրներում. սակայն հէնց-որ լսածնին կամ կարդացածնին, թէկուզ մերկապարանոց զուտ ճշմարտութիւն էլ լինի, իրանց ձեռնտու չէ, իսկոյն գորտային կռանչոցներով հաւար են գցում, թէ ճշմարտութիւնը բացայայտ ասելը էտիկայի, Գեղարուեստի դէմ է:

Խեղճ էտիկայ, մանաւանդ հէք Գեղարուեստ, արդեօք ձեր անունով ինչեր ասէք որ չեն անում ցած ու ստոր գրչակները՝ նման հասարակութեան տականք կազմող այն պաղրոմ-շչիկ-խուլիզանների, որոնք ամեն տեսակ զազրելի խժգժութիւններ են կատարում անմեղ հասարակութիւնների, դրժբաղդ ժողովուրդների գլխին... յանուն հայրենիքի փրկութեան, յանուն սուրբ թէ անսուրբ բաների պահպանման ր այն՝ օրէնքի հովանու տակ:

Առաջինները—ցած ու ստոր գրչակները՝ էտիկայ, Գեղարուեստ, Տպագրական խօսքի պատի, ճշմարտութեան զինուոր, Գրական բարբեր, Այլելլութիւն իրանց վահան բռնած՝ չեն ամաչում հրապարակով—տպագրական խօսքի միջոցով անաղնուբար ստել, խաբել, որպէսզի որքէ կերպով էլ է թէ իրանց կատարած ցոփութիւնները իզակորուստ անեն—հետքը կորցնեն և թէ նորերը անարգել շարունակել կարո-

ղանան: Իսկ երկրորդները—սոսկ խուլիզանները՝ գտնուելով օրէնքի հովանու տակ, առանց քաշուելու. աւերակ ու արիւն են սփռում իրանց շուրջը:

Եթէ ինձ հարցնէին՝ դրանցից որոնք են լաւ, առանց վարանելու կ'ասէի՝ երկրորդները. վասնզի դրանք—սոսկ խուլիզանները մարմինն են սպանում և նիւթականապէս ֆլառում, մինչդեռ զբաղան-խուլիզանները—ցած ու ստոր գրչակները մարդկութեան հոգին են արատաւորում՝ մատաղ սերնդի մէջ ապակնութիւն—անբարոյականութիւն տարածելով:

Ինքնասիրութեանս վիրաւորանքը մի կերպ էլի կարող էի տանել, բայց հանդուրժէի, որ ճշմարտութեան զգացմունքը վիրաւորանք կրի, այն էլ մի անբարոյական անարգ արարածից—ահա այդ անկարող էի անել: Եւ իսկապէս այդ է զրդապատճառը, որ յաղթահարելով արհամարհանքիս այն խորին զգացմունքին, որ իրաւամբ ունիմ դէպի՝ հայ-դպրոցին. ու հայ-ընտանիքին արատ բերող Քամալեանց Ս.-ը վճռեցի պատասխանել. բայց ոչ թէ դատարկ խօսքերով, ոչ թէ փքուն ու ճրճոտան ֆրազներով,—որոնք անխելքներին միայն կարող են դուր գալ և նրանց հորթային ուրախութիւն պատճառել, որոնցով միայն անսօրմալ հակումով տանջուողները կարող են հրճուել՝ որպէս իրանց ... սրտին մխիթարանք, —այլ՝ անհերքելի փաստերով ու փաստաթղթերով, որպէսզի հասարակութեանն ազատեմ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանցի պէս ցած ու ստոր գրչակի զգուելի խժրժանքներից ու շանատակութիւններից:

Լ.Ն.ՈՆ Մ.-Ա.Դ.

18-ն Օգոստոսի 1907 թ.

Շուրափէր:

ԻՄ ՊԱՏԱՍԻԱՆԸ

ԲԱՐՈՅԱՊԷՍ ԸՆԿԱԾ ԵՒ ԱՄԵՆՔԻՑ ԱՐՅԱՄԱՐՅՈՒԱԾԻՆ

Մի մարդ որքան պէտք է բարոյապէս սնանկ լինի, որ երբ ինքն իր ցուցակ ծառայութեանն է տալիս՝ իրան կոչելով «25 տարուայ» զրահան մարդ, «հին» գործիչ ու «գրող», ինքն իրան ուսուցիչ սրբազան անունով է յորջորջում և միևնոյն ժամանակ չի հասկանում, խելքն այնքան չի կտրում, որ եթէ իր դէմ զրածները հերքելու համար փաստեր չունի, այդ դէպքում լռութիւնը ոսկի է:

Եւ ուրեմն սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ը որքան պէտք է բարոյապէս փչացած ու ապականուած լինի, ինչքան թոյլ և ողորմելի պէտք է լինի դրա մտածողութիւնը, որ չհասկանայ, թէ տպագրելու համար չգրած, հատարակական ո՛րեւէ նշանակութիւն չունեցող մասնաւոր նամակները՝ առանց ուղարկողի թոյլտուութեան չի կարելի հրատարակել, մանաւանդ-որ այդ նամակները, որոնց անխիղճ անդա-

մահատուժիւններէ է ենթարկել, որեւէ մօտաւոր կամ
գոնէ հեռաւոր կապ, թէկուզ ամենաանշան առնչու-
թիւն իսկ չունին չարուցած խնդրի հետ և չէին էլ
կարող ունենալ:

Հարկաւ խեղդուողը՝ ազատուելու յուսով, ինչ
բանի ասէք ձեռք է մեկնում, թէկուզ այդ լինէր մի
ծեղ. բայց եթէ այդ սնանկացած ուղեղով ողոր-
մելի գրչակը իր միակ փրկութիւնը իրան գրածս նա-
մակները լոյս հանելու մէջ էր գտնում, դէ գոնէ
հրատարակէր նոյնութեամբ, առանց աղաւաղելու,
առանց քմահաճ կապեր մտցնելու, և ոչ թէ կախման
կէտերի (...) օգնութեամբ ամեն տեսակ խուլիզանու-
թիւն բանացնէր նամակներէս վրայ:

Յենուելով թէ շատերի համար նախանձելի յիշո-
ղութեանս և թէ գրական խուլիզանի կողմից պապ-
րոմի ենթարկուած և ապա լոյս տեսած նամակներէս
վրայ, աշխատեմ ըստ կարելոյն համառօտակի պատմել
սխալմամբ մարդ կոչուածի հետ ծանօթանալուցս մին-
չև ներկայ տողերէս շարժառիթ՝ «Ինչո՞ւ էր հերստեղ»
և այն բրօշերը, որպէսզի ըստոյական ու ըստմիտ
ընթերցողները պարզ հասկանան, թէ ինչ հրէշաւոր
բան է հիւանդագին մեծամտութիւնն ու զգուելի պար-
ծենկոտութիւնը և համոզուեն, թէ այն խարդախու-
թիւններն ու կեղծիքները, որ միշտ կատարել է ու
շարունակում է կատարել, այն պախարակելի անշնոր-
հակալութիւնն ու երախտամոռութիւնը, որ միշտ ցոյց
է տուել ու այժմ էլ տալիս է այդ ապականուած ու
զազիր վարքի տէր պատուազուրկ վարժապետը (աւանդ
փառացս անցաւորի), գուցէ չատուկ լինին միմիայն
Սանդարամեաի ծնունդներին, բայց ոչ-երբէք մար-
դածին արարածին:

Մօտ երեք տարեկան հասակումս ծնողներս *)
ծննդավայրիցս—Ալեքսանդրապօլից տեղափոխուեցին
Շուշավէր, ուր կարճ միջոցից յետոյ որբացայ հօրիցս:
Այդպիսով մնալով ծաղիկ հասակում այրիացած մօրս
մինուճարը, հասկանալի է թէ ինչ քնքուշ խնամքնե-
րով պէտք է շրջապատէր ինձ հէք մայրս, ինչպէս
պիտի դողդողար վրաս, որպէսզի իր սիրած, իսկ Աբա-
րանի կողմերում Աստուծոյ տեղ ընդունուած քաւոր-
աղայ Վարդանի զաւակը ուրիշների նման չմեծանայ,
այլ լինի հօր նման միշտ նամուսով, կեանքի մէջ եր-
բէք սուտ չխօսի: «Եթէ գոնէ մէկ անգամ սուտ խօ-
սես, կամ վատ-վատ բաներ անես, Լեւոն-Չան, լուս-
ջան, կեանքս ու արևս, իմ սրտանց սիրած Վարդա-
նիս զաւակը, էն է՝ իմացած եղիր, որ ես կը մեզ-
նեմ. էլ Փոփոն **): չես ունենալ, այն-ժամանակ իսկ-
որ բոլորովին որբ ու անտէր կը մնաս»,—յաճախ շը-
շընջում էր ականջիս հէք մայրս: Այդ ու այդ տեսակ
ներշնչումներ անելիս թէև իրան պահում էր, երբէք
լաց չէր լինում, բայց յուզմունքից դողացող ձայնը
այնպէս էր ազդում վրաս, որ հեկեկանքով փարվում
էի վզին և կամաց, շատ կամաց ձայնով ասում.—
«Այնպէս կը լինիմ, ինչպէս որ դու ես ուզում Փո-
փոն-Չան»—ու երկար միջոց մնում փարուած, եր-
բեմն էլ հէնց այդ դրութեամբ քուն էի մտնում...
Ահ, երջանկագոյն, քաղցր ու անպատում անոյշ ժա-
մանակ... եթէ վերադառնայիր...

Մի օր, — երեկուայ պէս յիշում եմ բոլոր ման-
րամասնութիւնները, — վազելով շնչասպառ տուն ըն-
կայ ու զարմացած դիմեցի մօրս.

*) Հայրս Շուշավէրցի է, մայրս Ալեքսանդրապօլցի:

**): Փեփրոնիէ անուան կրճատն է, այլև փաղաքշականը:

— Փոփոն, Չրբանանց Սաքօն Իրիցանց Մխիթարին ասաց այդ ի՞նչ կը նշա...

Խօսքս դեռ չաւարտած, մայրս գունատուեց, ծընկներն սկսեցին դողդողալ ու վայր ընկաւ անշնչացած: Խելակորուս վրայ վագեցի:

— Փոփոնս, — ճշացի ու ինքս էլ վայր ընկայ մօտը: Տանըցիք ջուր ածելով վրաներս երբ ուշքի բերին, մեծ նանը և տատս յանդիմանօրէն նկատեցին.

— Ի՞նչ բանի ես, Փեփրոն. գոնէ երեխիդ խղճա.

— Ո՞ր երեխին... սրան. բայց ես այնպէս վատ վատ խօսքեր ասող երեխայ չունիմ:

— Ախր ես չեմ ասում, — փղծկալով վրայ բերի, — այդ Սաքօն ասաց Մխիթարին:

— Այդ միկնոյն է. քո բերանից էլ դուրս եկան այն զգուկի խօսքերը, — ասաց մայրս և ինձ այնպէս թուաց, թէ նորից ուշաթափվում է, ուստի սրտապատառ ճշացի.

— Փոփոնս... մի մեռնիլ. էլ այդպէս խօսքեր չեմ ասիլ:

Մայրս շատ լաւ զգալով հոգեկան դժուրթիւնս, քնքշութեամբ մօտ բաշեց ինձ, զրկեց ու սկսեց հեկեկալով համբուրել: Մայրական այդ անուշ փայփայանքի տակ քունս տարել էր. երբ զարթեցի, շորահան տեղիս մէջն էի: Մօտ մի ամբողջ շաբաթ հիւանդ պառկած մնացի:

Ի պատիւ իմ պէտք է ասեմ, որ այդ ինձ սարսափ ազդող զէպքից յետոյ այլևս երբէք, երբէք այդ պիտի յուզուամ չեմ պատճառել անոյջ Փոփոնիս՝ ո՞չ երեխայ և ո՞չ էլ հասունացած ժամանակս:

Մինչև 12—13 տարեկան հասակս քուն մտնելիս եթէ չէի ծծում մօրս ծիծը՝ թէպէտ անկաթ, քունս չէր տանում: Երբ Թիֆլիզ եկայ մօրական տատիս մօտ,

սկսեցի նրա ծիծը ծծել, որ քունս տանի՝ երևակայելով թէ Փոփոնիս քաղցր ծիծն է, որ միշտ աչքիս առաջն էր գիշերները, երբ արդէն ներսիսեան Դաւրանոցում գիշերօթիկ էի և երկրորդ դասարանի աշակերտ:

Հիմա թող դատի ընթերցողը, թէ կարող էի ներսիսեան Դաւրանոցում ուշունցնատու (?) լինել, քանի որ մօրս քաղցր ծծի հետ միտքս էր միշտ նաև նրա խօսքերը ինձ Թիֆլիզ ճամբելիս: Առանց մի կաթիլ արտասուքի, սակաջն դողդողալով զրկեց և վրաս ազդող ձայնով ասաց.

— Լեռնս, քեզ շատ սիրելուցս է որ զրկվում եմ քո անոյջ ներկայութիւնից և ուղարկում Թիֆլիզ, ուր դու պէտք է աշխատես լաւ մարդ դառնալ, որ միշտ, միշտ նամուսով մնաս: Եթէ նամուսով չմնաս և քո մասին իմանամ, որ դու սուտ ես խօսում, վատ խօսքեր ասում ու վատ վատ բաներ անում, իմացած եղիր, որ ապրել չեմ կարող և երբ գաս Շուլավէր, էլ քեզ սիրող Փոփոնիդ չես տեսնիլ*)... Մի լար, կեանքդ սիրեմ. ճամբայ գնացողն ու ճամբու դնողը լաց չպէտք է լինին, լաւ չէ: Ես միշտ աղօթելու եմ քեզ համար ալստեղ, հայրդ—Վարդանս էլ վերևից, որ առողջ լինիս, աշխատասէր ու նամուսով, — և էլի շատ բան ասաց հէք մայրս, համբուրեց և օգնեց որ ձի նստեմ... Ա՛խ, մնացած ամբողջ կեանքս կը տայի,

*) Եւ մօրս այդ ներշնչումն է պատճառը, որ այն-ժամանակուանից մինչև այսօր երբ պառկում եմ քնելու՝ ինքն էլ յուզուած եմ կամ յոգնած լինիմ, ինքն էլ քունս սաստիկ տանելիս լինի, մինչև խղճիս պահանջը կը կատարեմ— մտքումս օրուայ մէջ արածներս մանրամասն հաշիւը չտամ թէ ինչ ու ինչ եմ արել, աչքս չի կաշիլ:

եթէ նորից գգայի մայրական համբոյրի այդ քաղցրութիւնը:

Մամբային արձակուրդներին երբ Շուլավէր էի գնում, մայրս այնքան չէր ուրախանում ինձ տեսնելու համար, որքան իրան երջանիկ էր զգում, որ իր աշխատանքը ի-զուր չի կորել՝ իր խրատները չեմ մոռացել, որ շատ բանով հօրս նման եմ և հետզհետէ աւելի ու աւելի եմ նրան նմանում:

—Ողջ Աբարանի կողմերում հօրդ արևոյն էին երգվում. այնպէս պիտի անես, Լևոնս, որ թէ շուլավերցիք և թէ ուրիշ տեղերի մարդիկ բո ազիզ արևով երգուեն, կեանքդ ու արևդ սիրեմ ես, և մայրերը ինձ երնէկ տան, որ քեզ պէս նամուսով տղայ ունիմ:

Եւ ես՝ առանց պարծենալու միտք ունենալու, պէտք է ասեմ, որ ներս. Դպրանոցի մի-քանի հարիւր աշակերտները ոչ մի կերպ ինձ չէին կանչում, բայց եթէ՝ Լևոն-ջան կամ սիրելի Լևոն: Թէ Թիֆլիզում, թէ ուրիշ տեղեր, ուր եղել եմ, և թէ Շուլավէր ինձ մօտ ճանաչողներից շատերն էին իմ արևով երգվում: Հիմա ևս յաճախ եմ լսում այդ երգումը. սակայն ափսոս որ ինձ հասած գժբաղդութիւնը և թէ անյաջող հանգամանքներն արգելք եղան ինձ՝ անոյշ Փոփոնիս տենչանքը լի ու լի իրականացնելու:

Բայց ես՝ որ սիրելի էի Դպրանոցի համարեա բոլոր ուսուցիչներին, վերակացուների և աշակերտների համար, շատ էլ այդպէս չէի տեսչի համար և մանաւանդ նրա արբանեակ, կամ աւելի ձիշտը՝ նրան միշտ խորհրդատու վերակացուին. զրանց համար ես ըմբոստ էի, «բիւրդ եկած», բիւրդ գնալու էլ դատապարտուած»: Ինչո՞ւ արդեօք. ծնյլ էի, չար կամ անբարոյակամ էի. ի-հարկէ ոչ, այլ որովհետև մօրս խրատները միտքս պահելով՝ այդ միայն մարդանը-

մաններին և իրանց արբանեակ, լրտեսի ու այլ զլզուելի ղեր կատարող աշակերտներին ստիպել էի պատշաճ հեռաւորութեան վրայ մնալ ինձանից:

Ամեն մի դասատան մէջ երկ-երկու լրտես և թէ զլզուելի ղեր կատարող աշակերտներ էին եղել ինձանից առաջ, կային իմ ժամանակն էլ: «Քիւրդ» յորջորջումն ինձ տալը նրա համար էր իսկապէս, որ յաճախ խումբ էի կազմում և զրդում յարձակուել լրտես ու զլզուելի ղեր կատարող աշակերտների վրայ և շան քեօթակ տալ. բայց այդ բանը երբէք մեզ չէր յաջողվում, որ ինձանից պակաս չէր զարմացնում նաև ընկեր-դաւաղիրներիցս շատերին, թէ ինչ է պատճառը, որ ամեն բան լաւ է գնում և միայն վերջին բոպէին ֆիսալիօ—անյաջողութիւն կրում մեր մտադրութիւնը: Եւ միայն ուշ, մի-քանի տարուց յետոյ, երբ ես այլևս Դպրանոցում չէի սպրում, իմացայ, որ վերոյիշեալ՝ դասարանական երկ-երկու լրտես ու զլզուելի ղեր կատարող սոգուններն էլ իրանց կողմից էին լրտեսներ պահելիս եղել մեր մէջ, որոնք երեսանց եռանդուն մասնակցութիւն էին ցոյց տալիս մեր դաւաղրութեան մէջ, իսկ տակէտակ—ծածուկ մեր գործելու գաղտնիքը բաց անում նրանց, որոնց շան քեօթակ էինք ուզում ուտացնել: Մտխուս:

Թող այս անախորժ մերկացումներին համար ինձ չմեղադրեն ոչ տեսուչը, ոչ նրա՝ ըստ երևոյթին արբանեակ, բայց իրօք խորհրդատու վերակացուն և ոչ էլ իրանց արբանեակ զլզուելի սոգունները, այլ մեղադրեն իրանց, որ իրանց թոյլ են տալիս որեւէ կերպով խօսքով թէ գործով, սխալմամբ մարդ կոչուածի վերաբերմամբ մամուլի մէջ արածս մերկացումների ոյժը թուլացնելու, որպէսզի այդ կերպ պաշտպանած լինին թէ իրանց նմանակ Քամալեանց Սարգսին և

թէ դրա հետ էլ իրանց: Չէ՛-որ ասած է՝ գո՛ղ, սիրտը դող: Ուռի նման դողում են, թէ մի գուցէ մէկ օր էլ այդ մերկացնող սարսափելի ուղտը իրանց դռանն է չոքելու, և Աստուծով կը չոքի, եթէ շարունակեն ո՛րեւէ կերպով պաշտպան ու շատագով հանդիսանալ հասարակութեան այս ու այն անդամի և մանաւանդ սեւազրուխների մօտ Քամալեանց Ս.-ի նման բարոյապէս ընկած պատուազուրկ ուսուցչին: Եթէ խելք ունին՝ ձեռք վերցնեն իրանց այդ անփառունակ դերից.— «զի ոչինչ է ի ծածուկ որ ոչ յայտնեսցի»: մատաղ սերնդին իրանց հասցրած վատութիւնը և թէ առած փաստը թող բաւ համարեն: էլ՝ հերիք է:

Մայրս մի բոպէով իսկ չէր ուզում որ իր աչքից հեռու մնամ գիւղում եղածս միջոցին. թոյլ չէր աւելիս, որ տանից շատ հեռանամ. երբէք թոյլ չտուաւ ինձ գիւղամիջից դուրս գնալու: Մօտ 8—10 տարի Շուլավէր ապրեցի, սակայն միայն մի անգամ՝ գիւղի այգիներին կպած մեր տափը վարելիս գութանի հացը տարայ ձիով, միայն մի անգամ՝ հօրեղբայրներէս հետ հնձի եմ գնացել, որ տեսնեմ թէ մանգաղն ու մատնոցը միասին բանացնելով ինչպէս են հնձում արտը, և միայն մի անգամ էլ ցաք եմ գնացել, որպէսզի գոված սերմանացան Աւետիք հօրեղբօրս ցաքի երզը լսէի, որ նոյնպէս շատ էին գովում: Իսկ չիւթով— արօրով վար երբէք չտեսայ այդ մօտ տասը տարուան ընթացքում, այլ շատ ուշ, երբ արդէն միքանի տարի էր՝ Թիֆլիզ ուսանում էի: Եւ այդպէս գիւղական շատ ու շատ աշխատանքներ տեսնելուց դուրկ մնացի...:

Թողէք այստեղ կանգ առնեմ, ընթերցող, երկիւղ եմ կրում, որ խուլիզանի ներքին աշխարհ ունեցող մարդիկ անխզօրէն իրանց թոյլ կը տան ծուռը մեկ-

նութիւն տալ ինքնակենսազրութեանս այդ մի-փոքր մասը ահամայ առաջ բերելուս համար: Այդ արի միայն և միմիայն ան Նպատակով, որ հետեւալ ասածներս աւելի հասկանալի լինին և մեզ զբաղեցնող հարցն էլ աւելի պարզ ու մեկին դուրս գայ:

Մօրս չափազանց, երբեմն էլ՝ ներքի ինձ, անոյշ Փոփոնս, նոյնիսկ աւելորդ, իսկ կեանքի տեսակէտից ուղղակի փասակար. զգուշութիւններն աչքի առաջ ունենալով, ընթերցողը չի զարմանալ, եթէ ասեմ որ մինչև 1875 թ., երբ ես արդէն Ներսիսեան Դպր. Դ-րդ դասատանն էի, ինձ համար գոյութիւն չի ունեցել Քամալեանց Սարգիս անունով տղայ:

Յիշեալ թուականին երբ ուրիշների հետ նա էլ եկաւ Ա.-ին դասատուն մտաւ, շատ բնական էր՝ որ ես՝ իբրև բարձր դասատան արդէն հասուն աշակերտ, պէտք է հետաքրքրուէի իմ համագիւղացիներով: Դրանց միջից ինձ դիւր եկաւ յայտնի քաջ Բաղունց Սարգսի բարի աչքերով, մամուլի պէս սև, միշտ ժրպտուն Սանդօ—Աղէքսանդր Զանգինեանցը: Սակայն դա էլ, հակառակի պէս ոչ դասեր սովորելու գլուխ ունէր և ոչ էլ մանաւանդ օժանդակ գրքեր կարդալու:

Իսկ դրա հակառակ շատ աշխատասէր ու ընթերցասէր էր՝ արտաքինով ուղղակի չօռ-գրող Քամալեանց Ս.-ը *): բայց չնայելով իր աննպաստ արտաքինին (այն ժամանակ ի՞նչպէս կարող էի իմանայ, թէ նրա ներքինը—հոգին աւելի վատթար է իր կեղևից), ես իմ ըարեհա՛մ ուշադրութիւնս դրա վրայ դարձրի և որքան կարող էի աշխատեցի, որ իր ունեցած ընթեր-

*) Ո՛վ տեսել է դրան փոքր ժամանակը և կամ այդ ժամանակուայ լուսանկարը, նա կը հասկանայ զբաժնուս:

ցասիրութիւնը ի-չարը չգործ դնէր և ոչ էլ զուր ժամավաճառ լինէր այնպիսի գրքերի վրայ, որոնցից սրեւէ իրական օգուտ չէր ստանալու: Յատկապէս այդ նպատակի համար ես սկսեցի կարդացածս գրքերը նորից աչքի անցնել. ստորին դասատանցուն անհասկանալի կտորների և թէ նրա համար բոլորովին աւելորդ վիճակագրութիւններ վրայ գծում էի և այդպէս տալիս իրան՝ պատուիրելով որ գծածները կամ նշանակած տեղերը չկարդայ: Բայց տեսէք թէ անագին կորցրածս ժամանակի համար այդ՝ հէնց սկզբից երախտամոռն ու անշնորհակալը ինչ էր ասել Չանգինեանին.

— Ինքը կարդացել, զարգացել է, այժմ չի ուզում, որ ես ևս կարդամ ու զարգանամ, անձ զրա համար էլ ջնջում է:

Այդպիսի տգեղ անշնորհակալութիւնը վերագրելով ոչ ներքին աշխարհի փչացած լինելուն, այլ անհասկացողութեանը, ցանկացալ բազմաթեմբ բացատրել, թէ ինչո՞ւ եմ այդպէս անում, որպէսզի արմատախիլ անեմ նրա միջից այդ անշնորհակալութեան զգուելի սաղմը, որ կարող էր վատ հետեանքներ ունենալ: Անմիջապէս կանչեցի և բացատրութիւն պահանջեցի: Անիծածը թէ և ուրացաւ, որ ինքը այդպէս բան չի ասել, բայց հողու հայելիները— աչքերը պարզ ասում էին, որ սուտ է ասում: Ես էլ, պէտք է ասեմ, շուտ յուսահատուողներից չեմ, ինչպէ՞ս որ ցանկացել է ցոյց տալ գրական-խուլիզանը իր բրօշիւրում: Միբանի օրից յետոյ նոր գիրք տալիս էլի հարցրի: Երգուեց ծնողների արևով, Աստուծոյ անունով, որ ինքը իբրև-թէ այդպէս բան չի ասել, այլ Սանդոն նախանձից է իրան բամբասել: Սակայն որքան եռանդով էր արդարանում, այնքան էլ պարզ երևում էր որ լրբա-

2916



բար ստում է՝ կամենալով ընկերը պատիւը վայելցնել, որ այլևս նրա ազածներին չհաւանար: Այժմ ճիշտ նոյն կերպով է վարվում, մեր արդէն համբալ աշակերտ չէ, այլ 50 տարուն մօտեցած 25 տարուայ ոչ-բարով գրող:

Բայց ես ձեռք չէի վերցնում, այլ ամեն առիթի աշխատում էի, որ խոստովանուի. սակայն միշտ էլ ուրանում էր անիծածը:

Դրանից յետոյ արդէն անցել էին շատ տարիներ, երբ մի օր Շուլավէրում յարմար առիթը կրկնուելով՝ զայրացած անամօթի երեսովը տուի իր անշնորհակալ և երախտամոռ լինելը. նեղն ընկնելով՝ նոր միայն խոստովանուեց.

— Ի՞նչ անենք որ ասել էի. փոքր էի, չէի հասկանում. էլ ինչո՞ւ ես այսքան տարի միտքդ պահել և այժմ երեսովս տալիս:

Բայց արդէն շատ ուշ էր այդ խոստովանութիւնը. չորանալու ծառը ծուռը կերպով էր բուն բռնել, այլևս նրան ուղղեշ դարձնելն անկարելի էր:

Թէ կատարուած՝ անցած-գնացած իրողութիւնները և թէ այժմ կատարուողները պարզ ցոյց են տալիս, որ Քամալեանց Սարգիս ասուածի ներքին աշխարհը հէնց ի-ծնէ ապականուած լինելով՝ չէր կարող ուղիղ շաւղով ընթանալ: Բայց ես լինելով նաև վերին աստիճանի, նոյնիսկ շատ անհամ յամառ բնաւորութեան տէր, անշնորհակալ անպիտանի ուշացած խոստովանութիւնից յետոյ էլ յոյսս չկտրեցի՝ զբան օրինաւոր և արդի մարդ դարձնելու, որպէսզի երբ քահանայ ձեռնադրուէր մեր գիւղի վրայ, այժմեան չքահանայի նման ժանտախտ չգառնար մեր դժբաղդ գիւղացոց համար: Բայց վերջիվերջոյ՝ սրտի ցաւով համոզուեցի, այլև զգուանքով ականատես եղայ, ար-

ժամանաատ աղբիւրներից բղխած տեղեկութիւններից վերջնականապէս զգացի սխալս— որ ոյժիցս շատ վեր գործ եմ ստանձնած եղել, որ արդէն ապականուած հոգին՝ եթէ նաև երկար ժամանակ վատ ծանապարհով է ընթացել, այլևս անկարելի է որ երբեքից ուղղուի անբան, որ անագնիւր ագնիւ դառնայ, ստախօսը՝ ճշմարտախօս, անբարոյականը՝ բարոյական:

Եւ իրաւ, անձ քառորդ դար է, որ այդ սխալմամբ մարդ կոչուածը ինչ տեսակ ցածութիւն, ստորութիւն ասէք արել է ու անուժ է՝ թէ անկեղծ ընկերներին, թէ բարեկամներին, թէ անմեղ աշակերտներին և թէ միամիտ հասարակութեան: Իբրև ընկեր՝ կեղծ է, քծնող, խարդախ, իբրև բարեկամ՝ շահախնդիր, իբրև ուսուցիչ՝ իբ պոռնկութեան զգուելի արհեստն է պատուասել աշակերտներից շառերին, իբրև հասարակական գործիչ՝ միշտ ստերով ու զրպարտութիւններով է լքցրել այն լրագրների էջերը, որոնց խմբագիրները միամտաբար թէ անմտաբար հիւրընկալել են նրա յօդուածները. անձ հիմա էլ իրան նուիրել է գրական գողութեան եւ զգուելի պասկվիլներ յերկրելուն:

Իսկ թէ վերի բոլոր ասածներս կէտ առ կէտ ճիշտ է, դրա անհերքելի ապացոյցը իբ Busenkamerad Խուստի-բէզի բողոքը:

—Տն, ինչ ա, —ասել էր բարոյապէս ընկածի այդ Busenkamerad-ը պ. Մ. Յ. -ին.— ծպտի խելք ունեցող հօ չէ այդպէս անպիտան, այդմենակ Քամալեանցը որ չէ այդպէս անպիտան, այդպէս վատ յատկութիւնների տէր, ուրեմն նրա արածները Ասունը ինչո՞ւ է լրագրով ամենքին յայտնում. մեղքը չի: (Այ մեղք ցաւի ու Ասածու կրակի դայ դա): Ընթերցողն էլ կը համաձայնի հետս որ այդպիսի ծակ փաստաբանութիւնը—բարոյապէս ընկածի Busen-

kamerad-ի այդ անմիտ պաշտպանողական «ճառը» աւելի խիստ է, աւելի սպանիչ, քան մի խօտապահանջ շնորհալի դատախազի համոզիչ մեղադրական ճառը, որին միշտ հետևում է մեղադրեալի պատիժը ամենաբարձր չափով:

Ես իմ կեանքիս մէջ ոչ-ոքի հետ բերանացի այնպէս չեմ կռուել, որ տարիներով խռով մնայի. այլ երբ տեսել եմ որ մենք համոզմամբ, մեր հայեացքներով իրար չենք ընկնիլ այլևս, շատ հանգիստ կերպով բերանացի, թէ գրաւոր, այդ բանը երեսոյն եմ տուել և յարաբերութիւնս կտրել ընդմիշտ: Կրկնում եմ՝ անագնիւ սո՛ւտ է, թէ ես «ընկերներիս հետ կռուել եմ և 5—10 տարով խռով մնացել», այդպէս բան ինձ հետ չի պատահած կեանքիս մէջ: Միակ մարդը, որի երեսին լծքել եմ արհամարհանքով և յարաբերութիւնս կտրել՝ բառիս լայն իմաստով, ինքը՝ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Սարգիսն է, այն էլ ոչ թէ 5—10 տարի, այլ ճիշտ 12—13 տարի է:

Այդ ողորմելի զրչակը, որ իրան հայերէն լաւ իմացողի տեղ է ծախում միամիտների վրայ, իրան ուսուցանելու ընդունակ գրաբարագէտ ցոյց է տալիս, ամօթ է որ չի կարողանում հասկանալ, թէ երբ մի աշակերտ քաց-աշկարայ կամայ կոյր ձևացող վարժապետի ուշադրութիւնն է դարձնում ընկերների զգուելի նպատակով հետամտութեան վրայ, այդ մատնութիւն չէ, այլ գովասանութեան արժանի վարմունք, որ մօտ 19—20-ը քսան չէ. վասնզի երբ ասում եմ՝ այդ արտաքինով միայն մարդանմանի մօտ 19—20 հրատարակած գրքերի մեծ մասը իմ ձեռքիս տակովն է անցել, ես եմ սրբագրել ու լեզուն կոկել, այդ ամենեկին չի նշանակում, թէ իբ 20 հրատարակու-

տակէն է դուրս գալիս. էդ էլ կը կարացնեմ): *)
 Կարելի՞ բան է, որ մի ուշունցատու՝ նամակով
 քանիցս շան լափ թափի՝ ուշունցներ գրելու համար
 ո՛չ-ուշունցատուի գլխին:

Մինչև օրս ամեն բանում խարդախութիւն բա-
 նացնողը չի մոռացել իր ծննդեան տարիքն էլ իրար-
 դախել. ամեն հնարաւոր ճիգն է թափել, որ ո՛չ ոք
 ճիշտը չիմանայ իր քանի տարեկան լինելը: Իսկ թէ
 ինչո՞ւ, այդ շատ երկար կը լինէր, եթէ ես գրէի, ո՞վ
 շատ է հետաքրքրվում այդ բանով, թո՞ղ գնա նրան
 հարցնի: Եւ իսկապէս իրան շատ փոքր տարիքով ցոյց
 տալու համար է որ գրել է. «Ինծանից մեծ լինելով
 օգնում էր խորհուրդներով ընթերցանութեան մէջ. ինձ
 շուտ կալաւ իբրև աշխատասէր և ուշկալ շուրաւէրցու»:
 Նախ՝ այդ իմացող միամիտը կարող է ենթա-
 դրել, թէ գուցէ ես մեծ եմ իրանից 5—10 և աւելի
 տարով, մինչդեռ ես ծնուել եմ 1859 թուի ապրիլի
 թէ մայիսի սկզբին, իսկ ինքը՝ 1860 թուի ապրիլի
 թէ մայիսի վերջերին: Հետևապէս եթէ խարդախ չը-
 լինէր, չպէտք է գրէր՝ ինծանից մեծ լինելով կամ
 ինձ շուտ կալաւ անմիտ դարձուածներով, այլ պէտք է
 գրէր այսպէս. «Լեռնը լինելով արդէն բարձր դասա-
 րանի աշակերտ, բարեհաճ ուշադրութիւն դարձրեց
 ինձ վրայ, երբ նոր էի մտել առաջին դասատուն»:
 Այո, եթէ ազնիւ լինէր և ո՛չ զգուելի երախ-
 տամու և թէ գրական խուլիզան ու այդպէս գրէր,
 նախ՝ զուտ ճշմարտութիւն ասած կը լինէր. եր-
 կրորդ՝ ընթերցողը պարզ կը տեսնէր, որ եթէ մեզա-
 նից մէկն ու մէկը «կեանքի դժուար ըրպէններում»

*) Հարկաւ այդ խոստումն էլ անկատար մնաց:

որևէ բան է եղել միւսի համար, այդ ես, միմիայն
 ես կարող էի լինել նրա համար:

Անսովոր լրբութիւն է պնդելը, թէ ինքը ո՛րքեւ
 ըսն է եղել ինձ համար, կեանքիս դժուար ըրպէննե-
 րում:

Եթէ ուրախ ժամանակա՝ տխուր, դառնացած ժա-
 մանակա՝ ուրախ նամակներ եմ գրել իրան և այս ու
 այն կարծիքը յայտնել ինձ հետաքրքրող հարցերի
 մասին և հեռն էլ միշտ տարին տասներկու ամիս
 իր վատ կողմերը ձաղկել, պակասութիւնների համար
 յանդիմանութիւն, նախատինք, թուք ու մուր տուել,
 այդ չի նշանակում թէ ինքը որևէ գիշեր է եղել ինձ
 համար՝ այն էլ կեանքիս դժուար ըրպէններում:

Գրական խուլիզանը գրել է թէ ես իրան գրածս
 նամակների մէջ միշտ լաց ու յուսահատութիւն եմ
 արտայայտել. սակայն ում նամակների մէջ այդպէս
 չեմ եղել: Եւ ուրիշ կերպ կարելի՞ էր, կամ մի ու-
 րիշը կարող էր այլ կերպ լինել, եթէ 20 տարեկան
 ամենաձաղիկ հատակում ամենամեծ դժբաղդութիւն-
 ներից մէկի մէջ ընկնէր: Բայց թողնենք իրա ասածը
 լինի. հապա ինչո՞ւ ինձ գրած «պատկառելի հատոր»
 կազմող իր նամակներից գոնէ մէկում մի կարգին
 խօսք, մի իրական, շուտ չէ՝ միայն մի հատիկ իրա-
 կան խորհուրդ չի գրել, թէ ինչպէս պէտք է ես այդ
 դրութիւնից դուրս գամ: Իսկ իմ նամակներս, որոնց
 ամեն տեսակ խուլիզանութեան է ենթարկել, որ
 վրան նպաստաւոր լինի, այդպէս են:

Հետևապէս, կրկնում եմ՝ եթէ կեանքի դժուար
 ըրպէններում մեզանից մէկն ու մէկը որևէ բան եղել
 է միւսի համար, այդ ես և միմիայն ես եմ եղել նրա
 համար և ո՛չ-թէ ինքն ինձ համար: Ախր ինքը ինչ
 մարդ է, որ կարողանար որևէ մէկին լաւութիւն անել,

քանի-որ հէնց սկզբից է բարոյապէս ընկած եղել: Ինքը՝ կարող էր, քանի իրա սև-հոգին, հրէշային բնոյթն ինձ յայանի չէր, հասարակաբար ասած՝ սիրելի ընկեր լինել միայն. էլ ուրիշ ոչինչ:

Ինձ համար՝ կեսանքիս ղժուար ըստէներում մի բան լինելու համար անհրաժեշտ էր բոլորովին այլ ներքին աշխարհով մտնող և ոչ-թէ Քամալեանցի պէս սևահոգին:

Ընդունենք մի ընդհանուր անագնուաբար հրապարակ հանուած նամակներս լուսանկարչական ճշտութեամբ է անաջ բերուած, բայց-և-այնպէս այդ նամակներին մէջ արտայայտած մտերմութիւնը այն չէ, ինչպէս որ ես եմ հասկանում: Իրա հետ ունեցածս մտերմութիւնը շատ տարբեր է այն մտերմութիւնից, որ ունեցել եմ՝ հանգ. Արշակ Ծատուրեանի, հանգ. Լեոնիկ Մովսէսեանի, հանգ. Նիկօլ Աստուածատրեանի, Իսկ այժմ ունիմ՝ Ստեփան Տէր-Սարգսեանի, Յովսէփ Տէր-Յովսէփեանի, Սեդրակ Մանուկեանի, Բագրատ Սերբերակեանի, Միքայէլ Յարութիւնեանի, Արշակ Պապեանի, Սինաբասար Չմշկեանի, Չաքար Ուսիկեանի, Աղէք-Չ. ա. ք. Չարթեղեանի, Գարեգին Սարաղեանի, Աղէք-սանգը Իսապերդեանի և շատ պատուաւոր՝ հայ-ղբայ-րոցին պարծանք և հայ-ընտանիքին պատիւ բերող տիկիներին և օրիորդներին հետ, որոնցից շատերը երգվում են իմ ազիզ արևով: Բայց այդ բանի համար անապարձութեամբ չեմ փրվում, այլ հոգիս հրրճմանով և ու ցնձում լող այն գիտակցութիւնից, որ անոյշ Փոփոնիս տենչանքը իրականացած եմ տեսնում:

Սակայն հում համար գրեցի այդ մի թէ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի. բայց չէ՛-որ ըստ-ընդամենը ընկածին անմատչելի են այդպիսի բաները:

Եւ վերջապէս կարելի՞ բան է որ բարձր դասա-

րանի փոքր-ի-շատէ հասուն աշակերտը կապուի, այն էլ շատ շուտ՝ գիւղից եկած մի անծանօթ, անգարգացած վայրենու հետ. շատ, շատ՝ ինչպէս գրեցի, կարող էի միայն ըստեհած ուշադրութիւն դարձնել վրան, ինչպէս և արի ու այդպէս ըստեհած տրամադրութեամբ էլ մնացի երկար ժամանակ, փափագելով որ իմ քաղցր վարմունքով ինչ որ մեծ, շատ մեծ պատիւ էր Քամալեանցի պէս մի վայրենու համար, կարողանամ դրան կոկել, տաշել, տաշտոյրել և մասնաւոր միքիչ մաքրաստիքութիւն սովորեցնել, որից բոլորովին զուրկ էր մինչ այն աստիճան, որ ինձ թրվում է թէ հետը իմ հասկացած մտերմութիւն չը հաստատելու մի մեծ արգելքն էլ այդ է եղել:

Իսկ թէ ինչո՞ւ էի այդ բանին ձգտում յամառօրէն, արդէն վերև ասացի. սրպէսզի երբ քահանայ դաճնար, մեր շատ քահանաների նման անպատուութիւն չբերէր հայ-եկեղեցուն, կամ չքահանայի նրման տաւարի ցաւ չդաճնար ծխերի գլխին: Ուրեմն պարզ է թէ նրան այդքան ընքշութիւն, մտերմութիւն, բարեացակամութիւն ցոյց տալս պէտք է փրնտրել միայն եւ միմիայն լող մեր գիւղի ժողովուրդին բարիք անել ուղեղու մէջ և ոչ թէ նրան շատ սիրելու մէջ: Ո՛վ իմ այդ ասածս չի ըմբռնում և միայն սոֆեստին յատուկ անարկութիւններով ուզենայ հերքել գրածս, այդ ասել է այդպիսին երբէք քաւկանութիւն չի զգացել հասարակութեան համար իր կատարած աշխատանքի մէջ և կամ՝ ո՞վ իմանայ, գուցէ իսկի գաղափար էլ չունի այդ ամենաբարձր հրճուանքի մասին, որ միայն պարտաճանաչ քաղաքացին կարող է ունենալ իր կեանքում:

Գո՛ր հիշանկեցայ իմ ընթացքը ճարտուն վրձով յայնչ

Յանցագործը եթէ սրտանց ու անկեղծօրէն զըզ-
ջալու փոխարէն խղճի ձայնը լռեցնելով՝ ինքն
իրան արդարացնել աշխատի, այդպիսին բարոյա-
պէս կորած է ընդմիջաւ: Ճիշտ նոյնն է նաև ստա-
խօսը, մանաւանդ անբարոյական ստախօսը, որպիսին
«մանկա... վարժ» Քամալեանց Ս. է: Հէնց փոքրու-
թիւնից ստելու, կեղծելու խաբելու սովոր լինելով,
նա արդէն շատ վաղուց կանգնած է եղել ստորու-
թեան ճանապարհի վրայ: Անպէս որ ստելը՝ իր ու-
նեցած զգուելի մեծամտութեան ու պարծենկոտու-
թեան պէս անբուժելի սովորութիւն, ունակութիւն է
դարձել, եթէ չստէ, քունը չի տանիլ, եթէ անագնիւ
զրպարտութիւններ չգրէ սրա ու նրա մասին, ինքն
իր աչքում «մեծ» մարդ չի երևալ, եթէ զգուելի
պասկվիւններ չյերիւրէ, չաղաւաղի իրողութիւնները,
շուռ տուած պատմութիւններ չշարադրէ, կարծում է
թէ այլևս «25 տարուայ «երեւելի» գրող» չի յոր-
ջորջուել: Եթէ ինքն իբրև ուսուցիչ մանուկներին
չհետևէր արեւելեան պարսկին յատուկ զգուելի նպա-
տակով, իրան այնպէս է թուացել, որ կը դադարէր
«լաւ» մանկավարժ և «ընտիր» դաստիարակ լինելուց,
վասնզի «լաւ» մանկավարժը և «ընտիր» դաստիա-
րակը այդ սչ-բարով աստուածաբան Քամալեանց Ս.-ի
կարծիքով նա է, ով-որ ամենազգուելի ախտն էլ է
աարածում անձեղ աշակերտների մէջ: ԹԷԼԵ:

Երբ մարդ յաճախ է պարծենում՝ բերանացի և
թէ նամակներով, այլև հրապարակով, որ ինքը օրա-
գիր պահելու սովորութիւն ունի, շարունակ թուա-
կաններ է առաջ բերում, այդպիսին շատ զգոյշ պէտք
է լինի տեղի ունեցած դէպքերի վերաբերմամբ, որ-

պէսզի մէկը միւսի հետ չշփոթի և անագին թիւրի-
մացութիւնների տեղիք տայ:

1875—1880 թուականներին ես անկարող էի
նրա հետ միշտ ջան-ով խօսել, կամ հետը մասպա-
հաթներ անելով «օգային ամբոցներ կառուցանել»:
Սուտ է: Եթէ ոչ, ասել է՝ ինքը մի անպատկառ լիըն
է եղել, որ իր շափը չի ճանաչել, ինչպէս որ հիմա
էլ չի ճանաչում:

Սուտ է, որ իբրև ես անակնկալ եմ մրսել:
Հէնց այդ՝ զխտութեամբ թէ անգիտութեամբ գրած
մի հատ սուտն էլ բաւական է ապացուցելու, որ ես
նրա հետ իրա հասկացած մտերմութիւնից շատ և
շատ հեռու եմ եղել մանաւանդ այդ միջոցներին:
Սակայն եթէ նա զխտութեամբ չստէր, ակամայ խոս-
տովանած պէտք է լինէր, որ խլովծինս ո՛չ-թէ ար-
նագատեղ է, այլ ուղղակի պատիւ է ինձ, որով միշտ
պիտի պարծենամ, վասնզի այդ գոբաղդութեան մէջ
չէի ընկնիլ, եթէ իմ անձնուիրութեամբ բազմանգամ
ընտանիքի տէր ընկեր-մտերմիս գօռով դուրս չկօր-
ղէի մահուան ճիրաններից: Բայց չէ՛-որ Քամալեանցի
նման քարոյսապէս ընկածին անմատչելի է անձնուի-
րութեան գաղափարը, այլպէս այժմ նա ամենքից
արհամարհուած չէր լինիլ և ես էլ այս տողերը գրե-
լու տխուր պարտականութիւնը չէի ունենալ:

Ուղղակի անսպասելի ստախօսութիւն է և միայն
անբարոյականութիւնից խանգարուած ուղեղի գա-
ռանցանք, որպէս-թէ ինձ հասած «գոբաղդութիւնը
աւելի մտերմացրեց մեզ», որ «մենք հոգով դարձել
էինք մի»:

Հրապարակով, այն էլ սոսկալի մեղադրանքներից
արդարանալու նպատակով գրած այդպիսի անլուր
ստախօսութիւնը հաստատելու համար գոնէ մի հատ,

շատ չէ, կենդ մի հատիկ համոզիչ փաստ բերէր: Բայց եթէ Քամալեանցի նման ընտրյապէս ընկածը փաստի արժէքը գնահատել զիտենար, նա ամեն քայլափոխի սուտ չէր խօսիլ, ամեն առիթի կեղծիքներ չէր յերկրի և անազնիւ գրպարտութիւններ ու զգուշ-լի պատկզիւներ չէր գրել:

Ուրեմն էլ ինչպէս կարող էինք «հոգով մէկ լինել» չէ որ դրա համար ամենամանրաթելոս պայմանն այն էր, որ մեր ներքին աշխարհները եթէ ոչ բոլորովին բայց գոնէ մասամբ իրար նման լինէին: Սակայն այդպէս է: Կարող է գտնուել մի այլ մարդակերպ հրէշ աշխարհիս երեսին, որ այդ բանը մտքով իսկ անցկացնէր. վասնզի այդ մի տմարդի սրբբաղձութիւն կը լինէր, որին ընդունակ է միմիայն Քամալեանց Ս.-ի նման բարոյապէս ընկած ու ամենքից արհամարհուածը՝ այդ մարմնացած ստուծիւնն ու կեղծիքը այդ մարմնացած անբարոյականը:

Հոգեկան հիւանդ մարդու անամօթ պարծենկոտութիւն է և այն, որպէս-թէ ես նրանից «երգումով խօսք եմ առել», որ նա ինձ նամակ գրի: Նախ՝ այդ մի լպիրշ յանդգնութիւն է. երկրորդ՝ շատ, շատ՝ ես կարող էի միայն պատուիրել, որ նամակ գրի. երրորդ՝ հապա էլ ուր միայն «մեր հոգիները մի լինելը», որ անամօթաբար գրել է:

Այդ ինչ ստիպմունք է եղել, որ թիֆլիզից Շուշովէր է գնացել. հապա ուր պէտք է գնար. ջհաննամը: Չիխի թէ այդ էլ Գանձակի ստիպմունքիցն է, որ բռնադատել էր հեռանալ այնտեղից:

Վաթսուհու չորս երեսանոց բրօշուրի մէջ նորը — նոր գրածը ընդամենը 10—15 էջ է թէև, բայց բա-

ւական տանջանք պէտք է պատճառած լինի այդ գրական խուլիգանին, կամ գոնէ դրանով շատ պէտք է գբաղուած լինի. որովհետև ամբողջ երեք-չորս ամիս գանգատում էր մասնաւոր գրած նամակների մէջ, որ իմ մերկացումներից ինքը հոգեկան հիւանդութիւն է ստացել, պարապել չի կարողանում. էլ չէ է մնում սխալ քայլ անէ, և միևնոյն ժամանակ՝ միամտաբար թէ իմարաբար իրան հիւրընկալողների տանը պարծենում էր, որ ձեռքի գործը — պատկզիլ բրօշուրը արագ առաջ է գնում և պատրաստ կը լինի օգոստոսի սկզբին:

Ուրեմն պարզ է թէ որքան պէտք է տանջուած լինի այդ 15 էջը գրելու և տպարանին յանձնելու համար: Փաստ, մի հատիկ իրական փաստ չունենալով ձեռքին, որ առաջ բերի մերկացումներիս դէմ, ամբողջ երեք-չորս ամիս գրել ջնջել է, գրել ջնջել է և հազիւ այդ 15 էջը դուրս բերել, բայց-և-այնպէս այդ 15 էջի մէջ չկայ՝ շատ չէ, գոնէ մի-երկու տող, որ ճշմարիտ լինի և կամ գոնէ ճշմարտանման մի բան պարունակի և ոչ թէ ստութիւն, կեղծիք ու խարդախութիւն: Հետևապէս հասկանալի է, թէ ինչ աննախանձելի դրութեան մէջ պէտք է լինի այդ բարոյապէս ընկած պատուազուրկ վարժապետի ուղեղը, որ այլևս զրկուել է իրերը իրանց իսկական գոյնով տեսնելու և թէ յարուցած խնդրի մասին ըստ էութեան դատելու ընդունակութիւնից:

Նենգամտութիւն է անում սխալմամբ մարդ կոչուած Քամալը, երբ գրում է, թէ «գաւառներից ինքը վերադարձաւ թիֆլիզ ուսուցչական պաշտօնով»: Վասնզի ինքը չվերադարձաւ, ինքը թիֆլիզ ուսուցիչ չէր եղած. ես ընրի, նա: Եթէ չլինէի ես, նա երազումն անգամ դասեր չէր ստանալ Յովնանեան ղրպ-

ըոցում: Ասածիս վկայ յարգելի տ. Սր. Երիցեանը, որ շատ էր աշխատում պ. Մինասեանի (այժմ քահանայ) համար ձեռք բերելու այդ կամ Հայուհեաց Բարեգ. Ըեկեր. Ս.-Նշանի դպրոցի դասերը. ասածիս վկայ նոյն դպրոցի այն վարժուհիները, որոնք Մանգլիս ամարանոց էին գնացած. վերջապէս ասածիս վկայ էլի նոյն դպրոցի յարգելի տեսուչ պ. Փիլ. Վարդանեանը: Այն, իմ եւ միայն իմ շնորհիւ նա կարող եղաւ լաւ պաշտօնով Թիֆլիզ գալ: Ինչո՞ւ է իմ արած ուրիշ շատ և շատ լաւութիւններս հետ այդ վերին աստիճանի աչքի ընկնող լաւութիւնս էլ մոռացութեան տուել այդ անշնորհակալ հրէշը. չէ՞ որ անդամահատած ձեռով հրատարակելով նամակներս, նպատակ է ունեցել ցոյց տալու, թէ որ աստիճանի ինքը թանգ է (?) եղել ինձ համար: Դէ դրանից էլ աւելի լաւ փաստ:

Սակայն այդ և նման լաւութիւնները արել եմ, կրկնում եմ, ոչ իրան սիրելուցս, քան լիցի. այլ այդ անելիս առաջնորդուել եմ միայն և միմիայն համագիւղացիներս օգուտ տալու բարձր ու քաղցր գաղափարով. որովհետեւ ուզում էի, որ այդ վայրենին իր էշավարի բնօրինակ ձեռք վերցնէր, որպէսզի անպատուութիւն չբերէր մեր գիւղին իր անտաշութեամբ: Ո՞վ կասկածում է ասածիս վրայ, թո՞ղ հէնց հիմա ուշ դնի Բեռլինում չորս տարի մնացող այդ ոչ-բարով աստուածաբանի խօսուածքին, շարժուածքին, նիստ ու կացին, քայլուածքին և թէ գրածներին, և պարզ կը հասկանայ, թէ ինչ պէտք է եղած լինի դա ակնարկածս միջոցին:

Քանի-որ ոչ մի անգամ խուզարկութեան չի եսթարկուել, այդ բանից երբէք երկիւղ էլ չի ունեցել

նոյնիսկ երազի մէջ *), ոչ մի անգամ սրեւէ կորուստ չի ունեցած, եթէ չհաշուենք ուրիշին յանձնած մի տետրակի յետ շտամալը, հապա այլևս ինչո՞ւ պէտք է նամակներս մի մասը կորչէր, երբ միշտ պարծեցել է՝ «բոլոր նամակներդ ի-մի հաւաքած սրբի պէս եմ պահում»: Բայց աղուէսը դիտմամբ է այդ խորամանկութիւնը բանացրել, որ իրանից ստացածս նամակների բովանդակութեան նայելով՝ չպահանջեմ հրապարակ հանել նաև այն նամակներս, որոնց մէջ ձաղկել եմ իր պակասութիւնները և թուք ու մուր տուել անամօթ երեսին:

Եթէ ճիշտ է, որ ես նամակով համբուրել եմ իր անմեռոն ձակատը, աւելի ևս ճիշտ է, որ այդ համբոյրներիս հետ, իբրև համեմունք, բարոյական թաթալոյներ էլ եմ ուտացրել: Հապա ինչո՞ւ՝ հակասութիւնս, «բնաւորութեանս տարօրինակ կողմերը» ցոյց տալու համար, այդ նամակներիցս գոնէ մէկը առաջ չի բերել: Չի՞նք թէ կորածները հէնց դրանք են (անպիտան խարդախ):

Նամակներս 8, 12, 16 էջից լինելը նոյնպէս ոչինչ չի ապացուցանում, որ ինքը բարոյապէս ընկած և ամենքից արհամարհուած չէ:

Լևոնիկին, Սեդրակին, Ստեփանին և թէ այլ՝ սրբտիս մօտիկ ու սիրելի անձանց զրածս նամակները շատ յաճախ եղել են 24, 28, 32 էջից բաղկացած: Նոյնիսկ մի անգամ 36 մեծադիր երես և այն մանրմանը զրած նամակ ուղարկեցի Մոսկուա Սեդրակին

*) Դրա ապացոյցը Օհանջանեան յարգելի Հաջի-Մայրի՝ Վեհ. Կաթուղիկոսին ասած խօսքերն աղաւաղելը. բայց այդ մասին յետոյ:

ու Լևոնիկին, որոնք զարմացած այդ անսովոր նամակից, իրարից ազնիւ խօսք են առնում, որ օրական միայն երկու էջ կարդան ճաշելու ժամանակ, և այդպիսով նամակիս ընթերցումը տեւել էր երկու շաբաթից աւելի: Իսկ միևնոյն ժամանակամիջոցում, երբ նամակս էին կարդում՝ Լևոնիկից 16 նամակ ստացայ (նա համարեա ամեն օր էր գրում ինձ), իսկ Սեդրակից 3 նամակ: Տեսնուած բան է, մի ուրիշ օրինակ կարող էք ցոյց տալ, ընթերցող, որ ստացուած նամակը դեռ չկարդացած, նամակագիրը՝ իբրև պատասխան 19 նամակ ստանայ:

Ուրեմն ինչ մտքով է նամակիս էջերի թիւը աշխարհովը մին արել այդ ամենքից արհամարհուած անարգ արարածը: Ձէ-որ եթէ մտերմութիւնը չափուէր նամակի էջերից, այն-ժամանակ ինքը—այդ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ը գեոյի կը հաւասարուէր իբրև ոչ թէ իմ մտերիմ, այլ նոյն-իսկ իբրև լոկ ընկեր:

Այ, ինչ ասել է ձեռքին իրական փաստեր չունենալ, բայց գրել ու ջնջել, գրել ու ջնջել և վերջը իր յիմար ուղեղով վերջին գրածը հաւանել ու հրապարակ հանել՝ միայն Խոստի-բէլերին ու նմաններին հորթային ուրախութիւն պատճառելու համար: Ողորմելի բաւականութիւն:

Այո, Բիւֆօնը շատ ճիշտ է ասել, թէ «ոճը ինքը մարդն է»: Իսկ ես էլ՝ առանց քաշուելու, բայց-և առանց Բիւֆօնի հետ ինձ մի գծի վրայ գնելու յաւակնութեան, կ'ասեմ՝ նամակը ամենայն հարագատութեամբ ուղարկողին պիտի փոխարինէ, այլապէս կը լինի կեղծիք, խաբեբայութիւն, ինչպէս որ են, այժմ շատ պարզ երևում է, այդ ստոր զրչակի գրածները:

որի համար էլ, այո, չեմ գրել «մի նամակ, որ մէջը չլինէր կուռի կտոր, ուշունց (բայց ոչ իր գրածների նման փնթի), բացականչութիւն, դալմադալ», աւելացնենք նաև՝ թուք ու մուր, արդար ցասում, թունաւոր յանդիմանութիւններ...

Ինչ-որ եղել եմ, այժմ էլ նոյնն եմ, այդպէս էլ պիտի մնամ՝ ընդմիշտ, թէկուզ աշխարհը տակնուվրայ լինի, և այդ ասում եմ պարծանքով. տեսածս ու իմացածս լաւի համար պիտի հրճուեմ, ուրախանամ, վատի համար պիտի տխրեմ միշտ, կուր պէտք է գցեմ և ամենքի հետ «դալմադալներ» սարքեմ: Կարճ տասձ՝ Լեւոն էի, Լեւոն եմ եւ Լեւոն էլ պէտք է մնամ. այո, թէկուզ ողջ աշխարհը տակնուվրայ լինի:

Իսկ Լեւոն լինելու համար Քամալեանցի նման բարոյապէս ընկածները պէտք է նորից ծնուեն. թէև այդ էլ դեռ հարց է՝ պիտի կարողանան Լեւոն լինել՝ առանց Վարդանի տղայ լինելու և առանց Փոփոնիս մաքուր ներշնչումներին ենթարկուելու:

Այս բոպէիս ձեռքիս անհերքելի փաստ ունիմ*), որ այդ մարդակերպ հրէշը, որին սխալմամբ մնալը են կոչում, ընդունակ է հասարակութեան սեպհականութիւնն իսկ աղաւաղել և հրապարակով ճշմարտութեան տեղ ծախել իրա կատարած այդ կեղծիքը, խորդախութիւնը. ուրեմն էլ ինչ զարմանք, որ նամակներիս հետ խուլիգանաբար վարուած լինի — քմահաճօրէն կապեր շինած, ուղած բառերը այստեղ, այնտեղ մտցրած. բառեր՝ որոնք չէին կարող իմ գրածը լինել: Ձէ-որ շատ անգամ մի հատ եւ-ը, մի դիմորոշ յօդն իսկ կարող են գրածի միաքը յե-

*) Ստորև առաջ կը բերեմ իրա տեղում:

դաշըջել: Ինքը հայերէնի ուսուցիչ է, եթէ այդքանն էլ հասկանալ չի կարող, թող դիմի և հարցնի նախկին տխրահոչակ գրաքննիչ Սուրմոն-Խան Մելիք-Մեհրաբեանին, որ մի աւելացրած թէ պակասացրած նւի համար քիչ մնաց «Փորձ» ամսագիրը փակել տար:

Դէ թող ընթերցողն ասի, թէ ի-ծնէ բարոյապէս փչացածը կարող է ազնուաբար վարուել հակառակորդի գրած բայց իր սեպհականութիւն դարձած նամակները հետ, մանաւանդ-որ դրանցով ողորմելի գըրչակը կամեցել է իրան արգարացնել, այն-ինչ իր այդ նոր անազնութեամբ ինքն իր յանցանքն աւելի է բարդացրել: Այո, նախանձելի չէ չակերտաւոր մանկավարժի դրութիւնը:

Պետերբուրգից գրածս նամակը այնպէս աղաւաղուած է, որ բան չի հասկացվում, և անհասկանալի է թէ այդ ինչու է առաջ բերել: Նոյն տեղից դրկած միւս նամակս իր գրած պոռոտախօսութեան պատասխանն է: Իմաստուն չէի, որ հեռուից իմանայի իսկութիւնը, առիթ էլ չէր եղել, որ իր հրէշ լինելը գիտենայի, մնում էր որ օրինաւոր մարդուն վայել ձևով պարտքս կատարէի— շնորհակալութիւն յայտնէի: Սակայն երբ մօտ հինգ-վեց ամսից յետոյ Շուլավէր գնացի, պարզ տեսայ ու իմացայ, որ գըրածները մեծ մասը ստութիւն ու կեղծաւորութիւն է եղել. բայց լաւ իմանալով որ իծին իծի ոտիցն են կախում, ոչխարին էլ՝ իրա, և թէ՛ «որում շատ տուաւ, շատ խնդրեսցի, որում սակաւ՝ սակաւ» խօսքերը, ուշադրութիւն չգարձրի. որովհետև ինչ կարելի էր պահանջել «Հաւաքարում ապրած» և բարեկրթութիւնից իսպառ պուրկ մի գիւղական վարժապետից, որ երբէք մարդամէջ չէր մտած և իր հօր ներկի կարասից զատ ուրիշ բան չէր տեսած: Խնդրեմ

խուլիգանին վայել բացատրութիւն չարուի ասածիս. ներկի կարասը՝ առանց յետին մտքի յիշեցի: Եթէ ոչ, թող անըարոյական գրչակը ապացուցի, որ բացի իր հօր կարասից և աշակերտներին Բնի-Չորը, Փոշախ-Աղբիւրը, Միպտակ-Շէնը... զբօսանքի տարած միջոցին «սաղարթախիտ ծառերի տակին... տեսածից» զատ ուրիշ բաներ էլ է տեսել:

Նամակներս դիտմամբ աղաւաղելով՝ այնպիսի ձևով է առաջ բերել այդ՝ արդէն 50 տարուն մօտեցած խարդախ գրչակը, որ ընթերցողը ենթադրի, թէ ես՝ էլ ուրիշ հոգս, էլ ուրիշ ցաւ ու կրակ չեմ ունեցել, այլ իմ միակ հոգոս այն է եղել, որ առանց նամակ ստանալու շարունակ ինքս գրեմ:

Եթէ յետին միտք չի ունեցել և իրօք ես Busenkamerad եմ եղել իրա համար, հապա միթէ այնքան ազնուութիւն չունէր այդ խուլիգան գրչակը, որ՝ ի-յարգանս այդ մի ժամանակուայ Busenkamerad-ութեան, կամ գոնէ իր սովորած ոչ-բարով աստուածաբանութեան, կեղտոտ ձեռքերով հանգ. մօրս անունս գրի չառնէր: Անոյշ Փոփոնիս յիշատակին հասցրած այդ մի հատիկ վիրաւորանքն իսկ բաւական է, որ ես անխնայ լինիմ դէպի այդ գրական խուլիգանը:

Եթէ ճիշտ է որ բացի իրանից ուրիշ 3 ուսուցիչ էլ կային Շուլավէր, այլևս ինչու պէտք է միմիայն իրանով հիացած լինէի, եթէ եղելութիւնները իսկութեամբ գրէր ինձ և ոչ խարդախելով՝ որ իբր-թէ միայն ինքն է ամեն բան, իսկ միւս պաշտօնակիցները անպէտք բաներ, ինչ-որ մի ուսուցչի կողմից անազնիւ վարմունք է:

Ես հրճվում էի ոչ-թէ իրա անձով, որ մտքովս

անգամ չէր կարող անցնել, այլ հրճուանքս նրա համար էր, որ իմ հայրենի գիւղում սիրածս թատերական ներկայացումներ էին տեղի ունենում*): Եւ եթէ այդ սալախանայ վարժապետը—այդ չակերտաւոր մանկավարժը միմիայն իր ողորմելի գլուխն է գովել իրա նամակներում, իրանց տուել ամեն բանի նախաձեռնող, էլ ի՞նչ մի զարմանալու բան կայ, որ ես էլ գրած լինիմ՝ սպրիս, կեցցես, անֆֆերիմ, Սերգո ջան, շարունակիր այդպէս: Չէ՛-որ իշին էլ են ասում՝ անֆֆերիմ, էշ-ջան. եսլդ սպրի, էշ-ջան. կերածդ քեզ հալալ, էշ-ջան...

Ի-դէպ, ջան բառի մասին:

Թիֆլիզի Ալիւրի-մէյդանին մօտիկ եղած Հրեշտակապետաց եկեղեցու դիմացի սրճատան նախկին տէրը—քեռի-կարապետը մի ճուճկի—փոքրիկ շուն ունէր, անունը Տոնիգօ, որ զարմանալի, կատուներից էլ ճարպիկ մկնորս էր: Ահա այդ մկնորս Տոնիգօն երբ աւելի մեծ ճարպիկութեամբ բարձրանալով դարակ՝ շաքարաւազ էր լափում, քեռի-կարապետը սարսափելի կերպով ծեծում էր և հետն էլ յանդիմանում.

—Թիւն այդ անաբուռ երեսիդ, աննամուս... Ծօ, հարիֆ (մարդ), չես ամչնար, որ կ'ելլես վեր ու միւշտարիներուս հմար առածս շաքարը կը լափես. դէ մէկ ըսա՛, է՛, անպիտան, էդ եղա՛ւ... էդէփսըզ (անամօթ)... Թիւն, թիւն, թիւն էդ քու անամօթ, անաբուռ երեսիդ... Ախր շան-ծնունդ ես, է՛, շնութիւնդ պիտի էնես (անես):

Եւ այդ միևնոյն խօսքերը քեռի-կարապետը կը կը-

*) Թիֆլիզում երբևիցէ եղած իդէալական դերասանական խմբի անդամն էի, երբ դժբաղդութեան մէջ ընկայ:

նում էր ամեն անգամ, երբ Տոնիգօն շաքար էր լինում լափած: Բայց երբ այդ միևնոյն անամօթ, անաբուռ, աննամուս Տոնիգօն ոչ-թէ փոքր մկնիկ էր որսում, այլ անազին, խոզի խոճկորի չափ մուկն էր բռնում և ճղղացնելով բերում, քեռի-կարապետը մոռանում էր Տոնիգոյի աննամուս, անաբուռ ու անամօթ լինելը և իսկոյն ձայնում էր.

—Վայ, ես քու հոգնդ մեռնիմ, Տոնիգօ-ջան. դէ՛, քեզ տեսնիմ, Տոնիգօ-ջան. ջանս, իմանս, հոգիս, հաւատս... Թէզ (շուտ), Թէզ էրա սաստկեցնւր էդ անիծածին, էդ նզովից արմատին, ես էգոր իմանր... Ամնւր ըմ, ամնւր ըմ սխմիր, Տոնիգօ-ջան... Մէմէլ (մէկէլ), մէմէլ, Տոնիգօ-ջան...

Եւ երբ Տոնիգօն խեղդում էր մկանն ու սոչը բուրդի-բուրդի անելով գալիս բամպում էր տիրոջը ու քծնվում, վերջինս նստում էր, Տոնիգոյին գիրկն առնում, համբուրում նրա աչքերը, ծնակատը, ցուկը, իր աչքերը շան ճակատին քսում, նորից համբուրում և ասում.

—Տոնիգօ-ջան, հոգիս, իմ աչքիս լուս... Տոնիգօ-ջան, ինչըզ (ինչպէս) լա՛ւ շուն ես. Տոնիգօ-ջան, ինչըզ շնորհքով շուն ես: Հալալ եղնի կերածդ շաքարը քեզի, Տոնիգօ-ջան, հալալ,—և ապա էլի մի տաք համբոյր էր դրոշմում Տոնիգոյի անսմօթ ճակատին և վեր կենում, որ նոր եկած յաճախորդի համար սուրճ պատրաստի:

Իէ հիմա դնւք ասացէք, ընթերցող, թէ այդ Քամալեանց Ս. կոշուածը, որ մարդու կերպարանք է կրում, նոյնիսկ դեռ սխալմամբ էլ մարդ կոչվում, մի՞թէ Տոնիգոյի—մի փոքրիկ շան արժէք էլ չէր կարող ունենալ, որ նրա արած լաւ գործերով ուրախանայի, հրճուէի, Սերգօ ջան ու այլ քաղցր խօսքեր

ասէի, ճակատը համընթէի, իսկ յետոյ իր անբարոյ-
ական—աննօրմալ հակման տէր լինելն իմանալով,
միշտ ճշմարտութեան հակառակ գնալը տեսնելով՝
խղճիս թելադրութեամբ մերկացնէի այդ ամենը: Այլ-
ևս ինչ կայ զարմանալու կամ տարօրինակ իմ վար-
մունքի մէջ, որ սխալմամբ մարդ կոչուած Քամա-
լեանց Ս.-ին, այդ արտաբուստ միայն մարդանման
անարգ արարածին լաւ երևցած ժամանակ անկեղծօ-
րէն սիրել եմ, բարիք եմ ցանկացել, ձեռքիցս եկած
լաւութիւնները չեմ խնայել, համոզուած՝ որ ես իմ
բարոյական պարտքս եմ կատարում համազօրացուս
վերաբերմամբ, իսկ հիմա այսպէս վայր եմ զարնում—
ցելի մէջ տրօրում, իբրև արժանի յատուցումս:

Որպէսզի ընթերցողի համար որևէ թիւրիմացու-
թիւն չմնայ, թէ կարելի է չսիրած, նոյնիսկ ատած
մարդուն էլ լաւութիւն անել անձնուիրաբար, մի բան
կը պատմեմ:

Ներսիսեան Դպրանոցում գիշերօթիկ եղածս մի-
ջոցին բարձր դասարանի գիշերօթիկ աշակերտներից
մինը աւարտեց և գնաց իր հայրենիք ուսուցչու-
թիւն անելու, իսկ յետոյ էլ իր իսկական Busenka-
merad-ներէ—տեսչի և վերակացուի աշխատութեամբ
կրկին եկաւ Թիֆլիզ և նոյն դպրոցում ստացաւ տը-
մարդօրէն հեռացրած ամենից ազնիւ վերակացուի—
Ներսէս Մելիքեանի տեղը: Այդ վերակացուն, որին
երբէք չէի սիրած աշակերտ ժամանակը, իբրև անագ-
նիւ արարածներից մինը, վերակացու եղած միջոցին
ուղղակի ատելի էր ինձ իբրև եզուխ:

Այդ ատելին հիւանդացաւ ինչո՞վ. չգիտեմ: Եկաւ
զինուորական բժիշկը (կարծեմ Վ. Վարդանեան), դեղ
զրեց—մի ժանտահոտ թունաւոր օձանիլիք—մազ, որ

պէտք է մեծ խնամքով քսուէր ողջ մարմնին, որպէսզի
բրտնէր, վասնզի այդ քրտնելուց էր կախուած ամեն
ինչ: Հիւանդի իսկական Busenkamerad-ը պուկը բըռ-
նած սկսեց ինձ աղաչել *).

—Սիրելի Լեոն, գիտեմ որ դու ոչ ինձես սիրում,
ոչ Ս.-ին. բայց խնդրում եմ մոռացի՛ր ամեն բան և
օգնիր որ լաւանայ, հէնց քու արևն ապրի,—ու էլի
շատ շողոմ խօսքեր: Յանձս առայ և անմիջապէս
դպրոցի ծառայի ձեռքով իմաց տուի մօրս (արդէն
Թիֆլիզ էր ապրում), թէ դպրոցում մի գործ յանձ-
նեցին ինձ, որ պէտք է գիշերը կատարեմ, ինձ չը-
սպասի:

Հիւանդը պառկած էր այժմեան գրադարանին
կից փոքրիկ սենեակում: Ճրագվառոցին վերնա-
զգեստս ճանեցի և թևերս սօթտելով սկսեցի անտանելի
հոտ ունեցող թուճաւոր դեղը քսել: Թէ ինչ անտա-
նելի հոտ էր, դրա ապացոյցը այն, որ հիւանդի իս-
կական՝ բառիս ընդարձակ իմաստով Busenkamerad-ը
մի րոպէ իսկ անկարող եղաւ սենեակում մնալ:
Սենեակի դուռը չպէտք է բացուէր. հիւանդի վրայ
պէտք էր անընդհատ հսկողութիւն, որ դեղը բսելուց
յետոյ չբացուէր: Ողջ գիշեր մնացի ոտքիս վրայ. գի-
շերուայ մէջ բրտնեց, շապիկը փոխեցի. ժամը 5-ին
նորից քրտնեց, նորից փոխեցի: Երբ ժամը 8¹/₂-ին
եկաւ բժիշկը, մնաց զարմացած իր գրած տեղի զար-
մանալի լաւ ազդեցութեան վրայ:

—Ո՞վ էր հիւանդին դեղ քսողն ու պահողը. հի-
ւանդը բոլորովին ազատ է վտանգից:

—Այս ազնիւ պատանին, պատասխանեց հիւանդի
իսկական Busenkamerad-ը և մատնացոյց արաւ ինձ:

*) Այդ միջոցին ես արդէն ընթացաւարտ էի:

Բժիշկը երբ տեսաւ մարած աչքերս, դժգոյն դէմքս, յանդիմանօրէն նայեց ճիւղանդի իսկական Bu-
senkamerad-ին և ասաց.

— Ի՞նչ անխղճութիւն. միթէ կարելի էր այդ-
պիսի վտանգաւոր բան յանձնել այսպէս մատաղ
մարդու:

— Շնուտ, — յետոյ դիմեց ինձ, — դուրս արի այս
սենեակից և գնա Աղէքսանդրեան այգում երկու ժամ
անցուդարձ արա, մի-երկու բաժակ թարմ կաթ խմիր
և գնա տուն լաւ ծածկուած քնիր՝ ինչքան կարող ես.
այս երկու օրը ոչինչ մի անիր, մաքուր օդում զբօս-
նիր շարունակ և զգոյշ կաց մրսելուց:

Սակայն ինչ էք կարծում, ընթերցող, այդ իմ
անձնուիրութեամբ մահից ազատուած ճիւղանդը ինչ-
պէս երախտահատոյց եղաւ ինձ. ահա ասեմ՝ ինչպէս.

Երբ արդէն վերակացու չէր, այլ զգուելի թայ-
ֆայութեան շնորհիւ Գերմանիայում ոչ-բարով աս-
տուածաբանութիւն սովորած, Թրիֆլիզի յայտնի եկե-
ղեցիներից մէկում հազարներ ստացող միաբան էր,
այնպիսի տգեղ գեր ստանձնեց իմ վերաբերմամբ,
այնպիսի ստորութիւններ արաւ, այնպիսի անագ-
նուութիւն, այնպիսի զգուելի երախտամոռութիւն
ցոյց տուաւ 1897 թուին, որին կարող է նախանձել
միայն իրա նման անպիտան ու անազնիւ Քամալեանց
Ս.-ը: Այդ ասածիս վկայ այն ժամանակուայ Ներս.
Դպրանոցի ուսուցչական խմբից այն անձինք, որոնք
զուրկ չեն ինքնուրոյնութիւնից, որոնք ճշմարտու-
թիւնը ամեն բանից վեր են դասում. ասածիս վկայ
Դպր. Հոգաբարձութեան գործավարը և մեր յարգելի
վիպասան Պերճ Պոռչեանցը, որ չհանդուրժելով սուտ-
քրիստոս աստուածաբան քահանայի ստոր զրպար-
տութեանը իմ հասցէին, նկատել էր.

— Է՛, տէր-հայր, միշին մի եւ կայ, որ դուք խը-
նամքով թաքցնում էք. չէ՞-որ մենք Լևոնին էլ ու
Ս.-ին էլ լաւ ենք ճանաչում. ամօթ չէ՞ որ այդպիսի
ծիծաղելի առասպելներ էք պատմում Լևոնի նման մի
ազնիւ երիտասարդի մասին: Ախր դուք բացի քահանայ
լինելուց, այլև աստուածաբան էք:

Ստախօս տէր-տէրը եթէ ամօթ ունենար, յար-
գելի Պերճի նկատողութիւնից պէտք է գետինն անց-
նէր. բայց որովհետեւ իրանց ներքին աշխարհները
փշացած մարդիկ զուրկ են լինում ամօթ ունենալու
զգացմունքից, այդ պատճառով սուտ-քրիստոս աս-
տուածաբանը կուլ տուաւ յարգելի Պերճի տուած
դառը դեղահատը և անամօթ աչքերը գետին զցած
դուրս եկաւ ուսուցչական սենեակից: Բայց փոխանակ
խրատուելու, անազնիւ արարածը իր փշացած արիւ-
նով սննդուող հոտած ուղեղով հնարած միկնոյն յե-
րիւրանքը աւելի զարգարանքներով պատմել էր իմ
բարեկամ Ի. Յ.-ին և այնպէս ձև տուել, որ Յ.-ը
սուտ-քրիստոսի թակարդն ընկնելով՝ յանձն էր առել
ձրի փաստաբանել Ս.-ի համար: Եւ երբ Տ.-Յով.-ի
տանը այդ ձրի փաստաբանութեան համար արդար
ցասմամբ բռնուած՝ ստախօս քահանայ բարեկամի
կատարած տմարդի դերը պարզեցի, պ. Ի. Յ.-ը օր.
օր. Կ. Մ.-Ս.-ի, Ս. Տ.-Յ.-ի և վերջինիս մօր մօտ ազնիւ
խօսք տուաւ, որ ինքը ձեռք է վերցնելու իր անփա-
ռունակ պաշտօնից—ձրի փաստաբանութիւնից:

— Ինձ այնպէս էր պատմել նա (այսինքն սուտ-
քրիստոսը—Մողնու միաբան և ոչ-բարով աստուածա-
բան Սահ. քահ. Սահակեանը). իսկ հիմա տեսնում
եմ, որ նա սուտ է ասել: Պարտական լինիմ թէ այ-
սուհետև այդ մասին որևէ բան խօսեմ:

— Ազնիւ խօսք, սիրելի Իսահակ:

— Ազնիւ խօսք:

Եւ ի պատիւ բարեկամիս պէտք է ասեմ, որ տուած ազնիւ խօսքը ճշտութեամբ պահեց:

Իցէ թէ բարոյականութեան հետ միշտ կոմպրոմիսաներ անող կեղծաւորներից կամ խիկար իմաստուններից մէկը՝ Ամերիկան գտած մարգուլ նման խորակտորնորդ կերպով նկատէ, որ այդ մերկացումս՝ մի քահանայի վերաբերմամբ վեհանձն գործ չէ: Անկեղծաբար կ'ընդունեմ այդ նկատողութիւնը միայն այն պայմանով, որ մեռելները յարութիւն առնեն՝ կենդանիների հետ ունեցած իրանց բոլոր տեսակի հաշիւները մտքրելու համար, և մանաւանդ այդ նկատողութիւն անողը խոստովանուի, որ Մողնու միաբան սուտ-բրիստոսի արարքը իմ վերաբերմամբ շատ անվայել բան էր աստուածաբանի տիտղոս կրող մի քահանայի համար և վայել միայն բարոյապէս ստոր ընկած մի ցած, մի տգէտ խաբեբայի, որ չի հասկանում, թէ ստախօսութիւնը, և այն՝ միտումաւոր, անմեղին ու արդարին անուանարկող վատաբար յերիւրած ստախօսութիւնը ամենացած տեսակի անազնութիւն է, որ յատուկ է միայն բարոյապէս ընկած զգուելի սրիկային, բայց ոչ երբէք Աստուածորդու փոխանորդին:

Ընթերցողն էլ հետս կը համաձայնի, որ դպրանոցաւարս գիւղական վարժապետը գիւղի գրագէտներից եթէ առաջինը չէ, գոնէ առաջիններից է: Եւ որովհետև այդ ոչ-բարով վարժապետը միշտ՝ թէ խօսքով և թէ նամակներով մի-գլուխ այն էր պընդում՝ որ ինքը ազնիւ ձգտումների տէր է, հասարակութեան օգուտը ամեն բանից վեր դասող, մաքուր վարքի տէր, անմեղ աշակերտներին քարի օրինակ

հանդիսացող, ես էլ նրա այդ շատ հասարակ ու բընական յատկութիւններին՝ միամտաբար թէ անմտաբար հաւատ ընծայէի՝ առանց հետուն մտածելու, որ դիմացինս կարող է կեղծաւոր փարիսեցի, նոյնիսկ հրէշ լինել: Բայց հետզհետէ երբ այս ու այն դէպքով կասկածներ սպրդեցին սրտիս մէջ և ես աւելի աչալուրջ դառնալով՝ աչօք-բացօք տեսայ անողոք իրականութիւնը՝ որ սխալմամբ մարդ կոչուած Քամակեանց Ս. Ը ոչ-թէ գրագէտ, այլ գրագէտների տականքն է եղել իսկապէս, որի համար մի-երկու արշին գետինն աւելի զին ու արժէք է ունեցել, քան 7—800 ւուն ունեցող մի ահագին, զուտ հայ-գիւղի իգական սեռի կրթութեան գործը, երբ իմացայ որ զագիր վարքի տէր է— ուսուցչի սրբազան անուան տակ թաքնուած մի այլանդակ հրէշ է եղել անմեղ մանուկների մէջ ընկած, պարզ է որ պէտք է յուզուէի, վրդովուէի, ատամներս կըճատացնէի, թէ ինչո՞ւ, ինչո՞ւ եմ ես ընկեր-բարեկամ եղել այդպիսի մի մարդակերպ հրէշի:

Անձնասիրութիւնս սոսկալի կերպով վիրաւորուած տեսայ. չէի կարողանում ներել ինձ, թէ ուր էր դիմացինիս հոգու մէջ թափանցող աչքերս կամ սուր միտքս. ինչո՞ւ նախագգուշացնողների խօսքերին կասկածանքով վերաբերուեցի 1883 թուին և հաւատ ընծայեցի այդ այլանդակ բարոյականի տէր անարգ արարածի սուտ խոսովելուն:

Հոգեկան զրութիւնս անտանելի էր. զրութիւնս՝ որ ոչ-ոքի չէի ցանկալ: Ո՛վ երբեկիցէ եղել է այդպիսի կամ նման զրութեան մէջ, միայն նա ինձ կը հասկանայ, նկարագրել այդ իսկութեամբ՝ շատ դժուար է: Բայց-և այնպէս, տարայ անձնականապէս կրածս վիրաւորանքը:

Միակ բանը, որ արի վրդովուած հոգիս խաղաղացնելու համար, այն էր, որ ցտնկանալով մտքիցս իսպառ ջնջել՝ «քո Քամալեանց Ս.» զգուելի բառերը, առիթ եղած ժամանակ նրան ուրիշ անուն չէի տալիս, բայց եթէ՝ «քոսոտ-շուն»։ Եւ երբ մի-մի անգամ Յոֆանեան դպրոցի նախկին այս կամ այն վարժուհուն և կամ ուրիշներին հարցնում էի՝ «նվ է քոսոտ-շունը. տղայ (կամ աղջիկ) կ'ասեմ, եթէ իմանաք։

—Վն, էլ ով պէտք է լինի՝ Քամալեանցն է, — պատասխան էի ստանում միշտ։

Ուրեմն Քամալեանց Ս.-ի անունը քոսոտ-շուն դնելով նրա աննորմալ հակումն ունենալու պատճառով, ես ամենքի սրտիցն էի ջուր խմել։

Այն, քաջութիւն ունեցայ տանելու անձնակա-նապէս կրածս վիրաւորանքը և աշխատեցի միշտ լուծ-թիւն պահել այդ երկոտանի քոսոտ-շան վերաբեր-մամբ և նրա գոյութիւնն իսկ մոռանալ։ Բայց երբ տեսայ այդ թշուառականի հասցրած վիրաւորանքը ճշմարտութեան, այլևս հանդուրժելը վեր էր իմ ոյ-ժից, ուստի և մոնչացի որպէս վիրաւոր առիւծ. սա-կայն անմիտը զգուշութիւն չունեցաւ շտապել իր որ-ջում թաքնուելու, որի համար և ահա վայելում է իր անզգուշութեան պտուղը։ Ուրեմն ով է մեղաւոր, եթէ ոչ իր անմտութիւնը։

Աստուած, ասում են, երբ մէկին ուզում է վը-նասել, առաջ ու առաջ խելքն է առնում։

Մերկացումներիցս խելայեղ եղածի գլխի մէջ եթէ մի մսխալի չափ խելք լինէր մնացած, նախ՝ նա չպէտք է լոյս հանէր իր յիմար բրօշիւրը, և երկրորդ՝ չպէտք է հրատարակէր ոչ 1883 թ. ապր. 27-ին գրածս և ոչ 1884 թ. ապր. 18-ին, գրածս. վասնզի

թէ միւս նամակներից և թէ մանաւանդ գրանցից՝ պատույ, պարտականութեան մասին որոշ պաղափար ունեցող խելացի մարդու համար մերկասպարանոց երևում է իմ ներքին աշխարհը՝ թէ հէնց սկզբից ինչ եմ եղել ես, ինչ է եղել իմ դաւանանքը, և որ այդ-պէս դաւանանքի տէրը չի կարող ստել, ոչ էլ կրքից տարուելով զրպարտութիւններ անել և այն էլ հրա-պարակով—սիրած ու յարգած մամուլի մէջ։

Այդ նամակներիցս պարզ երևում է կամքիս ոյժը, և որ ես օրիցս 23 և աւելի տարի առաջ եմ եղել գործնականապէս այն, ինչ որ քովլու աքաղաղութիւնն անում—շատ են պարծենում մեր այժմեան ծակ-լաբուն (լիլիպուտ) «ազգափրկիչ» գործիչները և դեռ իրանց արածի համար ստացած փառաւորագոյն «առանձնակի» վարձատրութիւններն ու մանաւանդ կլորիկ ամսականներն էլ քիչ համարելով դժբաղդ Ազգիցս կուրօրէն երախտագիտութիւն էլ են պա-հանջում...

Բայց դիտէք, ընթերցող, թէ ինչո՞ւ է այդ սը-խալմամբ մարդ կոչուածը անմտութեամբ ինքն իրան-այդ արջի ծառայութիւնն արել. որովհետև այդ նա-մակներիցս մէկում կայ այս խօսքը՝ «Սորէն վ. Ստե-փանէն ինձանից գիժ է»։

Ergo! Ես այժմ պէտք է որ խելագար լինիմ, բանի որ հրապարակով աղուէսադրոշմ եմ խարանում Սարգիս Քամալեանց կոչուածի անամօթ ճակատին։

Վերև կասկած յայտնեցի, թէ նամակներս հարա-զատութեամբ չեն առաջ բերուած, այժմ՝ նորից նոյնը կրկնում եմ։

Վերև այն ևս ասացի, թէ այդ մտքի պոռնիկի նոր գրած 15 էջի մէջ չկայ մի հատ նախադասու-

թիւն, որ ստուծիւն, կեղծիք, խարդախութիւն չը պարունակի:

Գրել է. «Լեոնը իւր սենեակում հիւրընկալել պահել էր ինձ ամսից աւելի (ինչո՞ւ ուղիղը չասել՝ երկար միջոց—ամիսներ), ճաշել ենք միասին, քնել ենք իրար հետ: Մեզ հետ էր ապրում և Լեոն Մովսէսեանը (ինչո՞ւ հէնց սկզբից չասացիր այդ, զո՞ւրեք խարդախ)*: Լեոն Մովսէսեանին էլ սրտով կպաւ խարդախ»): Լեոն Մովսէսեանին սրտով կպաւ, այդ ազնիւ հոգուն—Լեոնիկ Մովսէսեանին սրտանց, հոգոյս բոլոր զօրութեամբ սիրեցի): Բայց որպէսզի իրան նրա հետ չխառնեմ (անիծած ոտախօս) կանչելիս նրա անունը շինեց Լեոնիկ**): և խառն պահանջում էր ինձանից (սհ, իծի՛ ծնունդ), որ բացի իրանից ուրիշ ոչ-ոքի «Լեոն-Չան» չասեմ (չկարծեմ թէ մի այլ մարդածին արարած երբեքիցէ այդպիսի անազնիւ ստուծիւն ասած լինի): Մի խումբ հայրենակիցներով Լեոնը մինչև երկաթուղու կայարանը եկաւ ու արտասուելով (?!) ինձ ճամբու գրեց դէպի Նիժ): (Երիցս նզովից արմատ, անիծեալ գրական պոռնիկ, գուցէ սուտ կարելի է ասել, բայց այդպիսի

*) Ուրեմն երեքով մի անկողնում էինք քնում, ո՞վ դու զո՞ւրեքի գրչակ. գոնէ քո խարդախօրէն գրածը կարդացողը այդպէս է կարծում և ինձ հարցնում.—Սյդ ի՞նչ է գրել է՞ն յիմարը. չէ՞-որ դու տանդ աւելորդ անկողին էիր պահում, բացի դրանից՝ որքան գիտենք, դու անկարող ես ուրիշի հետ միեւնոյն անկողնում պառկել:

**) Անազնիւ սուտ է, դրան ապացոյց իմ բարեկամ Տիգրան Նազարեանը, որ ինձ միշտ Լեոնիկ է կանչել և կանչում, գրել և գրում, սակայն ոչ մի անգամ նկատողութիւն չեմ արել, թէպէտ Լեոնիկիս յիշատակը միշտ անմոռաց է ինձ համար:

ստեր: Նախ՝ ես այդ օրը կայարան չէի կարող գալ այն պարզ պատճառով, որ թէ՛ այդ օրը, թէ՛ դրա նախընթաց և թէ՛ յաջորդ օրերը՝ ինչպէս ասում են, քիթ սրբելու, նոյնիսկ հաց ուտելու ազատ ժամանակ չունէի. սոստիկ զբաղուած էի պ. Արիս. Յովհաննիսեանի ուսերէնից-հայերէն բառարանի արտագրութեամբ, որի համար ստացածս կոպէկներով էի կարողանում քեզ ու Լեոնիկին հիւրընկալել ամիսներով: Երկրորդ՝ ես մօրս պատուէրները մոռացող գաւազներէից չեմ. եթէ նոյնիսկ Պետերբուրգ բժշկուելու գնալուցս առաջ աշխարհիս երեսին ինձ համար միակ թանկագին էակին—Փոփոնիս զիւղ ճամբելիս անգամ չարտասուեցի, ուր հէք կինը աննպաստ պայմանների մէջ պէտք է ապրէր և գնում էր սարսափելի քամուն ու եղանակին*), իսկ նրանից բաժանելուց 5 ընդէ յետոյ մինչև ծնկներս կուր գետի մէջն էի. մի-երկու քայլ էլ՝ ամեն բանի վերջ կը լինէր, բայց յանկարծ ուշաբերուելով՝ որ իմ մահուամբ՝ հօրս մահից յետոյ իսկի լաւ օր չտեսած անոյշ Փոփոնիս կսկիծ եմ պատճառելու, իսկոյն ուշաբերուեցի և ասի դուրս եկայ: Եթէ նոյնիսկ սըրտանց սիրածս մտերիմ Լեոնիկիս զո՞ւրեքի պաշտօնով Մոսկուա ճամբելիս չարտասուեցի, այլևս ինչո՞ւ պէտք է արտասուէի քեզ ճամբելիս, քանի որ Լեոնիկիս հարամ եղունգը չէի փոխիլ 100,000 քեզպէսի հետ. այո, ինչո՞ւ պէտք է արտասուէի քո գնալու համար, քանի-որ միշտ քաղցած զկոտացել էիր, իսկ իմ՝ շնոր-

*) Չլինէր այդ դժբաղդ ճամբորդութիւնը, ես հիմա երջանիկների թուին կը պատկանէի, վասնզի հրեշտակ Փոփոնիցս զրկուած չէի լինիլ. զրկողութիւն՝ որ երկրորդ և ամենամեծ դժբաղդութիւնը եղաւ ինձ համար:

հիւ կեանքիդ մէջ առաջին անգամ ճամբու ծախքը վաղօրօք գրպանած, մինչ այդ քեզ համար իդէալական 600 ուլբլի ոտձկով նիժ էիր գնում: Ինչո՞ւ, ասա՛, ով դու՛ խեցգետնից էլ ստոր ու զգուելի՛ արարած):

Բայց ախր այդպիսի անլուր ստերով հրապարակ դուրս եկողը փոքր երեխայ չէ, այլ շուտով 50 տարեկան կը դառնայ, ոչ-բարով իրախակ ասութեամբ, 25 տարուայ գրող է (իրաւ որ «գրող» և այն էլ «սևահոգի-գրող»):

Հօրը գրածս նամակը նրա համար է խարդախած առաջ բերել, որ կարդացողը նոյնպէս կարծի, թէ ես մինչ այն աստիճան սիրելիս եմ եղել իրա պէս հրէշին, որ իմ սուղ միջոցներից մինչև անգամ գութան էլ եմ առել հօր համար. գոնէ այդ հարցով շատերն են դիմել ինձ:

Երբ մի մարդ խնդրած դրամը չստանալու հաժար մոռանում է այն աղ ու հացը, որ միշտ զխտուել է X հարուստի տանը և նրա վրայ զգուելի պասկ-վիլներ է յերկրում և անմեղ ընտանիքին վիրաւորում, այլևս ինչ կարելի է պահանջել այդպէս բարոյապէս ընկածից, թէ ոչ՝ միայն խարդախութիւն:

Այդ նամակս աղաւաղած հրատարակելու շարժառիթներից մինն էլ այն է, որ ցոյց տար, թէ ես՝ Լևոնս յարգում էի իրա հօրը: Այո, յարգում էի, երբ ենթադրում էի թէ իրա հայրը՝ տերզիկ Աւետիք Քաճարեանցը մի բարի, արդարութեան ճանապարհով ընթացող ազնիւ արհեստաւոր է. սակայն երբ արժանահաւատ աղբիւրներից իմացայ թէ Նալբանդեանց ընտանիքի բաժանման գործում ինչ տգեղ, ինչ անազնիւ ու վայիս դեր է խաղացել իր ոչ-բարով վարժապետ որդու հետ, երբ խմելու համար նրա հոգի տալն իմացայ, կամ ինչպէս հանգ. Ս. Պառաւեանցն էր

ասում՝ «մի բաժակ արագ որ հեռուից ցոյց տաս, կարող ես գիւղի մի ծայրից միւսը տանել Ս. Քամալեանցի հօրը». անհոգիներից յետոյ ես դադարեցի նրան ըստ առաջնոյն յարգելուց: Ապա որդու հրէշ լինելն էլ վրայ գալով՝ վերջնականապէս մեռաւ իմ մէջ այն անկեղծ յարգանքը, որ ես տածում էի դէպի նրան:

Մարդուն իսկապէս մարդ դարձնող արդարութեան զգացմունքից եթէ զուրկ չլինէր այդ այլանդակ բարոյականի տէր երկոտանի հրէշը, երբ առաջ էր բերում այն նամակս, ուր յարգելի բարեկամներիս — պ. պ. Նազարեանի և Ղ. Աղայեանի հասցէին որպէս-թէ պակաս խօսքեր եմ առել, նա՛ այո, եթէ ազնիւ լինէր, պարտաւոր էր առաջ բերել նաև միւս — ինձ համար նպաստաւոր նամակս, ուր խորհուրդ եմ տուել այդ ողորմելի զրչակին Աղայեանին հետեւելու որպէս ամեն բանով իրա համար օրինակելի մարդու և լաւ լեզու ունեցողի: Սակայն ենթադրեմք թէ ճիշտ որ կէտառկէտ այնպէս էլ զրել եմ. մի՞թէ տասնեակ տարիներ առաջ ըոպէական տպաւորութեան տակ մասնաւոր նամակում գրածս պակաս խօսքը առաջ բերելով հերքվում են իմ այժմեան գրածներս, որ ինքը լիքը է, անամօթ և զրական պոռնիկ, հետևապէս՝ բարոյապէս ընկած և ամենքից արհամարհուած պատուազուրկ անարդ արարած:

Եւ վերջապէս այդ զրել եմ 1887 թուին, մինչդեռ նորերս, երբ յարգելի պ. Աղայեանը առանց շարժառիթի, լոկ թիւրիմացութեամբ ինձ պակաս խօսքեր ասաց «Ընկեր» շաբաթաթերթի մէջ, ես՝ բարոյապէս ընկածի կարծիքով «կրքոտս» ու «կրքից կուրացածս», նրա պակաս խօսքերին խորին յարգանքի տոնով պատասխանեցի նոյն շաբաթաթերթում և յօ-

դուածս էլ վերջացրել էի այսպէս՝ «ըստ առաջնոյն

Ձեզ յարգող Լևոն Մելիք-Աղամեանց»:

Ձէ-որ այդ յօդուածս անցեալ տարի տպուեց «Ընկերի» № 31-ում և չէր կարող կարգայած չլինել ողորմելի զրչակը, հապա ինչո՞ւ է դիտմամբ մոռացել, այն-ինչ իրա վերաբերմամբ հակառակ կերպով է վարուել:

Ընթերցողը պարզ տեսնում է որ սխալմամբ մնալով կոչուած Քամալեանց Ս.-ը կամ «Սերգօ-Չանը» ինձ համար միշտ նոյն արժէքն է ունեցել, ինչ որ քեռի-կարապետի համար մկնորս ու շաքար լափող ճուճկի Տոկոզն:

Բարոյապէս ընկած գրչակի յիշած Նիկօլը իր դասընկերն ու մտերիքն է եղել, իսկ յետոյ, բաւական ուշ, երբ արդէն վաղուց ընթացաւարտ էր, իմ էլ ծանօթն էր, որ հետզհետէ դարձանք ընկեր ու մտերիմ-բարեկամ և այդպէս էլ մնացինք մինչև իր մահը, այն-ինչ նա երես թեքելով մօտ 25—30 տարուայ դասընկեր Քամալեանից, իբրև մի հրէշեց, մինչև իրա մահը մնաց նրա արիւնարբու թշնամին, որին ատում էր իրա հոգու բոլոր գօրութեամբ, որից զզվում էր իրա սրջ էութեամբ:

Իսկ ինքը՝ սխալմամբ մարդ կոչուածը այնքան պատուազուրկ է, որ երբ Նիկօլը վախճանուեց, առանց ամաչելու գնաց վրան դամբանական կարդաց:

Սնու է թէ հանգուցեալն ինքն է խնդրել այդ բանը. Ոսուտի-բէզը չի կարողացել հասկանալ իմ սիրելի «Կօրդայ փրկիսփայի» *) դառն հեգնութիւնը. վասնզի

*) Այդ փութ-անունը ես էի կպցրել հանգուցեալին, որ շտապ գնալիս պէտք է անպատճառ ծխախոտը բերանին

հանգուցեալը մէկ շատ առաջ, երբ դեռ կարողանում էր տանից դուրս գալ, մէկ էլ մահուանից 2—3 օր առաջ ինձ ասաց դառնութեամբ.

— Տես, Լևոն, էս է ատում եմ՝ միտքդ պահիր. էն շունը (Քամալեանցը), չեկաւ ինձանից ներողութիւն խնդրելու. բայց երբ մեռնեմ, որ երևի շուտ կը լինի, անպատճառ կը գայ և դամբանական կը կարդայ վրաս: Ի՜նչպէս կ'ուզէի՝ դազաղիցս իջնել, մօտենալ, խը՛-անել, անամօթ երեսին թքել և կրկին դազաղիս մէջ պառկել ընդմիշտ: Ա՛յ, կը տեսես...

Շնչառութիւնը աւելի արագացաւ, որ փսսա էր հիւանդին:

— Հանգստացիր, Նիկօլ-Չան, արժէ այնպէս շան պատճառով այդպէս յուզուել. բացի դրանից չեմ կարծում թէ նա այնքան անամօթ ու աներես լինի, որ թոյլ տայ իրան այդ քայլն անելու. գուցէ նա՛ հեռու քեզանից, իսկի յուզարկաւորութեանդ էլ չգայ:

— Օ, դու դեռ նրան լաւ չես ճանաչում, Լևոն, ինչպէս որ ես եմ ճանաչում: Այդպէս անպիտան ու ցած մարդ մի ուրիշը չկայ ողջ աշխարհում:

Նիկօլիս թաղման օրը համոզուեցի, որ իրաւունք ունէր ողորմածիկը. ես դեռ էլի լաւ չէի կանաչում, թէ այդ սխալմամբ մարդ կոչուածը մինչ որ աստիճանի պատուազուրկ անարգ արարած է եղել:

Անկախ այդ ամենից խորհուրդ կը տայի այդ ողորմելի գրչակին, որ գոնէ իր գրած զգուելի պասկ-վիւների վաճառումից ստացած գրամից տայ Նիկօլին հասանելիքը նրա՝ հացի կարօտ եղբօրը: Թո՛ղ գոնէ

լինէր և լուջ դէմք ստացած: Երբ յայտնում են նրան այդ բանը, որպէս ճշմարտասէր՝ առանց նեղանալու բացականչում է. «Վնայ, ինչ յարմար անուն է կպցրել»:

այդ վարմունքով ցոյց տայ, թէ զուր չէ, որ մարդկային կերպարանք է կրում:

Փոխանակ լամպիս վրայ Նիկօլի սիրահարուելը, նրա վերաբերեալ ծիծաղելի, միբիչ էլ հետաքրքիր, համով-հոտով պատմութիւնն անելու, և դրա հետ էլ հին բժշկարանի մէջ՝ պ.պ. Ադ. Մանթաշեանի, Վահ. Մութաֆեանի, Եփ. Ծատուրեանի, Իս. Ծովիանեանի, Ադ. Մելիք-Ազարեանի և Մ. Թաւաղեանի՝ «գարմանք դեղը», «մաջում գարմանալին» նրանց եռանդով որոնելն ու չգտնելը, իմ գտնելն ու նրանց՝ լամպերը շարժող թնդալի ծիծաղի մասին գրելու, ողորմելի գրչակը դիտմամբ վերցրել է ողջ պատմութիւնից մի ծլանգ—փոքրիկ շերտ և ընթերցողին հրամցրել: Ոչինչ, թող այդ ծլանգը տար, բայց գոնէ գոյնը անաղարտ պահած. սակայն լինելով խարդախ, այդ էլ չի արել:

Ես ու Նիկօլը գնալով Մակարովի պաղպաղ՝ պ. Գր. Մովսէսեանի մօտ, լաւ կոնծեցինք: Երբ երեկոյեան ճրագը վառեցին և լամպէն սկսեց ծուխ անել, նկատեցի.

—Դէ ասէք տեսնեմ, բա իմ լամպէն լաւ լամպա չի, իմ լամպէն այդպէս ծուխ կ'անէր:

Ահա այդ՝ կատարս տաքացած միջոցին գրածովս է ուզում «բնաւորութեանս տարօրինակ կողմը ցոյց տալ»: (Ողորմելի, ողորմելի գրչակ. այդ շնորհքով ես ուզում տ. Նազիրեանցի կտակի մասին գրել. այդ շնորհքով ես ուզում «Արձագանք»-ի հանգ. խմբագրի կենսագրականը տալ, և այլ նման յանդգնութիւններ):

Այդ ողորմելի գրչակը եթէ ուզում էր իմ «բնաւորութեանս տարօրինակ կողմը» ցոյց տալ, աւելի լաւ չէր որ յիշէր Ադամիս մասին իր գրած ցնդաբա-

նութիւնը և ապա առաջ բերէր այդ ցնդաբանութեան առիթով տուած պատասխան-նամակս, ուր, ի-միջի այլոց, օրիցս ճիշտ 25 տարի առաջ գրել եմ.

— Անպիտան պօլտի, դու քեզ թոյլ ես տուել ասելու, որ Ադամիս մարդ չի դառնալու: Ես Ադամիս կը բերեմ այստեղ, նրան այնպէս մարդ դարձնեմ, որ Քամալեանց ազգն ու տակը և դեռ օխտը պորտ էլ ապագում որ բերանով դուշ բռնէք, է, էլի չկարողանաք Ադամիս հասնել բարոյապէս»:

Ահա մի լաւ առիթ, որ ապացուցի, թէ յիշողութիւնս այնպէս նախանձելի չէ, ինչպէս գրքիս սկզբում ակնարկեցի. այն, հանի այդ քառորդ դար առաջ գրածս նամակը և փաստացի ցոյց տայ, որ այդ չակերտներով առաջ բերածս խօսքերը ճիշտ չեն: Բայց ո՛չ, ո՛չ, այդ նամակը ևս կարող է կորած լինել, իբրև իրան անձեռնտու նամակ:

Իսկ թէ ես Ադամիս համար տուած տարօրինակ խոստումս կատարեցի, դրա անհերքելի ապացոյցը պ. Վախտ. Մեհրաբեանցի կարդացած և իրա՝ մարդակերպ հրէշի խօսեցած դամբանականները: Եկեղեցու դռանը, ուր դազաղին հանգիստ տուին, այդ արտաքուստ միայն մարդանման վարժապետը յուզարկաւորներին մատնացոյց անելով ինձ վրայ, հետևեալը վրայ բերաւ.

— Այս մեր պատուական հայրենակցի կրթած ու մեծացրածն էր երիտասարդ հանգուցեալը: Այս մուրազաչորը այնքան նամուսով էր, այնքան պատուազաւ, որ եթէ մեր Շուլավէրու հարս ու աղջիկները (անչափ հետաքրքիր է՝ ինչո՞ւ էր լուծմ երիտասարդների մասին) սրա կիսի-կիսի չափ նամուսով լինէին, մեր գիւղը սղջ կուկասի մէջ առաջինը կը լինէր, և այլն, և այլն:

Ահա այդ և նման են շատ ու շատ բաներ թող
առաջ բերէր, որպէսզի աւելի պարզ կերպով երևար
«կրքոտ» լինելս, հակասութիւնս, «բնաւորութեանս
տարօրինակութիւնը»:

Իդուր չէր, որ երբ մի շուլավերցի կարգաց
ողորմելի գրչակի բրօշիւրը, արհամարհանքով դէն
շարտեց բացականչելով՝

—Սարսաղ է էդ մարդը. ոչ-միայն խաղը ջլիդ-
դան (բոլորովին) պակասելուց նէյնըմ-նէյնըմն է ըն-
կել, այլ ոնց-որ տեսնում եմ, էդ տնաքանդի սազի
սիմն էլ է կտրուել:

Անսման դիտողութիւն:

Այդ թէ՛ արտաքինով և թէ՛ մանաւանդ ներքին
աշխարհով իսկ-և-իսկ խուլիզանը՝ լաւ ճանաչելով թէ
ինչ օրհնեալ ծառի պտուղ եմ, վստահութեամբ ինձ
ուղարկել է իր ընտրածի մօտ ոչ-թէ խնամախօս,
այլ... հարսնախօս, և որի համար ես, միայն ես
պիտի պարծենամ, բայց արիք տեսէք որ ինքն է
պարծենում: Պարզ է որ այդ սխալմամբ մարդ կո-
չուածը իրա գրածն էլ չի հասկանում, էլ իմ գրած-
ներն ինչպէս հասկանայ և ըստ էութեան պատաս-
խանէ:

Լաւ միտս է. ինքը նիժից նոր էր վերադարձել,
ես էլ Շուլավէր էի: Հէնց առաջին տեսութեան ժա-
մանակ զգուելի ժպիտը անամօթ երեսին (արդեօք
այդ հրէշին ճանաչողները չէն նկատել թէ ինչպէս
կեղծ է, զգուելի և սաստիկ յետ խփող դրա ծիծաղը)
մի առանձին իմն փքունութեամբ դիմեց ինձ.

—Ա՛, Լև, քու կեանքից մի վէպ եմ սկսել. նրս-

տիր կարգանք միասին ու տես ինչպէս է և քու
դայդի անկեղծօրէն կարծիքդ յայտնիր:

—Լաւ, դէ բէր տեսնենք շնորհքդ:
Բերաւ. սկսեցի կարդալ.

«Այս ինչ թուականի ձմռան սկիզբն էր...»
Բայց հազիւ էի երկու էջ կարդացել, դէն հրեցի,
ու տեղիցս վեր կենալով կռուփս բարձրացրի.

—Անպիտան դու. տունը գլխիդ քարուքանդ կ'ա-
նեմ. դու քո ձեռքով, պատուիր իսկոյն... Ի՞նչ ես
ապուշ-ապուշ նայում. պատուիր, ասում եմ, թէ չէ՛
էլ ձեռքիցս չես պրծնիր: Այդ գրածդ մի զգուելի
պարսաւազրի (պասկվիլի) սկիզբն է և ոչ-թէ օրինա-
ւոր վէպի... Ի՞նչ ես էջ ու գոմէջ կտրուել. պատուիր,
քեզ ասում եմ: Մածուն չի, թան չի, կարգին վէպ
գրելը ամեն մարդու բան չի: Քոնն այն է լաւագ
հէքիաթները, եթէ կարող ես՝ հարազատութեամբ միայն
գրի առնես, որովհետեւ դու մշակելու էլ շնորհք չու-
նիս, ինչպէս անում է պ. Աղայեանը. այն, առած-
ներ, նախապաշարմունքներ, օրհնանքներ ու անէծք-
ներ հաւաքիր, ահա այդ քո բանն է, թէ չէ կարգին
վէպ գրելը ինչ քո բանն է, տօ, անպող հայրան—անա-
սուն *). չէ՞-որ դրա համար շատ պայմաններ են հար-
կաւոր—ընդհանուր, բազմակողմանի զարգացումն,
գրական ճաշակ, իրերի ճիշտ ըմբռնողութիւն, ևայն
ևայն, յատկութիւններ՝ որոնցից ոչ մէկն իսկ չկայ
քո մէջ—Նօխտուր, հասկացար, անպիտան պօլտի...:

Դէ հիմա թող ընթերցողն ինքը դատի, թէ երբ՝
գոնէ ըստ երևութին, իրար հետ լաւ էինք, սէրով
էինք, կամ ինչպէս ինքն է ասում՝ «հոգով մի էինք»,

*) Ընթերցողը թող չգարմանայ. դրա հետ բերանացի
միշտ այդպէս եմ խօսել, որովհետեւ ուրիշ կերպի արժանի
չի եղել. և երեւի դրա համար է, որ ինձ ուշունցատու է ասում:

բացի լաւութիւնից ինձանից մազաչափ վատութիւն չէր տեսել, իմ մասին էլ միշտ լաւն էր լսել ու իմացել, իմ հաւն ու չէ-ն նրա համար օրէնք էր, (շատ բանի հետ այդ ևս ուրացիր, զգուելի մեծամիտ), հետեւապէս միայն և միմիայն հիացմունքի, երախտագիտութեան, միայն շնորհակալութեան զգացմունքով պէտք է ամբողջովին համակուած լինէր դէպի ինձ: Եւ չնայած իր սրտանց ուղեւուն, որ լաւ բան զրի իմ կեանքից և բաւականութիւն պատճառի ինձ, բայց-և-այնպէս օրինաւոր վէպի փոխարէն զգուելի պասկվիլ էր յերկրել: Այո, թող ընթերցողը դատի, թէ հիմա երբ իմ մերկացումներով ներսիսեան Դրպրանոցից վնդուելու պատճառ եմ դարձել, այսինքն բարոյապէս ոչնչացրել եմ իրան, հիմա ինչ ու ինչ փնթիւթիւններ գրելու ընդունակ չի լինիլ այդ բարոյապէս ընկած չալերտատր մանկավարժը, այդ պասկվիլանտ աստուածաբանը:

Վերև գրեցի թէ՛ եթէ կարող է—շնորհքի տէր է, թող միայն լսածը զրի առնի հարազատութեամբ և ոչ-թէ միշտ քմահաճօրէն փոփոխութիւններ ու խարդախութիւններ մտցնի լսածների ու ձեռքն ընկած գրուածքների մէջ, ինչ-որ իրա բանը չէ:

Իսկ թէ այդ սխալմամբ մարդ կոչուածը մինչ որ աստիճանի հետու է շնորհալի և պատուաւոր զբաղեւտ լինելուց և թէ որքան ճիշտ եմ ըմբռնել այդ բարոյապէս ընկածի փշացած ներքին աշխարհը դեռ 1886 թուականին, դրա անհերքելի ապացոյցը էլի ինքն է տուել: Այդ դէպքից մօտ տասը տարի յետոյ Նորին Օծութիւն Վեհ. Կաթողիկոսի գաւառներն այցի ելած միջոցին այդ ողորմելի գրչակը՝ իբրև «Արձագանքի» ոչ-բարով թղթակից երբ ներկայ եղաւ Ախալքալաքում Վեհ. Հայրիկի և Օհանջանեան յարգելի Հայր-

Մայրի խօսակցութեանը և ուրեմն անձամբ ականջալուր եղաւ, սակայն այնքան շնորհք, կամ գոնէ մի օրաթերթի թղթակցից պահանջած անհրաժեշտ ընդունակութիւնը չունեցաւ, որ՝ եթէ ոչ լիովին ճշտիւ և հարազատութեամբ բայց գոնէ ոչ էլ զլսովին ազաւաղած զրի առնէր պատկանելի տարիքի տէր երկու նահապետական անձանց խօսակցութեան բուն էութիւնը: Չէ-որ այդ խօսակցութիւնը պատմութեան անկապտելի սեպհականութիւնն էր դառնալու, ուստի-և ոչ-որք, առաւել ևս Քամալեանցի Ս.-ի նման մի զլսովին ողորմելի համբակ գրչակն իրաւունք չունէր մի նշանախեց անգամ փոխելու և այնպիսի բառեր ու խօսքեր մտցնելու, որ ամենևին տեղի չէին ունեցել: Այս անգամ ես ինձ զսպում եմ և որևէ անուն չեմ տալիս այդ տեսակ անփառունակ թրդթակցին, այլ թող ընթերցողը և այն խիստ լեզու գործածելուս համար վրաս բրթմնջացող ընթերցողը տայ այդ անունը:

Եթէ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ը՝ այդ ողորմելի գրչակը անճիշտ տեղեկութիւններ չըտար «Արձագանքին», նրանից էլ այդ սխալը չէր մըտնիլ հանգ. Գր. Ջանշեանի «Նորայրական Օգնութիւն» չնաշխարհիկ հրատարակութեան մէջ: Ամօթ այդպէս զբաղեւտին:

Սակայն բարոյապէս ընկածը, փժուն ու սին փառասէրն ինչ է հասկանում, թէ ինչ է ամօթը. իրապէս ոչինչին այն էլ բաւական է, որ գրեն թէ այդ խօսակցութիւնը զրի է առել «Քամալեանց Ս.» կոչուածը: Իսկ թէ զբաժը սուտ է թէ ուղիղ, ճիշտ է թէ անճիշտ, այդ այնքան էլ նշանակութիւն չունի նրա համար այն պարզ պատճառով, որ այդ ողոր-

մելի գրչակը ձիգ տարիների ընթացքում ստի
ու ճշմարտի, բարոյականութեան և անբարոյակա-
նութեան միջև ոչ-միայն տարբերութիւն չի գրել,
այլ դեռ, ինչպէս պարզ երևում է դրա անփառու-
նակ գործերից, միշտ էլ աշխատել է նախապատու-
թիւնը ստույգութեանն ու անբարոյականութեանը տալ,
այդ էլ նրա համար որ աչքի չընկնի իր աննօրմալ հակ-
ման տէր լինելը. եթէ ոչ՝ հապա ինչո՞ւ էր խուսա-
փում միշտ աշակերտների մօտ բարոյականութեան
մասին խօսելուց, և ոչ-միայն այդ, այլ դեռ խօսող-
ներին էլ մատնիչ էր անուանում:

Երբ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի՝
«Արձագանքում» գրածը կարդում են Հաջի-Մայրի
մօտ, վերջինս ճշմարտասէր նահապետական մարդու
արդար բարկութեամբ բացականչում է.

— Ես մինչև հիմա էնպէս զիտէի թէ գրքի, լը-
րագրի մէջ հէչ (երբէք) սուտ-սուտ բաներ չեն գրեր:
Ո՞վ է էդ ստախօսը, որ այդպէս ստեր է գրեր:

— Քամալեանց Սարգիսը:

— Ի՞նչ Սարգիս Քամալեանց. մէ վախարմ օր
էստեղ վարժապետ էր, էն:

— Այո, Հաջի-Մայր:

— Ամօթ էդպէս վարժապետին... Վայ, անիրաւ,
վայ. խօսելիս ինչըդ էլ ճշմարտասէր ու ճշմարտախօս
կը ցուցնէր իրեն: Էլ էդպէս սրախօս վարժապետը
ի՞նչ կրնայ սորվեցնել աշակերտներին: Թիւհ...

Ընթերցող, համոզուած եմ թէ ինքներդ էլ կը
համաձայնէք Հաջի-Մայրի հետ, որի ասած յանդիմա-
նական ու նախատիչ խօսքերը շատ բան են ասում
սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի և նրա
նման գրական ստախօսների անփառունակ գործու-

նէութեան վերաբերմամբ մեր մատաղ գրականու-
թեան մէջ:

Նախատիքի թնւք Քամալեանցի և նրա նման
անագնիւ գրանէտներին, որոնք փոխանակ ժողովրդ-
դին հաւատներն չեղան դէպի գրականութիւնն ու մա-
մուլը, ընդհակառակը՝ եղած հաւատն էլ մեռցնում են:

Ահա թէ ինչո՞ւ մեր ժողովուրդը ցանկալի չա-
փով լրագիր ու գիրք չի սիրում ու կարդում: Ժողո-
վուրդը, մանաւանդ խաւարի մէջ խարխափող ժողո-
վուրդ ասուածը մի անվերածնելի առեղծուած է, որի
հետ պէտք է շատ զգոյշ վարուել. նրա ձեռքը տա-
լիք բանը տասն անգամ պէտք է չափել և մի ան-
գամ կտրել, այլապէս յօնքը շինելու տեղ կը տանք
աչքն էլ փուլ կ'ածենք:

Վերի գրածիս ճշտութիւնը ստուգել փափագո-
ղը թող նեղութիւն քաշէ դիմել նահապետուհի Հա-
ջի-Մայրի յարգելի որդուն, հարսին, համալսարանա-
կան տղայ ու աղջիկ թոռներին ու միւս հարազատ-
ներին, որոնք բնակվում են Թիֆլիզում:

Ա՛հ, որքան սխալեցրել է ինձ այդ անիծածը
իրա շողմքոր խօսքերով, հաւաստիացումներով, որքան
համօրէն է բարոյականի կեղծ դիմակով անամօթ
երեսը ծածկելիս եղել, որ միամտութիւն եմ ունեցել
գրելու.

«Լսեցի որ Աղամս շատ է լղարել. վերահասու
եղիր, որ կրքի սւ տեղիդ անբարոյականութեան ան-
ղունը շննկնի (արդեօք այդ խօսքերը կարդալիս ին-
քը՝ անբարոյական վարժապետը գոնէ մի ըոպէ էլ է
չի՞ կարմրել, խղճի խայթ չի՞ զգացել). դրա վերա-
բերմամբ ես քեզ եմ ումուդ արել (երանի մի անե-
րկոյթ ձայն ասէր՝ Լևոն, գլուխդ բարոյն ես տուել),»

որ կը հսկես, կը խրատես, որպէսզի ֆիզիքապէս առողջ լինի»:

Որ ասել է թէ՛ էն վաղի յիմար հովիւի նման գառս գայլին եմ պահ տուել: Սակայն օրհնուի՛ այդ գառանը բարոյապէս մեծացնողի յիշատակը. որհնուի՛ նաև գառանս յիշատակը, որ միտը պահելով Փոփոնիս խրատները և չվախենալով երկոտանի գայլի ժանիքներից—շողովքոր լսօսքերից չխաբուելով՝ թակարդ չի ընկել:

Երբէք ոչ մի առիթ ձեռքից չէր փախցնում, որ չգրէր ու գանգատուէր, թէ «Շուլավէրու բահանաները վատ են, ազնուականները վատ են, ազգեցիկ գիւղացիք վատ են, ցեցեր են, ամենքն էլ անպիտան, իրան հալածող... ինքը՛ լաւ, ազնիւ, դպրոցը սիրող, «աշակերտների համար հոգի տուող»...»

Սակայն այս բոպէիս ողջ Շուլավէրում չկայ փոքրիշատէ օրինաւոր, խելքը գլխին նամուսով մի մարդ, որ արհամարհանքով ու զգուանքով չթքի իրանց նախկին վարժապետի վրայ, չանիծի սալախանայ—անբարոյական վարժապետին, հարկաւ բացի գառնազգեստ վայիսներից ու «ազնիւ երիտասարդներից»:

Թէպէտ ոչ մի անգամ կամքիս հակառակ այս տարուայ չափ շոքերին չեմ մնացել Շուլավէր, բայց մնալս զուր չանցաւ ինձ համար, աւելի ճիշտն ասած՝ իմ յարուցած հարցի համար: Վասնզի եթէ առաջ մի բան գիտէի մարդակերպ հրէշի կեանքից, այժմ 11-ը գիտեմ, եթէ մի վկայ ունէի, այժմ տասնեակներով կարող եմ համարել: Ապա ուրեմն եթէ երեսին աբուռ ունի, թող իր սովորած աստուածաբանութեան թելադրած «մեծահոգութիւնը» ծալի, ծալծլի ու ջէբը դնի և ԴԻՄԷ ԴՍԱՐԱՆԻՆ, կամ՝ լալկուի, պապանձուի, լուռի ու սասանուի:

Կրկնում եմ՝ իզուր չէր այստեղ—գիւղում երկար մնալս. գիւղից պէտք է վերադառնամ թիֆլիզ բարոյապէս մխիթարուած: Հրապարակով շնորհակալութիւնս եմ յայտնում այն շուլավեցիներին, որոնք իրանց գոհունակութիւնն ու երախտագիտութիւնն էին յայտնում ինձ, որ իրանց անմեղ երեխաներին փշացնողին, նրանց մէջ սոգոմական զգուելի ախտ տարածող սալախանայ վարժապետ Գամալեանցին իսյտառակել եմ հրապարակով:

Այո, ապրին, կեցցեն իմ համագիւղացիք. սըրտանց յաշողութիւն եմ ցանկանում իրանց լաւ ու օգտակար գործերին: Տար Աստուած, որ միշտ այդպէս լաւն ու վատը ջոկել իմանան. լաւ մարդուն, նամուսով մարդուն, գիւղի համար անկեղծօրէն ցաւող ու օգտակար մարդուն պատիւ ու յարգանք ցոյց տան, թե ու թիկունք լինին. իսկ ով վատ է ու վայիս, ով իր օգուտն ու շահը ամեն բանից վեր դասող է և ուրեմն գիւղի համար իսկապէս վնասակար, այդպիսիների երեսներին թքեն, հետները չխօսեն—ով էլ ուզում է լինի այդ վատը, այդ վայիսն ու վնասակար մարդը՝ զարգացած թէ տգէտ, մեծ թէ փոքր, հոգևորական թէ աշխարհական, հոգաբարձու թէ վարժապետ, հարուստ թէ աղքատ: Եթէ իրար հետ միաբանուած՝ վատին, վայիսին, անպիտանին հալածեն, գիւղը շատ չարիքից կ'ազատուի: Մանաւանդ ձեռք վերցնեն ծածուկ, սրա ու նրա գողունի—թաքուն՝ ապօրինի կազմած համախօսականների տակը ստորագրելու անպիտան և իրանց համար վնասակար սովորութիւնից:

Ախր ինչո՞ւ չէք մտածում, այ սիրելիք, որ լաւ և օրինաւոր բանը իրա օրումը ծածուկ չեն կատարում, այլ ափաշկարայ, օրը ցերեկով, ամենքի աչքի

առաջ: Իսկ եթէ թաքուն են անում, ասել է ապօրինի է, ասել է միջին մի նւ կայ. ուրեմն միշտ հեռու փախէք այդպէս նւով գործից, որ ոչ ձեր խղճմտանքը ծանրանայ և ոչ էլ գիւղը վնասուի: Որովհետև գիւղի, հասարակութեան օգուտը այս ու այն անպիտանի խաթրից շատ ու շատ վեր է, այդ մէկը լաւ իմացէք և ձեր ականջին օղ շինելով՝ միտներդ պահեցէք:

Երէկ, օգոստոսի 16-ին, փողոցում խօսում էի գիւղացոց հետ ջրի պակասութեան մասին, և մէկ էլ ներկայ եղողներից մինը, որ կարգացել էր «խաղը պակասած ու սաղի սիմը կտրուած աշուղի» անձարակ գործը—պասկվիլ-բրօշիւ-ը, պիմեց ինձ.

—Արա Լեվան, էն ի՞նչ ա գրել Քրմեալեանց ակումախ Սերգօն. բա հրմանչում չի՞ տիւ (գու) ի՞նչ ու ի՞նչ ես գրել, նա ի՞նչ ա պատասխան տուել. ախր հարդան հարայ (որտեղից սրտեղ). որ իրար չեն փռունում: Ես իմանում ի որ նա աննամուսի մէկն ա, համա ուղիղն ասեմ, ախպէր, չէի գիտում թա ջրիզան (բոլորովին) անարու ա ըլել էդ անսածակի տղէն:

—է, Լևոն ջան, —վրայ բերաւ մի ուրիշը, —թա տիւ մինն ես գրել, մենք տասնումինը գիտենք նրա գործերից. ըսրհէնց, այ (ձեռքով ցոյց տալով)՝ ծալ-ծալ, ծալ-ծալ...

Նարցյական հայեացք գցելով գիւղացոց վրայ, հարցրի.

—Ուղիղ է՞ Մ. ի սասածը:

—Ի հարկէ որ ուղիղ ա, բա խու սուտ չի:

—Իէ որ այդպէս է, ասել է թէ այդ ձեր սալախանայ վարժապետը խօլերայից, ժանտախտից էլ վնասակար մարդ է եղել ձեր երեխանց համար, ուրեմն երբ մէկ էլ գիւղ գայ, արածները երեսովը տուէք ու թքեցէք երեսին, որ գլուխն առնի-կորչի և

մեր գիւղը այլևս չմուրտառի իր ներկայութեամբ:

—Էդ հնց կը լինի, —տնազավարի—հեգնութեամբ նկատեց նոյն Մ. —նա որ գայ էստեղ, պէտք ա կաթողիկոս դարձած գայ:

—Ո՞նց թէ կաթողիկոս դարձած:

—Ընրհէնց էլի. երբ արտասանանից եկել էր, մի օր խալխը գլխին հաւաքած ասում էր՝—«հիմի ես շատ մեծ մարդ եմ դարձել, այնքան մեծ», —ես էլ մտքումս ասի՝ ոնց-որ մեր Շմալ գոմշի թրիքը,—անըրըմը էշը որ գնայ Երուսաղէմ, մղղրսի կը դառնայ...

—Այդ թող, դու ի՞նչ ասելու էիր, էն ասա:

—Իէ լաւ. ասում էր՝—«հիմի ես շատ մեծ մարդ եմ դարձել. երբ Խրիմեան Հայրիկը վախճանուի, եթէ ես կամք ունենամ, որ ուզենամ, է, նրա տեղը կաթողիկոսական գահ կը բարձրանամ»: (Երևի հէնց էդ վախան էլ «ժամանակն եկած կը լինի, որ մեր Պիպօգ-Նալը նշանաւոր կուրորդ դառնայ և եւրոպացիք գան մեզ մօտ թթնով բժշկուելու»):

— ... է կերել իշի տղէն... ըսրխին եշեցէք, նրկատեցին միաբերան Ղ. ը և ուրիշները:

Այդ ամենից ի՞նչ է հետևում, ընթերցող, այն՝ որ այդ խուլիզանի ներքին աշխարհ ունեցող ողորմելի գրչակը աննորմալ զգուելի հակման հետ ուղեղի աննորմալութիւն էլ է ունեցել:

Ախր առողջ ուղեղ ունեցողը, իրան թոյլ կը տայ ասելու՝ «եթէ կամք ունենամ, որ ուզենամ, է, կաթողիկոսական գահ կը բարձրանամ» և այդ միմիայն նրա համար, որ գնալով Բեռլին շան հափուովը մէկ գերմաներէն է սովորել և աստուածաբանութեան վերաբերեալ միքանի գիրք կարդացել:

Պարզ է որ՝ եթէ ոչ-բոլորովին, բայց գոնէ հաս-

տատ է թէ մենք գործ ունինք մի անընդունելի կիսա-
խելագարի հետ:

Եւ իրաւն ասեմ, հիմա ես ընդունում եմ բա-
րեկամներիցս շատերի նկատողութիւնը՝ սխալմամբ
մարդ կոչուածի վերաբերմամբ անխիղճ լինելուս մա-
սին. վասնզի հառարակ ընկածին անգամ այլևս չեն
խփում, իսկ ես նորից ու նորից եմ վէր հատում թէ
մտաւորապէս և թէ բարոյապէս ընկածին: Բայց երդ-
վում եմ աշխարհիս երեսին եղած ինձ համար նուր-
բական բաներով, որ իմ անխիղճ լինելու մէջ մեղա-
ւորը ես չեմ, այլ նախ՝ ինքը—բարոյապէս ընկածը՝
իր բերան պատռածութեամբ. երկրորդ՝ բարոյա-
կանութեան կեղծ դիմակ կրողների վայրահաջութիւն-
ները, որոնք մարդու համբերութիւնից հանում են, և
երրորդ՝ մեր ծակլաբուն—լիլիպուտ մամուլը, որ հար-
կաւոր դէպքում փոխանակ իր հեղինակաւոր ձայնը
բարձրացնելու՝ մարդ չգիտէ ինչ սկզբունքից զրդուած
զաքարէական պապանձումն է պահպանում, կամ հա-
սարակութեանը այնպիսի քարքարոտ ու մշուշապատ
լեռներով է առաջնորդում, որ դժբաղդ հայ-հասա-
րակութիւնը կարծէք կորցրել է լաւի ու վատի, շո-
վինիստի և ճշմարիտ հայրենասէրի, անբարոյական
շահախնդրի և անշահասէր բարոյական գործիչի և թէ
իրաւունքի ու պարտականութեան գիտակցութիւնը,
առանց որոնց հասարակութիւնը նմանում է ոչխար-
ների հօտին:

Հապա ուրիշ ինչին վերագրել այն բանը, որ թէ
հասարակութիւնից խելօք համարուածները և թէ
իրանք իրանց խիստ խելօք համարողները ամենա-
պարզ իրողութիւններն իսկ չըմբռնելով՝ իրանց թոյլ
են տալիս այնպիսի անմիտ հարցեր տալ և տխմար
դատողութիւններ անել, որ մարդ ակամայ փորձվում

է մտածելու՝ չլինի՞ թէ այս մարդիկ խելագարուել
են, կամ իրանք ևս աննօրմալ—հակաբնական հակ-
ման տէր են և ուրեմն մերկացումներս շատ էլ դիւր
չի եկել իրանց:

Ահա մասամբ էլ այդ անմիտ հարցերին ու տըխ-
մար դատողութիւններին վերջ տալու ցանկութեամբ
է որ քար հուպ տալով—սեզմելով սրտիս ստիպուած
եմ պատասխանել մի մարդու, որին սխալմամբ են
այդպէս կոչում, որից զգվում եմ անհա ՄՕՏ 12—13
ՏԱՐԻ է և նշ թէ ՄԻ ՏԱՐԻ, ինչպէս կարծում են
միամիտ և թէ անմիտ ու տխմար մարդիկ:

Չեմ յիշում որ հեղինակը ասել է՝ երկու ընկեր-
ներից մինը որոշեալ չափով ստրուկի դերի մէջ է
լինում, այսինքն կամակատար, քծնող ու նման յա-
կութիւններով: Միքիչ հետաքրքիր, միքիչ էլ՝ խոս-
տովանում եմ, ձանձրալի գրութիւնիցս ընթերցողը
կարող էր պարզ գաղափար կազմել մեր երկսի դերի
մասին՝ որ ստրուկի դերի մէջ ես չէի կարող լինել:
Բայց տեսէք թէ այդ այլանդակ բարոյականի տէր
հրէշը՝ այլևս իրան ազատ զգալով ստրկութեան կա-
պանքներից, ինչ յանգուզն լւրջութեամբ ու լրբու-
թեամբ է խօսում. «Երես էինք տուել», «համբերում
էինք» (զլխներդ քարոյն էիք տալիս). «զնացի Կողպ,
Լևոնը նամակագրութիւնը շարունակում է», «զնացի
Փանձակ, այդտեղ էլ Լևոնը շարունակում է նամակ-
ներ գրել...»:

Իէ ասացէք, ընթերցող, եթէ այդ վերի չակերտ-
րերի մէջ առուած խօսքեր զրոյը խուլիզանի ներքին
աշխարհ չունի, եթէ մտքի պոռնիկ չէ, ինչո՞ւ էր այդ
ձևով գրում. ինչո՞ւ իրողութիւնները ճիշտ չի նկա-
րագրել, որ ընթերցողները շփոթութեան մէջ չընկ-

նէին և յիմար ու անմիտ հարցեր չտային: Օրինակ՝
ինձ հարցնում են.

— Իրաւ 1883 թ. գլխէիւր նրա անբարոյակա-
նութիւնը և լուում էիր:

Բայց չէ՞-որ ես արդէն պարզ գրել էի «Զարկ»
շաբաթաթերթում, թէ ինչպէս այդ թուին առաջին
անգամ ունեցածս կասկածը ճարպիկ լարախաղացի
նման փարատեց իր երկու շաբաթ խոով մնալովը:

— Իրաւ է, ասում են, որ նա նամակներ չի գը-
րել քեզ, այլ միայն մի-գլուխ դու ես գրելիս եղել:

Պարզ է որ զգուելի պասկվիւանտ գրչակը եթէ
գրական խուլիգանութիւն չանէր, ընթերցողներն էլ
այդպիսի անմիտ ու ծիծաղելի հարցեր չէին տալ
ինձ:

Եթէ Արշալոյս Մխիթարեանը, որին «իմ բա-
նաստեղծն» էի անուանում, Գանձակ չլինէր, ես եր-
բէք ինձ թոյլ չէի տալ Քամալեանցի պէս անհամ
շատախօսին յանձնել հարազատներին տապանաբարե-
րի վրայ գրելիքը:

Իսկ ինչ-որ վերաբերում է այն բանին, թէ ես
իր անամօթ երեսից դիմակը պոկելով չպէտք է ցոյց
տայի իր այլանդակ դէմքը, որովհետև իրան խընդ-
րել եմ Փոփոնիս—մօրս գերեզմանը համբուրել, չա-
րաչար սխալվում է ողորմելի գրչակը: Եթէ ես դար-
ձեալ լռէի, և յարմար առիթը—«թեթև վերաւորան-
քը»*) աչքաթող անէի, թոյլ տայի որ անզգամբ
աւելի ևս անզգամանայ իրա անզգամութիւնները մէջ
և ճշմարտութիւնը վերաւորուած մնայ, հաստատ է

*) Ինչ-որ Քամալեանցի նման պատուազուրկ անարգ
արարածի համար Թեթև վերաւորանք է, այն չի կարող թեթև
լինել Փոփոնիս դաւակի համար:

որ անոյշ Փոփոնիս անմահ հոգին վերևից ձայն էր
տալու.

— Ինչ ես անում, Լևոնս. բաւական չէ որ կեղ-
տոտ շրթունքներ հպեցնել տուիր գերեզմանին, հիմա
էլ երբ տեսնում ես ճշմարտութիւնը ոտքի տակ ըն-
կած, ինչ-ինչ փափկանկատումներով լուում ես:
Բայց եթէ լաւ առիթը ձեռքիցդ թողնես և շարու-
նակես երկար տարիների դատապարտելի լուութիւնդ
և բարոյականութեան համար ձայնդ չբարձրացնես,
որպէսզի գոնէ այսուհետև անմեղ մանուկները ազատ
մնան բարոյապէս ընկնելուց ու ապականուելուց, այն,
եթէ դու այդ անմեղ հրեշտակներին—մարդկութեան
այդ անուշաբոյր ծաղիկներին թառամելուց չազա-
տես, միշտ բարոյական ու նամուտով մնալուն չօգ-
նես, ես էլ, հայրդ—Վարդանս էլ կ'անիծենք քեզ,
որ թերանում ես քո բարոյական պարտքդ կա-
տարելու դէպի այն հասարակութիւնը, որի մի
անդամն էլ դու ես...»:

Լինելու բան էր, որ թոյլ տայի իմ սխալուելով
վերաւորանք կրած անոյշ Փոփոնս անիծի ինձ իր
սրտանց սիրած Վարդանի հետ միացած. ոչ, այդ լի-
նելու բան չէր: Ահա այդ իսկ պատճառով նրա ան-
նման սիրտն առնելու համար, ես կատարեցի դէպի
հասարակութիւնն ունեցածս բարոյական պարտքս:

Միթէ իրաւունք չունէի ողորմելի գրչակին,
նչ-բարով աստուածաբան անուանելու: Թէ ունէի, դրա
անհերքելի ապացոյցը հէնց ինքն է տուել իրա պասկ-
վիլի մէջ:

Գրել է՝ «ինձ՝ իւր պաշտած (ժոնով ուտեմ քեզ
պէս աստուածաբանին) Սերգոյին անուանեց քարոյ-
ապէս ընկած մարդ» (այ հրէջ, հապա ինչ անուանէի

քեզ պէս այլանդակ բարոյականի տէր երկոտանի ճիւղղին, որ սուտ ասած չլինէի):

Հասարակութեան զգուելի տականք զրամաշորթ ստոր սրիկաները երբ այս կամ այն հարուստից զրամ են պահանջում եւ մերժումս ստանում, նրանք՝ սրիկաները՝ իբրև վրէժ գործ են դնում իրանց զէնքը— ատրճանակը:

Ողորմելի գրչակը անհամեստօրէն պռաջ բերած իր ցուցակ ծառայութեան մէջ իւրեր աշխարհի յայտնում է ինքն իր մասին՝ «պարոն (!) Քամալեանցը նոր մարդ չէ, այլ 25 տարուայ գրող»: Ընդունենք որ ինքը իրաւ որ «գրող» է. հետեւապէս լինելով 25 տարուայ գրչակ, իր զէնքը գրելն է: Բարի:

Եւ անհ երբ այդ չափերտաւոր մանկավարժը գլխի ընկաւ թէ «Հովիւ»-ի խմբագրին երեի յայտնի է Գանձակում տեղի ունեցած բայց շատերին անյայտ իր քսմելի տմարդի արարքը, որի մասին գուցէ-թէ Հայր-խմբագրին է պատմել ինձ, այն աստիճան կատաղեց, որ պատկիւր-բրօշիւրում արժան. Տէր-Եզնիկին յանիրաւի հայհոյելով էլ ապականուած սիրտը չհովացած, սրիկայաբար սպառնում է իրա զէնքով—գրչով թէ պատկիւր է գրում նրա դէմ:

Նոյն ողորմելի գրչակը նամակով զրամ է խընդրում X հարուստից եւ մերժումս ստանում և անհ նա՝ ոչ-բարով աստուածաբանը՝ Շմեղ անուևով դիմակաւորուած գործ է դնում իր զէնքը— իբրև վրէժ գրում է իր զգուելի պատկիւր և այդպիսով պարզ ապացուցում, որ ինքը Բեռլինում 4—5 տարի մնալով վերադարձել է հայրենիք պատկիւրանտի դիպլոմով:

Իէ հիմա ընթերցողը թող ձեռքը դնի խղճի վրայ և ուղիղն ասի, թէ ի՞նչ տարբերութիւն կայ հասարակութեան զգուելի տականք կազմող զրամաշորթ ստոր սրիկայի և չափերտաւոր մանկավարժ աստուածաբան և դիպլոմաւոր պատկիւրանտ Քամալեանց Սարգսի միջև:

րակութեան զգուելի տականք կազմող զրամաշորթ ստոր սրիկայի և չափերտաւոր մանկավարժ աստուածաբան և դիպլոմաւոր պատկիւրանտ Քամալեանց Սարգսի միջև:

Հետևապէս այդ բարոյապէս ընկած և ամենքից արհամարհուածին այսուհետև կարելի է ամենայն իրաւամբ անուանել նաև՝ սպառնական նամակով զրամաշորթներից էլ ստոր սրիկայ:

Երբ մի մարդ անբարոյական տեղովը իրան ուսուցիչ է անուանում, պատկիւրանտ գրչակ տեղովը մանուկների համար գրող կոչում ինքն իրան, երեսանց Busenkamerad-ութեան սիրահար է ցոյց տալիս իրան, մինչդեռ ինքը կեղծիքի ու խարդախութեան մարմնացումն է ներկայացնում, ինքը մի զգուելի եզուիտ է, բայց իրան երեցնում է անմեղ գառը, «մանկա...վարժութիւնը» բաշութիւն է համարում, այլևս գարմանալու չէ որ խուստի-բէգերի, «ագնիւ երիտասարդները» և դիւղի համար արդէն գրլխովին փաստակար դարձած վայիսների բարեկամը— այդ զրամաշորթներից էլ ստոր սրիկան ինձ յաղթելու համար (վայ քեզ, քոռածին, վայ քեզ, բէդգադ), այն, իր հիւանդ ուղեղի երեակայած յաղթութեան դափնին վայելելու համար այս կամ այն նամակիս գլուխը կտրի, ոտներն աչքումը դնի, փորոտիքն ուտի և միայն չոր ու ցամաք այն հրատարակի, ինչ-որ վիրաւորական է այս ու այն գործիչին, այն էլ շատ ու շատ գործիչներից ըստ ամենայնի յարգելի և արդէն վաղուց յաւիտենականութեան գիրկն անցած գործիչին: Գործիչ՝ որին հասնելու համար եթէ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս-ը այդ բարոյապէս ընկածը մօտ 50 տարի ապրելով, նորից տասը

50 տարի էլ որ ապրի, բայց այդ հակաբնական հակումով, այդ ողորմելի զարգացմամբ, իրերի վերաբերմամբ այդպիսի վայրենի հասկացողութեամբ, այն, եթէ 500 տարի էլ նորից ապրի և դեռ բերանով էլ դուշ բռնի, էլի, էլի չի պիտի կարողանայ հասնել այդ գործիչին—Գր. Արծրունուն, որի հասցէին իբրև թէ ուղղած եմ այն պակաս խօսքերը, որ առաջ է բերել:

Նամակս գրած միջոցին դժբաղդ ազգութեանս համար կուսակցական անմիտ ու միանգամայն վնասակար պայքարը գազաթնակէտին էր հասած մինչ այն աստիճան, որ անշունչ առարկաները—օրաթերթերն անգամ հալածվում, ցեխի մէջ ռոնտակ էին տրվում, նրանցով էջերի թամբերն էին ծածկում, մարդկանց սպանում էին ծեծելու, սպանելու, դժոխային մեքենայով տունը քարուքանդ անելու, կեղծ արձանագրութիւններ էին կազմում, կեղծ հեռագիրներ էին խփել տալիս Ս. Էջմիածնից՝ իրանց կուսակցութեան գործը յաջողեցնելու նպատակով, և էլի շատ ու շատ աւելի տգեղ, աւելի ազգամիաս, աւելի պախարակելի գործեր էին կատարվում, էլ ի՞նչ մի տարօրինակ բան է, կամ ի՞նչ հասարակական նըշանակութիւն կարող է ունենալ մասնաւոր նամակի մէջ մի հանգուցեալի մասին՝ այն էլ նրա կենդան ժամանակ ասուած վիրաւորական խօսքը, մանաւանդ երբ այդ ասուած է ոչ իբրև եւրոպական մտքով խմբագիր-մարդու, որին ես միշտ բարձր եմ դասել և «Արձագանք»-ի խմբագրից, և «Նոր-Պար»-ի խմբագրից, և սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի իսկական Busenkamerad ծերունի խմբագրից, այլ իբրև սոսկ հասարակութեան անդամի, որ համ քարոզում էր, թէ «հասարակական—ընկերական կազ-

մակերպութեան հիմունքը, նրա կորիզը ընտանիքն է», համ էլ գործով այդ հիմունքը քանդում էր, այդ կորիզը չորացնում: Չէ-որ հանգուցեալ յարգելի գործիչը եթէ այդ մի հատիկ սխալը չանէր և ազատ մնար թէ մասնաւոր ազդեցութիւնից և թէ այդ իսկ պատճառով նաև իրաւացի թէ անիրաւացի հասարակական դժկամակութիւններից և գտնուելով հոգեկան խաղաղութեան մէջ, հետզհետէ լրացնէր իրան պակասած տեղեկութիւնների պաշարը հայ-ժողովրդի, հայ-եկեղեցու վերաբերմամբ, նա կը մնար այժմ և յաւիտեան մեր ազգի մէջ երևցած ամենալաւ գործիչներից մինը: Բայց այդ մի հատիկ սխալը պատճառութեան ընթացքը փոխեց անուղղելի կերպով:

Գր. Արծրունուն մէջ բերելով՝ անագնիւ գրչակի նպատակը դրանով իրան արդարացնելը չի եղել անշուշտ, որովհետև ոչ-թէ կիսախելագարը, կատարեալ խելագարն էլ այդ աստիճան անմիտ չէր լինիլ, այլ որ ինձ գժտացնի թէ «Մշակ»-ի խմբագրութեան անդամների և թէ հանգուցեալին համակրող բարեկամներիս հետ:

Ուրեմն այդ սխալմամբ մարդ կոչուածի ողորմելի հասկացողութեամբ այն է գուրս գալիս, որ «Մշակ»-ի խմբագրութիւնը և թէ բարեկամներս մարդու սեպհական համոզմունքի մասին ոչ մի գաղափար, ոչ մի հասկացողութիւն չունին, հետևապէս առանց այլևայլութեան պէտք է ենթարկուեն ծերունի խմբագրի ողորմելի գրչակ Busenkamerad-ի ներշնչու մներին:

Եթէ այդպէս լինէր, որի վրայ եփած հաւն անգամ կը ծիծաղէր, ես այդպէս բարեկամների բարեկամութիւնը և այդպիսի խմբագրութիւնների մէջ

գործ ունենալս ինձ համար անպատուութիւն կը համարէի:

Արդեօք վերի գրածներս կարճ է հասկանալ աննորմալ հակման ազդեցութիւնից քարացած ուղեղի տէրը: Բայց եթէ նա ընդունակ լինէր այդ բանին, դժուար թէ ես ստիպուած լինէի այս տողերը գրելու:

Ես սպասիկ հակառակ էի հայ-եկեղեցու վերաբերմամբ «Մշակ»-ի բռնած ուղղութեան, բայց հոգուս բոլոր զօրութեամբ հակառակ էի նաև «Մեղուի» թմրացնող ու քնացնող ուղղութեան: Այդ պարզ երեւում է 1892 թ. մարտի 20-ին գրածիցս: Իսկ նոյն թուի մայիսի 22-ին ուղղակի ծաղրում եմ բարոյապէս ընկած մեղուական Քամալեանց Ս.-ին, գրելով՝ «ասննք թէ՛ ազնիւ մանկավարժ (ինչպէս չէ), պարտաճանաչ դաստիարակ (էլ ասել չի ուզիլ), անխարդախ (փիիէ՛) մարդ ես» խօսքերը, որոնք իմս չեն, այլ ինքն է գրել իրա մասին, որ յետոյ ես հեղինակութեամբ ու ծաղրով իրան եմ վերադարձրել. բայց յիմար լինելով և իբրև անբարոյական՝ մոռացկոտ, չի հասկացել, կամ իբրև խարդախ ու կեղծարար գրչակ՝ դիտմամբ չհասկանալու է գրել հեղինակութիւնս ու ծաղրս:

Հանգ. Սեդրակեան արբեպիսկոպոսը վարդապետ միջոցին Ներսիսեան Դպրանոցում հայերէնի ուսուցիչս էր: Երբ եպիսկոպոս ձեռնադրուեց, դասընկերս — Ստ. Տէր-Սարգսեանցը ուրիշ միջանի հոգու հետ հեռագիր են խփում Ս. Էջմիածին այս բովանդակութեամբ.

«Շնորհաւորում ենք հայ հոգևորականութեանը, որ Ձեզ նման եպիսկոպոս ստացաւ»:

Երբ իմացայ, շատ վշտացայ ընկերիցս, որ ինձ չէր ասել կամ գոնէ իմ անունը ևս չէր գրել հեռագրի տակ:

Հանգ. եպիսկոպոսի մասին ես նոյն բարձր կարծիքով և թէ երախտադէտ աշակերտի յարգանքով եմ մնացել մինչև օրս էլ: Սակայն այդ աշակերտական յարգանքն ու կարծիքը իրանց տեղը, հասուն մարդու համոզմունքն էլ իրա: Իսկ իմ համոզմամբ այն-ժամանակ նրա համար դեռ շատ վաղ էր կաթուղիկոսական շատ փափուկ և վերին աստիճանի պատասխանատու պաշտօն ստանձնելը: Բայց եթէ նա կենդան մնար ու երբեկից նրա քուէտուփը դրուէր և ես էլ տասնեակ քուէներ տալու իրաւունք ունենայի, բոլորն էլ նրան կը տայի: Սակայն այդ ամենը չէր կարող մի մագաչափ իսկ արգելք լինել, որ նրա պակաս կողմերը չտեսնէի և նրանց մասին եթէ ոչ հրապարակով գոնէ մասնաւոր նամակներխս մէջ չյիշէի:

Այդ դիտմամբ կոյր ձևանալու և մօտիկ մարդկանց վնասակար, վատ ու զգուելի կողմերի մասին թայֆաբար լռելու տգեղ սովորութիւնը էժան չի նստել և չի նստում որք մնացած Ազգիս:

Հարկաւ անշնորհք, անարժան ու անբարոյական մարդկանց առաջ քաշելն ու արդիւնաւոր պաշտօնների մէջ նշանակելը շատ վատ բան է. բայց այդ միայն Սեդրակեանի պակասութիւնը չէր, այլ այն ազգակործան պակասութիւնը ընդհանուր էր եւ է մեր բոլոր հին ու նոր բարձրաստիճան հոգևորականների համար:

Հօ գաղտնիք չէ, որ եթէ հանգ. Գէորգ Գ. կաթ. ը իրա հետ բերած չլինէր Մանկունուն, իրանից հեռու պահէր Ստեփանիկի նման սրիկայ անպիտաններին,

Մեծն ներսէսի և Սահակ Պարթևի հետ միշտ օրհնութեամբ պիտի յիշատակուէր նրա անունը:

Մասամբ նոյնը կարելի է ասել նաև հանգ. Մակար կաթ.-ի մասին, եթէ զանազան աւագակ ծառայ, թշուառական Հաջի-Յակոբները չլինէին:

Այվագեան Գաբր. արքեպիսկոպոսի նման մի լուսամիտ անձն իրա հետ բերաւ ի միջի այլոց նաև Տէր-Անտօնին, որ ոչնչով չէր տարբերվում տաճիկ անբարոյական գաթիթիէից: Այդ տէրտէրի համար կարծէք ամօթ ու պատկառանք ասուած հասկացողութիւնները գոյութիւն չունէին, ինչպէս-որ չունին սխարմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի համար: Վստահ՝ որ հարկաւոր դէպքում իրան հովանաւորող առաջնորդից պաշտպանութիւն կը գտնի, ինչ ասէք իրան թոյլ էր տալիս: Տասն անգամ անձամբ լոսած կը լինիմ, երբ նա մի առանձին իմն պարծանքով ասում էր հէնց առաջնորդարանի սանդուխների վրայ կանգնած.

«Թէր-էգնիկին ... մէջ ... կու չորցունեմ. ան շուն-շանօրթի խաղարն *) ալ անոր ... մտեր է, անոր ալ»: Այդ մասին քանիցս յայտնեցին առաջնորդին, բայց նա՝ այն լուսամիտ հոգևորականը ամեն անգամ էլ ականջի տակովն էր անում. այլևս ի՞նչ սպասել տգէտ առաջնորդներից, որոնք Այվագովսկու կօշիկների թելը քանդելու իսկ արժանի չէին և չեն:

Սակայն աւելի պարզ խօսենք, արդեօք Թիֆլիզի մի յայտնի եկեղեցու ծխականները շատ գոհ են Սեդրակեանի բերած ու թողած չլաղից. չեմ կարծում:

*) Այժմ Տէր-Ղազարոս Յովսէփեան:

Բայց ինչո՞ւ անցեալները քրքրենք: Ներկայ վեհափառը եթէ իր հետ չբերէր ոչ իր ձեռնասուն վարդապետին և ոչ էլ իր ազգականին, շատ բան այլ կերպ կը լինէր, շատ ազգային խնդիրներ այլ ընթացք և այն օգտակար ընթացք և ուղղութիւն կը տանային և այժմ էլ Բաբելոնեան խառնակութիւն չէր տիրիլ Ս. էջմիածնում ու իր անունն էլ աւելի յարգանքով ու անկեղծ երախտագիտութեան զգացմունքով կը յիշատակուէր թէ ներկայ հասարակութիւններից և թէ ապագայ սերունդներից:

Ուրեմն որքան լաւ կը լինէր, որքան բարիք կը ծնէր որք մնացած հէք Ազգիս համար այն բանից, որ մեր կաթողիկոսներն ու նրանց փոխանորդ թեմակալ առաջնորդները մի-մի կամ որ վատն է, երկերկու և աւելի արհեստական պոչերով շքնային Ս. էջմիածին և իրանց թեմերը, այլ իսպառ հրաժարուէին այդ ազգակործան տգեղ սովորութիւնից, առաջին պատահած թշուառականներին պաշտօններ չըտային և առհասարակ սրան ու նրան պատասխանատու մշտական պաշտօն և որեւէ կարևոր յանձնարարութիւն տալու մէջ շատ, անչափ շատ զգոյշ, նոյնիսկ ժլատ լինէին:

Երկար տարիների ընթացքում ինձ ու ինձ՝ սխալ թէ ուղիղ, այլ խնդիր է, ես այդ համոզման եմ եկել. հետևապէս ես չէի կարող Սեդրակեանի պակասութիւնը չձողրել միմիայն նրա համար, որ նա իմ ուսուցիչն է եղել. վասնզի ես՝ որպէս հասարակութեան պարտաճանաչ անդամ, փնտք Աստուծոյ, այլ կերպ եմ հասկանում իմ պարտականութիւնս դէպի հառարակութիւնը, քան սխարմամբ մարդ կոչուած Քամալեանցները:

Եւ այդ վայրենի հասկացողութեամբ անփառու-

նակ գրչակը կամենում է այս կամ այն գործիչի կենսագրականը տալ հասարակութեան: Խեղճ հասարակութիւն:

Այդ պատկիւրանա գրչակը ինչ ստոր նպատակով որ առաջ էր բերել Գր. Արծրունու մասին գրածս, ճիշտ նոյն նպատակով էլ առաջ է բերել Սեդրակեանի մասին գրածս, այն է՝ որ Սեդրակեանին համակրող բարեկամներս և թէ «Մշակ»-ի խմբագրութիւնը հետս զժառուին: Բայց եթէ գտնուին այդպիսի նեղսիրտ, անձնական անկախ համոզմունքս չյարգող բարեկամներ և այդպէս լինի նաև «Մշակի» խմբագրութիւնը, ապա ուրեմն շատ էլ ցանկալի չէ այդպիսիներէ հետ բարեկամ լինելն ու գործ ունենալը: Սակայն ի-պատիւ բոլոր բարեկամներին և ինձ ճանաչող «Մշակի» և այլ խմբագրութիւնների պէտք է ասեմ պարծանքով, որ դրանք ամենքն էլ միշտ յարգանքով են վերաբերուել և վերաբերվում՝ դէպի իմ ունեցած համոզմունքս, լաւ գիտենալով, որ այդ համոզմունքս իմ սեպհականն է և ոչ թէ բարոյապէս ընկածների նման իսկական ծերունի Busenkameradներից փոխ առած:

Արդեօք սխալմամբ մարդ կոչուածը կարո՞ղ է նոյն բանով ինքը ևս պարծենալ հրապարակով. հարկաւ չի կարող, որովհետեւ երեսին կը թքեն ամենքը. վասնզի մօտ 50 տարեկան 25 տարուայ ողորմելի գրչակը յայտնի է լրագրութիւնից իբրև ստող, իբրև կեղծող, իբրև խարդախող, իբրև զրպարտութիւններ շարադրող, իբրև խմբագրութիւններին սխալեցնող, իբրև զգուելի պատկիւներ յերերող և վերջապէս իբրև անբարոյական վարժապետ և միանգամայն վնասակար ու անազնիւ դաստիարակ, որի համար և վնասուց ներսիտեան Դպրանոցից:

Վերի ընդգծածս խօսքերը նորից եմ ասում, մէկ էլ ասում, կրկին ասում, դարձեալ ասում, կրկնում և նորից ու նորից պնդելով պնդում: Եթէ ճիշտ չէ և ինքը՝ սխալմամբ մարդ կոչուածս էլ գոնէ ամենաչնչին չափով պատիւ ու բարոյական քաջութիւն ունի, եթէ իրաւամբ է մարդկային կերպարանք կրում, եթէ մի հիւլէի չափ ամօթ ունի անպատկառ երեսին, եթէ ինքը մարդկութեան տականք չէ, թՈ՛՛՛՛ ԴԻՄԷ ԴԱՏԱՐԱՆԻՆ:

Հետևապէս սոգոմական ակտաւոր Քամալեանցի տեղը ազգութեանս անսասան հիմքը կազմող հայընտանիքը չէ, ոչ էլ Ազգիս համար բարոյական հաստատուն նեցուկներ հասցնող սրբավայր հայդարոցը, այլ՝ ինչպէս լաւ նկատել էր «Հովիւ»-ի արժ. Հայր-խմբագիրը, յետ ընկած մի վանքի խուց:

Եօթը փարզան պատուած անպատկառ անամօթի նման շարունակ պարծեցել է բերանացի թէ զրաւոր և դեռ էլի յանդգնում է պարծենալ «աշակերտներիս սէրը», «աշակերտներիս սիրոյ խաթեր», «աշակերտաշակերտուհիներս ինձ սիրում են», «իմ հեռանալու համար լաց են լինում» և այլ նման զգուելի ստութիւններով: Ի՞նչ հիմա էլ թո՞ղ յիշէ իր ունեցած սէրը շ.-եցի Ս.-անց Գ.-ի հետ, յիշէ Դ. Մ.-ին, թո՞ղ մտաբերի Ջ.-անց Բ.-ի և Բ.-անց Ս.-ի ու Ս.-ի միջև անցած-դարձածը և իր՝ իբրև ոչ-բարով վարժապետի կատարած դերը և Ս.-ին շոյելով տուած զգուելի յորդորը՝ «այդպէս բանից շնն նեղանայ, սիրելիս»։ Թո՞ղ այդ զրաբարագէտը (?), Աղայեանցի լեզուից «շատ աւելի լաւ լեզու» ունեցողը բացատրի հրապարակով թէ ո՞ւմ և ինչո՞ւ համար էր ասում՝ «գնացէք-կորէք, մատնիչներ, չմոռանալով այդ բառի բուն նշանակու-

թիւնը ևս բացատրելու, որ այսուհետև այլևս սխալ չգործածենք: Այո, թող այդ ամենը յիշէ, մտաբերի, իրան պատկերացնի իր կատարած բոլոր զազիր աւարտները դպրոցի նման մի սրբավայրում և գեափննանցնի ամօթից, եթէ ունի:

«Սիրելիս, այդպէս քանից չպէտք է նեղանալ» (Ուսու... իժի ծնունդ, որ անմեղ երեխաներին այդպիսի աղտեղութիւններ ես ներշնչել. նզովք քեզ, նզովք... եթէ «այդպէս քանից» չնեղանայ ու չլիբաւորուի հասարակութեան ապագայ անդամը, հասկալ էլ ինչից պէտք է նեղանայ. այդպիսին այլևս ինչպիսի գործիչ պէտք է դառնայ, եթէ ոչ՝ քեզ նման մի մանուկ—պատուազուրկ արարած, միմիայն իր շահի, իր զգուելի մոլի կրքին շարունակ բաւականութիւն տալու մասին մտածող երկոտանի մարդակերպ հրէշ, ինչպիսին որ ինքդ ես, ով ճիւղ, որ սալմամբ մարդ ես կոչվում):

Նորից եմ կրկնում. զուր չէր մտադրութեանս հակառակ գիւղում շատ մնալս. այլապէս ես չէի իմանալ, որ Քամայեանց սայլախանայ-վարժապետի ուսուցչութեան տարիները ամենազգեգրիւմ և բարոյապէս կործանիչ ժամանակամիջոցն է եղել գիւղի դժբաղդ մանուկների համար...

Ո՞վ չգիտէ որ գրադարանները տգէտ ժողովրդի մտաւոր զարգացման նպաստելու համար են հիմնուել և հիմնվում, ուստի և ամեն մի մարդ՝ որ հասկանում է դրանց մեծ արժէքը, պարտաւոր է իւրով սանն նրանց բարգաւաճմանը նպաստել ըստ ամենայնի. սակայն երկար տարիներ Շուլավէր վարժա-

պետ եղող Բղդըլաւաշը *) ինչ է արել այդ ուղղութեամբ, կամ ինչպէս է վարուել ու վերաբերուել զանազան անձերից դպրոցի գրադարանին նուիրած գրքերի հետ: Բայց եթէ այդ մասին էլ ծանրանայի, շատ հեռու կը գնայի. ցանկացողը թող կարդայ նորերս լոյս տեսած Գր. Բալ.-ի «Նուր փախիլը գրական խուլիզանից» գրքոյկը:

Եթէ ստախօսների յիշողութիւնը կարճ չլինէր, իսկ անբարոյականներն էլ մոռացկոտ չլինէին, իցէ թէ աշխարհիս երեսին տեղի ունեցած մեծ ու փոքր շարիքների մեծ մասը ինքն իրան վերանար:

Այդ ստախօս ու մոռացկոտ հրէշ վարժապետը, որին սխալմամբ մարդ են կոչում, միշտ, միշտ, միշտ, ամեն մի նամակի մէջ և թէ ամեն առիթի գանգատ, տրտունջ, դժգոհութիւն, յուսահատ վճիռներ, անպատկառ ուշուցներ սրա ու նրա հասցէին. միշտ լաց, միշտ ողբ ու կոծ, որ քիչ է վարձատրվում, որ ոչ-ոք իր արժէքը չի գնահատում, որ եթէ աշակերտների «սէրը» չլինի, ուրախութեամբ կը թողնի ուսուցչութիւնը»... (էհ, անտէր մնայ այդ սէրը):

Եւ ամենքին զրպարտելը, հայհոյելը, կինտոյական ուշուցները—այդ բոլոր զանազան ու դուալը, ինչպէս հիմա պարզ է ամենքին, նրա համար է եղել, որ կարողանար միշտ ծածկած ու վարագուրած պահել իր զազիր՝ հակաբնական սեռային հակումը, իր պախարակելի ու գարշելի արարքները դպրոցում (խորամանկ աղուէս, որ քո հիւանդագին զգուելի մեծամտութեամբ ջուխտ ոտքով թակարթն ընկար):

*) Սարսափելի արտաքինով հրէշ, որի անուշով ծնողները երկիւղ են ազդում երեխաներին՝ նրանց լացը կտրացնելու համար:

Չուր չէր՝ որ երբ 1883 թուի աշնանը զգուշացրի շան ծեծ ուտելուց, մի որոշեալ չափով դողում էր ինձանից, ուստի-և շատ էր աշխատում անպատճառ հաշտուել հետս. թէպէտև ինքն էլ գիտէր, որ ճարպիկ ձեռնածուի նման բաւական փարատել էր կասկածս երկու շաբաթ խոով մնալովը: Սակայն իր անբուժելի մեծամտութիւնը՝ որ նշան է թերուսութեան և թէ ուղեղի հիւանդագին դրութեան, իր տունը քանդեց. նա ինձանից ունեցած երկիւղը հանեց ցամաքելու սրտից և ահա հիմա ճաշակում է անմիտ արածի պտուղները:

Ի՞նչ այժմ՝ այդ պտուղները լի ու լի ճաշակելուց կազդուրուած, թող նստի և իր «սաստկադղորդ», «աշխարհ կործանող» սպաննալիքը ի-կատար ածի— իմ ու պապերիս կեանքը գրի առնի: Խորհուրդ եմ տալիս՝ քանի կարող է զօռ տայ իր հիւանդ երեակայութեան և պասկվիլ պասկվիլի ետեից լոյս ընծայի՝ ի-մխիթարութիւն ծախ խելք ունեցող Խուստիբէգերի, անբարոյական «ազնիւ երիտասարդների» և իրա նման հասարակութեան համար գլխովին վնասակար դարձած անպիտան վայրսների: Որովհետև ինչ նշանակութիւն ունի իրա նման մարմնացած խարդախ գրչակի համար, որ ինձ գրել է.

— Աւտն, քո պապերիդ մասին ոչինչ տեղեկութիւն չեմ կարողանում ժողովել՝ նպաստաւոր թէ թէ աննպաստ *), որ գրեմ ու օձիքս ազատեմ քեզանից»:

*) Իսկ հիմա ճրտեղից կարողացար ժողովել. աստուածարանութիւն սովորելիս: Նզովք քեզ, մարմնացած ստութիւն ու կեղծիք Քամալեանց Սարգիս, որ հայ-դպրոցը մուրտառեցիր, բաւական չէ, հիմա էլ սկսել ես մեր մատող գրականութիւնն ապականել: Այն, նզովք քեզ:

Այդ վերի խօսքերը գրում էր գիւղում ծնուած, ճիգ տարիներով գիւղում ապրող և քանահաւայտութեամբ պարապող՝ ըստ երևոյթին «բարեխիղճ» վարժապետը, այդ պատճառով էլ գոնէ «մի-երկու խօսք չկար որ գրէր և օձիքն ազատէր ինձանից»: Բայց որովհետև հիմա չբուել է՝ ըստ երևոյթին «բարեխիղճ» բանահաւաք վարժապետը և տեղը միայն պասկվիլանա գրչակը մնացել, ուրեմն էլ ինչո՞ւ չի կարելի խանգարուած ու փչացած ուղեղով ուղած պառակեան նաղըլերը տալ. չէ՞-որ ստայօդ թղթակցութիւններ, զգուելի գրպարտութիւններ յերկրերը իրա սիրած հին փէշակն է, որ աստուածաբանութիւն սովորելիս «կատարելութեան» հասցնելով դարձաւ դիսլոմաւոր պասկվիլանա:

Այն, չեմ ուրանում, որ ես կասկածոտ եմ, ճիշտը՝ կասկածոտ եմ դարձել շնորհիւ թէ աշխարհական և թէ հոգևորական զեադայ—գոեհիկ և մեծամիտ ընկեր-բարեկամներիս:

Բժախնդիր եմ և այն՝ սարսափելի ըմպանդիր, մանաւանդ երբ հարցը վերաբերում է մեր հասարակութեան ընտիր մասից ընդունուած ճշմարտութեան եւ բարոյականութեան, որոնց վերաբերմամբ ոչ մի կոմպրոմիսս — իրաւախօսութիւն չեմ ընդունում, ոչ մի:

Քանի-որ իմ «Busenkamerad»-ն է եղել նաև սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի նման զեադան, այդ զգուելի սողոմեցին, էլ ինչպէս չի-նիմ կասկածոտ ու բժախնդիր, կամ ճիշտը՝ շատ զգոյշ: Այդ սխալմամբ մարդ կոչուածի անազնիւ և հրէշ լինելը—ստեր գրելն ու չակերտաւոր մանկավարժութիւնը արդէն վաղուց յայտնի էր ինձ, զեա-

դայութիւնն էլ նորերս պարզ երևան եկաւ պասկվիլ բրօշիւրովը:

Չեմ ուրանում նաև՝ որ ես ևս իբրև սիտարական մարդ, իմ պահաս կողմերը կարող եմ ունենալ, և անշուշտ եմ որ ունիմ. բայց այդ պահաս կողմերս ոչ-որի վրաս չեն տուել, չեն տալիս և՛ յոյս Աստուած, այսուհետև էլ չեն տալու, այլ վրասում են միայն ինձ. ուստի և դրանք չեն, որոնց պատճառով անթիւ դառնութիւններ եմ ճաշակել, այլ մարմին ու արիւն դարձած, բայց ժամանակակից կեանքի համար շատ անպէտք ճանաչուած սովորութիւնս. այն է՝ առանց քաշուելու, առանց վախենալու, երբեմն էլ առանց խղճալու ճշմարիտը մարդկանց երեսին ասելս՝ ուշ չդարձնելով ոչ կեղծ էտիկայի, ոչ շինծու գեղարուեստի և ոչ էլ՝ ընդհանրապէս ուղիղ ճանապարհից շատ շեղուած մեր մեծախօս բայց իրականապէս դժբաղդ հասարակութեան շատ քիչ օգուտ տուող մամուլի վրայ:

Իսկ թէ իրաւունք ունիմ մեր մամուլի մասին այդպէս գրելու, այդ վաւերացրեց ինքը մամուլը իր գովելու արժանի եռանդով ու զարմանալի համերաշխութեամբ հէնց այսօր, հոկտ. 30-ին, երբ տպարանում շարվում էր վերի գրածս սողերը:

Ո՞ւմ չէ յայտնի որ հայ լրագիրները մագնիսական համանուն սլաքների նման իրարից խոյս են տալիս, միմեանց յետ խփում. մի խնդրի, մի հարցի, մի դէպքի, մի իրողութեան մասին մէկի գրական կարծիք յայտնած միջոցին միւսի կարծիքն անպատճառ պէտք է գլխովին բացասական լինի: Մի ազեղ, վերին աստիճանի դատապարտելի սովորութիւն, որ շատոնց է բուն գրել մեր մամուլի մէջ և որի պատճառով դժբաղդ հայ ընթերցողները մի ստուար մասը՝ անկարող լինելով Ազգիս համար կենսական նշանա-

կութիւն ունեցող շատ հարցերի մասին որոշ եզրակացութեան գալ, մի հաստատ գաղափար կազմել, քանի-որ լրագիրներից մէկն այս է ասում, միւսն այն, — ուղղակի շճմել, դարձել է ոչխարների հօտ: Իսկ թէ երբ պէտք է այդ պախարակելի ձևը՝ մեր լրագիրների իրար միս ծամելու այդ ազեղ սովորութիւնը վերանայ մեր միջոց, որպէսզի իրօք սպասելիք օգուտը տան դժբաղդ ընթերցողներին, այդ միայն Ալլահին է յայտնի:

Այդ ասածներին մի այլ բացայայտ ապացոյցն էլ մեր գրականութեան անխոնջ աշխատաւորի—յարգելի Լէօ-ի 25-ամեայ գրական գործունէութեան առիթով «Կով. Առաւօտի» № 33-ում և «Մշակի» № 144-ում գրուած անտակտ յօդուածները: Ախր յօդուածագիրները ժամանակ էին գտել իրանց անձնական ու կուսակցական փնթի հաշիւները մաքրելու, փոխանակ անկեղծօրէն, առանց յետին մտքերի յորդոր կարդալու ընթերցողներին, որ մտադրուած՝ ըստ ամենայնի համակրելի գործը լի ու լի յաջողութեամբ պսակուի: Այն, չեմ քաշվում ասելու, որ ոչ պ. Եղ. Թովչեանը պէտք է այնպիսի ձև տար իրա յորգօրին և ոչ էլ «Մշակի» խմբագրութիւնը այն կերպ պատասխանէր. թէ մէկը և թէ միւսը շատ հեռու են ազնիւ ու վեհանձն լինելուց: Մինչդեռ՝ դատելով հէնց իրանց՝ յօդուագիրների գրածներից, յարգելի Լէօն արժանի է և իրաւունք էլ ունի սպասելու, որ դէպի իրան աւելի ազնիւ, աւելի վեհանձն գտնուեն մանաւանդ գրականութեան մէջ գործողները:

Օրիցս ճիշտ մի տարի առաջ յարմար առիթ ներկայանալով «Զարկ» շաբաթաթերթում սխալմամբ մարդ կոչուած պասկվիլանտի կատարած շատ ու շատ ազեղ ու պախարակելի արարքների մասին գրելիս

ակնարկեցի նաև նրա՝ Քամալեանց Ս.-ի սողոմական արտաւոր—արուամուլ լինելը, բայց ոչ թէ «ամենապիկանս» տեղերը «մթագին ոճով» գրած, որ անհասկանալի մնային «լայն շրջաններին», այլ շատ պարզ, այնքան պարզ՝ որ անխելքներն անգամ հասկացել էին գրածիս միտքը: Եւ սակայն մեր մտաւոր առաջնորդ համարուող մամուլը կամ չհասկացաւ, կամ դիտմամբ չհասկացողս ձևացաւ և լուռ մնաց. նոյնիսկ եղան այնպիսի տխմար ու ողորմելի գրչակներ, որ «Զարկը» փողոցային թերթ անուանեցին:

Բայց ահա երբ Գերմանիայում թէ ուր ջահանգամում Մարքսիմիլիան Հառգէն անունով մի գերմանացի նոյն զգուելի սողոմական ախտի—արուամուլութեան վերաբերեալ մերկացումներ է անում գերման «Zukunft» (Ապագայ) շաբաթաթերթում, մեր մամուլը մի զարմանալի, մի շտեմնուած համերաշխութեամբ ոչ-միայն հարկ համարեց օրերով այդ հարցով զբաղեցնել իրա ընթերցողներին, խորհրդածութիւններով ահագին յօդուածներ գրեց, այլ դեռ՝ մոռացած մեր ազգային սուգը... առաջնորդող էլ նուիրեց՝ Հառգէնի մերկացումը կոչելով «մամուլի տարած մի նոր յաղթանակ», իսկ իրան՝ Հառգէնին՝ հրճուելու արժանի «ազգեցիկ հրապարակախօս»:

Ո՞րտեղ է առողջ լոգիկան:

Մի՞թէ արդէն փչացած գերման գինուորները բարոյականութիւնը հայ-հասարակութեան համար աւելի թանգ է, աւելի խնամքի ու պաշտպանութեան է կարօտ, քան մատաղ հայ-մանուկները—դպրոցական անմեղ աշակերտները ներկան ու ապագան:

Ախր այդ ի՞նչ հանելուկ է, որ երբ սողոմական զգուելի ախտի—արուամուլութեան մասին գերմանացին է գրում գերման շաբաթաթերթում, մեր օրա-

թերթերը իրանց բարոյական պարտքն են համարում՝ երկիւղ իսկ չկրելով էտիկայի, Գեղարուեստի դէմ գնալուց, այդ դէպքի առիթով բոլոր մանրամասնութիւնները տալ իրանց ընթերցողներին, Հառգէնի—մերկացնողի հասցէին հաճոյական խօսքեր են ուղղում, նրա արածը բաջագործութիւն կոչում. իսկ երբ միևնոյնն է անում հայը հայ շաբաթաթերթում, մամուլը դաքարէական պապանձումն է պահում բաւական չէ և դեռ հայ շաբաթաթերթի և նրանում մերկացումներ անողի մասին փափսում են, ճօշում, վրան խեթ աչքով նայում և դեռ օգնում են որ արուամուլը հրապարակով իրան պաշտպանի և մերկացնողին վերաւորանք հասցնելու փորձ անէ:

Այո, հրտեղ է առողջ լոգիկան:

Կամ չլինի՞ թէ մեր օրաթերթերի այդ լուութիւնը—այդ դատապարտելի անտարբեր վարմունքը նրա համար էր, որ սպասում էին՝ դեռ դատն սկսուի, դատարանի ամբողջ կազմը, դատախազը, փաստաբանները իրանց ոլորշ կարծիքը յայտնեն և ապա թէ նոր միայն իրանք էլ՝ իրանց կարծիքը: Բայց նախ՝ այդպէս իմ տգէտ պապն էլ կարող էր անել, հապա այլևս ի՞նչ իրաւունքով է մեր մամուլը իրա վրայ կրում հասարակութեան մտաւոր առաջնորդի մեծ ու պատուաւոր տիտղոսը, և երկրորդ՝ մինչև այդ «երեւելի» կարծիք յայտնելը անմեղ աշակերտների բարոյականը ոտքի տակ առնենք, քանի-որ մի վերին աստիճանի կակճեցուցիչ ճշմարտութիւն է, թէ մեր դպրոցական աշակերտները՝ շնորհիւ անպիտան խորհրդատուների և փչացած առաջնորդող անձանց աւելի շատ կարգում են՝ դաստիարակութեան տեսակէտից ըստ ամենայնի վնասակար, բարոյապէս ու մտաւորապէս քայքայող օրաթերթերը, քան մնայուն,

օգտակար օժանդակ գրքերով զբաղվում, որ վերջը հաստատուն համոզմունքով անկախ մարդիկ դառնան և ոչ-թէ սեպհական համոզմունքից, ինքնուրոյնութիւնից զուրկ ոչխարներէ հօտ կազմեն՝ այս կամ այն կուսակցութեան ձեռքին կոյր գործիք դառնալու համար:

Միայն բարոյապէս ընկածը կարող էր գրել, թէ մենք իրարից «ոչ ջան էինք խնայում և ոչ փող»: Ես՝ որ իրաւունք եմ ունեցել այդ բանը հէնց սկզբից ես՝ որ իրաւունք եմ ունեցել այդ բանը հէնց սկզբից անամօթ երեսովը տալու, ազնուաբար լուել եմ միշտ. ուրեմն որքան պէտք է մի մարդ բարոյապէս ստոր ընկած լինի, որ իրան թոյլ տայ ասելու մի բան, ինչ որ ասելու ամենևին, ամենևին իրաւունք չունի:

Այդ ոչ-բարով աստուածաբանը միթէ այնքան էլ չի հասկանում, որ բանաւոր արարածի համար անշնորհակալ ու երախտամոռ լինելու պէս մի այլ հրէշաւոր բան չկայ աշխարհիս երեսին:

Երբ 1880 թուականի դեկտեմբերի սկզբին գնալու էի Պետերբուրգ, Ադամիս էլ (հօրեղբօրս որդուն) մօրս հետ գիւղ ուղարկեցի: Աչի առաջ ունեցաւ ինքնուրոյն արձակուրդները, պարզ է որ երեխան դպրոց պէտք է յաճախած լինի մօտ չորս ամիս, որի ուսման վարձը երբէք չէր կարող երկու ուրբուց աւելի լինել: Լաւ: Դեռ դպրոցական տարին չվերջացած, ես վերադարձայ Պետերբուրգից և գնալով Շուլավէր, բոլոր գրքերս՝ մօտ 150 ուրբու արժողութեամբ, ընծայեցի այն դպրոցին, որի՝ ոչ-բարով վարժապետն էր սխալմամբ մարդ կոչուածը:

Եթէ այդ սխալմամբ մարդ կոչուածը գաղափար ունենար ազնուութեան, ընկերութեան, իրախակ ասած Busenkamerad-ութեան և անշահախնդրութեան մասին, քանի-որ 150 ուրբու (թող հէնց զբաղէսը հա-

չուենք, թէ 50 ու միայն «Փորձերն» արժէին) գրքեր ինձանից նուէր ստացաւ «իր սիրած դպրոցի» գրադարանը, արդեօք ցածութիւն չէ յիշեալ 2 ուրբու ուսման վարձի մասին աշխարհովը մին չաւ անել փողոցներում, խիկարների մօտ, Խուստի-բէգերի և կամ յիմարաբար իրան հիւր ընդունողների տանը: Թէպէտ այդ ևս դեռ հարց է թէ այդ երկու ուրբուին իր ապականուած ջանից է դուրս եկել, թէ՞ դպրոցի միջոցներից լրացուել:

Որպէս գրական խուլիզան ինքն էլ շատ լաւ է իմանում որ 1881 թուին պատահած մի այդպիսի ջնջին իրողութիւն ստուգել և ճշմարտութիւնը վերականգնել միանգամայն անկարելի է, քանի-որ դժբաղդ դպրոցի վարժապետը իրան պէս խարդախ հրէշն է եղել: Սակայն ոչ-բարով աստուածաբան պասկիւլանտը չհամարձակուելով այդ և նման իրողութիւնների մասին խօսել օրինաւոր մարդկանց մօտ, որպէսզի անմեռոն երեսին չթքեն, փախում է միայն անկիւններում իրա նման՝ ազնուութեան և բարոյականութեան մասին թիւր հասկացողութիւն ունեցողների մօտ:

Մօտ 10—15 տարի ինքն արդէն ծանօթ էր օր. Գր. ի հետ նրա մանկական հասակից, որովհետև իրա փեսայի սանուհին է: Օրիորդը գիմնազիայի 4-րդ թէ 5-րդ դասատան աշակերտուհի էր, երբ ինքը՝ ոչ-բարով վարժապետը ինձ հրաւիրեց իրա քեռու հարսանիքը, ուր և առաջին անգամ ծանօթացայ օրիորդի հետ*): Հարսանիքից միքանի տարի յետոյ օրիոր-

*) Շների հաջողը կտրելու համար աւելորդ չեմ համարում ասելու, որ այդ միջոցին ես համարեա նշանուած էի և տասը տարի էր սիրում էի և սիրվում:

դը՝ որ արդէն ցենզաւոր վարժուհի էր, դիմեց ինձ.

— Ախպէր ջան, պ. Քամալեանցը ոչ մի տեղ չի պատահում, եթէ տեսնես, ասա՛ գայ. ուզում եմ Քայիանեան դպրոցում սովորածս մի անգամ սկզբից կրկնել, որպէսզի հայերէնից դաս տալու ժամանակ շատ չկարմրեմ:

Իմաց տուի. սկսեց պարապել: Երբ այլևս չէր պարապում, օրիորդը դիմեց ինձ.

— Ո՞րքան պէտք է վճարեմ պ. Քամալեանցին:

— Ոչինչ. ջանը հօ դուրս չեկաւ:

— Այդպէս չի կարելի, ախպէր. կարգին պատասխանիր:

— Կարգին պատասխանելն ի՞նչպէս կը լինի. դու հարցնում ես՝ ո՞րքան պէտք է վճարեմ, ես էլ ասում եմ՝ ոչինչ... Ի՞նչ ես զարմացած նայում: Շաբաթական 2-ական դաս պարապելով՝ կարծեմ ընդամենը 10—12 դաս, մեծ բան չէ: Ո՛չ-թէ երկու-երեք ամիս, այլ եթէ նա երկու ամբողջ տարի և այն ոչ թէ երկու, այլ օրը 10 դաս էլ որ պարապէր և՛ քեզ հետ, և՛ հռիփսոյի հետ (օրիորդի մօքիբի 10 տ. աղջիկը), էլի չէր կարող դուրս գալ ինձ տալիք պարտքի տակից. ուստի ես կարծում եմ որ նա նոյնիսկ կը նեղանայ էլ, եթէ ուզենաս վճարել:

Անցաւ բաւական ժամանակ. օրիորդը նորից դիմեց ինձ.

— Լեոն, պ. Քամալեանցը որ պատահում է, ամաչում եմ. պէտք է մի բան վճարել:

— Եթէ իմ ասածներս բաւականաչափ համոզիչ չէին քեզ համար, ուրեմն վճարիր, քոյրիկա:

— Ո՞րքան:

— Ի՞նչ ես հարցնում:

— Այն:

— Ոչինչ:

Ինչպէս ընթերցողը տեսնում է՝ ես ոչ-բարով վարժապետին մարդ համարելով, չուզեցի նրա ինքնասիրութիւնը վիրաւորել և արդէք եղայ այդ բանին. իսկ ինքը այնքան ցած հոգու տէր է, որ ձրի պարապելը երեսովս է տալիս, այն էլ այնպիսի ձևով, որ վիրաւորած լինի անմեղ անձանց:

Պարզ է որ այդ սխալմամբ մարդ կոչուածը ազնուութեան մասին ամենեկին գաղափար չունի և այն զաղլափարականութիւնը, որ այդ գրական խուլիզանը ուզում է հասարակութեան վրայ արդար իտի տեղ ծախել, ոչ այլ ինչ է, բայց եթէ հոտած ծրագու:

Պասկիլիանս գրչակի ասելուց այնպէս է դուրս գալիս, որ օր. Գր.-ը իրա բարեկամուհին չէր և չէ (շատ, շատ ուրախ եմ), այլ միայն իմ (ընդունում եմ հոգեկան հրձուանքով և ուրախութեամբ):

Սակայն դրանից ի՞նչ է հետևում. այն՝ որ օրիորդի հետ ձրի չի պարապել, այլ ինձ տալիք պարտքի հաշոււմ և արածս շատ ու շատ լաւութիւնների փոխարէն: Բացի դրանից այդտեղ ի՞նչ վստահութեան կամ անվստահութեան հարց կարող է լինել, քանի-որ նախ՝ այն-ժամանակ ես դեռ լիովին համոզուած չէի, թէ ինքը սողոմեցի է, այսինքն մի հրէշ է մարդու կերպարանքով. երկրորդ՝ օրիորդը ցենզաւոր, արդէն թեմական տեսչի ուշադրութեանն արժանացած շնորհալի վարժուհի, իսկ ինքը անցէզ, ինչպէս որ է հիմա էլ, կոպիտ, անտաշ, երկու արշին հեռաւորութիւնից իսկ մարդու սիրտ խառնող միշտ ապականիչ զարշահոտ շնչով վարժապետ. երրորդ՝ իմ սոսկալի մեղադրութիւնը մանուկների վերաբերմամբ է և ոչ-թէ իրան պէս հարիւրաւորներին շուրջ տանող և ծարաւյետ բերող արբուներին հասած վարժուհիների, որոնք

երբէք իրան մարդատեղ չեն դրել: Թող յիշէ թէ քանի-
քանի օրիորդ է առաջարկած ձեռքը զգուանքով մերժել:

Յերեկուայ լոյսի պէս պարզ է, որ այդ մար-
դակերպ ճիւղը բանդագուշանքով էլ է տանջվում,
ուստի-և աչքերին շարունակ երևում են:

Մարդ չի իմանում, թէ ինչո՞ւ է օր. Գր.-ին
քոյրիկ ասելս էլ մէջ բերել. երևի նրա համար, որ
ցոյց տայ, թէ ես նրան սիրում եմ: Օ՛, այն, չեմ
ուրանում. ես օր. Գր.-ին այնպէս եմ սիրում ու յար-
գում, որ ուղղակի պաշտամունքի է հասնում, որին
ամեն մի օրիորդ կարող էր նախանձուել: Բայց ես
սիրում ու յարգում եմ և քոյրիկ քաղցր անունը տա-
լիս այն բոլոր հայ-վարժուհիներին, հայ-օրիորդներին
ու հայ-կանանց, որոնց մասին այն կարծիքի եմ, թէ
նրանք պատիւ ու պարծանք են բերում հայ-գալոս-
ցին ու հայ-ընտանիքին: Իսկ եթէ համոզուած եմ
որ նրանք իրօք այդպէս են, ուղղակի պաշտում եմ
այդպիսիներին հոգոյս բոլոր գօրութեամբ, իմ ամ-
բողջ էութեամբ: Ես քոյրիկ քաղցր անունով եմ կո-
չել, սիրել, յարգել, և հիմա ևս նոյն քաղցր անունով
եմ կոչում և ըստ առաջնոյն սիրում ու յարգում նաև
այն օրիորդին (այժմ ամուսնացած), որի մօտ մար-
դակերպ հրէշը ինձ՝ իբրև մաքուր բարոյականի տէր
մարդու, հարմնախօս է ուղարկել:

Ինքը երբևիցէ արժանացած է այդպիսի կամ
նման պատուի թէ իմ և թէ ումևիցէ կողմից: Իրա
Busenkamerad Սուստի-բէզը մօտ երկու տարի իմ
հսկողութեանն էր յանձնել իրա աչքադրածին: Ինքը՝
սխալմամբ մարդ կոչուածը երբևիցէ մէկի կողմից
արժանացած է այդպիսի և նման պատուաբեր վըս-
տահութեան:

Այն, այն հայ-վարժուհին, այն հայ-օրիորդը, այն

հայ-կինը, որ պարծանք է բերում մեր սրբավայր
հայ-գալոսցին, պատիւ՝ Ազգութեանս գոյութիւնն ան-
սասան պահող հայ-ընտանիքին, այդպիսին իմ քոյրիկն
է, իմ սիրելին, աչքիս լոյսը, բերանիս սրբութիւնը,
նվ ուզում է լինի՝ ծանօթ թէ անծանօթ, ողջ մէկ
է. այն էլ բաւական է որ իմ սրտիցն է ջուր խմում՝
իր պարտաճանաչ և բարոյական ընթացքով: Վասնզի
իմ խորին համոզմամբ՝ եթէ որք մնացած հէք Ազգս
չի կլանուել ուրիշներից, այլ մինչև օրս իրա գոյու-
թիւնը պահել է, պահում է և պիտի պահի, այդ
օտարներին զարմացնող տոկունութեան—կենսունա-
կութեան գաղտնիքը ամբողջովին հայ-ընտանիքի մաք-
րութեան մէջ պէտք է որոնած: Ահա թէ ինչո՞ւ բա-
րոյականութեան վերաբերմամբ ոչ մի կոմպրոմիսս
չեմ ընդունում. ահա թէ ինչո՞ւ եմ այսպէս զինուել
Ազգութեանս ապագայ նեցուկ մատաղ սերնդին ան-
բարոյականացնող երկոտանի հրէշ վարժապետի դէմ:

Կան մի տեսակ բարոյապէս փշացած մարդիկ,
որոնք իրանց բացասական յատկութիւններով անպատ-
ուութիւն են բերում թէ իրանց շրջապատողներին և
թէ այն հասարակութեան, որի մի անդամն էլ իրանք են:

Կան մի տեսակ մարդիկ էլ, որոնք՝ իբրև սխալա-
կաններ որևէ սխալ կամ յանցանք գործած լինելով՝
անկեղծօրէն խոստովանում են, զղջում և այնուհետև
շարունակում անշեղ կերպով ազնիւ ճանապարհով
ընթանալ: Այդպէսները ոչ-միայն արժանի են ամեն-
քի կողմից լիովին ներման, այլև անկեղծ յարգանքի:

Սակայն սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց
Ս.-ը՝ լինելով մարմնացած կեղծիք, այնքան հեռու
է վերջինների առաքինութիւնից, որքան երկինքը

գետնքից. իսկ դրա հակառակ՝ շատ մօտ է, մի մօրից ծնունդ հարազատն է առաջիններին:

Շուրավէրը հիմնուած օրից Քամալեանները եկեղեցու հարաւային կողմի բակը միշտ ծառայեցրել են իրանց պէտքերի համար:

Բայց անս մի օր գիւղի ղենկորներից մէկը— հանգ. Սիմ. Պառաւեանցը ցանկացաւ օրիորդաց դրարոց շինել յիշեալ եկեղեցու բակի այն մասում, որ կից էր Քամալեանների սեպհականութեան:

Ես մանրամասնութիւնից խուսափում եմ, այլապէս ստիպուած պիտի լինէի թէ սողմեցի գրական պոռնիկի միայն անձնական գծով հաշիւներից թելադրուած լուրերն ու թղթակցութիւններն առաջ բերել և թէ՛ մօտս գտնուած, Պառաւեանցի այն ընդարձակ պատասխանը, որի մէջ պարզ երևում է թէ ինչ զգուանքով են մերժել գիւղացիք չակերտաւոր մանկավարժի քահանայութիւնը: Պատասխան՝ որ «Արձագանք»-ի խմբագրութիւնն ուղղամտութիւն չունեցաւ ամբողջովին հրատարակելու, այլ հրատարակեց բոլորովին անդամահատած, այդ էլ միայն Գրաքննիչ Ատեանի ստիպմամբ: Ի՛նչևէ:

Խնդիրն այն է որ դպրոցը կառուցուելու հէնց սկզբում գիւղի «սրտացաւ» վարժապետի և Պառ.՝ յարաբերութիւնները լարուած էին արդէն, երբ այդ սչ-բարով վարժապետը ուսուցչական պաշտօնով գնաց Ախալքալակ, կամ ինչպէս ուրիշներն են ասում՝ կրկին փախաւ ծեծ ուտելուց:

Իպրոցի շէնքը կառուցանելիս, երբ գիւղի համար «սրտացաւ» վարժապետի հայրը շատ անհամակութիւն է անում, Պառ.-ը նրան զսպելու համար՝ ինչ-

պէս ասում են, հէնց զաւառապետի մօտ ապտակում է վարժապետի հօրը:

Անս այդ պատահածի մասին պակաս-պակաս կերպով գրում են Ախալքալակ ապտակ ուտողի վարժապետ տղին: Բայց այդ սչ-բարով տղէն հօր պատիւը փոխանակ օրինական ճանապարհով վերականգնելու, ինչպէս-որ վայել է փոքրիշատէ զարգացած մարդուն, ընդհակառակը՝ այժմեան նման էլի դիմեց գրական խուլիգանութեան—սկսեց Ախալքալակում թղթակցութիւններ յերկուրել, որպէս թէ Շուրավէրից դրած, և ուղարկել «Արձագանք»-ին:

Այա երբ, ինչպէս գրել եմ, յատկապէս իմ շնորհիւ տեղափոխուեց Թիֆլիզ, մտքին դրաւ՝ Կան նստող և Մուտուրկան հաշող շան փէշակը նորից ձեռք առնել. այն է՝ Թիֆլիզ վայր ընկած, սկսեց Պառաւեանին գրպարտող թղթակցութիւններ կազմել Շուրավէրից և տալ «Արձագանքին» իբրև ակնատեսի գրածներ:

Այդ անփառունակ թղթակցութիւններից մէկը այնքան զգուելի էր, որ զայրացած դիմեցի «գրողին».

—Ամօթ չէ՛, պարոն. մի՛թէ կարելի է այսպէս ստեր գրել հրապարակով...:

—Պ. Աբգար, յետոյ դարձայ խմբագրին, —ինչո՞ւ էք լրագրիդ անունը արատաւորում. մի՛թէ կարելի է պարզ ասեմ և ոչ ամաչեմ, այսպիսի լիքը ստութիւն հրապարակ հանել: (Անագնուաբար հնարած այդ ստութիւնն ու լրբութիւնը կարելի էր լրագրով տրպել, այդ՝ էտիկայի, Գեղարուեստի, Վայելչութեան, Գրական Բարքերի դէմ չէր, իսկ երբ ես զուտ ճշմարտութիւններ եմ հրապարակ հանում, այդ՝ և էտիկայի, և Վայելչութեան, և Գեղարուեստի, և Գրական Բարքերի դէմ է: Երբ ապականուած սիրտդ ու-

զում է՝ ուրիշների պատիւը ցեխն ես գցում յանի-
րաւի, անմեղ ընտանիքների ես վիրաւորում զզուելի
պասկվիլներով՝ խնդրածդ դրամը չստանալու համար-
երբ քեզ ձեռնտու է՝ սւրախութիւն ես յայտնում
զողացածդ գրքերի փրուն յառաջաբաններում, որ
յաւիտենականութեան գիրկն անցան Կովկասի շար
հրեշտակների—իշ. Գանդուկով-Կորսակովի և Սան-
դարամետի ծնունդ Գալիցիի ժամանակները, որ այլևս
եզոպոսի լեզուով չպէտք է խօսենք ու գրենք, այլ
մարդկային լեզուով: Իսկ հիմա որ ձեռնտու չէ քեզ
մամուլի այդ ազատութիւնը, ողբում ես, անպիտան
գլխիդ վնայ տալիս, որ կարողանում ենք մարդկային
լեզուով գրել և ոչ եզոպոսի: Թէպէտ քողարկուած,
բայց երևում է սև-հոգուդ սև-փափազը: Այն, լիո-
վին հասկանում եմ քեզ, սողոմեցի հրէշ, երբ ողբում
ես սրբազան մամուլի սուրբ ազատութիւնը: Չլինէր
այդ ազատութիւնը, դժուար թէ ինձ յաջողուէր դի-
մակդ պատուելով՝ այլանդակ դէմքդ ցոյց տալ հասար-
ակութեան: Կեանքիդ մէջ գոնէ մի հատ առաքինու-
թիւն ունեցիր, այն է՝ լռիր այնտեղ, ուր երբէք, եր-
բէք բերան չպէտք է բանաս, եթէ չես ուզում, որ
մարդկային կերպարանք կրելուդ համար էլ թքեն
երեսիդ):

—Ինչո՞ւ էք սուս կացել, պ. Արգար. միթէ այս-
պիսի լիբը ստութիւնը պէտք է տպուի «Արձագանքի»
մէջ, նորից հարցրի:

—Что-жъ, интересно! — պատասխանեց խմբա-
գիրս, որ, երևի, ուրախացել էր, Պառաւեանից վրէժ
լուծելու առիթի համար, որովհետև Պառաւեանը իր
անօր տղի հետ միասին Արժրուսուն էր սպիտակ
քուէ տուել կաթողիկոսական պատգամաւորներ
ընտրելիս:

Միւս օրը լոյս տեսաւ №-ը, շատերը կարդալով
թերթը, յանդիմանում, նախատում են սևահոգի թըղ-
թակցին:

—Ձես ամաչում, Սէրգօ. գրագէտը միթէ իրան
թոյլ կը տայ այդպէս չլսուած սուտ գրել լրագրի մէջ.
ամօթ քեզ:

—Տաւատացնում եմ (լաւ լսեցէք, ընթերցող) ես
չեմ գրել, — պատասխանում է նզովից արմատը, այդ
միայն զգուանքի զգացմունք յարուցանող, լսեցգետ-
անից էլ ստոր կենդանին. — ես այդպէս չէի գրել, այլ
լեւտնն է այդպէս փոխել սրբազրելիս:

Բերանացի սովորական դարձած հասարակ ստու-
թիւնն անգամ պախարակվում, անազնութիւն է
կոչվում, հապա ինչ յարմար ու արժանի անուն
պէտք է յատկացնել այն գրագէտին, որ հրապարա-
կով մամուլի մէջ իրա գրած շխուած սուտը նոյն օրն
իսկ ուրանում է բաւական չէ, այլև սեպհական շնու-
թիւնը անմեղ մարդկանց վզին է փաթաթում:

Սխալմամբ մարդ կոչուած Ս. Քամալեանցի այդ-
պիսի գրական խուլիզանութիւնն ու մտքի պոռնկու-
թիւնը տեսնելուց յետոյ հասկանալի է որ պէտք է
բոլորովին երես թեքէի նրանից:

Վանքի բակում հայուհ. Բար. Ընկ. օգտին տրուե-
լիք ներկայացման տոմսակներն էի ծախում, երբ քահա-
նայ բարեկամիս ներկայութեամբ այնպիսի բան տեսայ,
որ այլևս կասկածի տեղիք չմնայ, թէ ոչ-բարով վար-
ժապետը մի այլանդակ հրէշ — զզուելի սողոմեցի է:

Այդ անցքից յետոյ տպարանում երբ խմբագրին
բարևեցի, իսկ սողոմեցուն ոչ, խմբագիրը նկատեց.

—Սարգսին ինչո՞ւ չես բարևում:

—Ես էշ ու հրէշին բարևելու սովորութիւն չունիմ:

Երբ սողումեցին քաշուեց-գնաց, խմբագիրս դիմեց ինձ.

— Գիտես, Լևոն, որ եթէ այդպիսի խօսք ինձ ասէիր, ես այս քանոնը գլխիդ կը կտորէի:

— Իսկ ես այս ահագին թանաքամանով ձեր գլուխը կը փշրէի:

— Ես քեզ չեմ հասկանում, Լևոն. ինչպէս կարելի է մի մարդու հետ այդպէս վարուել:

— Շատ ճիշտ էք ասում. մի մարդու հետ չի կարելի այդպէս վարուել, բայց Քամալեան Ս. կոչուածը մարդ չէ, այլ մի այլանդակ հրէ՛շ:

Թէ մինչև որ աստիճանի էի գայրացած, այդ երեւում է հետեւելից.

Չնայելով որ ես յարաբերութիւնս կտրել էի, չէի բարևում և հետը չէի խօսում, խմբագրի մօտ այնպէս խայտառակ արի, բայց Չատիկին, առաւօտեան վաղ եկաւ ինձ մօտ և եզուիտի ժպիտը անամօթ երեսին ձեռքը մեկնեց ասելով՝

— Բրիստոս յարեա՛ւ ի մեռելոց:

Առանց մեկնած ձեռքն առնելու, վրդովուած որ այդպիսի ազիզ օր մի մոլորտառ մտաւ սենեակս այդպէս վաղ-վաղ, գայրոյթով բացականչեցի՝

— Ռա՛գ եղիր գլխիցս:

— Լևոն, ախր ասում եմ՝ «Բրիստոս յարեա՛ւ ի մեռելոց»:

— Իսկ ես ասում եմ՝ ո՛ւր եղիր գլխիցս:

— Լևոն, այսպիսի ազիզ օրը, Բրիստոսի յարութեան տօնին...

— Բրիստոսի հէրն էլ անիծած, քո հէրն էլ. ուր եղիր գլխիցս. սենեակս ազատիր քո ապականուած շնչից:

Այդ՝ սրտի կսկիծով ու ամօթով եմ խոստո-

վանում, կարգից դուրս և համոզմունքիս հակառակ անվայել խօսքերս մարեց անամօթի եռանդը և նա մնաց տեղնուտեղը մեխուած: Մօտ տասը բողբոջաչափ այդպէս ոտքի վրայ մնալով և զգալով թէ որքան պէտք է ուրեմն դառնացած լինիմ իրա դէմ, որ ինձ թոյլ տուի այնպիսի չլսուած խօսքեր արտասանելու և այլևս հետս խօսելու որևէ փորձ անելը անկարելի գտնելով, մոլորուածի պէս, երերուն քայլերով դուրս եկաւ սենեակիցս:

Վերջին դէպքից դեռ շատ ժամանակ չէր անցել, որ մի երեկոյ եկաւ մօտս:

— Եղբայր, էսպէս էլ բան կը լինի. որ օրիորդի ձեռքը խնդրում եմ, մերժումն եմ ստանում... (Փակագծում ասեմ որ այդ 8-րդ թէ 9-րդ մերժումն պէտք է լինէր): Շատ հարկաւոր է. եթէ հաստատ ուղեմամ ամուսնանալ (հապա անհաստատ ամուսնութիւնը որն է. մի խօսք, է, մի հատ խօսք չի ասում, որ ուղիղ լինի), կը գնամ Գանձակ և հէնց առաջին պատահած աշակերտունուս (հր՛մ. թէ...) ձեռքը կը խնդրեմ, որ թէ ուրախութեամբ կ'ընդունի և թէ օժիտ էլ կը բերի. ինքն էլ հազար անգամ աւելի սիրուն և առողջ, քան այստեղիները: (Հետաքրքիր էր թէ՛ էլ որ օրուան էր սպասում. էլ ինչո՞ւ էր այստեղի ոչ-սիրուն, անառողջ ու անօժիտ օրիորդներին դիմում և մերժումն ստանում. այդ ինչ էլ էր, որ իրան արգելում էր բացայայտ խելօքութիւնը թողած, ակնյայտնի յիմարութիւնն անել):

— Պաշը վկայ զարմանք է էս մեր աղջկորանց բանը, — նորից սկսեց, և այնքան ինքն իրան զառանցեց, որ եղաւ ժամի տասը, որ ասել է երկու ժամից աւելի տեղն էր տուել:

—Շատ ես քեզ ու քեզ դուրս տալու. վեր կաց քաշուիր-գնա, հիմա մուտքի դուռը կը փակեն:

—Ես չեմ գնալու:

—Ի՞նչպէս թէ՛ չես գնալու:

—Ես այստեղ պէտք է մնամ այս գիշեր:

—Նախ՝ ես չեմ ցանկանում, որ դու իմ սենեակում մնաս. երկրորդ՝ ես աւելորդ անկողին չունիմ. այն աւելորդ անկողինը՝ որ պահում էի, ուղարկել եմ գիւղ, որ քեզպէսները այլևս չգիշերեն այստեղ:

—Ինձ անկողին պէտքը չէ. աթոռների վրայ գութանավարի կը պառկեմ:

—Այդ ես թոյլ չեմ տալ. ուրեմն խնդրեմ ունի լինիս:

—Քեզ ի՞նչ փասս, եթէ ես աթոռների վրայ պառկեմ:

—Ուրեմն քեզ տանիցս դուրս անելու համար, ես ստիպուած եմ ուրիշ ազդու միջոցի դիմելու:

Եւ երբ տեսաւ թէ կատակ չեմ անում, նոր վեր կացաւ և քաշուեց գնաց:

Կարծեմ հանգ. Գաբ. արք. Այվազովսկին է ասել.

«Ուր քեզ սէր կը ցուցնեն, այստեղ քիչ յաճախիր,

«Իսկ ուր քեզ չեն սիրեր, այստեղ սոք ալ մի կոխիր»:

Այդ խրատական սիրուն խօսքը բարոյապէս ընկած Քամալեանց Ս.-ը այսպէս է շուռ տուել իրա մտքի մէջ.

«Ուր ինձ չեն սիրում, ես հէնց այստեղ կը գնամ.

«Իսկ երբ վրաս թքեն, ես ճաշի էլ կը մնամ»:

Իսկ թէ սրբան ճիշտ եմ ըմբռնել այդ ողորմելի գրչակի ապականուած ներքին աշխարհը, թող ընթերցողը դատի հետևեալից.

Յաճախ է լինում մի ընտանիքում, ուր փոքրով,

մեծով, շատ էլ երես չեն տալիս, բայց-և-այնպէս լինում է: Մի օր երբ չակերտաւոր մանկավարժը դահլիճում նստած կարդում է, տան ամուսնացած աղջիկը, որ մի պտտիկ ու ձտտիկ անձն է, աւելի ճիշտը կատարեալ զգօղան (տղամարդ-աղջիկ), իսկևիսկ կրակի պէծ, լեզուի կողմից հօ՛ ինձ տուել անց է կացել, էլի ողորմի իմ հօրը, ոչ ողորմի նրա հօրը,—բարկանում է երեխայի վրայ և բացականում.

—Կորիւր, շուն:

—Տիկին,—այն կողմից նկատում է չակերտաւոր մանկավարժը,—ձեր ասածը հակամանկավարժական է, ամօթ է:

—Ի՞նչ էք ասում. մարդուն մարդ կ'ասեն, շանն էլ՝ շուն: Ամօթը ձերն է, դուք ամաչեցէք, պարոն մանկավարժ, որ Լևոնը այնպէս բաներ է գրում ձեր մասին, իսկ դուք չէք կարողանում ոչ կարգին պատասխան գրել և ոչ էլ դատարանին դիմել. թիւհ... ամօթ ձեր նամուսին,—ասում է քաջ աղջիկը և արհամարհանքով երեսը շրջում:

—Միթէ հէնց այդպէս էլ ասացիր, աղջի:

—Եւ ինչո՞ւ չէ. ես նրան շա՛ն տեղ էլ չեմ ընում:

—Ճիշտ է ասում, դիմեցի տան միւս անդամներին:

—Չգիտէք, հօ ճանաչում էք դրան, թէ ինչ լեզու ունի:

—Իսկ չակերտաւոր մանկավարժն ի՞նչ արաւ:

—Ոչինչ. մի 10—15 բոպէից յետոյ միասին սեղան նստեցինք...

Վերև յիշածս չլսուած լիրբ ստուգիւն պարունակող յօդուածից յետոյ մի ուրիշ ստայօղը բերաւ: Պառաւեանցի համբերութեան բաժակն արդէն

պոնկէպոունկ լիքն էր, անագնիւ թղթակցի այդ վերջին լրբութիւնը հանեց նրան համբերութիւնից և նա գանգատուեց:

Ձրպարաչի վարտիկը կատու ընկաւ. նա շատ էր փափագում Արգարի ազդեցութեամբ թիֆլիզի հարուստ ծխեր ունեցող եկեղեցիներից մէկի վրայ քահանայ ձեռնադրուել, մինչդեռ այդ դատով փայփայած յոյսը յօդս էր ցնդում:

— Սարգիս, — ասում է խմբագիրը, — մի բան արա, մի ճար գտիր, թէ չէ բանտ ենք նստելու 11 ամիս:

— Էլ մարդ չմնաց, պ. Արգար, ամենքին էլ խընդրեցի՝ որ միջնորդեն հաշտութիւն զցելու, բայց Պառ.-ը ամենքին ևս մերժեց: Միմիայն մի մարդ է մնացել, որ կարող է ազդել Պառ.-ի վրայ. սակայն նրան դիմել ես չեմ կարող. նա իմ ասածը չի լսի: — Գնա՛ փորձիր:

— Գնամ թէ չէ, տանից դուրս կ'անէ:

— Ո՛վ է այդ մարդը: — Լևոնը: — Մէր Լևոնը: — Այո՞՛ երբ խմբագիրը ինձ կանչեց և խնդրեց՝

— Ո՛չ, պ. Արգար, — ասացի, — չեմ կարող. աշխատակիցդ արժանի չէ, որ ես նրա համար աշխատեմ: Նա հէնց բանտի արժանի անձն է:

— Բայց դու նրա համար չես աշխատելու, Լեւոն, այլ ինձ համար: Եթէ Սարգիսը խայտառակուի...

— Աւելի լաւ:

— Սպասիր. եթէ նա խայտառակուի, այդ խայտառակութիւնը «Արձագանք»-ին կը լինի, հետևապէս նաև ինձ:

Համաձայնեցի և գնացի Պառ.-ի մօտ, որ մի առ մի թուելով թէ սովբեր են միջնորդել, աւելացրեց.

— Հաշտուելու համար անհրաժեշտ է որ Քամալեանց Ս.-Մխիթար-Մխիթարիկ-Թուխ-Մանուկ թէ

շուն-մանուկը, որ միևնոյն անձնաւորութիւնն է, մի մեղայական գրի և «Արձագանքում» տպել տայ:

Անտեղեակ այդ ամենից, անագնիւ թղթակիցը՝ դատի երկիւղից սիրտ էր արել գալ սենեակս և իմ բացակայութեան հետևեալ տոմսակը գրել:

«Լևոն, եկայ քեզ տեսելու, չկաս: Այս էլ (լաւ լսեցէք, ընթերցող) քու ծանօթը, էլ ի՞նչ ես ուզում ինձանից: Երկու օր առաջ յանձնեցին ինձ մեղադրական թերթը. այսօր Արգարի մօտ էի, այդ առիթով խօսեցինք. նախքան փաստաբանին դիմելը գերագասեց Արգարը քու միջոցով մի բան իմանալ. առաւօտը շուտ կամ ինձ մօտ արի (տեսէք կերած ...) կամ Արգարի մօտ գնա:

Քո Ք. Ս.» — չիւշ:

Այդ իրան անուանն արժանի բացականչութիւնը աւելացնելուց յետոյ պահեցի:

Վերը ընթերցողը տեսաւ որ ես իմ յարաբերութիւնս կտրել էի իրանից, երեսին թքել, էշ ու հրէջ անուանել, երկու անգամ տանիցս դուրս արել, հապա անամօթութեան վերին աստիճանը չէ՛ր, որ համարձակվում էր գրելու՝ «առաւօտը վաղ ինձ մօտ արի». էլ ինչպէս չասէի՝ չիւշ և այժմ չգրէի՝ տեսէք կերած ...», քանի-որ վերջին երկու տարում ո՛չ մի անգամ չէի գնացած իրա մօտ, իսկ առաւօտը վաղ ո՛չ մի անգամ 20—25 տարուան ընթացքում:

Հարկաւ՝ առանց խաբեբայ թղթակցին մարդատեղ դնելու, ես իմ ստանձնած պաշտօնս ճշտութեամբ կատարում էի և խմբագրին տեղեկութիւն տալիս: Սակայն այդ՝ միայն արտաքինով մարդանմանը էլի անտեղեակ անցած-դարձածից, նորից էր եկել սենեակս և հետևեալ՝ աւելի զգուելի, աւելի անամօթ, աւելի անպատկառ ու լսիւրջ տոմսակը գրել:

«Աւոն, քու (լաւ լսեցէք, ընթերցող) ծանծերի պատմութիւնը («Ինչո՞ւ էր հերսոտել» պատկերն է) գրած պատրաստ է: Արդեօք տեսար Սիմէօնին և ի՞նչ խօսեցիր. դու չես աշխատում հաշտութեան գործը զուլի բերես (ինչի՞ց գիտես, զգուելի սողուն. իսկ եթէ դու խարդախ չես և սրտանց հաշտութիւն էիր կամենում, հապա ինչո՞ւ, անարգ արարած, ինձ «վիրաւորական»՝ «Ինչո՞ւ էր հերսոտել» պատմութիւնն էիր բերում. տեսնուած բան է, որ մէկի մասին վիրաւորական բան գրեն, և նրանից հաշտութեան գործ խնդրեն: Հէնց այդ մէկ փաստն էլ բաւական է՝ լաւ ըմբռնելու քո գծում, ազնուութիւնից թափուր աղքատ հոգիդ). երևի քեզ դուր է գալիս, երբ մենք կովում ենք (ինչի՞ց գիտես, ի՞ժի՞ ծնունդ): Բայց սոսկալի կռիւը այսուհետև կը լինի (անամօթ պարծենկոտ, շուտով այդ էլ կը տեսնենք), եթէ դու ականջդ կախ անես կամ Սիմէօնն էլ կողմնակի մարդկանցից սրուած գանգաւը գանգատ թողի: Հազիւ սիրտս (ցամաքի այդպէս ապականուած, այդպէս աղտեղութիւններով լի սիրտը) հանդարտուել է նրա դէմ, ամեն ինչ ուզում եմ մոռանալ (այդ քեզ շատ ձեռնտու է) և հաշտութեան ձեռ մեկնել իբրև մի զօրեղ շուլավերցու (հ՛ըմ), որ պակասութիւնների թուում ունի աչքի ընկնող արժանաւորութիւններ էլ (հապա ինչո՞ւ էիր քօռացել ու պապանձուել այդ մասին, Սանդարամէտից ելած). ինձ ոչինչ վնաս չի հասնիլ նրա գանգատից (քո գլխի պատուելիը գիտենայ. հապա 11 ամիս բանտ նստելիդ, հապա հարուստ ծխերի վրայ քահանայ դառնալու սևադոյն հոգուդ տենչանքի ջուրը մաղուելիը). նրան պատուելու համար է որ հաշտութիւնը նախադասում եմ (դու իսկ և իսկ մարդկութեան տականք ես եղել, զգուելի եզուխա): Ոտս զատարան դնելուց ետը ես երբէք, երբէք հաշտուել չեմ կարող (և հիմա երևի թէ հաշտութիւնը այդպէս շատ սիրելուց է, որ դատարանից եօթն օրուան ու եօթը գիշերուայ ճամբայ հեռու ես փախչում՝ իմ դէմ չգանգատուելու համար): Իմ սրտի բանը ես գիտեմ (էլ ի՞նչ ասել կ'ուզէ): Թո՛ղ Սիմէօնը լաւ իմանայ որ բարեացակամու-

թիւնից (ցից) դրդուած եմ այս տողերը գրում և ոչ վախից: (Դու այդ քո անամօթութեամբ Ստեղծողիդ էլ ես ամօթ բերում): Թո՛ղ գայ հաշտութիւնը զուլի բերենք վերջանայ (որպէսզի էլ ոչ իշի բաղնիս մտնես և ոչ էլ քահանայ դառնալու յոյսից զրկուես): Եթէ չես տեսել մինչև օրս ու չես խօսել, այսօր գնա (ցից, է) յայտնիր իմ մտադրութիւնը և երեկոյեան արի ինձ մօտ (մէկ տեսէք այդ լրբի կերած ...)—կը սպասեմ մինչև ժ. 7-ը: Հոկտ. 20, 1^{1/2} ժ-ին.

Ք. Ք. Ս.—չիւշ:

Այդ տոմսակը ևս պահեցի և, ինչպէս տեսնում է ընթերցողը, չեմ սխալուել: Եթէ դա անբարոյական չլինէր, այդ աստիճան մոռացկոտ չէր լինիլ՝ թէ իր սեպհական գործի վերաբերեալ ինչ ու ինչ է գրել, և հիմա չէր ասիլ, թէ «Ինչո՞ւ էր հերսոտել» պատկերը ինձ համար վիրաւորական է և իբրև-թէ այդ պատճառով է, որ մերկացումներ արի: Եթէ ես այդ տոմսակը, ինչպէս նաև շատ բան, պահած չլինէի և դուք էլ, ընթերցող, ներեցէք պարզախօսութեանս, ազնուութեան, ճշմարտութեան հետ կոմպրոմիսներ անող կամ տափակ ուղեղի տէր լինէիք, ես ի՞նչպէս կարող էի հաստատել, որ իմ ձեռքով ուղղուած, կոկուած, աւելի կենդան գոյն ստացած Փելիէտօնը երբէք չէր կարող ինձ համար վիրաւորական լինել, հետևապէս այժմ այդպէս պնդելը մի այնպիսի անամօթ ստախօսութիւն է, որին ընդունակ կարող են լինել միմիայն բարոյապէս ընկած Սարգիս Քամալեանցը և Մողնու միաբան սուտ-քրիստոս Սահակ քահ. Սահակեանը՝ այդ ոչ-բարով աստուածաբանները, այդ մարմնացած անազնութիւնները:

«Արձագանք»-ի խմբագրի բարեկամ փաստաբա-

նը շարունակ գալիս և յորդորում էր՝ մի բան անել, այլապէս հետևանքը վատ կը լինի:

— Այսպէս ձգձգելը քեզ այնքան էլ պատիւ չի բերում, Սարգիս. նստիր և մի բան գրիր:

— Հաւատացէ՛ք, պ. Աբգար, չգիտեմ ինչպէս գրեմ:

— Մի կերպ դուրս բեր:

— Բայց ինձ թվում է թէ ուղեղս կանգ է առել, էլ ո՞նց գրեմ:

Թշուառականը հագիւ մի ուղիղ խօսք ասաց: Այո, ստույթիւններով ու զրպարտութիւններով լի շինծութիւններով կազմելիս ապականուած ուղեղը գործում էր, բայց երբ պէտք է այդ արած ցածութիւնների համար, իբրև արդար պատիժ, մեղայական գրէր, «ուղեղը կանգ էր առել», «ո՞նց գրէր»:

Խմբագիրը տեսնելով աշխատակցի աննախանձելի դրուժիւնը, խղճաց վրան, այդպիսի դէպքերում սովորական՝ «մախլաս»-ը բացահանչեց և անձարակ մնացած թղթակցի բերանից մի բաց նամակ գրեց Պառաւեանցին:

— Լևոն-ջան, այս նամակը վաղը կը տանես Պառաւեանցին, միայն չասես թէ ես եմ գրել:

— Պ. Աբգար, այս գրածիդ մէջ թէև սպանիչ արհամարհանք եւ դառն հեզնութիւն կայ թագնուած ձեզ սխալեցնող աշխատակցիդ վերաբերմամբ, բայց և-տյնպէս տանելու աւելորդ է, Պառաւեանցը չի համաձայնիլ այս ձևով գրածին:

— Յամենայն դէպս տար, միայն չասես թէ իմ գրածն է:

Միւս օրը երբ տարայ և կարդացի, Պառ.-ը գայրացած նկատեց.

— Այդ նամակը, Լևոն-ջան, եզուրտային խորամանկութիւն է. այդ նամակով ինձ վրայ հաջող շու-

նը միամիտների աչքում ուզում է բարձրանալ, մինչդեռ ես ուզում եմ ամենի առաջ ցածացնել և իրան արժանի տեղը դնել— ցեխի մէջ թաղել...

— Ա. Սիմ, այդպէս վրդովելու կարիք չկայ. նա այս է առաջարկում. եթէ այս կամ այն խօսքը լաւ չէ, ուղղիր:

— Այս ուղղել անկարելի է. սկզբից մինչև վերջը խարդախութիւն է. պէտք է գրել նորից և իմ ուզածի պէս. այլապէս՝ դուք ձեզ համար, ես էլ ինձ համար:

Ես կազմեցի մի ուրիշը, չհաւանեց. կազմեցի երրորդը, թէ չհաւանեց և թէ նկատեց.

— Դու է՛լ նրանց հացից կտրեցիր, Լևոն:

Համբերութիւնից ելած՝ կազմեցի չորրորդը և տուի իրան, ասելով՝

— Եթէ անկեղծօրէն հաշտութիւն ես ուզում, Սեմոն, գոնէ հիմա պէտք է հաւանես:

Սուաւ, կարգաց, մի երկու տեղ փոփոխեց և ինձ տուաւ: Երբ արտագրեցի և կարդացի, գոհ մնաց:

— Այ, բացահանչեց,— այն սև-շունը պէտք է այդ ստորացուցիչ մեղայականը տալի հէնց այն լրագրում, ուր վրաս այնքան հաջացել է:

Խմբագրին տարայ, որ նոյնպէս շատ հաւանեց:

— Լևոն-ջան, խնդրեմ հէնց հիմա տանես Սարգսին, որ ստորագրի, առանց այն էլ շատ ուշացաւ:

— Ես իմ յարաբերութիւնս արդէն կտրել եմ նրանից մօտ երկու տարի է. հետևապէս անկարող եմ նրա մօտ գնալ. մանաւանդ-որ նա արժանի չէ այդ պատուին:

— Լևոն, այնպէս իմացիր թէ իմ խաթեր համար մի վերտէպ ես գնում. յատուկ խնդրում եմ որ գնաս:

Գնացի, առանց ձեռք տալու մեղայականը տուի իրան: Կարգաց և մնաց շուարուած:

—Պ. Աբգարը տեսաւ:

—Ի հարկէ տեսաւ. նա խնդրեց որ զնամ, թէ-
չէ ես բեզ մօտ եկողը չէի:

—Խի՛, բեզ ի՞նչ եմ արել:

—Իրա վախտը չի. ես ժամանակ չունիմ, ար-
պարան եմ գնալու, ստորագրելը տուր:

Որպէսզի չստորագրի, ի՞նչ յիմարութիւններ, ի՞նչ
ցնդաբանութիւններ ասէք, դուրս տուաւ:

—Ասացի որ ժամանակ չունիմ. այդ յիմար սո-
փեստութիւններդ ծալիր և ջէբդ դիր, ինձ պէտքը չեն:

Վեր կացաւ որ լուսամտի վրայից կազմած «Ար-
ձագանքները» բերի և աշխատի ինձ համոզել:

—Ախր ինչ՞ու ես բերում դրանք. չէ՞-որ ամեն
բան ձեռքիս տակից է անցել:

Չլսեց և երբ կազմած «Արձագանքները» բար-
ձրացրեց, երևան եկաւ՝ մինչ այդ ինձ անյայտ մնացած
տգեղ յատկութիւններից մինն էլ—կաշաղակային թէ
ազոռաային քնոյթը,—որով շատ և շատ բան պարզ
եղաւ ինձ համար, ինչ-որ մինչ այդ ուղղակի հանե-
լուկ էր մնացել:

Խմբագիրը երեկոյեան գալով տպարան, երբ իմա-
ցաւ թէ չի ստորագրել՝

—Ոչինչ, ասաց, դու շտապիր Պառաւեանցի հետ
հարկաւոր նամակները գրել ու փոխանակել, որ ժա-
մանակ չկորչի, իսկ մեղայականը Սարգիսը կը ստո-
րագրի անպատճառ. կեղծ ամօթից է որ մերժում է:
Իսկ եթէ չկամենայ ստորագրել՝ очень нужно! Եթէ
սիրտն ուզում է, թող բանտ նստի: Ես ձանձրացայ.
բաւական էր այդ յիմարի համար այսքան զբաղուելը:

Միւս օրը Պառաւեանցի հետ համաձայնութիւն
կայացնելով, մի նամակ գրեցի, որի մէջ ազնիւ խօսք
էի տալիս, թէ յիշեալ մեղայականը անփոփոխ կը

տգադրուի «Արձագանքում», երբ Մխիթարիկ-Քամա-
լեանց Ս.-ը սեպհական ձեռքով կըստորագրի. հակա-
ռակ դէպքում ազատ է լինելու ոչ-միայն դատը շա-
րունակելու, այլև իրաւունք էի տալիս ինձ էլ վկայ
կանչելու: Իսկ Պառաւեանցն էլ հետևեալ նամակը
գրեց ինձ.

Սիրելիդ իմ Ղեւոն!

Գրածդ նամակն ստացայ, որով գրում էք այն բաց
նամակի բովանդակութիւնը, որ պէտք է իբրև ներողու-
թիւն տպագրել տայ «Արձագանք» թերթում Մխիթար-
Մխիթարիկ-Քամալեանց Ս.-ը, և պէտք է յետ վերցնի
լրագրապէս այն բոլոր խօսքերը, որ տպագրուած է անցեալ
1894 թուին: Դուք նաև գրում էք որ ես ներողամիտ լինիմ,
բանի-որ մեղաւորը յանձն է առնում իւր մեղքը. բայց օրէն-
քը այդ չի պահանջում. օրէնքը պատժում է մեղաւորին, և
ես դիմել եմ այդ ճանապարհին:

Սակայն, Լեոն-Չան, զիջանելով քո խնդրին, ես այս իմ
նամակով խօսք եմ տալիս որ երբ կը տպագրուի «Արձագանք»
թերթում ինձ գրած բաց նամակը Մխիթար-Մխիթա-
րիկ-Քամալեանց Ս.-ի կողմից և նա յետ կը վերցնի իր
բոլոր գրուածների մէջ արած զրպարտութիւնները, ես միայն
այն-ժամանակ կարող եմ հաշտուել և իմ տուածս գան-
գատը նահանգական դատարանին անհետևանք թողնել: Ուստի
տպելուն պէս ես միւս օրը խնդիր կը տամ բողոքն անհե-
տևանք թողնելու:

Քեզ սիրող՝

Սիմէօն Պառաւեան

5-ն դեկտեմբերի 1896 թ.

Տ փ ի ս:

Խաբեբայ թղթակիցը գալիս էր տպարան, կար-
դում իրա մեղայականը, բայց չէր ուզում ստորագրել.
Իսկ երբ մի օր փաստաբանն էլի եկաւ տպարան և զար-
ձեալ պնդեց, որ բանտարկութիւնն անխուսափելի է,
արհամարհանքի արժանի զրպարտիչ թղթակիցը գոյն

տուաւ, գոյն առաւ և դողդոջիւն ձեռքով ստորագրեց հետևեալ մեղայականը.

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՍԻՄԷՕՆ ՊԱՌԱԻԵԱՆՑԻՆ

Շուրաւերից գրած մեր թղթակցութիւններէ մէջ երբեմն խիստ և՛ խոստովանում ենք անկեղծօրէն, նաև անարդար ենք եղել Ձեր վերաբերմամբ: Այժմ՝ խնդրի վրայ թէ աւելի սառնօրէն նայելով և թէ մեր ընդհանուր բարեկամաց յորդորներն իրաւացի գտնելով, մեր պարտքն ենք համարում հրապարակով յայտնել, որ մենք մեր այս նամակով յետ ենք վերցնում այն բոլոր խօսքերը, որ գրել էինք Ձեր մասին, և այն բոլոր մեղադրանքները, որ մենք իզուր տեղը բարդել էինք Ձեզ վրայ:

Ընդունեցէք, մեծ. պարոն մեր խորին յարգանաց հաւաստիքը:

Մխիթարիկ-Քամալեանց Ս.

7-ն դեկտեմբերի 1896 թ.

Թ՛ Ի Փ Լ Ի Դ՛

—Ահա սո. վերջը քու ասածն արիր, էլի:

—Բռնիր,—բացականչեցի զայրացմամբ և նամակը շարտեցի երեսին.—եթէ համոզուած չես որ այնքան ու այնքան անազնիւ զրպարտութիւններ յերկրելուցդ յետոյ այս կերպ միայն կարող ես իշի բազնիս չմտնել, ապա ուրեմն թող չտպուի:

—էլ նոր ի՛նչ. թող հէնց հիմա շարեն տպուի:

Սակայն արդէն երեկոյեան ժամը 9-ն էր, ուստի մնաց միւս №-ին:

Միւս օրը երբ մեղայականն արդէն շարուել, սըրբագրուել, գրաքննիչից եկել, երես էր կապուել և այն է՝ Փօրմատը մամուլի տակ պէտք է գցուէր, մարմնացած ստութիւնն եկաւ տպարան և յայտնեց.

—Ձեմ ուզում որ այն նամակս լոյս տեսնի:

—Այսինքն մեղայականդ, հարցրի:

—Ի՛նչ որ է, չեմ ուզում:

Մմբազիրը զարմացած հարցական հայեացք գցեց վրաս:

—Դու, բաւական միջոց ունէիր, պ. խաբեբայ, այդ առաջուց ապելու: Եթէ չէիր ուզում, հապա ինչո՞ւ հէնց այսօր, սրանից մի 5—6 ժամ առաջ Վելեամի-նեան փողոցում պ. Կ. Ե.-ի մօտ էլ յայտնեցիր, որ համաձայն ես մեղայականդ տպագրուելուն:

—Պ. Աբգար, թողէք կառքով գնամ պ. Կ. Եաղբերեմ և ասածս հաստատեմ վկայով:

—Հարկ չկայ. քեզ հաւատում եմ:

—«Ձեմ ուզում»... Այս էլ դարձաւ թունդ նորդարական «պատուական երիտասարդ» քննիչ Գ. Մ.-ի՝ Տէր-Պօղոսի մօտ գրաւ մնացած շորէրը, որի համար ուզում էիր ազնուութիւնս գէնք շինես և քեզ իրան օգնական չկամեցող Տէր-Պօղոսից վրէժ լուծես: Ձես ամաչում: Ձէ՛-որ ես Պառ.-ին ստորագրութիւն եմ տուել մեղայականդ անպատճառ տպուելու համար: Ուրեմն ուզում ես ինձ սո՛ւտ դուրս բերել նրա մօտ. թո՛ւք, թո՛ւք այդ անամօթ երեսիդ, ասացի և երեք անգամ թքեցի երեսին:

Այդ տուածս թուքը մարտեց 1896 թ. դեկտեմբեր 10-ին թէ 11-ին, իսկ նոյն ամսուայ 14-ին «Արձագանքի» № 146-ում լոյս տեսաւ ցածահոգի թղթակցի հետևեալ գրութիւնը.

«ԲԱՅ ՆԱՄԱԿ Պ. ՍԻՄԷՕՆ ՊԱՌԱԻԵԱՆՑԻՆ

«Երկու տարի առաջ «Արձագանքում» մի քանի յօդուածներ տպուեցին իմ ստորագրութիւնով ձեր դէմ: Յուզուած ընդհանրին սխալուելը յատուկ է ամեն մարդու, հետևապէս և ինձ. հայրենի գիւղից հասած տեղեկութեանց

անմիջական ազդեցութեան տակ խոստովանում եմ—վերա-
ւորանք եմ պատճառել ձեզ, վաղեմի բարեկամիս, որին միշտ
յարգել եմ իբրև գործունեայ հայի: Չնայելով որ ընթերցող հա-
սարակութիւնն արդէն մոռացութեան է տուել այդ ամենը,
բայց ես յանուն ճշմարտութեան պարտք եմ համարում ես
վերցնել իմ յօդուածներում ձեր հասցէին ուղղած բոլոր վի-
րաւորական դարձուածներս:

Ես չեմ ցանկացել երբէք (անամօթ ստախօս) և այ-
սուհետև էլ անկարող եմ հետևել ներկայումս լրագրական մի
մասում ընդունուած բարքերին, ուր անտեղի վերաւորանքի
միակ շարունակութիւնը յամառութիւնն է: (Եթէ այդպէս է,
եթէ չես ստում, հապա դեկտ. 7-ին ստորագրածդ ինչո՞ւ
չուզեցիր տպել, այ մարմնացած կեղծիք):

Ներկայ երկտողով ինձ թվում է որ կատարած կը լի-
նեմ իմ պարտքս:

Ընդունեցէք խորին յարգանքս և այլն:

Քամալեանց Ս.

Ապր 1897 թ. յունվ. 1-ին «Արձագանքի» №
1-ում լոյս տեսաւ հետևեալը.

ՇՈՒԼԱՎԷՐԻՑ պ. Մխիթարիկը մեզ գրում է (ըն-
թերցողն արդէն նախընթաց երեսներից տեսաւ թէ ով է
այդ խարդախ Եանուսը—երկերեսանին).—«Միպտակ-շէն» կո-
չուած կալուածի խնդիրը, որ երկար տարիներ մեր հասարա-
կութեան համար կուսածաղիկ էր եղած, գրեթէ (սո անիծած,
էլ ինչ գրեթէ. ճշմարտան ասն ու պրծի, էլի) վերջացած է:
Գիւղացիք հասկանալով սեպհական հող ունենալու առաւե-
րութիւնը (ինչ ասել կ'ուզէ, որ դու քո «մանկա...վարժու-
թեամբ» կը լինիս հասկացրած) պէտք եղած գումարը ազ-
քատից մինչև ունևորը ժողովեցին, որ վճարեն պ. Ս. Պա-
ռուեանցին»:

Պ. Մխիթարիկը խնդրում է աւելացնել որ պ. Ս. Պա-
ռուեանցի մասին իւր թղթակցութիւնների մէջ արած նն-
ծադրութիւնները չարարացան, ուստի յետ է վերցնում նրանց»:

Այդ իբրև-թէ Շուլավերից գրած, լուրը տպուե-
լու առիթով նոյն թուի յունվ. 12-ին հետևեալ նա-
մակն ստացայ Պառուեանից.

Սիրելիդ իմ Լեւոն!

Դու ինձ դրեցիր անելանելի դրութեան մէջ. չգիտեմ
ինչին վերագրեմ քո միջնորդութիւնը: Ախր քեզ շատ լաւ
յայտնի պէտք է լինի, որ մօտ մի ամսից աւելի քանիքանի
մարդիկ, նոյնիսկ Սրբ. Առաջնորդը միջնորդութիւն արին՝
Մխիթար-Մխիթարիկ, Թուխ մանուկ թէ շուն մանուկ Քամա-
լեանց Ս.-ի կողմից, որ ներեմ նրան իր՝ իմ դէմ արած զըր-
պարտութիւնների համար, բայց ես բոլորին մերժելով մեր-
ժեցի: Վերջը դու, հոգիս, օձիքիցս պինդ կախ ընկար, և
իմանալով իմ անկեղծ սէրը և յարգանքը դէպի քեզ, ինձա-
նից ազնիւ խօսք առնելուց սաւայի, առար նաև գրաւոր
փաստ, որ ես ներեմ և վերցնեմ նահանգական դատարանից
իմ սկսած դատը, եթէ համաձայն ինձ գրածդ նամակի «Ար-
ձագանքի» մէջ տպագրուի Մխիթարիկ-Քամալեանց Ս.-ի
իսկական ստորագրութեամբ գրած մեղայականը: (Երես 108):

Այդ նամակը չտպուեց «Արձագանքում», այլ դրա փո-
խարէն միմիայն Քամալեանց Ս. ստորագրութեամբ դուրս
եկաւ մի ուրիշ բաց նամակ բոլորովին այլ բովանդակու-
թեամբ: (Երես 109):

«Իսկ յունվ. 1-ին «Արձագանքի» № 1-ում էլ Շուլա-
վերից տպուած կար մի լուր (Երես 111) իմ վերաբերմամբ,
ուր ի միջի այլոց գրած է թէ՛ «Մխիթարիկը իր ննծադրու-
թիւնների մէջ չարդարացաւ, ուստի և յետ է վերցնում նրանց»:
Ասն խնդրեմ, այդ ինչ ենթադրութիւններ էին, որոնք չար-
դարացան. այդ ինչ սոփեստութիւն է, Մարդը (?) ինձ ուղ-
ղակի անպատուել է, ամեն բան անուանել է, ամեն (լաւ
լսեցէք, ընթերցող) անուն տուել է, նա ուղղակի ցանկացել է
իմ պատիւս շօշափել, և արել է, այժմ այդ տեսակ անագ-
նիւ յարձակումները կարող են դառնալ ենթադրութիւններ:
(Եթէ խնդիրը հոտած ուղեղի տէր անբարոյական Քամա-
լեանց Ս.-ին է վերաբերում, կարող են, վաճաղի այդ սո-
ղոմեցին ընդունակ է ամեն տեսակ ցած ու ստոր արարքի):

Ասան, հոգիս, այդ էր քո ազնիւ խօսքը, սրտազին միջնորդութիւնը. այդ էր քո անկեղծ խնդիրը Քամալեանց Ս.-ի համար: (Եւ այդ ամենից յետոյ վեր կենալ և առանց ամաչելու գրել. «Հաշտութեան գործը Լեոնն էր ուզում, բայց զուլս եկաւ Ս. Հախ.-ի միջոցով»):

Ուրեմն որովհետև դու ես միայն ինձ այստեղ գցողը, և դու ես ինձ կոտորողը որ հաշտուեմ—կամ կատարիլը խոստումը և թո՛ղ մեղաւորը անկեղծօրէն ներողութիւն խնդրէ հրապարակապէս, կամ վերադարձրո՛ւ իմ քեզ գրած նամակս (Երես 107) և նորից գրաւոր հաստատի, որ ես իրաւունք ունիմ դատը շարունակելու և զգուելի զրպարտչին պատժել տալու:

Քանիքանի անգամ Աբգարին խնդրեցի՝ կամ զգուելի զրպարտչի մեղայականը և կամ խմբագրութեան կողմից մի երկու խօսք տպելով ազատի ինձ Պառ.-ի յանդիմանութիւններից, սակայն ոչինչ չեղաւ: Պառուեանն էլ վշտացած՝ նոյն թուականի «Մըշակի» №12-ի մէջ տպել տուաւ հետևեալը.

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն

Խնդրում եմ մի անկիւն շնորհէք այս երկտողիս «Մշակի» մէջ:

Ի-թիւս շատ խնդրողների պ. Լեոն Մելիք-Աղամեանը ես միջնորդ դարձաւ ինձ և Սարգիս Քամալեանին հաշտեցնելու, այսինքն՝ որ ես ներեմ Ս. Քամալեանին և առ ոչինչ համարեմ պարոնի զրպարտութիւնները, որ նա աջ ու ձախ թափում էր իմ վրայ համարեա երկու տարի, այն է 1894 և 1895 թուականների ընթացքում «Արձագանքի» մէջ: Եւ թէպէտ ես շատերին մերժելով մերժել էի և չէի ընդունել ոչ-ոքի միջնորդութիւնը՝ սակայն վերջիվերջոյ յարգեցի պ. Լեոն Մելիք-Աղամեանի միջնորդութիւնը և համաձայնեցի ներել այն պայմանով, եթէ Սարգիս Քամալեանց-Մխիթար-Մխիթարիկ-Թուխ-Մանուկ ստորագրութեամբ՝ ինձանից ներողութիւն խնդրող և զրպարտութիւնները յետս վերցնող նամակ կը տպուի հէնց այն լրագրում, որի մէջ ինձ վերա-

ւորանքներ է հասել իզուր տեղը: Պ. Լեոն Մելիք-Աղամեանը միքանի օրից յետոյ բերաւ և կարդաց մօտս հետևեալ բանաձևը, որ պիտի տպուէր այսպէս.

«Բաց նամակ Ս. Պառուեանցին.— «Շուրավերից գրած մեր թրդ-
« թակցութիւնների մէջ երբեմն խիստ և խոստովանում ենք
« անկեղծօրէն, նաև անարդար ենք եղել Ձեր վերաբերմամբ:
« Այժմ՝ խնդրի վրայ թէ աւելի սառնօրէն նայելով և թէ
« մեր ընդհանուր բարեկամաց յորդորները իրաւացի գըտ-
« նելով, մեր պարտքն ենք համարում, հրապարակով յայտ-
« նել, որ մենք մեր այս նամակով յետ ենք վերցնում այն
« բոլոր խօսքերը, որ գրել էինք Ձեր մասին, և այն մեղա-
« դրանքները, որ մենք իզուր տեղը բարդել էինք Ձեզ վրայ:
« Ընդունեցէք, մեծ. պարոն, մեր խորին յարգանաց հա-
« ւաստիքը»:

Իսկականի վրայ ստորագրած է՝ «Մխիթարիկ և Քամալեան Ս.»:

Սկզբումը ես չուզեցի համաձայնել, սակայն կողին յարգելով Լեոն Մելիք-Աղամեանին, զիջայ միայն այն պայմանով, որ յիշեալ բանաձևը լոյս տեսնի առանց որևէ փոփոխութեան: Եւ երբ պ. Լ. Մելիք-Աղամեանը խոստացաւ և վերջնականապէս իմ համաձայնութիւնս տուի, նա առաւ ինձանից նաև ստորագրութիւն, որով ես՝ այդ բանաձևը տպուելու միւս օրն իսկ, պարտաւորվում էի խնդիր տալ դատարանին, որպէսզի իմ զանգատս անհետևանք թողնեն: Եւ հան լոյս է տեսնում «Արձագանքի» № 146-ը և մէջը մի բաց նամակ՝ իմ անուան, որ կրում է միմիայն Քամալեանց Ս. ստորագրութիւնը և բոլորովին այլ բովանդակութեամբ: Ապա միքանի օրից յետոյ լոյս է տեսնում նոյն «Արձագանքի» այս տարուայ № 1-ը, որի մէջ հիմա էլ Մխիթարիկն էր հրապարակ դուրս եկել նոյն մտքով, ինչ-որ Ս. Քամալեանցը իր բաց նամակով: Ես միանգամայն մնացի զարմացած: Եթէ այդպէս պիտի լինէր, հապա էլ ինչո՞ւ էր պ. Մելիք-Աղամեանը միջնորդում, և եթէ ինքը պ. Մելիք-Աղամեանը վըստահ չէր Սարգիս Քամալեանցի վրայ, էլ ինչո՞ւ ինձանից ստորագրութիւն առաւ: Սրանով ես իմ անբաւականութիւնս եմ յայտնում պ. Լ. Մելիք-Աղամեանին, որից և խնդրում եմ հրապարակական բացատրութիւն:

Միմէօն Պառուեան

30-ն յունվարի 1897 թ.
Ք ի Ֆ ի դ

Ես այն մարդկանցից չեմ, որ իմ պարտականութիւններիս մէջ այնքան թերանամ, որ վիրաւորիչ կերպով ինձանից հրապարակական հաշիւ պահանջեն, ուստի—և պատասխանս անմիջապէս գրեցի. բայց նախքան «Մշակին» յանձնելը, հարկ համարեցի դեռ պարտքըս կատարել դէպի «Արձագանքի» խմբագրութիւնը:

— Խնդրեմ ասէք, պ. Աբգար. հիմա ես ի՞նչպէս պատասխանեմ, որ լաւ լինի՝ որպէսզի ոչ ճշմարտութիւնը վիրաւորանք կրի և ոչ էլ դձուք վշտանաք:

— Ես ոչինչ չգիտեմ. դու պարտաւոր ես գնալ և Պառաւեանից պահանջել, որ դատը յետ վերցնի: Ես պահանջում եմ այդ քեզանից:

— Կատակի ժամանակ չէ, պ. Աբգար:

— Ես կատակ չեմ անում, այլ լուրջ եմ ասում:

— Բայց ի՞նչպէս չէք հասկանում, որ Պառաւեանցը իմ ստրուկը չէ և ոչ էլ իմ ստորադրեալը, որից ես զանազան անտեղի պահանջներ անէի:

Երևաց որ արձակածս թունաւոր նետը ճիշտ նըպատակին էր դիպել:

— Ե՛հա... ո՞չինչ չգիտեմ,— պատասխանեց անվայել կերպով ձեռքը սեղանին խփելով. — Ես քեզանից պահանջում եմ և երեք օր ժամանակ եմ տալիս՝ որ Պառաւեանցը դատը յետ վերցնի:

— Միանգամայն տարօրինակ պահանջ,— ասացի ուսերս վերբաշելով և գնացի միւս սենեակը լրագրի վերջին սրբագրութիւնը կարդալու:

Քանիմի ըոպէից եկաւ մօտս հանգ. Ս. Հախ.-ը:

— Լեոն-ջան,— գալուն պէս դիմեց ինձ,— դու էլ լաւ գիտես, որ ողջ խմբագրութեան մէջ իմ միակ սրտացաւ բարեկամը դու ես. եթէ յամառես, հետեւանքը վատ կը լինի քեզ համար, ապա ուրեմն նաև ինձ համար...

— Ի՞նչ պիտի լինի հետևանքը,— զայրացած ընդհատեցի նրան,— շատ, շատ, պէտք է սրբագրութիւնը ձեռքիցս առնի: Թող առնի. թողած միւս շատ ստանալիքներս, թող միայն ինձ հասանելիքից 600 ու ուճիկս և իրա խոստացած՝ այդ 600 ուրբու եօթը տարուայ տոկոսը տայ, ես ինքս կը գնամ առանց յետ նայելու և այս անիծած ու անշնորհակալ պաշտօնից ազատուելուս համար մի չաղ աքաղաղ էլ մատաղ կ'անեմ և խմբագրութիւններին կը բաժանեմ, իրան էլ մի ազդրը մատաղաբաժին կը ղրկեմ լաւաշի մէջ փաթաթած. հասկացա՞ր, Սիմոն: Հետևանքը վատ կը լինի: Ես հօ չեմ հանդուրժելու, որ խմբագիրդ մի իժի ծնունդ թէ շան-ծնունդ խաբեբայ թղթակիցաշխատակցի պատճառով իրա կապրիզները շարունակէ: Արժէ՞ որ մի շան համար հրապարակապէս և թէ բերանացի նախատինք ու յանդիմանութիւններ ստանամ: Այդ իմ դաւթարում չկայ, Սիմոն:

— Գիտեմ, բայց ախր...

— Առանց բացի. իմ իրաւասութիւնից վեր բան է պահանջում խմբագիրդ, դեռ մի կողմը մնայ, որ նա ամենեւին իրաւունք չունի ինձանից այդպիսի յիմար պահանջներ անելու և այն էլ այնպիսի անվայել ձևով: Ես ազատ մարդ եմ և ոչ ստրուկ. այս էլ հասկացա՞ր, սիրելի Սիմոն...

Անցաւ երեք օրը. անցաւ չորրորդն էլ, հինգերորդն էլ, բայց ոչ մի խօսք իրա դրած պայմանի մասին, թէև ամեն օր տեսնվում էինք թէ բանկում, թէ խմբագրատանը և թէ տպարանում և սովորական կերպով խօսում լրագրի նիւթերի մասին:

Թէպէտև արդէն ազատ էի իմ անելիքիս մէջ, բայց ժամանակ չունենալով «Մշակի» խմբագրատուն գնալու, թողի միւս օրուան: Սակայն նոյն օրը այդ ինձ

անելու ստիպեց ինքը՝ խաբեբայ թղթակիցը: Մեր բարեկամ Ռ. Մարտիրոսեանցի տունը տպարանից աւելի մօտ լինելով՝ ուշ էր, էլ մերոնց չգնացի: Մենք արդէն ճաշում էինք, որ եկաւ անփառունակ թղթակիցը: Մանրամասնութիւնների մէջ չեմ մտնում: Ճաշից յետոյ բարեկամս ինձ ասաց, որ թէ էս Պառաւեանցին պատասխանեմ և մէջը Քամալեանցի համար վիրաւորական բան լինի, պաշտօնիցս կը զրկուեմ: Արիւնը խփեց գլուխս:

— Ուրեմն Արգարը չի ամաչել և իրան թոյլ է տուել մի շան հետ այգպիսի բաներ խօսել. ամօթ նրան,— ասացի որբան կարելի է բարձր, որ նախասենեակում ախանջ ղնող շունն իմանայ, ֆնաս բարով ասի և պատրաստ պատասխանս տարայ «Մըշակի» խմբագրատուն: Ահաւասիկ այդ պատասխանս.

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն

Յուսով եմ թէ իմ երկառոյս էլ կը հիւրընկալէք որպէս պատասխան «Մշակի» № 12-ի մէջ լոյս տեսած՝ պ. Սիմէօն Պառաւեանցի նամակի, որով պարտնը յայտնելով իրա անբաւականութիւնը իրանց գործի այն տեսակ ընթացքի համար, ինձանից՝ որպէս հաշտարարի դեր կատարողից, հրապարակական բացատրութիւն է խնդրում:

Արգարե, ճիշտ այնպէս է իրողութիւնը, ինչպէս-որ Պառաւեանցը նկարագրել է իրա նամակում. ուրեմն էլ ինձական— իմ վերաբերեալ ինչ կայ այդտեղ, որ ես հրապարակական բացատրութեան եմ հրաւիրուել: Այն մարդը— պ. Սարգիս Քամալեանցը, քանիմի անգամ անձամբ խնդրեց ինձ, որ ես աշխատեմ հաշտեցնել իրան և պ. Պառաւեանցին, ես էլ յանձնառու եղայ այդ լաւ գործը— որպիսին է հաշտութեան գործը— գլուխ բերել:

Թէ էս աշխատել եմ երկու կողմի համար էլ, թէ էս աշխատել եմ, որ իմ ստանձնած պարտականութիւնը ամենայն ճշտութեամբ կատարեմ և մանաւանդ— թէ ճիգ եմ թա-

փել— այս ամենագլխաւորն է— որ երկու հակառակորդների մէջ տպագրում անգամ որևէ Թերիմացումին չմնար, այդ պարզ երեւում է «Մշակի» խմբագրութեան ուղղած՝ պ. Ս. Պառաւեանցի նամակից: Հետևապէս ես ոչ միայն անպարտ եմ այդ գործում, այլև անպատասխանատու՝ գործի այդ տեսակ ընթացքի համար. գործի՝ որի պատասխանատուութիւնը գըլխովին ընկնում է միմիայն այն անձի, այն մարդու վրայ, որի խնդիրը միամտութիւն ունեցող անկեղծ համարել:

4-ն փետր. 1897 թ.
«Մշակ» № 14.

Այդ նամակիս վերջից բժշկապետ Ա. Բաբայեանի խորհրդով մի կտոր հանել էի. ահա նաև այդ կտորը.

Բնական է որ մարդիկ իրանց չափով չափեն ուրիշներին, ուրեմն ինչ զարմանք որ ես ես՝ առ-ոչինչ համարելով «փորձածին կրկին փորձելը խելօքումին չէ» ասացուածը, իմ չափով չափեցի մարդ կոչուած պ. Սարգիս Քամալեանցին՝ լոկ այն պարզ ենթադրութեամբ, թէ նա ես իբրև մարդ՝ իրա այն-ն այն պիտի լինէր և ոչ-ը՝ ոչ, որպէսզի ի-զուր տեղը իրա պատճառով անմեղ մարդկանց անցաւ գլուխը Աւետարանի տակ չընկնէր:

Միւս օրը «Արձագանքի» խմբագրից ստացայ հետևեալ նամակը.

«Մեծապատիւ պ. Լեւոն.

Յուսամ որ, Ձեր վերջին սխրագործութիւնից յետոյ (վերի նամակս է ախարկում), ինձ իրաւունք կը տաք կտրել բոլոր յարաբերութիւններս Ձեզ հետ: Ամեն բերանացի կամ գրաւոր բացատրութիւն Ձեր կողմից աւելորդ կը լինի. առաջինը չեմ լսիլ, երկրորդը չեմ կարդալ: (Ծիծաղելի մեծօլանութիւն և թէ տալիքը չվճարելու հրաշալի միջոց): Այսօրուանից Դուք ոչ մի կապ չէք կարող ունենալ «Արձագանքի» հետ:

«Սոնարհ ծառայ»

Արգար Յովհաննիսեան

Պարզ է ցերեկուայ լոյսի պէս, որ Քամալեանց Ս.-ի նման անազնիւ արարածին բերելով «Արձագանքի» խմբագրատուն, ես մի անշնորհակալ ժանտօձ տաքացրած եղայ կրծքիս: Այո, Քամալեանց Ս.-ը ինչպէս մի զգուելի հոտած մուկը՝ ընկնելով «հազար թունգանոց կարասի մէջ», բոլորովին մուրտառեց: Նզովք, նզովք այդպէս անարգ արարածին:

Անկախ այդ ամենից, ես՝ որպէս հանգուցեալ խմբագրի ամբողջ 25 տարուայ եղած անխարդախ, անդաւաճան ու հաւատարիմ բարեկամ, անկեղծօրէն խորհուրդ կը տայի Աբգարի հարագատներին և թէ նրա ճշմարիտ բարեկամներին՝ եթէ հնար է, թոյլ չտան, որ զրական պոռնիկ Քամալեանց Ս.-ը իրան կոչի «Աբգարի անձնուէր բարեկամ», այդ սրբապղծութիւն է, և մանաւանդ չթողնեն, որ նա համարձակուի հանգուցեալ գործիչի կենսագրութիւնը գրել և հրատարակել. նախ՝ այդպիսի փափուկ խնդիրը սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի պէս տափակ ուղեղի տէր անբարոյական զրչակի բանը չէ. երկրորդ՝ փոխանակ կենսագրականի, նա զգուելի պասկվիլ կը տայ հասարակութեան, և այդպիսով փոխանակ յարգած՝ անարգած կը լինի յարգելի գործիչի յիշատակը, որ պիտի փայփայեն նրա հարագատներն ու ճշմարիտ բարեկամները:

Թող ոչ-ոք խելքագօռութեամբ չկարծի, թէ ես ինձ հակասում եմ: Հանգուցեալը իր ունեցած շատ և շատ պակասութիւնների հետ այնպիսի արժանիքներ ունէր իբրև հայ-խմբագիր, որին չի կարող հասնել այժմեան հայ-խմբագիրներից ոչ-ոք:

Իբրև հայ-խմբագիր Աբգարը մի տիտան էր:

Ստորև գրելիցիս մէջ գուցէ կամքիս հակառակ, կրկին այս ու այն դառը ակնարկութիւնը լինի հան-

գուցեալի հասցէին, սակայն այդ ամենը մի մազաչափ անգամ չի կարող վրասել իսկական հայ-խմբագրի մեծ համբաւին:

Նոյն թուականի յուլիսին Պառաւեանից հետեւեալ նամակն ստացայ.

Լեւոն-Չան!

Հախումեանցին բարեկիր և ասա՛ մի՞թէ այդ է ձեր կարծիքով այն վեհ բառը, որին ԱԶՆԻՈՒԹԻԻՆ են ասում. այդ էր ձեր խոստումը, այդ էր ձեր մարդկութիւնը:

Ամեն բան ես գրել եմ մեր Եփրեմին (Ծատուրեան), որ Քամալեանց Ս. ցածերի ցածն է...

Իրա սպացոյցն այն՝ որ ես իմ սանահէր Մինէի (Սարգսեան) տանը Քամալեանցի գլխին պահպանիչ ասացի և տես թէ նա ինչքան պատուազուրկ է, որ այնքան խալխի մէջ կուլ տուաւ այդպիսի վիրաւորանքն էլ: (Աշխարհիս երեսին ինչ վիրաւորանք կարող է ազդել աննօրմալ հակման տէր և մարդկութեան տակնք հրէշ վարժապետին):

Գիտեմ, աղնի սիրտդ առնուած է ինձանից. իրաւունք ունես, հոգիս, բայց հաւատա՛մ, որ այն անիծածները այնքան եզուրիտ են, որ ինչպէս տեսնում ես, ինձ՝ Սիմէօն Պառաւեանցիս էլ խաբեցին...:

Քո Սիմէօն

Բէլի-Գլուշ, 2-ն յուլիսի:

Ահա այդ է, ընթերցող, իմ ուզած բայց հախումեանի գլուխ ընրած հաշտութիւնը: Լաւ հաշտութիւն է, էլ ասել չի ուղիւ, երբ է պահպանիչ ասուել անփառունակ զրչակի գլխին:

Այդ բանից յետոյ էր, որ անարգ արարածը կամենալով Աբգարի աչքը մտնել, սկսել էր ափեղցփեղ վրաս խօսել, որպէս-թէ ես վատ սրբազրող եմ, որի համար էլ Աբգարը ձեռքիցս առել է սրբազրութիւնը: Մօտ բառորդ դար լաւ էի այնքան, որ Աբգարը՝ սրբ-

բազրողի կողմից իրան ամենաերջանիկն էր համարում թիֆլիզի բոլոր խմբագիրներին մէջ, բայց յանկարծ բանից դուրս էր գալիս՝ որ ես այնքան վատ սրբագրող եմ եղել, որ հարկ են համարել պաշտօնս ձեռքիցս առնել:

Եւ այդպէս հաջում էր վրաս նա, որ մի շաբաթ իսկ անկարող եղաւ գոնէ տանելի կերպով ինձ փոխարինել և «Արձագանքը» սրբագրել, երբ ընտանեկան գործով Շուլավէր գնացի: Պայմանաւորուած 8 օրը դեռ չանցած, իրար վրայ չորս հեռագիր ստացայ խմբագրից, որ պահանջում էր շուտ վերագրաձս:

Երբ եկայ և զարմանքս յայտնեցի հեռագիրներին համար՝

— Բաս ինչ անէի, եղբայր, — պատասխանեց խմբագիրը, — մենակ էի, սրբագրող չունէի:

— Մի՞թէ Սարգիսը չէր սրբագրում:

— Ես այնպէս էի կարծում, թէ Սարգիսը մի բան է եղել, այն-ինչ՝ ո՛չ կողմնակի բանի շնորհք ունի, ո՛չ էլ սրբագրութեան գործի հետ է ծանօթ... Վայ, վայ, վայ... երբէք, երբէք չէի կարող նրան այդպէս անպէտք երևակայել: Կեցցես, Լևոն-Չան, էլի դու ես ամենից լաւը, Աստուած վկայ:

Այդ վերի գրածս հերքելու համար գրական պոռնիկը՝ անշուշտ եմ, իրանմանակ տափակ ուղեղ ունեցողներին ասելու է, որ Արգարը իրան այնքան շնորհալի է համարել, որ այս ինչ խօսքերով նուէր է տուել այս ինչ իրը. սակայն լինելով խարդախ, չի ասիլ բուն ճշմարտութիւնը: Իսկ ճշմարտութիւնն այս է՝ տարիներով աշխատակցութեան համար ո՛չ մի կուպէկ վարձատրութիւն չի ստացել, այլ միջանկ ոտը լիանոց մի նուէր միայն:

Սակայն սխալմամբ մարդ կոչուած Քամալեանցի

ստորութիւնը և թէ այն՝ որ մի տարի չէ նրա հետ յարաբերութիւնս կտրելն ու նրան մարդ չհամարելս աւելի լաւ ցոյց տալու համար այստեղ առաջ բերեմ այն հարցերից միջանիսը, որ նոյն թուի դեկտեմբերին տալու էի Արգարին միջնորդ դատարանի անդամների ներկայութեամբ՝ ստանալիքիս խնդիրը պարզելու նպատակով: Ահա այդ հարցերը.

◆ Քանի-որ Քամալեանց Ս. ասուած զգուելի հրէշի հէքիաթի մէջ դուք էիք՝ գրաքննիչին սխալեցնելու համար մակարոնը մածոն փոխել ձեր իսկ ձեռքով, հապա ինչո՞ւ էր ձեր խաբեբայ թղթակիցը ամեն տեղ փեղցփեղ դուրս տալիս, թէ՛ «Ի՛նչ անէ խնդճ Արգարը. ես գրել եմ մակարոն, իսկ Լևոնը փոխել է մածոն: Արդեօք այդ սերտ կապ չունէ՞ր լրագրիդ № 9-ի մէջ վրաս բարձած ձեր զրպարտութեան հետ:

◆ Քանի-որ Յարութիւն Ղարաբեղեանի հրատարակելիք լրագրի «Պօք» անունը դուք ձեր ձեռքով փոխեցիք խոզք, արդեօք ո՞վ ձեզ իրաւունք տուաւ որ այդ ինձ վերագրէք, որպէսզի անարգ արարած աշխատակիցդ էլ դրա համար ամեն տեղ վրաս հաջայ՝ թէ վատ սրբագրող եմ:

◆ Ես լիովին հաւատացած էի թէ ձեր և թէ Քամալեանց Ս. ասուած անարգ արարածի տուած խօսքին, որովհետեւ դուք էիք որ կրկին և կրկին խնդրեցիք ինձ՝ հաշտութեան գործը գլուխ բերեմ. արդ՝ ես իբրև հաշտարար մարդ, արդեօք իրաւունք չունէի՞ ձեր իսկ գիտութեամբ գրաւոր հաւաստիացնել Պառաւեանցին, որ դուք ճշտութեամբ կը կատարէք ձեր տուած խօսքը և պայմանից չէք շեղուիլ:

◆ Ո՞վ շեղուեց այդ կապած պայմանից. ո՞վ անազնուբար ետ կանգնեց տուած խօսքից. ո՞վ ուրացաւ ասածները՝ Քամալեանց Ս. ասուած կծոտողը, թէ՞ Պառաւեանցը. ո՞վ փոշմանեց՝ Պառաւեանցը, թէ՞ ձեր պաշտպանեալ քոստը շունը:

◆ Երբ ձեր խաբեբայ աշխատակից անարգ արարածը ցածաբար ուրացաւ իրա ասածները, ինչո՞ւ թոյլ չտուիք որ պ. կար. Եաղուբեանցին բերէի և ստախօս աշխատակից

անազնութիւնը հաստատէի և նրա մօտ էլ նորից թքէի անամօթ երեսին:

◆ Դուք էիք ընտրել ինձ իբրև հաշտեցնող և ազնիւ խօսք տուել որ դրած պայմանից չէք շեղուիլ. հապա ինչո՞ւ շեղուեց անսրբ արարած թղթակից-աշխատակիցդ: Չէ՞-որ նրա ուրացմամբ Պառաւեանցի մօտ ես ստախօս դուրս եկայ:

◆ Երբ Պառաւեանցը վշտացած ձեր ոչ-գովիլի վարմունքից, աւելի ևս Քամալեանց ասուած անսրբ արարածի խարդախ մեղայականներէից զայրացած ինձանից բացատրութիւն պահանջեց «Մշակի» մէջ՝ յատկապէս շնորհիւ խօսքերնիդ չպահելու համար, ես իմ սեպհական օրգանս չունէի, իսկ լրագրական էտիկան պահանջում էր, որ պատասխանբացատրութիւնս տպուէր այն լրագրում, որի մէջ ինձ հրապարակով բացատրութեան էին հրաւիրել: Բայց-և-այնպէս դեռ անկեղծօրէն ձեր խորհրդին դիմեցի, իսկ դուք ոչ մի խորհուրդ չտուիք: Այդպէս լինելուց յետոյ միթէ ես իրաւունք չունէի, իբրև անկախ և սեպհական համոզմունքի տէր մարդ՝ խղճիս թելադրածն անելու—ճշմարտութիւնն ասելու «Մշակի» մէջ: Միթէ բացարձակ ճշմարտութիւնն ասելը ձեր կարծիքով՝ վատ մտքով սխրագործութիւն է: (Հիմա էլ պասկիլիանտ գրչակի ողորմելի լոգիկայով «անտակտ վարմունք է դարձել): Բայց չէ՞-որ ճշմարտութիւնը բացարձակ պիտի լինի և ոչ թէ քօղարկուած կամ աղաւաղուած, ինչպէս-որ հասկանում է Քամալեանց Սարգիս ասուած ստախօսը, այդ մարդակերպ հրէշ աշխատակիցդ»- և այլն, և այլն:

Այդ ամենից յետոյ կարող է գտնուել խելքը գլխին, պատուոյ զգացմունք ունեցող մի հատիկ մարդ, սր թոյլ տար իրան ասելու, թէ սխալմամբ մարդ կոչուած սողոմեցու հետ միշտ լաւ եմ եղել և միայն 1906 թուին եմ «Ձարկ» շաբաթաթերթում «վիրաւորական» բառեր ու դարձուածներ գործ դրել նրա հասցէին: Եթէ գտնուի այդպիսին՝ անշուշտ դա պիտի լինի տխմարների տխմարը, անմիտների անմիտը և

կամ Քամալեանց Ս.-ի նման այլանդակ բարոյականի տէր մի երկոտանի հրէշ:

Ճէնց փոքրուց լինելով անկախ կամքի և սեպհական համոզմունքի տէր, շնորհիւ ամենքիցս սիրուած ու յարգուած հանգուցեալ ճոռոմսիմ-աքօրս տղի—Եփրեմ Ծատուրեանի անփոխարինելի օգնութեան այդպէս էլ մնացի՝ իմ արժանապատուութեամբ միշտ հպարտ, բարձր ի-գլուխ, կամ ինչպէս պ. Եղ. Թոփ. էր ասում՝ Ծակատս բաց ու գլուխս քարձր քրունած *). Երբէք չընկճուեցի ճակատագրիս սարսափելի հարուածներից, մանաւանդ ամեն տեսակ ցածահոգի թերուս գրչակներից, մեծամիտ ու փառասէր գրական շարժիներից և շահախնդիր, փոքրոգի, գծուծ ու սին «գործիչներից»:

Ուրեմն պարզ է թէ Եփ. Ծատուրեանը հարազատ անդրանիկ եղբորից էլ առաւել է եղել ինձ համար, անհա քառորդ դարից աւելի է: Որ ասել է թէ ես էլ՝ եթէ ոչ եղբայր, գոնէ եղբօր նման եմ եղել նրա համար, քանի-որ հոգոյս բոլոր զօրութեամբ աշխատել եմ՝ իբրև տրիտուր նրա այդ անփոխարինելի օգնութեան, ինձ այնպէս պահել, որ ամենափոքր չա-

*) «Արշալոյս» օրաթերթը փակուելուց յետոյ երկար միջոց մշտական գործ չունէի ձեռքիս. երբ տեղեկացայ որ Դաշնակցութեան օրգանի սրբագրողին շուտ-շուտ փոխում են, դիմեցի պ. Թոփիչեանին:

—Փոխանակ ամիսը մի սրբագրող փոխելու, աւելի լաւ չէ, որ ինձ յանձնուի սրբագրութիւնը: Արդեօք խմբագրութիւնը ինձ չի հաւանում իբրև սրբագրողի, թէ՞ հասցէս չգիտէ:

—Վա, ես ի՞նչ անեմ, ճակատդ բաց ու գլուխդ բարձր բռնած ես ման գալիս, ես էլ ի՞նչպէս սրբագրութիւն առաջարկեմ քեզ, եղաւ պատասխանս:

փով իսկ ամօթ կամ անպատուութիւն չբերեմ նրան իմ ընթացքով, այլ ընդհակառակը՝ պատիւ:

Բոլորովին այլ բան է, որ ես չեմ հաշտվում դրութեանս հետ. այդ ևս համոզմունքի խնդիր է, որից անփոխարինելի օգնութեան բուն իրողութիւնը մի մաղաչափ անգամ չի փոխվում և ոչ էլ դէպի նրան երախտագիտութեանս չափը պակասում:

Նարագատ երկու մօրաքոյր և հինգ հօրաքոյր եմ ունեցել, սակայն այդ եօթը հոգուց ոչ մէկը ինձ համար այնպէս բաղքը չի եղել, ինչպէս անմոռաց Հոռոմսիմ-աքիրս—Եփրեմի մայրը՝ սկսած դեռ անոյշ Փոփոնիս քաղցրագոյն փայփայանքի ու խնամքի մէջ ապրածս երջանիկ ժամանակից:

Հոռոմսիմ-աքիրս այնպէս բարի սիրտ ունէր, որ ամենքն էին նրան սիրում ու յարգում:

Ողորմածիկը յաճախ ասում էր.

—Ա՛խ, ա՛ Լէ՛ոն-ջան, խի՛ չես լսում եանի... Խաչը վկայ, Լէ՛ոն-ջան, ամեն մի մէր ուզում ա՛ իրա որդիերանց թագն ու պսակը տեսնի, համա ես էնքան չեմ ուզում Սեդրակիս մուրազին հասնիլը աչքովս տեսնամ, ինչքամ որ սիրտս ուզում ա քու ընկըջների բաց ըլիլը... Որ բաց ըլի, է, էն վախտը էլ դարդ չեմ ունենալ, էն Ասածը...

Իսկ Եփրեմը պաշտում էր իրա մօրը:

Եփրեմին էլ, ամուսնուն էլ՝ որ ոտքը մերոնց տուն դրած օրից շարունակ ինձ համար հարազատ քոյր է հանդիսացել, յայտնի էր աքօրս այդ քնքուշ ուղղակի թուլութեան հասնող սէրն ու սրտագին փափազը. փափազ՝ որ նոյնպէս իրանց փափազն էր և է, ինչպէս և ինձ սրտանց ու անկեղծ սիրողների:

Եփրեմը մինչ այն աստիճան յարգանքով է վերաբերուել միշտ իմ համոզմունքիս—կամքիս անկա-

խութեանը, որ նոյնիսկ իրա եղբայրներին յանդիմանել է ամենախիստ խօսքերով, եթէ նրանք փորձ են արել թէկուզ ամենաանշան չափով բռնանալու կամքիս վրայ:

Ի՛է, այդպէս լինելուց յետոյ բնական է, որ Եփրեմը իրան թոյլ տար ասելու, այն էլ ո՛ւմ՝ գլխովին մի լիրբ ու անպատկառ անարգ արարածի, թէ իրանց սիրելի Լէոնի համոզմամբ գրածները խժըժանքներ են: Խելք կտրելու բան է այդ:

Ինքը—ողորմելի գրչակը ինչո՛ւ չլսեց Եփրեմին, երբ նա առանց յետին մտքի, լոկ բարեացակամութիւնից դրդուած անկեղծօրէն ասում էր.

—Սորհուրդ եմ տալիս լուռ մնաս—ոչ խօսես և ոչ էլ գրես Լէոնի դէմ: Լո՛ւռ, միայն լո՛ւռ մնա:

Այո՛, ինչո՛ւ չլսեց: Եւ եթէ հիմա վայելում է իրա զանցառութեան պտուղները, էլ ինչո՛ւ է նրան խառնում մեր գործի մէջ. գոնէ ամաչի, որ չի լսել նրա անկեղծ խորհուրդին իրա անխելքութիւնից:

Այո՛, Եփրեմը լաւ գիտենալով որ մերկացումներս անում եմ խղճիս թելադրութեամբ և համոզմունքով, մի հատ խօսքով իսկ իրա դժգոհութիւնը չի յայտնել՝ չկամենալով իմ անկախութեանը դիպչել, այլ շարունակ ասում էր և հէնց հիմա էլ ասում է.

—Լէոն, խղճս և բաւական համարիր մինչև հիմա գրածներդ. մի՛թէ չգիտես որ ընկածին չեն խփում:

Իայց որովհետև հրէշ վարժապետը արժանի չէր որ խղճայի, հետևապէս ըստ իմ համոզման շարունակում էի գրել, շարունակում եմ անա՛ և պէտք է շարունակեմ, քանի այդ այլանդակ բարոյականի տէր ողորմելի գրչակը ճշմարտութեան դէմ գնալ յանդգնի:

Միակ բանը, որ կարելի է թոյլատրել այդ զրգուելի սողմեցուն, այն է՝ քանի-որ զրկուած է մա-

նուկ աշակերտ-աշակերտուհիների տեսքից, կարող է՝
իբրև մխիթարութիւն ոռնալ.

—Աւանդ փառացս «մանկա...վարժի»...:

Կայսեր. Գիւղատն. Ընկերութիւնից միջանի տուփ
շերամի սերմ էի առել Շուլավէր ուղարկելու և ձախ
ձեռքով աշխատելով շուաքում պահել՝ տուն էի շտա-
պում: Մէկը դիմացիցս գալիս էր և երեսիս ժպտում:
Սյս ո՞վ է, ասում եմ մտքումս, որ ինձ ճանաչում է,
իսկ ես իրան ոչ: Երբ բոլորովին մօտ եկաւ և ձեռքը
մեկնեց, ձեռքն առայ, բայց յետոյ զլխի ընկնելով՝
զգուանքից ցնցուեցի ինչպէս օձից խայթուած և ձեռքս
յետ քաշել ուղեցի, սակայն ամուր բռնեց բթամա-
տիցս և բաց չթողեց:

—Թո՞ղ:

—Բան եմ ուզում ասեմ:

—Թո՞ղ,—ասում եմ և հետն էլ աշխատում թէ
մատս ազատել և թէ ձախ ձեռքս շուաքում պահել,
որ արևը սերմի վրայ չընկնի:

—Մի խօսք եմ ուզում ասեմ:

—Ձեմ ուզում, թո՞ղ:

—Կենդ մի խօսք:

—Ձեմ ուզում... Թո՞ղ, ասում եմ. ամօթ է, խալ-
խը մեզ է նայում, թո՞ղ:

—Ասում եմ կենդ մի խօսք:

—Թէկուզ կէս, թէկուզ քառորդ խօսք, չեմ ուզում,
ասացի ու ձեռքս ազատելով գնացի:

Ահա այդ պարզ, շատ բնական ու բոլորովին
անմեղ իրողութեան մասին տեսէք թէ ինչ է գրել
իր պասկվիլ-բրօշիւրում ստուծիւններ, զգուելի զըր-
պարտութիւններ յերիւրելն իրան փէշակ շինող զըր-
չակը. «Ուզում էի վզովը փարուեմ (զլուխդ քարոջը

էիր տալիս), յանկարծ գժուծիւնը բռնեց, ձեռքն ամուր
թօթափելով կրծքիս հրեց (անարգ ստախօս, որ ձեռքս,
քանի-որ երկու ձեռքիցս մինն ազատ չէր, իսկ միւսն
էլ կեղտոտ ձեռքերիդ մէջն էր) ու մաղձերը թափե-
լի կեղտոտ ձեռքերիդ մէջն էր) ու մաղձերը թափե-
լով հեռացաւ»: (Յրէջ դու. երբ քո մասին առաջին
անգամ գրեցի թէ՛ «զգուանքի զգացմունք յարուցա-
նող, խեցգետնից էլ ստոր կենդանի ես», գրելուց
յետոյ խղճահարուեցի ի-յարգանս այն արտաքին կեղևի,
որ կրում ես. իսկ այժմ տեսնում եմ, որ այդ ամէ-
նամեղմ դարձուածը կարելի է համարել քեզ նման
ցածահոգու վերաբերմամբ):

Ընթերցող, արդէն կարդացիք գրքիս 116 երե-
սում Պառաւեանցին տուածս պատասխանը, շատ հա-
մառօտ է, ի-սէր ճշմարտութեան խնդրեմ նորից աչքի
անցրէք և տեսէք՝ այդ նամակիս մէջ կո՞յ, շատ չէ, գոնէ
մի հատ հայհոյանք և կամ ընդունուած պատշաճի
դէմ գնացած կենդ մի հատ խօսք: Հարկաւ չկայ.
հապա ինչ հայհոյանքներ են, որ անպատասխան են
մնացել: Պարզ է թէ այդ ողորմելի գրչակը՝ իրա սո-
վորած աստուածաբանութեան թելադրութեամբ կար-
գին գրելը հայհոյանք, իսկ գուտ ճշմարտութիւններ
խօսելն ու հրատարակելը զրպարտութիւն է համարում,
այսինքն՝ ճիշտ այնպէս, ինչպէս-որ հասարակութեան
տականք կազմող շան-ծնունդ խուլիգանները, որոնք
պարտճանաչ քաղաքացիների օրինաւոր արած ու խօ-
սածները ապօրինի գործողութիւն են համարում և
զրա համար էլ խօղժութիւններ կատարում անմեղ
քաղաքացիների վրայ:

«Իմ դէմ գրգռելու պատճառը ծառայել էր մի
պատկեր,—գրում է այդ մարմնացած ստուծիւնը, այդ
խեցգետնից էլ ստոր կենդանին,—որ տպուեց «Ար-

ձագանքում» 1896 թ.: (Անարգ, ստոր արարած, ինչո՞ւ
չես գրել ճիշտ ամսաթիւը, լրագրի №-ը, որ ցանկա-
ցողը համեմատէր և տեսնէր՝ արդեօք ընդունակ ես
գոնէ մի անգամ ճշմարտախօս լինելու): ԱՐՏԱԳՐԵԼ
ԵՄ ՆՈՅՆՈՒԹԵԱՄԲ (Երկոտանի ճիւղ, պահիր երեսդ,
վանգի մի-երկու ըսպէից ընթերցողը արհամարհան-
քով պէտք է թքի կռուպ շարտի այդ անամօթ ու
անպատկառ երեսիդ), որ ընթերցողը կարգալով չափի
Լ. Մ.-Ա.-ի բծախնդրութիւնը և ասի՝ արդեօք այդ
ձանձեր (և քեզպէս երկոտանի հրէշ «մանկա...վար-
ժին» անդանակ մորթող) սպանող մարդը իրաւունք
ունի՞ վերաւորութիւնը իմ գրչից»: (Փահ, փահ՝ «իմ
գրչից»․ այ, բաշը՛ն բաթսըն, լեալեա՛: չազար անգամ
լաւ է գրաճանաչ իսկ չլինել, քան լինել քեզ նման
գրական խուլիգան և քեզ պէս մտքի պոռնիկ):

Երբ Շուլավէր կարգացի այդ պասկվիլ-բրօշիւրը,
կամքիս հակառակ արգահատանք զգացի դէպի այդ
մարդակերպ հրէշը: Եւ թէպէտ գրի առայ ասելիք-
ներս, բայց-և-այնպէս ինձ ու ինձ ասացի՝ Թիֆլիզ
վերադարձիս թէ այդ՝ ինչպէս գրում է, ՆՈՅՆՈՒ-
ԹԵԱՄԲ ԱՐՏԱՏՊՈՒԱԾԸ համեմատեմ «Արձագանքի»
մէջ տպուած «Ախր ինչո՞ւ է...» ֆելիէտօնի հետ և
տեսնեմ, որ գոնէ մի անգամ, շատ չէ՛ կեանքի մէջ
գոնէ մի հատիկ անգամ այդ ողորմելի գրչակը ճշ-
մարիտ խօսելու առաքինութիւնն է ունեցել—չի
խարդախել, ոչինչ չի փոխել, ի-յարգանս հէնց այդ
մի հատիկ առաքինութեան՝ գրածներս ոչնչացնեմ և
միւս բոլոր վայրահաշութիւնների վերաբերմամբ բա-
ւական համարեմ արհամարհական լուրթիւնս. իսկ եթէ
էլի խարդախած լինի և հասարակութեանը նորից խա-
բած, ոչ թէ 64 էջանոց, որով աշխարհը չաւ էր արել
յիմարը, այլ 200 և աւելի էջանոց՝ փաստերով ու

փաստաթղթերով լի գրքով պատասխանը տամ՝ այլևս
դէն շարտելով որևէ փափկանկատութիւն ու մափ-
կանկատութիւն, և գրքի անունն էլ գնեմ՝ «իմ պա-
տասխանը գրական պոռնիկ եւ մտքի ըող Բամալեանց
Ս-ին»: Սակայն՝ ի-յարգանս հասարակութեան բարե-
միտ անդամների փոխեցի այդ վերնագիրը:

«Արձագանքի» խմբագիրն ինձ իրաւունք էր տուել
յօդուածների, մանաւանդ Քամալեանցի նման համ-
բակ-գրչակների յօդուածների հետ ուղածիս պէս վա-
րուել՝ «միշտ իմ ղայդի մատս խաղացնել»: Եւ
եթէ ես՝ պ. Ն. Քարամեանցի նման շնորհալի և «Ար-
ձագանքի» գլխաւոր աշխատակցի գրած առաջնորդող-
ներից, պ. Շիրվանզադէի պէս շնորհալի աշխատակցի
յօդուածներից անագին կտորներ էի հանում, այս
կամ այն բառը, խօսքը շնջում և միշտ էլ խրմ-
բագրի հաւանութեանն արժանանում, մի՞թէ չէի կա-
րող՝ խմբագրի իսկ ասութեամբ՝ «Սարգսի բերած
թելթելը քանի» մէջ «իմ ղայդի մատս խաղացնել» և
կամ գոնէ ինձ համար «վերաւորական» որևէ բառ
կամ խօսք շնջել: Այդ պատկերը՝ որ արտատպել
է դիտմամբ աղաւաղած, այլև՝ իբրև անամօթ խաբե-
բայ, խարդախութեամբ չի ցոյց տուել լրագրի №-ը,
բաւական չէ, անիծածը դեռ ամսաթիւն էլ է կեղ-
ծել, այն յուսով՝ թէ գուցէ ես «Արձագանքի» այդ
№-ը չունենամ, իսկ ընթերցողն էլ ի-հարկէ անձեռն-
հաս կը լինի իմանալու, որ արտատպողը օրինաւոր
մարդ չէ, այլ մի անարգ արարած—միայն արհամար-
հանքի արժանի գրչակ:

Եթէ այդ պատկերը իրօք վերաւորական էր ինձ
համար, հապա ինչ աստիճան ապականուած ներքին
աշխարհ պէտք է ունենայ մի մարդ, որ գնայ իրան
միշտ միմիայն լաւութիւններ արած բարեկամի տուն՝

Նրան խնդրելու որ հաշտութեան գործը գլուխ բերի և իրան ազատի 11 ամիս բանտ նստելուց և միևնոյն ժամանակ՝ իբրև զգուելի եզուլիտ, առանց ամաչելու շարունակ նրա համար վիրաւորական պատմութեան անունը տայ՝ «բու ճանճերի պատմութիւնը գրած պատրաստ է» կամ՝ «այս էլ քու ճանճերի պատմութիւնը, էլ ի՞նչ ես ուզում ինձանից», դէ գնա հաշտութեան գործը գլուխ բեր...

Ասէք, ընթերցող, ի՞նչ անուն պէտք է տալ մի այդպիսի գրագէտի, որ իրա հակառակորդին պատասխանելու փաստեր չունենալով՝ լռելու փոխարէն դիմէ խարդախ միջոցներից ամենախարդախին, այն է՝ արդէն վաղուց լոյս տեսած և հասարակութեան սեպհականութիւն դարձած փաստաթուղթը—լրագրական մի թեթև ու անմեղ պատկեր, որի մէջ վիրաւորական ոչինչ չկայ, վերջնի փոփոխի, շնութիւն անէ—անմեղ բռուերի տեղը վիրաւորական բռուեր դնէ, իսկ ընթերցողին հաւատացնի, թէ ՆՈՅՆՈՒԹԵԱՄԲ Է ԱՐՏԱՏՊՈՒՄ: Ահա թող խօսեն մտաւոր սնանկների, անբարոյականների, ի-մի բան՝ բոլոր գրական ու ոչ-գրական խուլիզանների ըերանակապերը—ԱՆՀԵՐՔԵՆԻ ՓԱՍՏԵՐԸ:

1896 թ. հոկտ. 23-ին (և ոչ 17-ին) «Արձագանքի» № 123-ում տպուած պատկերի վերնագիրն է՝ «Ախր ինչո՞ւ է...»

Իսկ պատկվել-բրօշուրի մէջ ՆՈՅՆՈՒԹԵԱՄԲ (?) ԱՐՏԱՏՊՈՒՄԻ վերնագիրն է՝ «Ինչո՞ւ էր հերսոտել»

*) Սկզբնական վերնագիրն էր՝ «Բարեկամիս ճանճերի պատմութիւնը», որ ես փոխեցի այդպէս, իբրև պատկերի բովանդակութեանը աւելի յարմարն ու համապատասխանը:

Բարեկամս այս հարցի (ախր ինչո՞ւ է...) վրայ մտացել էր շուարուած: Երևի դուք, ընթերցողներ, պատասխան կը գտնէք, կը տաք: Ահա թի այս առիթով ինչ էր պատմում նա.

Դադրելուց սաստիկ հեռում էր.

Ախ, իմանն ս... գիմի, էլի եկա՞ր, թաթս շարժում եմ որ կորչի...

Այս մարդը շա՞ռ է:

Որ ճանճերի դաւի-դառաբից շուտ պրծնեմ:

Եղած ջուրն էլ խմեց

Ընթերցողները թող պատասխան գտնեն ու տան:

Այդ՝ Գի դը Մոպասանից փոխադրած պատկերի մէջ լուսանկարչական ճշտութեամբ պարզ երևում է

(Այդ կտորը հանել է. նախ՝ նրա համար, որ Գի դը Մոպասանից փոխադրուածան հետքը բոլորովին կորցնի և երկրորդ՝ նոր վերնագիրը շատ յարմար է իր եզուլիտական նպատակին):

Դադրելուց շան նման հեռում էր. (միայն Քամ. Ս.-ի նման երկոտանի քոսոտ-շունը կարող էր ընդունակ լինել այդպէս անազնիւ խարդախութեան):

Կատաղած շարժում եմ թաթս.—ախ իմանն ս... գիմի, էլի եկա՞ր. այդ ուշունցով ոտդ եմ անում որ կորչի...

Այս մարդը իսկա՞ռ է:

Որ ճանճերի դաւի-դառաբից զլուխս աղատեմ:

Միջի մեղրն էլ ծծեց (ամօթ 25 տարուայ գրողի ճաշակին):

(Հանել է)

Քամալեանց Ս.-ի փշացած ներքին աշխարհը — մարդու աղքատ խառնելու չափ կեղծաւոր, խարդախ լինելը՝ տափակ, ողորմելի ուղեղ ունենալը, աչքով տեսած ու ականջով լսածներն անգամ ճիշտ ըմբռնելու անընդունակութիւնը. ուրեմն այդ պատկերը, ոչ-թէ ինձ՝ այլ իրա համար է վիրաւորական: Տեսեալապէս եթէ ինքը իրա իսկ ձեռքով իր ապականուած ներքին աշխարհն է նկարագրել, էլ ես ինչո՞ւ պէտք է գրգռուէի իրա դէմ: Չլինի՞ թէ իրան շատ սիրելուցս:

Չորս ամիս շարունակ զահլէս տարել էր.

— Ա՛յ, Լե, քու ճանճերի պատմութիւնը պատրաստում եմ, այնպէս լաւ քան է լինելու, որ քէֆը գայ:

Այժմ մի բնական հարց. եթէ իրաւ անկեղծ էր ասածը, եթէ ընթերցողին օգտակար բան տալն էր իրա նպատակը և 1896 թ. «Արձագանքի» № 123-ի ֆելիէտօնը «այնքան լաւ էր որ քէֆս էր բերելու», հապա ինչպէս կարող էր՝ առանց գրական պոռնիկի շնութեան, 1907 թուին, այսինքն ճիշտ 13 տարուց յետոյ ինքնիրան վիրաւորական դառնալ. չէ՞-որ հրաշքների դարում չենք ապրում:

Ահա ստի ոտներն այդպէս կարճ են լինում:

Չլինէր այդ անմեղ պատկերի յիմարաբար մէջ բերելը և արած խարդախութիւնն անագնիւ ստախօսութեամբ պարտկել ուզելը, չէր լինիլ նաև այս գիրքս: «Զի ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի». ոչ-բարով աստուածաբանները գոնէ այդ բանը պէտք է իմանան:

Մտքի պոռնիկի ՆՈՅՆՈՒԹԵԱՄԲ ԱՐՏԱՏՊԱԾ «Ինչի՞ էր հերսոտել» պատկերը և «Արձագանքի» «Ախր ինչո՞ւ է...» ֆելիէտօնը՝ Շուլավերից գալուստ պէս տուի 14 (կարգացէք՝ տասնուչորս) հոգու՝ թէ

աշխարհիկան և թէ հոգևորական հին ու նոր խմբագիրների, համալսարանական բարձր կրթութիւն ստացած անձանց և խնդրեցի որ կարդան, համեմատեն և անկեղծօրէն ասեն՝ արդեօք ինձ համար սրևէ վիրաւորական բառ կամ խօսք կայ «Արձագանքի» «Ախր ինչո՞ւ է...» վերնագրով այդ ֆելիէտօնում և թէ՛ առաջ բերելիք փաստաթուղթը կարելի է խարդախել, ու ի՞նչ անուն պէտք է տալ այդպիսի գրագէտին:

Ահա յիշեալ 14 հոգու՝ ի-մի ամփոփած կարծիքը.

— Ամենաչնչին չափով իսկ քեզ համար վիրաւորական բան չկայ, աւելի շուտ գրողին է վիրաւորական, քան քեզ, սիրելի Լեոն (Լեոն-Չան, պ. Լեոն, սիրելիս, սիրելի բարեկամ): Նոյնիսկ այնքան անշնորհք է գրած, որ եթէ ինքը մատնանշան չլինէր թէ քո մասին է, ոչ-ոք էլ չէր իմանալ այդ:*) Իսկ գալով փաստաթուղթը խարդախելուն, մարդ պէտք է բոլորովին մտաւոր անանկ լինի, որ չհասկանայ, թէ փաստաթղթերը խարդախում են միայն ըարոյապէս ստոր ընկած սրիկաները կամ ինչպէս սովորաբար ասում են՝ մշտապէս միմիայն խարդախութեամբ պարապող խաբեբայ ժուլիկները. հետևապէս՝ առանց ամաչելու տպագրական խօսքի միջոցով հասարակութեանը այդպէս մոլորեցնողին ամեն տեսակ վատ անունով կարելի է կոչել:

— Օրինակ՝ ինչ տեսակ:

— Օրինակ՝ գրական գող, մտատըր սնանկ, գրագէտի ղիմակով ծածկուած խուլիզան, գրական պոռնիկ, խարդախ, անազնիւ գրող, արհամարհանքի ար-

*) Շուլավերում կէտ առ կէտ նոյն կարծիքը յայտնեցին նաև՝ «Լալուարի որսի» հեղինակ Վահան Միրաքեանը, տանուտէր Մովսէս Քարհանեանը, Մանասարեանի որդեգիրը — փականագործ Յակոբ Տէր-Պօղոսեանը և ուրիշները:

ժանի գրչակ, նոյնիսկ մ'տքի պոռնիկ, զծուծ հոգու տէր զրազէտ. մէկ խօսքով՝ այդպիսի անամօթ խաբեբային ամեն տեսակ վիրաւորիչ, ամեն տեսակ ստորացուցիչ անուն կարելի է և ներելի է տալ՝ յգգուշութիւն ուրիշներին, որ չհամարձակուեն հասարակութեան վստահութիւնը ի-չարը գործ դնել՝ նրա աչքին թող փչելով ճրճուան ու փրուն խօսքերով:

Ուրեմն, ինչպէս ընթերցողը տեսնում է, ես պասս չեմ կերել—էտիկայի, Գեղարուեստի, Վայելչութեան դէմ չեմ գնացել, այլ միայն խմբագիրներին, համալսարանական բարձր կրթութիւն ստացածներին հետ ինքս էլ միևնոյն բառերն եմ գործածել զբքիս մէջ:

Երբ մի մարդ այն աստիճան հիւանդապին ուղեղի տէր է և զուրկ գրական ճաշակից, որ իրա սեպհականութիւնն էլ է այլանդակում և զարգացած մարդկանցից այդպիսի աննախանձելի անունների արժանանում, այլևս ինչի՞ ընդունակ չի լինիլ այդպիսի գրական խուլիգանը. կամ երբ մի վարժապետ իր զգուշութի մոլի կրքին է գոհում հոգևոր զաւակներին—մատաղահաս անմեղ աշակերտներին, այլևս ինչ, ինչ տգեղ արարքի ընդունակ չի լինիլ այդպիսի հրէշը:

Եւ այդ՝ միմիայն արհամարհանքի արժանի գրը-չակը, որ վաղուց կորցրել է լաւն ու վատը զանազանելու ընդունակութիւնը, նեղացել է որ իրան անուանել եմ՝ անպիտանների թագաւոր (բա հօ ազնիւների թագաւոր չես). երիցս անիծեալ թշուառական (հապա երանելի՞ ես). զրական խուլիգան (տես վերև 14 հոգու կարծիքը). քծնող եղուկտ (չափած ու ձևած է իսկևիսկ քեզ համար. դու այն մարդն ես որ զգուշի ինքնագովութիւններէդ ու պարծենկոտութիւններէդ համար երբ X հարուստը երեսիգ՝

ախմախ, սարսաղ էր անուանում, չափդ չճանաչելու համար տնազ անում, մեծախօսութիւններիդ համար մասխարայ էր գցում, բայց դու փոխանակ գոնէ ամենաչնչին չափով իսկ վիրաւորուելու, պատուազուրկ կանանց նման միայն ծիծաղում էիր, նրա ճշմարիտ ասածները խորամանկօրէն կատակի տեղ դնում, որովհետև վաղուց էիր մտքիդ դրել մի որոշ գումար շորթելու: Ուստի-և նա՝ X հարուստը քեզ համար միշտ լաւ մարդ էր, պարզ, սրտաբաց, ազնիւ հայրենակից: Իսկ երբ այլևս նրա տանը փառաւորապէս զխտուելու անասնային բաւականութիւնը չէիր վայելում, և Բեռլինից գրածդ նամակով տարիներով երազածդ գումարի գոնէ մի մասն էլ չստացար, որովհետև արժանի չէիր, ահա այդ ժամանակ X հարուստը յանկարծ զրկուեց նախկին բոլոր լաւ յատկութիւններից, ինչպէս-որ Պառաւեանցը զրկուել էր իր «աչքի ընկնող արժանաւորութիւններից»՝ եկեղեցապատկան մի թղաչափ գետինը յօգուտ դպրոցի ձեռքիցը խլելու համար: Գու միշտ անձնական գծուծ հաշիւներից զրդուած ես առաջնորդուել. այժմ էլ նոյնն ես, խելագարութիւնդ էլ վրան եկած. վասնզի վրէժինդրութեամբ կուրացած, չես կարողանում նրկատել, թէ ստութիւններով և երբէք տեղի չունեցած խօսակցութիւններով խնդրածդ դրամը քեզ մերժողին անպատուել կամենալով՝ դու յանիրաւի անարգել ես նաև մի անմեղ և միայն յարգանքի արժանի ընտանիքի, որի մօտից գլխարկդ հանած պէտք է անցնես: Այն, դու քեզ թոյլ ես տուել առանց խըղճահարուելու անպատուել նաև այդ միայն յարգանքի արժանի ընտանիքին, վասնզի գովել ես. իսկ յայտնի ճշմարտութիւն է թէ մի պատուաւոր կնոջ համար աւելի վիրաւորական է անբարոյական մարդու գո-

վասանքը, քան նրա հայհոյանքներն ու պարսաւանքները):

Ասել եմ նաև ըաշիրուզուկ (այդ ևս քեզ այնքան է սագական, որքան մի ճշմարիտ զարգացած փարիզեցի ազնուականին բարեկիրթ անուանելը)։ «զգուանքի զգացմունք յարուցանող, խեցգետնից էլ ստոր կենդանի» (պասկվիլ-բրօշիւրիդ մէջ արածդ անագնիւ խարդախութիւններից յետոյ համոզուեցի, որ այդ ամենամեղմ դարձուածն է քեզ համար և որ զարմանալի ճիշտ եմ բնորոշել քեզ)։ պասկվիլանտ (հապա գրէի գեղարուեստգէտ կամ էտիկայի կանոններ շարադրող)։ այլանդակ ըարոյականի տէր աննրգ արարած (հապա ուրիշ ինչպէս անուանեմ քեզ, այ հրէշ, երբ հաստատ գիտեմ որ Սողոմ-Գոմոր ես դարձրել զպրօցը։ Թո՛ւք, զզուանքի ու արհամարհանքի թո՛ւք անամօթ երեսիդ)։

1898 թէ 1899 թ. լինելով արդէն 40—41 տարեկան ոչ-ոք չէր կամենում այդ քաւթաւ տիրացուն միջոց տալ, որ գնայ ուսանելու. սակայն ամեն տեսակ միայն եզուիտին վայել քծինքով՝ սրա ու նրա միջոցով յաջողեցրեց համոզել տ. Նազիրեանին և գնաց։

Բայց երբ պայմանաւորուած ժամանակից աւելի մնաց և՛ ինչպէս ասում են այդ միջոցին Բեռլին եղած հայ ուսանողները, չկարողացաւ կարգին մի բան սովորել, կամ գոնէ հարկաւոր չափով գերմաներէնին տիրապետել, իսկ Նազիրեանն էլ զապարեցրեց նպաստ ուղարկելը, անս այդ ժամանակ դիմումներ արաւ շատերին, ի-թիւս որոց նաև ոչ-միայն X հարուստին, այլև՝ առանց ամաչելու, իրանից զգուող նախկին դասընկեր և մտերիմ նիկօլ Աստուածատրեանին և փող ուզեց։

Սակայն երկուսն էլ՝ թէպէտ տարբեր հասակի, տարբեր շրջանի ու տարբեր համոզմունքի տէր, բայց և-այնպէս չուզեցին ոչ խնդրած դրամն ուղարկել և ոչ էլ արժան համարեցին նամակին պատասխանել։

Եւ անա իբրև վրէժ՝ Շմեղ անուան տակ թաքնուած, հասարակութեան տականք ստոր սրիկայի պէս գործ դրեց իրա զէնքը—գրեց X հարուստին յանիրաւի անուանարկող և նրա ընտանիքին վերաւորական զգուելի պասկվիլը։ Սակայն նիկօլի վրայ ոչինչ գրել չէր կարող, վասնզի նա, ոչ-բարով աստուածաբանի դիմակը պատռելով՝ թէ ցոյց կը տար հասարակութեան այդ սողոմեցու այլանդակ դէմքը և թէ դատարանով կը պահանջէր երկար տարիներով մինչև օրս էլ անդարձ մնացած ստանալիքները։

Նաւատարիմ իր պախարակելի կոչման ու փէշակին և լինելով զզուելի մեծամիտ, մերկացումներին համար սկզբում լուսնահաջ տուաւ վրաս, յետոյ էլ իրա բարեկամների միջոցով սկսեց տարածել՝ վրաս... երկիւղ ազդելու մտքով, թէ իմ պապերի մասին սարսափելի բաներ է գրում (վրջի... հիմա էլ դեռ դուս սափելի բաներ է գրում (վրջի... հիմա էլ դեռ դուս չի անցել), բայց երբ դրա համար ծաղրի առարկայ դարձաւ նոյնիսկ այդ բարեկամներից, միտքը փոխեց և... հրատարակեց պասկվիլ-բրօշիւրը։

Արտասահմանից վերադառնալով Թիֆլիզ, «Լուսմայ» ամսագրի խմբագրատանը հանդիպում է պ. Յարոյին, որ հետաքրքրութեամբ հարցնում է նոր եկած դիպլոմաւոր պասկվիլանտ աստուածաբանին, — Ի՞նչ մասնագիտութիւն է իբ ընտրել, պ. Քամալեանց։

— Մանկավարժութիւն, աստուածաբանութիւն, հոգեբանութիւն, ընդհանուր գրականութիւն, ... թիւն,

...թիւն, ...թիւն, ...թիւն, ...թիւն, պատասխանում է այդ զգուելի մեծամիտը:

—Վա՛, վա՛,—կատակելով բացականչում է պ. Յարոն.—էդ դադամի՛ն... էդ վճնց կուլի... 5—6 տարում մի մասնագիտութիւն հազիւ են վայ-նաչարի սովորում, իսկ դուք կարճ միջոցում՝ 9 մասնագիտութիւն էք սովորե՛լ. սֆֆարիմ... Լաւ, ես մի բան կ'ասեմ, պ. Քամալեանց,—խօսքը շարունակում է պ. Յարոն.—ահա այս օրաթերթից այս մի կտորը եթէ կարողանաք գերմաներէն թարգմանել և ապա միևնոյնը՝ առանց բնագրին նայելու, թարգմանէք հայերէն, այ այն ժամանակը կը հաւատամ, թէ որո՛ւստ որ 9-ը ուժիւն էք սովորել, թէ չէ՝ ինչպէր, դժուար թէ դուք կարգին որևէ բան լինիք սովորած...:

Նարկաւ այդ առաջարկութիւնը չի ընդունում 9 ուժիւնը դատարկ գլխի մէջ ունեցողը, այն պարզ պատճառով՝ ինչպէս մի շուլավերցի լաւ նկատեց, որ «էջը գնալով Երուսաղէմ, վերադարձին հաջի դարձած չի լինիլ»:

Վերադարձից յետոյ մօտ երկու տարի հանգիստ մնաց. սակայն վայ այն մնալու: Ճիշտ է՝ բարոյականութեան մասին թիւր ու աղաւաղ հասկացողութիւն ունեցող թեմակալ Առաջնորդի յատուկ ջանքով և աշխատանքով այդ զգուելի սոգոմեցիին Ներսիսեան հոգևոր Դպրոցում կրօնի դասեր էր ստացել լաւ վարձատրութեամբ, և ուրեմն գլուխը կախած միայն իրա դասերով պէտք է զբաղուէր, սակայն փչացած մարդիկ ընդունակ չեն այդ բանին. դրանք մինչև ուրիշներին չփաստեն՝ վրաները չհաջան կամ չկծեն, հանգիստ չեն մնալ:

Եւ ահա մի օր դիմում է X հարուստի քեռորդուն, և տեսէք թէ ինչո՛ւ համար.

—Քեռուդ ասա՛, թէ մօտ երեք տարի առաջ (?) Բեռլինից իրան նամակ եմ գրել, թո՛ղ այդ նամակս վերադարձնի (!) ինձ...:

Ասացէ՛ք, ընթերցող, նօրմալ ուղեղի տէրը այդպիսի պահանջ իրան թոյլ կը տա՛ր: Ես էլ ինչ եմ ասում. հակաբնական զգուելի հակումն ունեցողը ինչ չի թոյլ տալ իրան:

—Նախ՝ այդ նամակը իմ սեպհականութիւնն է,—պատասխանում է X հարուստը,—հետեապէս նա ինչ իրաւունքով է ինձանից յետ պահանջում. երկրորդ՝ ո՛ւմ միան է—պահել եմ, թէ պատուել դէն զցել:

—Ո՛չ,—ասում է այդ տարօրինակ թէ նորօրինակ աստուածաբան «մանկա...վարժը» նրա քեռորդուն.—քեռիւք իմ (?) նամակը պատուած չի լինիլ. գնա՛ նորից ասա՛ որ նամակս վերադարձնի:

Այդ անհասկանալի, այդ անմիտ և միայն յիմարին վայել պահանջի համար X հարուստը բարկանում է.

—Ռա՛դ եղէք գլխիցս, զահլայ տարաք. ես նրանամակը ինչո՛ւ պէտք է պահէի, պատուել... դէն եմ զցել:

Անբարոյականները թէ կարճամիտ և թէ անհաւատալի մոռացկոտ են լինում. իսկ եթէ այդպէսները նաև հիւանդագին մեծամիտ են, այդ դէպքում միաժամանակ թէ կարճամիտ, թէ մոռացկոտ և թէ անհետատես էլ են լինում: Ուստի-և բարոյապէս ընկածը ուրախացած որ X հարուստը գուցէ արհամարհանքով նամակը պատուած կը լինի, ողորմելի ուղեղով ենթադրում է թէ իրա դէ՛մ փաստ չկայ, ուստի և ինքը կարող է՝ ապականուած սրտի ուղածին չափ շան պէս հաջալ նրա վրայ:

Անցեալ ամռան սկզբին գնացի բարեկամիս—
Ա. Սպ.՝ի մօտ՝ նրա փոխադրած թուաբանական խըն-
դիրներն ժողովածուն սրբագրելու: Նոր էի ներս մը-
տել, որ «Ռիտակի» № 12-ը տուաւ ինձ՝ մասնացոյց
անելով «X հարուստը մախաթի ծակում» վերնագրով
յօդուածը: Եւ որովհետեւ ճիշտ է թէ ոճը ինքը մարդն
է, հէնց առաջին տողից գարշահոտութիւն ըզ-
գացի, երկրորդ տողի պլումպուտինգն ստիպեց ինձ
նայել ստորագրութեանը, կարգացի Շմնդ և ամեն
բան հասկացայ: Ինձ զսպելով երբ կարգացի ամբողջ
զգուելի պասկվիլը և տեսայ թէ ինչ անխիղճ վիրա-
ւորանքի ու անարգանքի են ենթարկուել թէ X հա-
րուստը և թէ նրա անմեղ ու յարգելի ընտանիքը,
զայրոյթից քիչ էր մնում խեղդուեմ, որովհետեւ ա-
նարգ պասկվիլանտը ինձ շատ լաւ յայտնի Քամա-
լեանց սեահոգի գեադան էր, որ այժմ Շմեղ կեղծ
անունով էր շարորուել, ինչպէս մի ժամանակ Մխի-
թար-Մխիթարիկ-Թուխ-մանուկ թէ Շուն-մանուկ ա-
նուններով Պառաւեանցին զրպարտելիս, և այժմ՝ թէ X
հարուստի տանը եղած կոչունքին իբրև անշնորհք թա-
մադայ պլումպուտինգի պատճառով կրկնակի ու եռակի
խայտառակուելու մոռն էր հանում և թէ Բեռլինից
նամակով նրանից խնդրած դրամը մերժուելու համար
վրէժ լուծում:

Երբ սրբագրութիւնը պրծայ, գնացի դահլիճ, ուր
էին՝ ինքը Արշակ Սպարապետեանը, եղբայրը, ա-
մուսինը, Գիւտ ա. ք. Աղայեանը և «Ռիտակի» խմբ-
ագիր պ. Հայկ Տէր-Աստուածատրեանը, որին և դի-
մեցի իսկոյն:

—Ձեռ ամաչում, Հայկ, որ յարգելի ընտանիք-
ների մասին Շմեղի նման անբարոյական մարդու

զգուելի պասկվիլներն են գետեղում քո թերթում...
Եթէ պատասխանը գրեմ, կը տպեմ:

—Այո:—Գրածս ինչ էլ որ լինի:—Այո, ինչ էլ
որ լինի:—Ազնիւ խօսք, Հայկ:—Ազնիւ խօսք:—Շատ
բարի, հէնց վաղը կամ միւս օրը կըստանաս:

Մի շատ համառօտ նամակ գրեցի և տարայ:
Սակայն նամակս լոյս չտեսաւ, որովհետեւ թերթն էլ
լոյս չտեսաւ: Յետոյ ինչպէս իմացայ խմբագրից,
այն մարդիկ, որոնք դրամական նպաստ էին տալիս
թերթին, ասել էին՝ կամ Լեոնի այդ նամակը չպէտք
է լոյս տեսնի և կամ թէ՛ այլևս ոչինչ չենք տալ
թերթիդ ծախսերը ծածկելու: Իսկ խմբագիրն էլ՝ ի-
պատիւ իրան, պատասխանել էր:

—Աւելի շուտ թերթս կը դադարացնեմ, քան
տուածս ազնիւ խօսքը կը դրժեմ:

Փակագծի մէջ ասեմ որ ինձնից զատ ուրիշնե-
րը ևս բողոք-նամակներ էին գրել «Ռիտակի» խմբ-
ագրութեան Շմեղի զգուելի պասկվիլի դէմ:

Նամակս մնաց «Ռիտակի» խմբագրասանը: Նրա
մէջ բարոյապէս ընկած Շմեղի խարդախութիւնը
մատնանշելուց յետոյ մօտաւորապէս հետեւեալ հարցն
էի տուել խմբագրութեան և պատասխանը խնդրել.

—«Արդեօք սրն է լաւ և ազնիւ՝ իր սեպհական
աշխատանքով, հալալ քրտինքով ձեռք բերած բա-
րիքից ազատ կամքով, ինքնաբերաբար մասն ու
բաժին հանելը մերձաւորներին, թէ՛ ուսումն անել,
նչ-բարով աստուածաբանութիւն, մանկավարժութիւն-
ուսանիլ, ուսուցչի սրբագնադոյն պաշտօնն ստանձնել
և միւսնոյն ժամանակ առանց խղճի խայթ զգալու
հետամուտ լինել իր հողևոր զաւակներին—աշակերտ-
ներին մյն անամօթ նպատակով՝ որ յատուկ է մի-
միայն արեւելցի զգուելի պարսիկին»:

Թէպէտ պատկվիլանտ Շմեդ-Քամալեանց Ս.-ը երկիւղից պարզ չի ասել, բայց հաստատ է թէ «Իտակին» զրածս այդ նամակն է ունեցել աչքի առաջ, որ իր դադուած սիրտը մի կերպ հովացնելու համար կլանչել է. «... Լ. Մ.-Ա. ինչանցու է մէջտեղը (աչքիդ պիպիկը հանողը)—անշուշտ մի անկոչ փաստաբան»: (Ողորմելի սոփեստ, այդ հասկանալու համար պէտք է նօրմալ ուղեղ ունենալ և ոչ թէ հակաբնական հակումից քարացած ուղեղ, որպիսին քոնն է: Դէ հօ այդպիսի աննախանձելի ուղեղով չի կարելի հասկանալ, թէ ինչ է ազնուութիւն, ինչ է պատիւ, նամուս, բարոյականութիւն, կամ ինչ է հասարակական բարիք, օգուտ և դրանց մասին մտածելը):

Երբ մի վնասակար կենդանի հալածանքի է ենթարկվում, խելայեղ փախուստի ժամանակ ում ասէք որ չի ցելտուում և հարուածել կամ կծել ուզում. ճիշտ նոյնն է անում նաև զգուելի պատկվիլանտ Քամալեանց Սարգիսը, այդ ապականուած վարք ու բարքի տէր ոչ-բարով աստուածաբան սոզումեցին:

Թո՛ղ փաստերով, բայց ոչ խարդախութիւններով, ոչ փրօն ու ճրճոսն բառերով ու խօսքերով, ոչ մեռելների յաւիտենական խաղաղ նինջը խանգարելով կամ անմեղ, գործի հետ ամենաչնչին կապ իսկ չունեցող անձանց անհանգստացնելով, այլ անառարկելի, անհերքելի փաստերով ցոյց տայ ԴՍԱՐԱՆՈՒՄ որ վերի զրածներս սխալ են: (Այո, եթէ նամուս ունիս, զգուելի սողումեցի, եթէ խեցդեանից էլ ստոր և միայն զգուանք յարուցանող կենդանի չես, դիմիր ԴՍԱՐԱՆԻՆ: Մի լսիր ոչ-օքի, այլ ուղղակի դիմիր ԴՍԱՐԱՆԻՆ, եթէ իրաւամբ ես մարդկային կեր-

պարանք կրում, ո՛վ հրէշ. վասնզի ճիշտ է կեանքը թանգ է, բայց կեանքից աւելի թանգը մարդու մադանուց անգամ շատ ստոր է: Չէ-որ ֆալով այդպէս պատուազուրկ, դու բազմութեան մէջ անգամ քեզ միշտ մենակ ես զգալու, որ մահից իսկ վատ է: Ապացոյց ասածիս այն՝ որ թատրոնում համարեա ամենքը խուսափում են քեզանից, հետդ չեն խօսում, բարեկ անգամ չեն աւնում):

Վերին աստիճանի անպատկառ լրբութիւն է բազմութիւնից արհամարհուածի կողմից իր «նախկին աշակերտներից» ոմանց թեի տակ մտնելը: Աշակերտները այնքան յիմար չեն, որ հրապարակ գան պաշտպանելու իրանց բարոյապէս փշացնողին: Այդ աշակերտներից մինն էլ, որի անունը յիշում է «մանկա... վարժը», պ. Վախ. Մեհրաբեանն է. բայց նա ի-պատիւ իրան, հրաժարուելով հրաժարվում է այն աննախանձելի ու անփառունակ դերից, որ չակերտաւոր մանկավարժը զօռով փաթաթում է նրա վրդին. և ոչ-միայն այդ, այլ և նա՛ Վախ. Մեհրաբեանը Քամալեանց Ս.-ի կողմից իրան այդպիսի դեր յատկացնելը յանդուզն լրբութիւն և իրա անունը շահակործելը «շանտաժիշտութիւն» է անուանում: (Լսում ես, մարդակերպ երկոտանի ճիւղ, զգուելի սողումեցի. քո ներքին աշխարհդ այնպէս ապականուած ու զազիր է, որ դրա տեսքից բարեկամներդ էլ են սարսափահար փախուստ տալիս):

«Մշակին» ուղարկած այն անմիտ բովանդակութեամբ թուղթն ստորագրողներից նրանք, որոնց սրտից հրէշ վարժապետը չի կարողացել իսպառ արմատախիլ անել բարոյականութեան սերմերը և ճըշ-

մարտասէր են, անկեղծօրէն զղջում են (մանաւանդ պասկիլիւբբօշիւրիցդ յետոյ, որից 50 օրինակ ուղարկել էիր տանուտէր Մ. Քարհանեանցին՝ ծախելութէ՛ ձրի բաժանելու, բայց նա՛ ի-պատիւ իրան, զըզուանքով դէն էր շարժել)։ Այո՛, ոչ միայն զղջում են այն անմիտ թուղթն ստորագրելու համար, այլև անիծում են այն մարդուն, որ համոզել էր իրանց ստորագրելու։ (Այդ էլ լսեցի՛ր, ամենքից արհամարհուած սալախանայ վարժապետ)։

Այժմ հարց. հապա ո՞վ կարող էր կազմած լինել այդ՝ միմիայն տնագի արժանի, գոռանոց պաշտպանողական թուղթը, քանի-որ մատնանշած պ. Վախ. Մեհրաբեանը զգուանքով հրաժարուեց այդ անփառունակ դերից, հրաժարուեց նոյնիսկ «ագնիւ երիտասարդը» վիճակների ներկայութեամբ։ (Այ ողորմելի պասկիլիանս, թէ մինչև որ աստիճանի պատիւ չունիս Շուկավէրու մէջ, թէ ինչքան ընկած է քո համարումը գիւղացոց աչքում, դրա ապացոյցն այն է, որ երբ Շուկավէրում՝ շրջակայ գիւղացիների հետ պատուիրակներ էին ընտրում, որոնք յետոյ պէտք է ընտրէին Ներս. Դպր. համար հոգաբարձութիւն, այդ ընտրութեանը... լսւ լսիր, միմիայն մի ձայն տուին քեզ։ Ահա այդ մի ձայն տուողին է, որ «ագնիւ երիտասարդ» ես կոչել պասկիլիւբբօշիւրիդ մէջ)։

Այդ ամենից յետոյ թող ընթերցողն ասի, թէ ի՞նչ գին ու արժէք կարող է ունենալ Քամալեանցի պէս մի անբարոյական գրչակի բերանում «բարեկամ», «ագնիւ», «մամուլի ազատութիւն», «բարոյական», «գրական բարքեր», «վայելչութիւն», «պատիւ» և ուրիշ գրանց նման վեհ գաղափարներ արտայայտող բառերը։

Այդ ողորմելի հերքումը կամ աւելի ճիշտը՝ այդ

անփառունակ պաշտպանութիւնը չհիւրընկալեց ոչ մի լրագիր ոչ-թէ նրա համար, որ մեղադրութիւններս «Ձարկ» շաբաթաթերթումն էին լոյս տեսել (այդ այնքան էլ պատիւ չէր բերել ոչ մի կարգին օրգանի), այլ որովհետև ամենքը ևս համոզուած էին և են, որ ես՝ Լևոնս սուտ բան չէի գրել և որ, ուրեմն, մեղադրութիւններս կէտ առ կէտ ճիշտ են. հետևապէս՝ այդպիսի մեղադրութիւնների դէմ լրագրում հերքումն չեն գրում, այլ կամ բոլորովին լուռ են ամօթից և կամ՝ եթէ աննամուս չեն, դատարանում անհերքելի փաստեր են առաջ բերում։

Մէջտեղը խնդիրը միմիայն պատուի— «մարդուս աչքի լոյսի պէս փայփայտած պատուի» մասին է. ուրեմն ասել՝ թէ այս կամ այն յարգելի անձը չի թոյլ տալիս դատարանին դիմելու, ուղղակի նշանակում է թէ այդ՝ միայն արտաքինով մարդանման երկոտանի անարգ արարածը ուռի նման դողում է դատարանից։ Հետևապէս՝ լռելու փոխարէն պատէպսոտ ընկնելով, կմկմալով, լուսնահաջ տալով կամ պասկիլիւնը հրատարակելով՝ իրան երբէք չի կարող արդարացնել, այլ աւելի և աւելի պիտի իրա համարումը կորցնի և վերջիվերջոյ իր մի ջուխտ ու մի կենդ «բարեկամները» որքան էլ յիմար լինին, բայց-և-այնպէս սողումեցի Քամ. Ս-ի չափ պատուազուրկ չեն կարող լինել։

Ասածներիս ապացոյցը Ներս. Դպրանոցի վարժապետներից շատերը։

— Թվում է թէ, — ասում են նրանք, սոսկալի մերկացումներից յետոյ Քամալեանցը աւելի անամթացել, աւելի լպրշացել է. լրբութիւնը երբեմն այն աստիճան յանդգնութեան է հասցնում, որ ուղղակի մարդ իրան անպատուած է գգում, քանի-որ մենք էլ մարդ

կոչվում, նա էլ: Այդ անիծածը կարծես մի իշապանի չափ էլ պատուոյ զգացմունք չունի...

Իհ, երբ մի մարդ այնքան պատուազուրկ է, որ պաշտօնակիրները կարծիքով իշապանն էլ է նրանից նամուսով, նրանից պատուազգած, այլևս քանի՞ դոօշ արժէ այդպէս մարդուկի «մեծահոգութիւնը»:

Այդ իշապանից էլ աննամուս մարդուկը, որ իրան Ստեղծողին անգամ անպատուութիւն է բերում, թէ խօսածները և թէ գրածները մէջ չունի մի խօսք, մի նախադասութիւն, որ ստութիւն կամ խարդախութիւն չպարունակի: Օրինակ՝ ինչո՞ւ է գրել, թէ «Զարկը» ևս չընդունեց գրածս, այլ «Հովիւը», քանի-որ «Զարկը» լոյս չէր տեսնում: Կարելի է, հնարաւոր է արդեօք լոյս չտեսնող թերթի մէջ բան տպել:

Կամ ինչո՞ւ է «Հովիւի» խմբագրութեան յանցանքը. մի՞թէ նրանում, որ տպել է նամակս:

Բայց չէ՞-որ այդպիսի բաների մասին գրել, խօսել, խմբագրութիւններից այդպիսի անմիտ պահանջներ անել կարող է միայն բոլորովին յիմարը և ոչ-թէ «25 տարուայ» ոչ-բարով գրողը:

Հանգ. Ս. Պառ.-ը եկեղեցապատկան գետնի վերայ դպրոց շինելով՝ ահամայ զրկեց Քամալեանցիներին՝ եկեղեցու բակով օգտուելու, այդ բանի համար «սրտացաւ» ոչ-բարով վարժապետը տարիներով զրպարտեց նրան, բայց գրածները հաստատել չկարողանալով՝ բանս նստելու երկիւղից բոլոր թքածները յետ լիզեց բաւական չէ, այլև նրա առաջ չոքեց և իրա գլխին ... պահպանիչ ասել տուաւ: (Տես գրքիս 109 երես):

X հարուստի տանը իր անշնորհք թամազու-

թեամբ և թէ «պլումպուտինգի» պատճառով խայտառակուելով և ապա խնդրած դրամի համար մերժումն ստանալով՝ նոյնպէս իբրև վրէժ, Շմեղ ստորագրութեամբ զգուելի պասկվիլը գրեց, որով քար գցեց իրա գլխին. վասնզի այդ անփառունակ և ողորմելի խժրժանքն էր պատճառ, որ ուսուցչութեան ամբողջ ընթացքում ծածկած կեղծ դիմակի առաջին կապը քանդելով՝ ապականուած ներքին աշխարհը ցոյց տուի հասարակութեան:

Եւ անա այդ ազնիւ քայլիս համար՝ էլի իբրև վրէժ, ուր նստեց, ուր կանգնեց՝ փողոցներում, թէ տներում, նոյնիսկ նամակներով սկսեց վրաս լուսնահաջ տալ—այնպիսի բաներ խօսել, որ եթէ լսողներն ու կարդացողները խելօք մարդիկ լինէին և ոչ յիմար-անասուն, պէտք է թքէին հաջողի անամօթ երեսին: Բայց անփառունակ պասկվիլանտը թուք չստանալուց խրախուսուած՝ լուսնահաջը հետզհետէ հաջոց դարձրեց. ստիպուած եղայ այդ անտանելի ձայները կտրացնելու, որի համար էլ սկսեց կաղկանձել և ապա հրատարակեց պասկվիլ-բրօշուրը:

Այդ ամենից յետոյ պարզ է որ «Հովիւի» հայր-խմբագիրն էլ պէտք է զրպարտուէր փէշաքաւոր զրպարտչից, որովհետև այդ սողմեցու յօդուածները չէր հիւրընկալում իրա թերթում, և անա հիմա էլ սպառնում է լուսնահաջը փոխել հաջոցի՝ պասկվիլ գրել:

Բայց ասած է՝ «չունը կը հաջի», քեարվանը կը քոչի»:

Մամուլի մէջ երևան եկած ուրեք ստութեան, կեղծիքի, խարդախութեան, անձնական գծուծ հաշիւներից գրողուած փնթի վրէժ առնելու դէմ բողոքելը հասարակութեան ամեն մի պատրաճանաչ

անդամի բարոյական պարտականութիւնն է, իսկ յիմար պասկվիլանտը «անկոչ փաստաբանութիւն» է անուանում: Հապա ինչ անուն պէտք է տալ ողորմելի գրչակի վերին աստիճանի տգեղ և անպատուաբեր արարքին՝ մեր յարգելի մանկավարժ պ. Սեդրաք Մանդինեանի վերաբերմամբ: Գրական խուլիզան Քամալեանց Ս.-ը ինչ իրաւունքով էր իրան չվերաբերեալ մասնաւոր հաշիւների մէջ մտնում: Ո՞վ տուաւ իրան այդ իրաւասութիւնը. պ. Մանդինեանը: Բայց նա ոչ-միայն այդ իրաւունք չի տուել, չէր էլ կարող տալ, իբրև լաւ մտածող գրագէտ, այլ արհամարհանքով թքում է իր մասնաւոր շահերը այդ աստիճան անշնորհք կերպով պաշտպանող ինքնակոչ փաստաբանի անամօթ երեսին:

Անագնիւ սուտ է և կեղծաւոր փարիսեցիութիւն, որպէս թէ ինքը «Հովիւից հեռացել է ի-պատիւ Ս. Ման.-ի: Այո, այդ մի այնպիսի «անագնիւ սուտ է», որին ընդունակ է միայն մաքուր անուան մասին գաղափար չունեցող Քամալեանց Ս.-ը. այդպէս բան տեղի չի ունեցել: Ո՞չ թէ ինքն է հեռացել, այլ «Հովիւի» խմբագրութիւնն է զուռնով հասկացրել որ ռադ լինի՝ շարունակ նրա յօդուածները տպագրութեան անարժան համարելով: Այն երկու յօդուածն էլ՝ որոնք հասարակութեան աչքին թող փչելու համար էին գրուել, լոյս չէին տեսնիլ, եթէ չլինէր ծերունի Bussenkamerad-ի եռանդագին միջնորդութիւնը: Նախանձելի չէ մի գրագէտի ուղեղ, որի գրած նամակը, այս կամ այն յօդուածը միայն «զանազան» բարեխօսութիւններով կարող է տպագրութեան արժանանալ:

Ուղղակի լրբութիւն է Քամալեանց Ս.-ի կողմից գրելը, թէ ես օգտուել եմ իրա և «Հովիւի» խմբագրութեան լարուած յարաբերութիւնից: Նախ՝ երբ ես բարեկամ էի «Հովիւի» արժ. խմբագրի հետ, ինքը՝ այդ ողորմելի գրչակը ինչ զեռել էր ինձ համար:

Երկրորդ՝ ես աւելի փորձուած լրագրական գործում, «Հովիւը» դեռ լոյս էլ չէր տեսնում, որ զանազան ցուցումներ ու խորհուրդներ էի տալիս, իսկ լոյս տեսնելուց յետոյ՝ որպէս վաղեմի բարեկամ, ըստ չափու ժամանակիս ներման օգնում էի որեւէ կերպով:

Երրորդ՝ ես այնքան էի ուշադրութիւն դարձնում ուրիշների, մանաւանդ սխալմամբ մ'արը կոչուած Քամալեանցի նման հրէջ վարժապետի՝ սրա ու նրա հետ ունեցած յարաբերութեան վրայ, որքան հետաքրքիր էի իմանալու, թէ նոր աշխարհ եկածս տարին ինչ ու ինչ էին խօսում իմ մասին Չինաստանի ներքին և արտաքին գործոց՝ Բիու-Իու-Իու և Կի-Մու-Մու-Հուն-Չանգ անուններ կրող նախարարները:

Իսկ թէ այդ անամօթ ստախօսը, այդ՝ Ներս. Դպրանոցի Մանկավարժ. ամբողջ ժողովից արհամարհանքով մերժուած ու Հոգաբարձութիւնից վնդուած չակերտաւոր մանկավարժ Քամալեանց Սարգիսը մինչ ո՞ր աստիճանի զգուելի գրպարտիչ է, դրա ապացոյցը այն է, որ առանց ամաչելու գրել է իրա պասկվիլերօշիւրի մէջ, թէ Տէր-Յգնիկը կաշառուել է X հարուստից, այն էլ իմ՝ մ'իջոցով:

Ահա ես՝ Լևոնս յայտնում եմ հրապարակով— սրբազան մամուլի միջոցով, որ սողոմեցի պասկվիլանտ աստուածաբան Շմեղ-Քամալեանի կողմից այդ մի այնպիսի ցած, այնպիսի ստոր, այնպիսի լիրբ, անագնիւ ու անպատկառ զրպարտութիւն է, որին ընդունակ կարող է լինել միայն և միմիայն մանուկներ

պղծող զգուցելի անարգ արարածը: (Ս:յ թշուառական՝ այդ էլ հօ չդարձաւ այն, որ Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործ. Ընկեր. օգտին կազմած զբօսանքին երբ իմ բարեկամ Ստեփան Տէր-Աւետիքեանը զիմեց քեզ հարցնելով՝

— «Մեր տղայ, մի՞թէ այդպէս հրէշ ես եղել, ինչպէս որ գրում է մեր սիրելի Լևոնը. ամօթ ու նախատինք քեզ»: Իսկ դու՝ մարմնացած ստուծիւն ու կեղծիք, պատասխանեցիր.

— Է՛հ, ի՛նչ կարող եմ անել, քանի-որ Լևոնը Պառաւեանից (մօտ 2—3 տարի է արգէն մահացած) կաշառուել, իրա գրիչը ծախել է նրա վրայ: (Ո՛ւու... երկոտանի հրէշ. արդեօք մարդածին ես—կի՛ն է ծնել քեզ, թէ՞ դժոխքի բնակիչ ճիւղներէից մէկն ու մէկի արգանդից ես լոյս աշխարհ եկել՝ միայն խաղաղ մարդկանց հանգստութիւնը խանգարելու համար... Թո՛ւք, թո՛ւք անամօթ երեսիդ, և ամօթ այն հասարակութեան, այն մամուլին, որ հանդուրժում են քեզպէսին):

Ո՛րքան էլ մի մարդու գլուխ դատարկ լինի, բայց քանի-որ շնչում է, ման է գալիս, ասել է գոնէ մի մըսխալի չափ խելք էլ է մէջը մնացած պէտք է լինի:

Այդ դատարկագլուխ անբարոյական սոգոմեցուն՝ Ներս. Դպրանոցից վճռուած «մանկա... վարժին» երբ հարցնում են.

— Ախր ինչո՞ւ համար, ի՛նչ նպատակով էք հրատարակել բրօշուրդ. չէ՞-որ դուք դրանով միայն Լեւոնին էք բարձրացրել և այդպիսով նրա հոգու՝ մինչև օրս մեզ անյայտ մնացած հազուագիւտ ընտիր յատկութիւնները երևան հանել:

— Այն նպատակով, — պատասխանում է այդ սխալ-

մամբ մ'արդ կոչուածը, — որ ցոյց տամ նրա խելագարութիւնը:

— Տէր ողորմեա. բայց դուք ձեր բրօշուրով ոչ-թէ նրա, այլ միայն ձեր խելագարութիւնն էք ցոյց տուել, այն-ինչ մենք միամտաբար ձեզ աւելի խելօք էինք համարում... Դուք ձեր այդ բրօշուրով ինքներդ ձեզ՝ իբրև գրագէտի, թաղեցիք...

— Ո՛չ, — ընդհատում է մեծամտութիւնից խելայեղ եղած գրչակը խօսակցին. — ես պարզ ցոյց եմ տուել նրա խելագարութիւնը:

— Բայց այդ ի՛նչ տեսակ տարօրինակ խելագարութիւն է՝ ձեր իսկ ասութեամբ ամենքին սիրելի Լևոնի խելագարութիւնը, որ կարողանում է իրա ազդեցութեան ենթարկել ոչ-միայն տարբեր ուղղութիւն ունեցող շաբաթաթերթի տարբեր համոզմունքի ու զարգացման տէր խմբագիրներին, այլև միլիօններ (?!) ունեցող, նիւթականապէս ապահովուած X հարուստին, այլև կեանքի բովում եփուած ու զտուած համալսարանականին՝ պ. Զ. Գրիգորեանին: Ուղիղն ասեմ, պ. Քամալեանց, ես կը փափագէի այնպիսի խելագար լինել, ինչպիսին որ սիրելի Լեւոնն է:

Եթէ այդպիսի սպանիչ ընտրիք — պատասխանը անբան-անասուն շունն ի՛նչ է, շունն էլ որ ստանար, է, նա էլ կը սատկէր ամօթից:

Այդ այլանդակ բարոյականի տէր պատուազուրկ մարդուկը մօտ 50 տարեկան է, իրա իսկ ասութեամբ՝ «25 տարուայ» ոչ-բարով գրող է, անարժանաբար ուսուցիչ անուն է կրել երկար տարիներ, 4—5 տարի ոչ-բարով՝ աստուածաբանութիւն (?) մանկավարժութիւն, հոգեբանութիւն... մինչև 9-ը ութիւն է սովորել, հապա մի՞թէ չգիտէ որ 1891 և 1906 թուականները

միջև 15 տարի սարբերութիւն կայ. հետեապէս Գր. Բալ. 15 տարուց յետոյ ինչո՞ւ չպէտք է կարողանար գոնէ մի երկու խօսք գրել այդ ողորմելի գրչակի... գողացած աշխատութիւնների մասին: Այդ ո՞ր մարդն է եղել աշխարհիս երեսին, որ ոտքը դպրոցական շէմքին դնելուն պէս զրոյ է դարձել: Չլինի՞ թէ այդ յիմար գրչակը իրա մասին այդպիսի կարծիք ունի: Շատ կարելի է, վասնզի դեռ ո՞րտեղ էր Բեռլինը, երբ նա Շուլավէր արդէն անփառունակ «փառաւոր» «մանկա... վարժ» էր և «փորձնական դասեր» էր տալիս անմեղ մանուկներին, որպէսզի «արդիւնաւոր կացուցանէր իր գործունէութիւնը» — ապագայում իրան պաշտպանող թղթերի տակ ստորագրողներ պատրաստէր:

Ախր ինչո՞ւ է այդքան մեծ . . . երևակայում իրան այդ սխալմամբ մարդ կոչուածը, այդ անբուժելի մեծամիտը. ի՞նչ է, ո՞վ է ինքը: Այդ ի՞նչ տոնով է խօսում Գր. Բալ. մասին, և ո՞վ է այդպէս բարձրից խօսողը. նա՞ որ այնքան է ընկել բարոյապէս, որ այլևս կանգնելիք չունի: Այդ ինչո՞ւ ինքը՝ սխալմամբ մարդ կոչուածը առանց կարգին գերմաներէն իմանալու կարող էր 4—5 տարում Բեռլինում ապրելով 9-ը ութին սովորել, իսկ Գր. Բալասանեանը իր մայրենի լեզուով 15 տարուայ մէջ չէր կարող գոնէ այնքան սովորել, որ մի գրչակի գողացած աշխատութիւնների մասին մատենախօսական գրէր *):

*) Խորհուրդ կը տայի ընթերցողին կարգաւ նորերս հրատարակուած՝ «Էեռո՞ւ փախիր գրական խուլիգանից» գրքոյկը, ուր այդ մասին համոզիչ մանրամասն տեղեկութիւններ շատ կան:

Այդ բարոյապէս ընկած զգուելի սողոմեցին, եթէ ուզում էր որ իրա թուշերն էլ կարմրեն, թո՞ղ փակ դասարանում փոշու ամպերի մէջ այս ու այն օրապահ աշակերտին նստարանների երեսները սրբել չըսովորեցնէր. թո՞ղ աշակերտներին զբօսանքի տարած ժամանակ օգտուէր մարգագետինների անապական կենարար օդից և ոչ-թէ խիտ ծառերի տակի խոնավ օդից: Ո՞չ-բարով ընթացաւարտ վարժապետ էր և ոչ-թէ տգէտ տիրացու. մի՞թէ չգիտէր, որ փոշուց եւ ամեն տնտակ խոնավութիւնից թռչում է մարդու գոյնը, աւելի ևս օդակարօտ ուսուցչինը:

Էլ Տէր-Եգնիկի ընական գոյնը ի՞նչ մեղաւոր է, որ յիշել է իր անփառունակ պասկվիլ-բրօշիւրի մէջ, ինչպէս անագնուաբար յիշել էր իմ չլսելս՝ այն էլ ուրիշին պատասխանելիս. ինչպէս յիշել է X հարուստի հանգ. հօր մարմնական պակասութիւնը՝ իրա անշնորհքութիւնը քողարկելու համար:

Եւ հասարակութիւնը հանդուրժում է այդ անպատկառ գրչակին:

Ամօթ, բիւր ամօթ այդպիսի հասարակութեան, այլև մամուլին, որ իր սրբագան պարտքը չի կատարում և անտարբեր է մնում այդպիսի շնութիւնների վերաբերմամբ:

Հաւանական է թէ պատասխանս կարգացողների մէջ շատերը գտնուին, որոնք անտեղեակ լինելով խնդրին, չիմանան թէ ինչն է եղել այսպիսի անսովոր, նոյնիսկ խիզախ պատասխանիս առիթը: Ահա այդ իսկ պատճառով ես իմ կրկնակի բարոյական պարտքս եմ համարում այստեղ առաջ բերել թէ «Մշակում» լոյս տեսած խնդրի շարժառիթ նամակը և թէ այդ առթիւ երկուստեք եղած բոլոր թերուղէմ գրութիւնները. բայց ոչ-թէ խարդախած, ինչպէս իրան թոյլ

է տալիս միշտ գրական խուլիգանը, այլ ամենայն հարգատուութեամբ:

Ահա քառորդ դարից աւելի է ապրում եմ մենու-մենակ. ինձ մօտ գալիս են՝ վարժապետ, վարժուհի, աշակերտ, աշակերտուհի և շատ յարգելի ու պատուա-ւոր անձինք՝ մարդ, կին, մեծ, փոքր, երբեմն մենակ, երբեմն երկուսով, երբեմն միքանիսը միասին՝ սկսած առաւօտից մինչև ուշ երեկոյ—մեծ հաճութեամբ, սրտագին ուրախութեամբ, ամենայն վստահութեամբ. վասնզի հիմա ևս ամենքի համար՝ յարգելի Լևոն, Լևոնս, ազնիւ բարեկամս, սիրելի Լևոն, ազնիւ Լևոն, Լևոն-Չան, եղբայր Լևոն և կամ ախպէր-Չան եմ, որի համար ես իրաւամբ պարծեցել եմ, պարծենում եմ և պիտի պարծենամ միշտ: Պարծանք՝ որից զգացած բաւականութիւնը այլանդակ բարոյականի տէր հրէշ-ները իրանց երազներումն անգամ չեն զգացել և երբէք էլ չեն զգալու իրանց ողջ կեանքի մէջ. վասնզի անոյշ Փոփոն չեն ունեցել, որպէսզի իմանան, թէ բա-նաւոր և անբան անասունների կատարածների միջև տարբերութիւն պէտք է լինի:

Այդ այդպէս լինելուց յետոյ միթէ բնական չէ, որ իմ հայրենակիցներն էլ գալին մօտս. իսկ Գր. Բալասանեանը ոչ Չինաստանցի է և ոչ էլ այլ հեռու-ւոր տեղացի, այլ նոյնպէս իմ հայրենիքից է և հեռու-մօտիկ էլ ազգական-բարեկամ: Միւս հայրենակիցնե-րիցս շատերի նման նա ևս թիֆլիզ եկած ժամանակ, պարտք էր համարում միշտ ինձ այցելել: Ահա այդ-պիսիներից էր 1905 թ. վերջին թէ 1906 թ. սկզբին արած այցելութիւնը: Խօսում էինք զրական նորու-թիւնների մասին: Բալ. ի-միջի այլոց յիշեց նաև սխալ-մամբ մարդ կոչուած Քամ. Ս.-ի—այդ գրական շահա-

տակի մի նոր արած խուլիգանութեան, այն է՝ ան-մոռաց Ծերենցի երկը—հայ երիտասարդութեան այդ ընդիւ աւետարանը—«Երկունք թ դարու»-ն ազաւ-զումներով իրան սեպհականելու մասին:

Նոյն թուի ամռան սկզբին Գր. Բալասանեանը Ղարաքիլիսայից մի նամակով խնդրում էր իմանալ «Յոյսի» խմբագիր Բ. Այվազեանից, թէ արդեօք շոտ լոյս կը տեսնի «Յոյսի» №-ը, ուր լինելու է իր մա-տենախօսական յօդուածը «ազատ (?) փոխադրողի» գրը-քերի մասին: Սակայն «Յոյսի» այդ №-ի համար խմբագիրը տպարանատիրոջ հետ դատ ունենալով, №-ը իսկի լոյս չտեսաւ:

Եւ ահա երբ Բալ.-ը իր սեպհական օրգանի թոյլ-տուութեան հրամանը ծոցը № 1-ի համար նիւթեր էր ընտրում, արդեօք ընական չէ՞ր, որ «Յոյսի» մէջ լոյս չտեսած իրա գրած մատենախօսականը լոյս հանէր սեպ-հական «Ձարկ» շաբաթաթերթում:

Բայց ոչ՝ ինչ որ լաւ է, օրինաւոր ու բնական մեզ համար, այդ ամենը վատ է, տարօրինակ ու ան-բնական սողոմեցի մանկավարժի համար, և ընդհա-կառակը՝ ինչ որ մեզ համար անընական է, սողոմե-ցի մանկավարժի համար շատ ընական է:

Այդ յօդուածը Գր. Բալասանեանը տալով ինձ խնդրեց որ աչքի անցնեմ: Ինչ որ իմ կարծիքով սխալ էր կամ լաւ չէր, ուղղեցի, հետն էլ շատ կծու և դառն՝ թէպէտև արժանի, բռներ, խօսքեր ու դար-ձուածներ ջնջեցի: Երբ իրա զարմանքը յայտնեց այդ ջնջումներիս համար, և թէ ինչո՞ւ ինքս աւելի կծու և դառը խօսքեր չեմ աւելացնում, պատասխանեցի.

—Սա մատենախօսութիւն է, որի մէջ ամենա-չնչին չափով անձնականութիւն չպէտք է խառնուի: Ահա այդ միայն գովասանքի արժանի ազնիւ

վարմունքիս համար՝ թէ բերանացի և թէ լրագրով անազնուաբար զրպարտուեցի՝ զրպարտութիւնը իրան փէշակ շինած գրական խուլիզան Քամալեանից, որպէս-թէ յօդուածը ես եմ գրել, բայց Գր. Բալասանեանն է ստորագրել:

Բայց չէ՞-որ ծակուծուկերում բամբասելն ստորութիւն է և նշան՝ փշացած հոգու տէր լինելուն:

Հաւ, եթէ ես եմ գրել, հապա ինչո՞ւ իմ ստորագրութեամբ ինքս հրապարակ չեկայ: Քաջութիւնս էր պակաս թէ՛ անձեռնհաս էի հրապարակով մտքերս յայտնելու: Սակայն չէ՞-որ դրա հերքումն է «Զարկի» 1 և 2-րդ №-ում պ. Դաղբաշեանի «լիակատար» բառարանի մասին աղի ու լեղի գրածներս. կամ գուցէ երկիւր ունէի մեծամտութեան անբուժելի խտով տանջուող մի բարոյապէս ընկած ողորմելի գրչակից: Ո՛չ առաջինը և ոչ էլ վերջինները կարող էին լինել: Սակայն խնդիրն այդ չէ, այլ այն՝ թէ հրատեղ է տեսնուած, որ մի լուրջ մատենախօսութիւն փաստերով հերքելու փոխարէն բաւականանան կիստոյական հայհոյանքներով և անազնիւ վարմունքով:

Ի՛նչևէ. առաջ բերեմ այսքան «ղալմաղալներ» հանող մատենախօսականը.

Քամալեանց Ս.-ի «փոխադրութիւնները»՝ 1) «Ժամանակը ոսկի», 2) «Սիրելի Հերոս» և 3) «Սասունցի Յովնան»:

Այդ 3 գրքոյկն էլ փոխադրութիւններ են հայերէնից(?) հայերէն, առաջինը՝ Ս. Նազարեանի թարգմանութիւնից, երկրորդը՝ Խ. Աբովեանի «Աէրք Հայաստանի»-ից, իսկ երրորդը՝ Ծերենցի «Երկունք թ դարու» գրուածքից:

Այդ փոխադրութիւններից ստացած առաջին տպաւորութիւնը, դժբաղդաբար, պէտք է ասեմ, որ ճնշող և տարօրինակ է. որովհետև իսկոյն աչքի է զարնում այն զգուշիւ

շահագործման եղանակը, որ ցոյց է տուել իր տգեղ վարմունքով մեր «անյաջող հէքեաթարան» պարոնը երեք գլուխածքի վերաբերմամբ: Նա ջնջիլ, հեռացրել է բուն հեղինակների անունները և նրանց տեղ «իբ փայլուն եսը» բազմացրել, գրելով գրքի ճակատին՝ «կազմեց Քամալեան Ս.»:

Ո՛ւ՛ֆ, որքան խորթ ու անտանելի է այդ մարդ պէտք է միշտ համեստութիւն սիրէ՝ ճանաչելով իր իսկական չափը: Ինչո՞ւ «կազմեց». մի՞թէ պ. Քամալեանը իրաւունք ունէր այդ ակնյայտնի գրուածքները «կազմեց» գարձնելու: Այն դէպքում իսկապէս կարելի է ասել «կազմեց», եթէ նա վերջնելու լինէր զանազան հեղինակների երկերից և կամ զանազան աղբիւրներից նիւթեր ու մի հատորի մէջ ամփոփելով հրատարակէր. այն-ինչ այստեղ այդպիսի բան չկայ: Այստեղ պ. Քամալեանը Ս. Նազարեանի տպաւորութիւն թողնող դարձուածքները, ոճերը, Աբովեանի հրաշալի լեզուն—Աբրատեան բարբառը, և Ծերենցի տաճկահայկական ճկուն բարբառը միայն չոր ու ցամաք մեր գրական ոճի վերածողի դեր է կատարել, ուրիշ ոչինչ. հետևապէս պէտք է գրէր փոխադրեց և ոչ կազմեց: Կամ հայերէնից հայերէն «ազատ փոխադրեցը» հրն է, որ թոյլ է տուել «Ժամանակը ոսկի» գրքոյկի վրայ հնարագիտութեան սիրահար պարոնը: Միևնոյն ժամանակ այս փոխադրութիւններով նա հանդիսանում է լեզուի և ոճի վերահսկող, այսինքն ուղղող, շտկող և լրացնող: Նշանակում է պ. Քամալեանը քաջ հայկաբան է, այնպիսի բարձր հեղինակութիւն վայելող, որ Նազարեանի, Աբովեանի և Ծերենցի նման առաջնակարգ և պատկառելի գրողներին նա յաւակնութիւն ունի իրան աշակերտ ընդունելու: Որպիսի՞ յանդգնութիւն և որպիսի՞ ծաղր:

Ես չեմ հասկանում թէ ի՞նչ նպատակ ունին հայերէնից հայերէն ժամավաճառ փոխադրութիւնները, որոնք ոչ-միայն մի առանձին բան չեն ներկայացնում, չեն գերազանցում մի առանձին բան չեն ներկայացնում, այլև ուղղակի նրանց կամ համապատասխանում ընազրին, այլև ուղղակի նրանց նսեմացնում են և տպաւորութիւնները թուլացնում՝ թէ՛ նրանց ներքին կազմութեան, ուղղութեան և ոգու դէմ մեղանշելով և թէ՛ «անհամ ու անճոռնի սիրունացնելու» սոսկակալի և յանցաւոր ազաւաղութիւններով: Ընթերցողները իսկական ընազրիքը չկարողացած դէպքում եթէ կարդալու լինին

այդ փոխադրութիւնները, անշուշտ մտքներուն ասելու են՝ «միթէ, յիբաւի, այս տեսակ հասարակ գորոհներ են եղել Նազարեան, Արովեան և Ծերենց, որոնք մեր գրականութեան փառքն ու պարծանքն են կազմում»:

Եւ իրաւունք կ'ունենան այդպէս կարծելու, որովհետև փոխադրութիւնները շատ անյաջող կերպով են կատարուած. լեզուն անկենդան է, ոճը քնարեր: Իրանցում ոչ արուեստ կայ և ոչ տեխնիկա. այդ մինչև անգամ վկայում և խոստովանում է նոյնիսկ նրա կոյր պաշտպան պ. Գար. Ենգիբարեանը «Լուծայ»-ում գրած իր ընկերական խաթրիչուն, բայց անտեղի և անդէպ ընկրամ—շոյալարանութեան մէջ: Ուրիշ կերպ ինչպէս հասկանալ, որ նա տամեակ տարիներ գրագիտութեամբ է պարապում, միշտ մատենախօսականներ է գրում, փոխանակ «կազմեց» բառի անտեղիութիւնը Ք. Ս.-ի երեսովը տալու, դեռ ինքն էլ մի սրբապղծութիւն է անում՝ ասելով «գրեց»:

Մեր կարծիքով եթէ սրեւէ գրուած զուրկ է և՛ արուեստից, եւ տեխնիկայից, էլ նա ինչի՞ համար է, էլ նա քանի՞ գոռ արժէ: Վերցրէք «Հիւսիսափայլից» ժամանակը արծաթ է (Քամալեանը փոխել է վերնագիրը «Ժամանակը ոսկի») և ուշադրութեամբ կարդացէք ու կը տեսնէք որ Ս. Նազարեանի թարգմանականում լեզուն ուժեղ է, ոճն աւելի կորով ունի, աւելի տպաւորիչ է, քան Քամալեանի լեզուն:

Վերցրէք նաև «Սիրելի հերոսը». սրը Արովեան, սրը Քամալեան: Աստուած իմ, տարբերութեան կողմից ինչպիսի սար ու ձորեր կան մէջտեղը: Առաջինը մի ջրվէժ է, շատաչող, փրփրալից ջրվէժ, որ առաջ սլանալով և ճանապարհին ամեն խոչընդոտներ խորտակելով, փշրելով՝ վիթխարի հըսկայական լեռների բարձունքից ներքև է գահավիժում զամանալի ուժգին թափով և իրա ընթացքում մեծազորը լսելի աղմուկով ցնցում և շարժումն է առաջ բերում մարդկային քարացած զգացմունքների աշխարհում, այն-ինչ Քամալեանը նրա դիմաց ցեխոտ հեղեղատից մնացած մի հասարակ առու է ներկայացնում: Արդէն Արովեանի լեզուի վերաբերմամբ փոփոխութիւն մտցնելու փորձի վաստակարութեան և անտեղիութեան մասին ես շեշտել եմ Գ. Վ.-ի «Հայ հեղի-

նակներ» կարծեցեալ դասագիրքը քննադատելիս «Յոյս»-ի №№ 14 և 16-ում. հարկ չկայ նոյնը նորից կրկնելու:

Գալով Ծերենցի «Մասունցի Յովնան»-ի փոխադրութեան, չեմ կարող իմ գարմանքի հետ նաև իմ զայրոյթը չյայտնել այն բանի համար, թէ ինչ հարկ կար Ծերենցի չնաշխարհիկ լեզուն ու ոճը փոփոխելով փճացնել, թուլացնել և բռնազրօսիկ կերպով ռուսահայ գրականի վերածել: Քամալեանի նման լեզուազար ըէֆօրմատորներին և գրական շահատակներին խորհուրդ կը տայինք միանգամայն ձեռք վերցնել անխորհուրդ փոխադրութեան խորհրդաւոր այդ «կազմեցներից»:

Ասած է՝ «աշուղի խաղը որ վերջանում է, նէյնիմներն է ընկնում»: Թէ շնորհք ունիք ինքնուրոյն, լաւ-լաւ բաներ տալու, սուէք, էլ սր օրուայ համար էք պահում. իսկ եթէ վաղեմի ընդունակութիւնը ձեզ դաւաճանել է, բաւական համարեցէք և ցած իջէք այդ երեւակայական օդային ամրոցներում թիւրիմացութեամբ պտոյտներ գործելուց...

Ես այնպէս էի կարծում, թէ Եւրոպայում գոնէ կիսատպատ աստուածաբանութիւն սովորած Քամալեանը կը գայ մի օր մեր երկիրը լուսաւորելու, մեր գրականութիւնը ծագկեցնելու իրա ոյժի ներածին չափ: Աւանդ, նա եկաւ հայրենի աշխարհ, իսկ մեր յոյսերը չարդարացան, որովհետև նրանում ոչ մի փոփոխութիւն չտեսանք. դարձեալ նոյն մարդը, նոյն փտած, յետադիմական աշխարհայեացքի տէր տիրանցում: Արդարև ինչ կարելի է սպասել մի հիւժասպառ հեքեացուն: Արդարև ինչ կարելի է սպասել իրա գրքերի տպագրական թարանից, երբ թունդ գրադուած է իրա գրքերի տպագրական ձանձրալի կրկնութիւններով և մանաւանդ վերջերս անպաճանձրալի կրկնութիւններով և մանաւանդ վերջերս անպատիժ կերպով շարունակուող մեր հեղինակների գրուածքների փոխադրական շահագործումներով և նրանց լեզուի անբարեխիղճ հարստահարութիւններով:

Թող պ. Քամալեանը շահագործման ասպարէզ չգարձնէ մեր խղճուկ գրականութիւնը և մանաւանդ մեր՝ առանց այն էլ կենդանութեան ժամանակ չվարձատրուած հեղինակներին:

Վերջացնելով խօսքս, չեմ կարող չմատնանշել և մի տգեղ հանգամանքի վրայ, որ ամենևին պատիւ չի բերում Քամալեանին:

Ռուսաստանում տիրապետող օրէնքի համաձայն հեղինակի որևէ աշխատութիւնից օգտուելու իրաւունքը՝ նրա մահից մինչև 50 տարին լրանալը միմիայն ժառանգներին է վերապահուած, իսկ այդ ժամանակից յետոյ միայն ուրիշները օգտուել կարող են: Մենք գիտենք որ Ծերենցը ծնուել է 1822 թ. սեպտեմբերի 16-ին և վախճանուել է 1888 թուի մարտի 17-ին: Ընդամենը 18 տարի մահից դէսը:

Արդ՝ ի՞նչ իրաւունքով, ի՞նչ հիման վրայ է Քամալեանը օգտուել Ծերենցի գրական վաստակից, երբ նրա ժառանգները համաձայնութիւն չեն տուել և հրատարակիչ պ. Չաքարիա Գրիգորեանը, որին վաճառել է հեղինակը այդ գրքի առաջին և երկրորդ հրատարակութեան իրաւունքը (գեռ երկրորդը չի արուած) կանխապէս զգուշացրել է նրան այդ «գրական վաշխառու» քայլը չանել:

Ի՞նչ անուն կարելի է տալ Քամալեանի այդ ինքնակամ վարմունքին. եզրակացութիւնը թողնում եմ լրջմիտ ընթերցողին:

Գրիգոր Բալասանեան

«Ձարկ» շաբաթ. № 1, 1906 թ. հոկտ. 23.

Շաբաթաթերթի խմբագրի գրած և լիակատար ստորագրած այդ յօդուածի համար ամենքից արհամարհուածը ինչ ասէք խօսել էր իմ մասին, սակայն ես բանի տեղ չգրի այդ հաջոցներին այն պարզ պատճառով, որ շունը այլ կերպ չի կարող վարուել— նա պէտք է կամ կծի և կամ հաջայ: Ախր այդ յօդուածը գրելու մէջ ես նոյնքան խառն եմ, որքան դուք, ընթերցող, հապա ինչո՞ւ էր շարունակ ինձ զրպարտում, բամբասում, վրաս հաջում այդ գրական շարչին:

Միթէ նրա համար որ իբրև նոր գործ՝ իմովսանն օգնել եմ Բալասանեանին: Եւ ո՞ւմ չեմ օգնել ես այն օրից՝ որ սրբագրութեամբ եմ պարապում: Սակայն եթէ այդ հիւանդագին լօգիկայով դատենք, դրանից այն կը դուրս գայ, որ իրա գրքերից մօտ

10—13-ը ես եմ գրել, իսկ ինքը միայն ստորագրել է, որ մեր հին ու նոր՝ քիչ բացառութեամբ, բոլոր պարբերականները ես եմ խմբագրել, որ մեր յայտնի և անյայտ թարգմանիչների, հեղինակների աշխատութիւնների մեծ մասը ես եմ գրել և նրանք միայն ստորագրել են: Չէ՞-որ այդպիսի լօգիկայ միայն խելագարին կամ բոլորովին տգէտին է վայել և ոչ-թէ «25 տարուայ ոչ-բարով գրողին» և Կերմանիայում 9-ը ութիւն սովորողին:

Բայց ահա թէ ինչո՞ւ էր այդ՝ միայն ցած մարդուն վայել զրպարտութիւնն արել իմ մասին:

«Ձարկի» նոյն №-ում տպուած էր նաև «Ստացածս տպաւորութիւնները պ. Յ. Դաղբաշեանի «լիակատար» բառարանից» վերնագրով յիշեալ յօդուածս: Այդտեղ կար ի-միջի այլոց նաև այս կտորը, կամ ճիշտն ասած՝ ուրիշների պատրաստի աշխատութիւնները իրանց սեպհականող մեր գրական գողերի պատկերը զարմանալի պարզ ցոյց տուող այս փոքրիկ հայելին.

Սակայն ամօթ չէ չիմանալը, բայց ամօթ է չիմացածների մասին իմացողներից չհարցնելը:

Իսկ դրանից էլ-աւելի (յաջող հանգամանքից օգտովում եմ, ի միջի այլոց, բառարանից անկախ ասելու) մեծ ամօթ ու անազնութիւն է ուրիշների աշխատանքից անխղճօրէն օգտուելն ու պոռոտախօսութեամբ իրան սեպհականելը. մի զգուշի սովորութիւն՝ որ վերջերս շնորհիւ մեր ոչ-բարով աստուածաբանների բուն է գրել մեր մէջ. իսկ մամուլը կարծէք կուրացել է—կամ իսկի չի նկատում, ճիշտը՝ չի ուզում նկատել այդ զգուշի ու անազնիւ շահատակութիւնները, կամ եթէ մի-մի անգամ նկատում էլ է, փոխանակ բարոյական ապտակներ տալով անզգամներին լմբերանելու, որ էլ-աւելի չանզգամանան, թայֆայութիւնից, կուսակցական միտումներից մղուած՝ չի ամաչում գո-

վաբանելու մի գործ, որ միայն պախարակման ու պարսա-
լանքի է արժանի:

Կայ աւելի տգեղ, աւելի անպատուարեր բան, քան
գործել գրական ասպարիզում և միևնույն ժամանակ իր ո-
ղորմելի գոյութիւնը՝ իրանից զգուող հասարակութեան աշ-
քում որևէ կերպ երևացնելու տենչից բռնուած, օտար լե-
զուի մէջ լոկ իր անյատակ տգիտութիւնը ծածկելու նպա-
տակով ուրիշների պատրաստի ընտիր գործերն անամօթա-
բար շահագործելով իրան սեպհակսնել և այն էլ լպիրշ
պարծենկատութեամբ:

Իսկ մեր մեծախօս մամուլը... Փնւ մեր մամուլի նա-
մուսին...

Եւ իսկն ասած՝ մեզանում սթափեցնող անաչառ քննա-
դատութեան իսպառ բացակայութիւնը և դրա հետեանք սեպ-
հական անձի մասին թիւր ու սխալ հասկացողութիւնն է
պատճառը այն բոլոր տգեղութիւնների, որ բուն են գրել
մեր գրականութեան մէջ:

Դէ թող ընթերցողը ձեռքը խղճի վրայ դնի և ասի
թէ կայ դրա մէջ բարոյապէս ընկածի, այդ սխալ-
մամբ մ'արդ կոչուածի կտրուելու անունը: Չկայ, այո.
չկայ, ընթերցող, ձեզ համար, ինձ համար, ամեն մի
նօրմալ ուղեղի տէր մարդու համար, բայց կայ ան-
նօրմալ ուղեղի տէր գրչակի համար: Որպէսզի կարո-
ղանայ ընթերցողներին իմ դէմ հանել և դէպի ինձ
վատ տրամադրել, որ ես ևս իրան պէս ընդունակ եմ
գրպարտելու, անփաստ խօսելու մամուլի մէջ, գրել է.
«Իմ մնծահոգութեան (?) հակառակ նա կրքից տարուե-
լով փնտռեց թիֆլիզում այն անձանց, որոնք ինձ
թշնամի էին, աւելի սրեց իմ դէմ, սկսեց աներում
բամբասելով ման գալ (այ թշուառական, տասնեակ
տարիներով ոչ-բարով վարժապետ ես եղել հայերէնի,
հապա այնքանն էլ չգիտես, որ մամուլի մէջ փաս-
տերով ու փաստաթղթերով գրելը բամբասանք չէ):

ապա առանց իմ կողմից մազաչափ պատճառ ունենա-
լու լրագրութեան մէջ ինձ հայհուել 1906 թ. Դաղբա-
շեանի բառարանը «Զարկ» փողոցային (ցից) շաբաթա-
թերթում քննադատելիս (եթէ գրական խուլիզան չես
և մտքի պոռնիկ, հապա ինչո՞ւ ես քննադատութիւն
անուանում մի յօդուած, որի համար ինքս իսկ ասել
եմ վերջում թէ քննադատութիւն չէ) իմ հասցէին
բարեհաճեց ուղղել հետեեալ խօսքերը՝ անզգամ, լը-
պիրշ (ցած ստախօս), անամօթ, անազնիւ, ոչ-բարով
աստուածարան: Ես այդ պատուին արժանանում էի
նրա համար, որովհետեւ ներս. Դպրոցում դասախօ-
սում էի Դաղբ-ի տարիներ առաջ աւանդած առար-
կան»: (Նախ՝ տարիներ առաջ աւանդուած դասերի
և մի գրքի մասին գրածս տպաւորութիւնների միջև
ինչ կապ, ի՞նչ առնչութիւն կարող էր լինել. եր-
կորդ՝ ինձ ինչո՞ւ պէտք է հետաքրքրէր այն բանը, թէ
ո՞վ է կրօն դաս տալիս, քանի-որ ի-պաշտօնէ կրօնի
վրայ հսկող թեմ. Առաջնորդը՝ ինձանից իմանալով
որ դու չբահանայից անգամ վատթար արուամոլ ես,
զարմանալի փութկոտութեամբ շտապեց հեռացնել
արժ. Ար. ք. Մինասեանցին և նրա դասերը յանձնեց
քեզ—«հայրդ անիծածին» և «հրէշից վատթարին»՝ ըստ
արհիի յորջորջման):

Դէ ասացէք, ընթերցող, ո՞վ է մեղաւոր այդ-
պիսի մերկացումներիս համար: Թող ինձ չստիպեն,
եթէ ոչ՝ շատ բան երևան կը հանեմ:

Պ. Դրիզոր Բալասանեանի միանգամայն միշտ
ու արդարացի յօդուածին գրական պոռնիկը պատաս-
խանեց «Մշակի» № 240-ի մէջ հետեեալ՝ ոչ-բարով
բացատրական նամակով *).

*) Բացատրութիւն՝ որ պատճառ դորձաւ բոլոր անախորժ գրու-
թիւնների:

որ «Մշակի» խմբագրութեանը խաբելու համար յոգնակի ձևով գրած խոյլերի ճաշակը հաշուի չև՛ առնում խօսքը ինձ էր վերաբերում: Սակայն չնայելով որ այդ նամակը արդէն խօսակցութեան նիւթ էր դարձել բարեկամներին շրջանում, բայց ես ժամանակ չէի ունեցել կարդալու: Երբ զնացի «Նովիւր» խմբագրատուն, ներս մտնելուս պէս այնտեղ եղողներին մէկը մօտեձաւ և յուզուած ասաց.

— Գանձակ մի ջահէլ աղջիկ է մեռել:

— Երևի շատ ջահէլ և լաւ աղջիկ էր, որ այդպէս ազդել է վրայ:

— Այո, մօտ 25—27 տարեկան:

— Ափսոս. ինչից է մահացել:

— Դուք էլ մեղաւոր էք նրա մահուան մէջ:

— Ե՞ս. հօ չէք գժուել. կեանքիս մէջ ես Գանձակ ոտք չեմ դրած:

— Ի-հարկէ դուք չէ, սակայն ձեր հայրենակիցն է նրա մահուան պատճառը:

— Ի՞նչ հայրենակից:

— Սարգիս Քամալեանցը:

— Նրա գլուխն էլ փթի,— նկատեցի բարկացած.— ահա տասը տարուց աւելի է ես նրա հետ չեմ խօսում, նոյնիսկ ես նրան մարդ էլ չեմ համարում, այլ քոսոտ-շուն եմ կոչում անբարոյական լինելու համար: Սակայն արդար պէտք է լինել.— քոսոտ-շունը ի՞նչ մեղ ունի, եթէ Գանձակ մի աղջիկ է մեռել:

— Այ ինչ մեղ. երբ տանու ուսուցիչ էր.....

Խնայելով ընթերցողին (և ոչ-թէ կեղծ էտիկայի դէմ զնալու երկիւղից), մանրամասնութիւնները առաջ չեմ բերում: Թէպէտ պատմողը վերջը այն էլ ասաց որ շան-քօթակ են տուել հրէշ ուսուցչին,

բայց-և-այնպէս տխուր պատմութիւնից տակն ու վրայ եղած հոգիս ոչ մի թեթևութիւն չզգաց. վասնզի ոչ-թէ քօթակ, այլ եթէ անիծածին՝ աչքի տակից էլ որ տիկ հանէին, էլի քիչ կը լինէր: Սրտանց փափագ զգացի կործանիչ շանթ լինել և այդ սխալմամբ մարդ կոչուածին ոչնչացնել, որպէսզի մեր դժբաղդ գիւղն ազատուէր դրա նման հրէշ զաւակ ունենալու ամօթանքից, հայ-դպրոցը այդպիսի այլանդակ բարոյականի տէր փասակար ուսուցչից և հայ-ընտանիքը այդպիսի անպատուաբեր և տան մատաղ մանուկներին համար վտանգաւոր հիւրից ու վարժապետից...

Իսկ երբ միքիչ յետոյ կարդացի նաև սխալմամբ մարդ կոչուածի գրած լպիրշ տոնով նամակը, աչքիս առաջ ներկայացաւ անմեղ զոհը և նրա դժբաղդ ծընողների զգացած վիշտը, նրանց հոգեկան կսկիծն ու անտանելի մրմուռը, և ես՝ իրաւն եմ ասում, ընթերցող, մռնչացի վերաւոր առիւծի պէս և գրեցի՝ ինչ-որ այդ ըոպէին վրդովուած խիղճս ինձ թնլաղրեց:

Աւարտելուն պէս տարայ «Մշակի» խմբագրութիւն, ուր՝ պատասխանս դեռ չտուած, իմացայ որ սաստիկ զղջացել են Քամալեանցի նման մի անպիտան մարդու նամակը տպելով և որ իրանք խաբուած են խոյլեր բառի յոգնակի ձևից:

Յօդուածս տուի: Կարդացին:

— Լևոն, հաւատում ենք, որ գրածներդ ուղիղ են. այդ Քամալեանցը այնպէս զգուելին է, որ ընդունակ է ամեն տեսակ ստորութեան. մենք զգվում ենք նրանից, նրա նամակն էլ թիւրիմացութեամբ տպուեց «Մշակի» մէջ: Բայց-և-այնպէս, Լևոն, այսպիսի խիստ տոնով գրուածք դեռ ոչ մի երկրի ոչ մի թերթ չի տպած իրա էջերում, հապա մենք ի՞նչպէս տպենք:

—Բայց չէ՞-որ հաւատում էք, թէ գրածներս ճշմարիտ են:

—Այո, սակայն այդ այլ խնդիր է. բայց գրածդ անչափ անսովոր կծու լեզուով է. եթէ թոյլ տայիր փոփոխելու...

—Մի նւն ինչ է, մի նւն էլ չեմ թողնիլ որ փոխուի ուրի:

—Այդ գէպքում բոլորովին անկարող ենք:

Գրութիւնս վերցրի և գնացի «Զարկի» խմբագրութիւն:

—Գրիգոր, «Մշակի» խմբագրութիւնը չտպեց թէ գրածիս լեզուն շատ խիստ է. եթէ դու ևս գտնես որ այդպէս է, որպէսզի ապագայ գլխացաւանքութիւնից ազատ մնաս, խմբագրական մի ծանօթութեամբ յօդուածիս պատասխանատուութիւնը ինձ վրայ գցիր, միայն-թէ յօդուածս տպուի անփոփոխ: Այլև, խընդրում եմ, եթէ սխալմամբ մ'արդ կոչուածը՝ առանց հաշտոցների փաստացի հերքումն բերէ, այն ևս տպես անպատճառ:

Պ. Բալասանեանը համաձայնեց: Յօդուածս՝ երկար լինելով, երեք բաժին արինք, ահա անաշխի մասը.

I

ՍԽԱԼՄԱՄԲ Մ Ա Ր Դ ԿՈՉՈՒԱԾԸ *)

Յարգս յարգևորաց, պատիւս արժանաւորաց: Ժողովրդ. ստացուած:

«Մշակի» 240 №-ում «Մ. Քամալեանց» ստորագրու-

*) Խմբագրութեան շատ լաւ յայտնի լինելով յարգելի յօդուածագրի արդար գայրոյթի իրաւացի լինելը և որ նա զուր տեղը չէր դործածել այդպիսի՝ իրաւ-որ կծու և անսովոր լեզու, ուստի-և հրատարակում ենք՝ «վարագուրած ճշմարտութեան խկական պատկերը» բանալու հասարակութեան առաջ, պատասխանատուութիւնը թողնելով յօդուածագրի վրայ:

Ծանօթ. «Զարկի» խմբ.

Թիւն կրող նամակն ինձ ստիպում է այդ սխալմամբ մարդ կոչուածի վերաբերմամբ իմ ամբողջ էութեամբ զգացածս զզուանքի ու նողկանքի զգացմունքը զսպել և 10—12 տարուայ պահած լուծութիւնս խղել: Թէպէտև ծանր է այս բանը ինձ համար, վերին աստիճանի ծանր, սակայն անհրաժեշտ է այդ անբարտաւան արարածին, այդ սխալմամբ մարդ կոչուածին ընդմիջտ ըմբերանելու համար դրա ինչ լինելը յանձնարարել հասարակութեան:

Սխալուելը մարդուս յատուկ է, բայց ալած, այն էլ զիտակցարար արած սխալների վրայ կեղծիք, դժտաւորեալ ստութիւն, խորամանկութիւն, խարդախութիւն ու բարոյապէս ստոր ընկած մարդուն միայն յատուկ ապերախութիւնն էլ աւելացնելը արդէն չի կարող պատիւ բերել նոյնիսկ անգրաճանաչ մարդուն անգամ, ուր մնաց թէ ոչ-բարով աստուածաբանին:

Թէպէտև զարմանալու ոչինչ չկայ, քանի-որ այդ սխալմամբ մարդ կոչուածը այն Ս. Քամալեանցն է, որ աշխատակցում էր «Արձագանքին», որի խմբագրին տարիներ շարունակ սուտ երգումներով ու եզուխտին միայն վայել խոնարհութեամբ խաբել ու հաւատացրել էր, թէ ինքը անձնական սրբէ հաշիւ չունի Սիմ. Պառաւեանցի հետ, այլ գրում է միմիայն (որպէս-թէ) զուտ ճշմարտութիւնը:

Սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Սարգիս և զուտ ճշմարտութիւն. խելք կտրելու բան է:

Բայց չնայելով այդ երգումներին, երբ տեսաւ իր զըրպարտիչ թղթակցութիւնների համար արժանի պատիժը պիտի կրէ—տասնուամէկ ամիս բանտ պիտի նստի, շտապեց իր բոլոր թքած զգուելի լուտանքները յետ լիզելու անփառունակ գործողութիւնը կատարել:

Այդ սխալմամբ մարդ կոչուածը այն Ս. Քամալեանցն է, որի մտաին «Մշակում» Յովնանեան դպրոցում պատահածի վերաբերեալ յայտնի լուրը տպուելիս խմբագրութիւնն ստիպուած էր փոխանակ բուն՝ մի ուսուցչի համար խայտառակ եղելութիւնը հրապարակ հանելու, բաւականաւ գրելով՝ ամուր քաշելուց աշակերտուհու ականջի բլթակը պուկուել էր:

Այդ սխալմամբ մարդ կոչուածը այն Ս. Քամալեանցն

է, որին Շուլավէր եղածս միջոցին երբ յանդիմանում էի.

—Անպիտանների թագաւոր, միթէ չես խղճահարվում, որ սուտ կոյր ես ձեանում. չես տեսնում որ աշակերտներիդ դէմքերը պարզ ցոյց են տալիս, թէ համարեա բոլորն էլ մարմնաշարժութեամբ են պարապում: Ինչո՞ւ այդ ֆասակար ախտի դէմ չես խօսում, խրատում և հասկացնում դրա կորստաբեր հետեանքները, որպէսզի ձեռք վերցնեն և էլ չանեն: Չէ՞-որ դու՝ որպէս ուսուցիչ պարտաւոր ես հօ էլ չանեն: Չէ՞-որ դու՝ որպէս մտաւոր զարգացման, նոյնպէս-և զալ սանիկներիդ ինչպէս մտաւոր զարգացման մասին: Եթէ այդ չես անրանց ֆիզիքական առողջութեան մասին: Եթէ այդ չես անում, ուրեմն դու կոպէկանոց ուսուցիչ ես: Որքէ առարկայի ուսուցիչը ի-պաշտօնէ նաև դաստիարակ պիտի լինի...

Այդ արդարացի յանդիմանութիւններս՝ սխալմամբ մարդ կոչուածը պատասխանում էր.

—Ինչե՞ր ես ասում. այդ բաների մասին ի՞նչպէս (??!) խօսեմ նրանց հետ, ամօթ է: (Երջանիկ շուլավերցիք, որ այդպէս «համեստ» վարժապետ էք ունեցել):

—Դու ո՞չ-միայն աշակերտներիդ, այլև դպրոց չյաճախող պատանիների հետ ևս պիտի խօսես այդ ախտի ֆասակարութեան մասին, նոյնիսկ նորապսակ ջահէլ տղերանց ևս շատ բան պէտք է հասկացնես:

—Օ՛, —պատասխանում էր «անպիտանների թագաւորը», —այդ արդէն անկարելի է:

—Յայն-դէպս, —պատասխանում էի, —հողը կենայ մեր գիւղի գլխին, որի դաւակների վարժապետը դու ես:

Բայց այդ սխալմամբ մարդ կոչուածը, որ ամօթ էր համարում, ամաչում էր իր սրբազան պարտականութիւնը կատարելու՝ թէ որպէս ուսուցիչ և թէ որպէս մարդ, սակայն ո՞չ-միայն ամաչելիս չի եղել, այլ նոյնիսկ միքիչ էլ է չի քաշուել՝ դասերը վերջանալուց յետոյ դպրոցն աւելու է չի քաշուել՝ դասերը վերջանալուց յետոյ դպրոցն աւելու է չի քաշուել, ինչպէս սովորութիւն է եղել, «մի համար փոխանակ երկու, ինչպէս սովորութիւն է եղել, «մի օրապահ» նշանակել, որպէսզի հէնց թողի ամպեր բարձրացած ժամանակ մտնի դասատուն և... դուրը ներսից փակելիս կ գիւղի չարաճճի տղերանց հարցին, թէ ինչո՞ւ է այդպէս անում, սուտ-քրիստոս ձեանալով՝ պատասխանել

—Որպէսզի սովորացնեմ, թէ ինչպէս պէտք է սրբել նստարանների վրայի թողը»:

Ողորմի քեզ, հողաբարձու Իրիցանց Սարգիս, որ երբ մի օր նկատեցիր թէ սխալմամբ մարդ կոչուածը ինձնից ուուած է և իմացար պատճառը, իսկոյն երեսն ի-վեր պողացիր.

—Տօ, պօլտի, տօ, սնրսաղ, այդ բանը ինձ էլ էին ասել, որ քեզ զգուշացնեմ, բայց երեսս չէր բռնում, որ ասեմ: Լևոնը ուղղակի քեզ ազատել է շան-քօթակից, որ տղերքն ուղում էին քեզ ուտացնել: Դու փոխանակ սրա ձեռքը պաչելու և շնորհակալ լինելու, ոււովում ես... Խելքիդ աղ անեմ ես:

Յուսով եմ թէ չի մոռացել. բայց եթէ էլի ուրանայ, այդ մի լաւ ապացոյց կը լինի այն բանին, որ անբարոյականները մոռացկոտ են լինում, այլապէս ի՞նչպէս կարող էին երևալ հասարակութեան աչքին՝ իրանց զգուելի արածները յիշելով:

Այդ սխալմամբ մարդ կոչուածը այն Ս. Քամալեանցն է, որ յարգելի տ. Նաղիրեանցի հաշուով արտասահմանում խարդախութիւն, ներողութիւն՝ ո՞չ-բարով «աստուածաբանութիւն» սովորելով, երբ վերադարձաւ Թիֆլիզ, փոխանակ՝ ինչպէս վայել է ամեն մի փոքրիշատէ բարեկիրթ մարդու, առջին իսկ տեսութեանը իրա բարեբարուհու առողջութեան մասին հարցնելու, անամօթաբար ձայն է տալիս հէնց դուան շէմքից.—Տիկին, դեռ սաղ էք:

Այդ ինձ պատմեց ինքը՝ վիրաւորուած տիկին Նաղիրեանը և աւելացրեց.

—Ուրեմն ինչքան պէտք է ապականուած լինի այդ մարդու ներքին աշխարհը, որ տարիներով Գերմանիա մնալով իսկ բոլորովին անհաղորդ է մնացել քաղաքավարութեան, մարդավարութեան ամենատարրական կանոններին իսկ: Այդ աստիճան քաղաքավարութեան էտիկայից զուրկ արարածները անտաններումն են ապրում:

Այդ սխալմամբ մարդ կոչուածը այն Ս. Քամալեանցն է, որ չէր խղճահարվում իրա աւագ-ուսուցիչ Դանիէլ Տէր-Չաքարեանցի անունով ուղարկուած փակ նամակները բանալ, կարդալ և ապա նրան տալ: Եթէ ես արգելք եղած չըլինէի, քրէական դատի պիտի ենթարկուէր այդ երիցս անիծեալ թշուառականը, որի երեսին եմ միշտ շարտել՝

—Քո բերանում լորի չի թաց լինիլ բաւական չէ, այլև ուրիշների նամակաները բանալու ամենացած, ամենաստոր ու վերին աստիճանի անագնիւ սովորութիւնն էլ ունիս:

Այդ սխալմամբ մարդ կոչուածը այն Ս. Քամալեանցն է, որ տասնեակ տարիներ իրա համար մի 10 կողէկի գիրք չէր գնում, գոնէ ամեն մի մարդու համար անհրաժեշտ գրք-չահատ չէր ունենում, որի համար և մէկ թաղից միւս էր գնում սրահնրա մօտ առջևի ոտերի երկարացած սմբակները կամ աւելի ճիշտը՝ մահմուզները կտրելու, սակայն տունը լիքն էր զանազան բառարաններով և ձեռագիր ու տպագիր գրքերով՝ իւրացրած այն նուէրներից*), որ արեւ էին դըպ-րոցին զանազան անձինք:

Եւայլն, կայլն, կայլն:

Ահա այդ և շատ բան աչքի առաջ ունենալով, ես՝ որպէս անկեղծ բարեկամ մամուլի սրտանց ցաւում եմ որ «Մշակը հիւրընկալել է իրան լաւ յայտնի մարդու նամակը միմիայն նրա համար, որ նամակը «Զարկի» դէմ է եղել գրուած: Հարկաւ գուցէ նաև այն մտքից դրդուած, որ հասարակու-թիւնը իրագիկ լինի ճշմարտութեան:

Իէ հիմա տեսնենք այդպէս է:

«Զարկի» № 1-ում այդ սխալմամբ մարդ կոչուածի ե-րեք գիրքն է քննադատուած և ոչ երկուսը: Իիտմամբ մո-ռացութեան տուած գրքի մասին ի-միջի այլոց նաև ա-սուած է՝

Ստ. Նաղարեանի «Ժամանակն արծաթ է» (որ սխալ-մամբ մարդ կոչուածի և իրանմանակ խելահասների հաշակով ժամանակը ոսկի» անմիտ վերնագիրն է ստացել) գրքի թարգմանութիւնը շատ աւելի լաւ ու տպաւորիչ է, քան սխալմամբ մարդ կոչուածի հայերէնից (!!)

հայերէն ազատ (??) փոխադրութիւնը, և թէ՛ փոխադրեց հասկանալի է, հասկա «ազատ փոխադրեց» ի՞նչ է նշանակում:

Ո՞ւր մնացին այդ հարցերի պատասխանները:

«Սիրելի հերոս» գրքի մասին առաջ բերածները սօ-ֆեստներին միայն յատուկ պատճառքներ են և ոչ յարգանքի ար-

*) «Մշակին» այդ մասին բողոքուել է իր ժամանակին:

Ծանօթ. «Զարկի» խմբ.

ժանի առարկութիւններ բուն քննադատութեան դէմ: Սխալմամբ մարդ կոչուածը, անշուշտ դիտմամբ զխաւոր խնդիրը թողած, երկրորդականների պոչից է կախ ընկել, որպէսզի հասա-րակութեան աչքում զգուելի պասկվիլանտ Շմեղը չքմեղ երևայ:

Ճիշտ է որ «Սիրելի հերոսը» լոյս ընծայելիս շատ ար-գելքներ ու խոչընդոտներ կային, բայց այդ պատճառ է որ մեր աշխարհաբարի անմահ հիմնադրի Հնաշխարհիկ աշխա-տութիւնը իրան սեփականացնի մի մարդ, որի բանուգործը միշտ էլ եղել է, է և, ինչպէս երևում է, պիտի լինի՝ Կան նստել, Մուղուրկան հաջալ *)—զրպարտող թղթակցութիւն-ներ գրել, կամ՝ օտար լեզուի մէջ իրա տգիտութիւնը քօ-ղարկելու մտքով ուրիշների պատրաստի աշխատութիւնները իրան սեփականել, այն էլ լպիրշ պարծենկոտութեամբ և կամ՝ իրան փող չընծայողների վրայ զգուելի պարսաւագրեր—պաս-կվիլներ յերիւրել՝ դադուած փնթի սիրտը մխիթարելու համար:

Թէ այդ ինչ անագին քարագրդոն էր, որ ընկաւ անբարոյականների լճացած—հոտած ուղեղների մէջ, արդէն այդ կարօտ չէ բացատրութեան:

Շաբաթաթերթի նոյն №-ում լոյս տեսաւ նաև հետևեալը.

Կ. Ր Ա. Կ Ա. Ն Բ Ա. Ր Ք Ե Ր Ի Ց

Իէպի Ռուսաստան ճանապարհորդութեանս միջոցին պատահմամբ կարդացի «Մշակ» լրագրի № 208-ում ինձ ան-ծանօթ Ի. Սօջայեանի հետևեալ տարօրինակ նամակ խմբա-գրութեանը՝ Պ. Արբահամ Գիւլխանդանեանին և Հ. Յ. Իաշ-նակցութեան Գանձակում ունեցած գործունէութեան վերա-բերեալ յօդուածս, որ զետեղուած էր «Մշակ» լրագրի 174-րդ համարի մէջ, ետ եմ վերցնում իր ամբողջ բովան-դակութեամբ:

Կարդալով այդ՝ ակամայ միտս եկաւ «մեծամիտ» և

*) Ինքը Ախալքալաք ուսուցիչ, Շուլավերից թղթակցութիւններ էր գրում «Արձագանք»-ին:

«շատախօս» հեքիաթարան Բամալեան Ս.-ի նմանօրինակ գրական տմարդի վարմունքը, որ մի ժամանակ ցոյց տուաւ «Արձագանքի» մէջ: Այդ պարօնը «Միթարիկ» ստորագրու- թեամբ մի շարք յօդուածներով դուրս էր եկել Սիմէօն Պա- ոաւեանի դէմ, դատախիտելով նրա «վաշխառու» և «հասա- րակական փողեր կլանելու» գործունէութիւնը Շուլավէր գիւղում: Պառաւեանը դիմում է դատարանի. նեղ տեղը լը- ծուած Բամալեանն շտապում է նոյն «Արձագանքի» մէջ մի մեղայականով առանց քաշուելու ետ վերցնել իր բոլոր գրած- ները և առանց ամաչելու աւելացնում է ու յայտարարում ի-լուր աշխարհի, թէ այդ «վաշխառուին» և «հառարակա- կան փողեր կլանողին» սիրել է ինքը որպէս հայասէր մարդու, կայն, կայն:

Վերջերս էլ այդ պարօնը սկսել է Աբովեանի, Նազա- րեանի և Ծերենցի գրական վաստակները շահագործել, ինչ- պէս ձիշտ կերպով դիտել էր յարգելի խմբագրութիւնդ «Զարկի» № 1-ի մատենախօսականում: Իսկ դուք մոռացել էք «Սիրտ» անունով գրքի թարգմանութեան մասին բան ասել:

Վերցրել է Փ. Վարդանեանի արդէն պատրաստ թարգ- մանածը և նրանից օգտուել՝ բառերը յետ ու առաջ դասա- ւորելով: Այդ էլ ոչինչ:

«Մշակում» յայտարարել է իրա աշխատութիւնները մա- սին այս վերնագրով՝ «ընտիր ընթերցանելի գրքոյկներ»: Ինքնագովութիւն. թողէք պատմութիւնը և հասարակութիւ- նը գնահատէ:

Եւ այդպիսի բարոյականի տէր մարդիկ են, որ յաւակ- նութիւն են ունենում «սիրոյ» և գրական մաքրութեան մասին խօսելու:

Ողբամ գրեց, Հայոց աշխարհ:

Մտրակ

Իսկ շաբաթաթերթի նոյն №-ի ՓՈՍՏ-ԱՐԿՂ բաժ- նում «Զարկի» խմբագրութիւնը գրել էր.

Թիֆլիզ, Քամալեան Ս.-ին—Ձեր գրական շահատակու- թիւնների մասին մենք գրել էինք «Զարկի» № 1-ում մի մատենախօսական, որից նեղացած դիմել էք «Մշակի» օգ- նութեան:

Այդ փախտական միջոցով ձեզ լաւ չէք յանձնարա- րում հասարակութեան առաջ: Փոխանակ փաստերին պա- տասխանելու, դուք միայն կինտոյաւայել հայհոյում էք: Ձեզ ասում են որ իրաւունք չունէիք և անօրի մեծամտութիւն է ձեր կողմից Նազարեանի, Աբովեանի և Ծերենցի նման առաջնակարգ ու պատկառելի գրողներին ձեզ աշակերտ ըն- դունելը՝ աղաւաղելով նրանց հրաշալի լեզուն ու դարձուածք- ները: Իսկ դուք պատասխանում էք մեզ «ցնդարան» և «խելապակաս» բառերով: «Աստուածաբանի» վայել պատաս- խան:

Այն, պ. Բամալեան, միշտ էլ խելօք մարդիկ ցնդարան և խելապակաս կարող են թուալ միայն յիմարներին ու ազէտ- ների աչքում:

Խնդրի հետ ի՞նչ կապ ունի ձեր մի հայրենակցի խլու- Թիւնը, որ թոյլ էք տուել ակնարկելու առանց քաշուելու: Այնքան է ձեր երեսի արուր վեր եկել, որ ձեզ մարդամէջ գցողներին անգամ դաւաճանում էք: Ամօթ ձեզ: Այդ ձեր արարքը միայն լիտի մարդկանց է յատուկ և լպիւրջների սո- վորական զէնքն է՝ մարդու մարմնական պակասութիւնը երե- սովը տալ: Մակայն ամենից յարգուած պ. Ղ. Աղայեանը ևս այդ կերպ վարուեց, ի՞նչ կարելի է սպասել ամենից անար- գանք և նախատինք վայելողիցդ: Ձեր հայրենակիցը կարող է պարծենալ, քանի-որ իրան գոհել է ընկերին փրկելով:

Եւ հի վ էր «Արձագանքում» ձեր գրածներն ուղղում ու շակում: Միթէ մոռացել էք Աբգար Յովաննիսեանի այն խօսքը, որ շարունակ ասում էր՝—Լեոն-Չան, հետեիք Քա- մալեանի գրածներին, ուղղիր, կրճատիր և աւելորդաբա- նութիւնները զէն գցիր, որովհետև շատախօսութիւնը Քա- մալեանի հոգեհանն է. շատ է յիմար-յիմար դուրս տալիս...

Իսկ հիմա ի՞նչպէս էք արտայայտում ձեր երախտագի- տութիւնը. այն, ամօթ ձեզ:

Եւ այդ արդար զայրոյթով բացականչութիւնն անում են բոլոր նրանք, որոնք միամտութիւն ունէին ձեզ օրինա-ւոր մարդ համարել և պաշտպանել:

Բան ունիք ասելու, դիւզ ասացէք, թէ չէ հայհոյելով դադ չի դուրս գալ, այլ միայն գրանով ձեր գլուխն էք ան- պատվում:

Ձեզ մեղադրում ենք, որ իրաւունք չունէիք Ծերենցի «Սասունցի Յովնան» երկասիրութիւնից օգտուելու, քանի-որ հեղինակն ինքը կենդանութեան ժամանակ այդ գրքի առաջին և երկրորդ հրատարակութեան իրաւունքն արդէն վաճառել է պ. Չաքարիա Գրիգորեանցին և նրանից վարձն ստացել կանխիկ: Սակայն դուք փոխանակ այդ իրաւաբանական տեսակէտը յարգելու, պ. Ա. Մելիք-Աղաբեանին էք դիմել և անշուշտ սխալեցրել: Ախր ինչո՞ւ էք խառնում պ. Մելիք-Աղաբեանի անունը ձեր փնթի անուան հետ: Ծերենցի ստորագրութիւնը մենք անձամբ ենք ստուգել և հաստատ համոզմունք կազմել, իսկ դուք պնդեք ստույգութեամբ հանդէս էք գալիս ամեն իրականութիւն ուրանալով, աշխատելով այդ իրականութեան պատկերը յեղաշրջել և Թարս հասկացնել միամիտներին:

Ինչպէս ասացի յօդուածս մի անագին քարագրողոն էք, որ ընկաւ անբարոյականների լճացած—հոտած ուղեղների մէջ, որոնք ճշմարտութիւնից այնպէս են փախչում, ինչպէս բուէճները ցերեկուայ լոյսից, որոնք կեանքի մէջ շատ կեղտոտութիւնների են լուռականատես և շատ անգամ էլ հէնց իրանք են այդ կեղտոտութիւնների հերոսները, բայց հէնց-որ այդ մասին գրվում է և կամ խօսվում, սարսափով են բռնվում անգղիացի պառաւ օրիորդների պէս: Եւ ճըշմարտութիւնից այդ աստիճան վախենալն է պատճառը, որ շատերը այն կարծիքի էին և են հիմա էլ, թէ հասարակական օգտի տեսակէտից կարելի է և պէտք է մամուլի մէջ երևան հանել ամեն մի արատ և նշաւակութեան սիւնին գամել հասարակական արատաւոր գործչին, այն-ինչ աննօրման—հակաբնական հակման մասին սոց-միայն չի կարելի գրել, առում են այդ յիմար «իմաստունները», այլ և անհրաժեշտ է (?) լուռութիւն պահել: Թէ ինչո՞ւ է այդպէս, երևի այդ գիտեն միայն իրանք աննօրմալ հակուճն ունեցողները:

ըր և մէկ էլ դրանց «համակրողները»: Իսկ ես՝ խիզախս եկայ և «փողոցային» (փիշտ) թերթում ոտնատակ տուին այդ բարացած կարծիքը, այն է՝ որ սողոմական զգուելի ախտի մասին լուռութիւն պահելը, այդ բանի վրայ մատերի արանքով նայելը ուղղակի յանցանք է Ազգիս յոյս մատաղ սերնդի վերաբերմամբ: Նեռակապէս սոց-միայն պէտք է խօսել միշտ, այլ և ամեն յարմար առիթի հրապարակ հանել—մամուլի միջոցով խայտառակութեան անարդ սիւնին գամել այդ տեսակ երկոտանի հրէշներին՝ լինէին դրանք ուսուցիչներ թէ այլ ասպարէզում գործողներ, որպէսզի ամեն անցուղարձ անող զգուանքով ու արհամարհանքով թքնէ այդպէս լիբը մարդկանց անամօթ երեսին:

Սակայն այդպէս չէր մտածում «իրա գեղարուեստի մի տողը քսան Լէօի բոլոր գրածների հետ չըփոխանակող» (?) մեր «գեղարուեստասէր» բանաստեղծ պ. Յար. Թումանեանը, որ Մամուլի, էտիկայի տեսանից, ո՞վ իմանայ, գուցէ նաև ճահճացած ուղեղների տէր մարդկանց կողմից՝ կամայ թէ ակամայ թարգման հանդիսանալով, «Չարկի» խմբագրութեանն ուղղած մի նամակով բողոքում էր «անգեղարուեստ» մերկացումներիս համար: Սակայն չնայելով թախանձանքիս որ տպուի այդ նամակը և հիւրընկալուի նաև իմ պատասխանը, խմբագրութիւնը չկամեցաւ, այլ իրա կողմից ՓՈՍՏ-ԱՐԿՂ բաժնում հետևեալը գրեց.

ԹիՖլիզ. Յարութիւն Թումանեանին.—Ստացանք Ձեր նամակը: Ձեր դիտողութիւնները պ. Լևոն Մելիք-Աղաբեանցի յօդուածի ոճի և ձևի մասին կարգացինք: Հարկաւ, մամուլի մէջ վայելուչ ոճն ու բարեձևութիւնն առաջնակարգ տեղը պիտի բռնեն: Սակայն զարմանում ենք, որ այդ բարեձևութիւնը չէք պահանջում նաև պ. Գամալեանից, որ

Թոյլ էր տուել իրան ծաղրելու ուրիշի մարմնական պակասութիւնը ու այդպիսով առիթ տուել յօղուածագրին զինուելու իրա դէմ:

Հարկաւ խմբագրութիւնը սխալուէր էր, միամտաբար ենթադրելով թէ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի դէմ զինուել եմ խլութիւնս յիշելուն համար: Միևնոյն բանը՝ հարկաւ ոչ միամտաբար, այլ խուլիգանաբար գրել է նաև գրական պոռնիկը իր անփառունակ պատկիլի - բրօշուրի մէջ. մինչդեռ ամեն առիթի ասել եմ իրա Busenkamerad-ներին, որ մերկացումներս պատճառը այդ չէ, նոյնիսկ յօղուածիս մէջ էլ պարզ ակնարկել եմ, որ ես չեմ վիրաւորուել խուլ բառից, — քանի-որ խլութիւնս ինձ պատիւ է բերում, վասնզի եթէ ես իմ կեանքս վտանգի չենթարկէի, բազմամդամ ընտանիքի տէր մտերիմ ընկերս կուր պիտի գնար անգութ մահուան, — այլ զինուել եմ «խուլերի ճաշակը հաշուի չեմ առնում» խօսքի համար. որովհետև յատկապէս այդ ճաշակի շնորհիւ է ինքը՝ Քամալեանցը իրա էջ տեղովը մարդամէջ մտել: Հապա այդ ինչպէս է որ իմացել է «տներում իրան բամբասելով ման գալս», իսկ այդ մասին ոչինչ չի իմացել. ինչն պէտք է վերագրել այդ անգիտութիւնը, եթէ ոչ՝ չակերտաւոր մանկավարժի գրական խուլիգանութեան և կամ իրա «բարեկամների» անսխիտանութեան և տխմարութեան:

Շատ ու շատ անգամ եմ ասել, նոյնը այստեղ նորից կրկնում եմ. խլութիւնս՝ ճիշտ է, դժբաղդութիւն է, ինչպէս պատերազմի մէջ իրա ընկերին անխուսափելի մահից ազատող պարտաճանաչ քաջ զինուորի կոնստութիւնը կամ ոտից զրկուած լինելը, բայց նոյնկերպ էլ պատիւ է, որով միշտ պէտք է պարծենամ:

Ասել հարկաւոր է որ հասարակութեան վարք ու բարքի վրայ հսկելու կոչուած սրբազան պաշտօնեան — մեր՝ մժեղները բամոդ, ուղտը կլանող մամուլը գալարէական պապանձումն պահեց մերկացումներս վերաբերմամբ, փոխանակ իր որոշ, ազգու և գրական կարծիքը յայտնելու, որպէսզի այդ լուութիւնից խրախուսուած սոգոմեցի հրէջ «մանկա... վարժը» խուլիգանութեամբ նորից չսխալեցնէր, կրկին չխաբէր հասարակութեանը:

Մամուլը նոյն դատապարտելի լուութիւնը պահեց նաև գրական խաբեբայի պատկիլի-բրօշուրի վերաբերմամբ. մինչդեռ անհրաժեշտ էր որ իր հեղինակաւոր ու սաստող ձայնը բարձրացնէր, առակ-նշանակի շինէր, անարգանքի սիւնին գամէր ինքնիրան «25 տարուայ գրող» անուանողին, որ թէ մարդկային ու Աստուածային օրէնքների դէմ էր գնացել իր ողջ կեանքում և թէ մամուլին միշտ արատ բերել, իսկ հիմա էլ յանդգնել էր մասնաւոր նամակներ տպել առանց իրաւունքի և փորձ արել՝ յարգելի հանգուցեալների յաւիտենական նինջը վրդովելու...

Եթէ մամուլը միշտ լուութիւն պահէ այդպիսի և նման անագնիւ ու անվայել արարքների մասին, հապա ո՞վ պէտք է հասկացնի հասարակութեանը թէ ինչն է վայել և ինչն անվայել, ինչն է ներելի և թոյլատրելի և ինչը աններելի և միանգամայն անթոյլատրելի: Գուցէ մեր մամուլի կարծիքով այդպիսի բաները այնքան էլ նշանակութիւն չունին դժբաղդ Ազգիս համար, որովհետև մեզանում, մեր մէջ են պատահում. այլ անհրաժեշտ է որ պատահածը — շնութիւն թէ այլ բան — եւրոպայում լինի տեղի ունեցած, որպէսզի մեր մամուլը իրա պարտքը կատարի — երկար խորհրդածութիւններ անէ, առաջնորդողներ գրի և կամ եւրոպա-

կան որևէ քաղաքում կայացած ժողովուրդի մանրամասն նկարագիրն ու խօսեցած ճառերը թարգմանաբար տայ Աբարանի, Լօռուայ, Չանգեղուրի, Շուշուայ և այլ տեղերի խեղճ ու կրակ գիւղացիներին:

Սակայն թէև մամուլը լռութիւն պահեց, բայց հասարակութեան բարեմիտ մասը բոլորովին այլ կերպ վերաբերուեց. էլ հանգստութիւն չունէի. ամեն կողմից հարցակոծ էին անում (հարկաւ ոչ Նոր-Նախիջևանի «քնքշասիրտ» փոխանորդ Մուշէ վարդապետի նման և կամ ճեմարանաւարտ քահանայացու եզուխտ սարկաւազի ու այլ փչացածների պէս):

— Մի՞թէ գրածներդ ճիշտ են. այդ սարսափելի է, Լևոն:

— Այո, ճիշտ են, քոյրիկ, և համաձայն եմ հետդ, որ սարսափելի է:

— Լևոն, չե՞ս վախենում դատարանից:

— Ուզածս էլ հէնց դատարանն է, սիրելիս, էլ ինչո՞ւ պիտի վախենամ:

— Պ. Լևոն, եթէ այդ բանը գիտէիք, հապա ինչո՞ւ մինչև հիմա լուռ էիք մնում:

— Վասնզի այդպիսի մեղադրութիւններով անմիջապէս հրապարակ դուրս գալու համար պէտք է լինել խելագար, որովհետև լոկ գիտենալը բաւական չէ. իսկ երբինչ-որ հարկաւոր էր հրապարակելու համար, նոյնիսկ առանց իմ աշխատութեան ժողովուրդ էր, յարմար առիթ ու յարգելի շարժառիթ չէր պատահում: Հասկանալի է, յարգելի տիկին:

— Այո, հիմա հասկանում եմ. ներքե՛ք, որ ես ևս ուրիշների նման մեղադրում էի ձեզ մինչև այժմ լռութիւն պահպանելուդ համար:

Եւ մի բան սաստիկ աչքի էր ընկնում. ովքեր անբարոյական էին և այդ իրանց անբարոյականութեան

համար չէին զղջում, կամ որևէ բանով խիղճները մաքուր չէր, ուստի և դողում էին իրանց համար և կամ որոնք պատիւ ասուած սրբազան գանձի մասին շատ թիւր հասկացողութիւն ունէին, դրանք ամենքը ևս սկսեցին խեթ աչքով նայել վրաս՝ մեղադրելով ինձ որ էտիկայի, Գեղարուեստի դէմ եմ գնում, Մամուլի վարկն եմ գցում և այլ մեծահնչիւն բառերով կամենալով մերկացումներիս արժէքը պակասացնել:

Սակայն գո՛ւր ջանք, անօգնւտ վաստակ. վասնզի այդ խաւարասէր բուերի ու կռանչող ագռաւների հակառակ՝ ովքեր բարոյապէս մաքուր էին մնացել, ովքեր իրանց արած մարդկային սխալների համար սրտանց զղջացել էին և հիմա շարունակում էին մաքուր կեանք վարելով ապրել, նոյնիսկ բարի օրինակ հանգիստանալ ուրիշներին, դրանք ամենքը շարունակ ծափահարում էին ինձ և բացականչում:

— Ապրիս, Լևոն-ջան:

— Կեցցես, քաջդ Լևոն:

— Սիրելի Լևոն, լաւ գիտենաս, որ այդպիսի համարձակ մեղադրութիւններով հրապարակ դուրս գալու համար բարոյական մեծ ընթացք էր պէտք. միայն ափսոս, որ ազատութիւնդ գուցէ վտանգի ենթարկուի, վասնզի հօ չի՞ կարելի թոյլ տալ, թէ սխալմամբ մ'արդ կոչուած Քամալեանց հրէշը այնքան պատուազուրկ լինի, որ լռութեամբ տանի այդ ամենը և միայն անմիտ բացատրութիւններ տայ սրան-նրան, կամ մանկավարժ. ժողովուրդում և կամ պասկիլի-բրօշիւրներ հրատարակելով բաւականանայ, որովհետև այդպիսով ինքն իրան միայն ծաղրի ու արհամարհանքի առարկայ կը դարձնի: Անշուշտ եմ որ նա կը գիմէ դատարանին:

— Թէկո՞ւզ թո՞ղ դիմէ իրա մեծ-պապ Սաթայէ-

լին, կամ իր շատ մօտիկ ազգական Բենդեբուդին: Ինչպէս երևում է, ներեցէք պարզախօսութեանս, միքիչ վարակուել էք բարոյականութեան հետ «կոմպրոմիսս» անող բարեկամներին և միամտաբար թէ նրանց պէս անմտաբար ենթադրում էք՝ լինելով ցասկոտ բնոյթի տէր, կրքի ազդեցութեան տակ այնքան կուրացած կը լինիմ, որ կարող եմ ինձ թոյլ տալ՝ ինչպէս անում է գրական խուլիգանը, լոկ փնթի վրէժխնդրութեան զգացմունքիս յագուրդ տալու նպատակով՝ ստերով, կեղծիքներով, իրողութիւնները խեղաթիւրելով հրապարակ դուրս գալ միշտ յարգածս մամուլի մէջ: Եթէ ճիշտ է դիտողութիւնս, ապա ուրեմն պէտք է ասեմ, որ դուք չարաչար սխալվում էք, յարգելի բարեկամես այն կաթը չեմ ծծել, որ ինձ թոյլ տամ այդպիսի անազնութիւն անելու. բացի դրանից ես դեռ միամտութիւն ունիմ ամենքին բարոյապէս մաքրուել ստիպող մամուլը՝ բոլոր եկեղեցական սրբերից էլ սուրբ համարելու:

«Չարկի» հետևեալ № 4-րդը փոխանակ մի՛ լոյս տեսաւ երկու շաբաթից յետոյ. հետևապէս թէ ինքը՝ սխալմամբ մարդ կոչուածը, թէ «լուռ մնալ և իր «սիրած» դպրոցի պատուի ոտնահարուելը տանել չկարողացող» «նախկին աշակերտները» և թէ իրա բարեկամ Խուստի-բէգերն ու իսկական Busenkameradները բաւական ժամանակ ունէին իրանց տրամադրութեան տակ, ինչո՞ւ հրապարակ չեկան, ինչո՞ւ մեղադրութիւններու գէ՛մ փաստացի հերքումներ չգրեցին. երևի այդ այնքան էլ հեշտ չէր, ինչպէս-որ խելօք երևալու համար տակից-գլխից սարսաղ-սարսաղ դուրս տալը:

Կամ ինչո՞ւ դրանք՝ եթէ իրաւ ճշմարիտ բարե-

կամ են, խորհուրդ չտուին դատարանին դիմելու: Հետևապէս, ինչպէս ասուեց, խեղճ աշակերտների վզին զօռով այդպիսի բաներ փաթաթելը գրական խուլիգանի կողմից՝ ինչպէս լաւ ասաց պ. Վախ. Մեհրաբեանը, ուղղակի շանտաժիստութիւն է:

Սխալմամբ մ'արդ կոչուածը ոչ մի տեղից պաշտպանութիւն չգտնելով, ճարը կտրուած սկսեց իր բննատուր ձիւղքին դիմել, այն է՝ ամեն տեղ վրաս հաջալ ու ոռնալ, իրան թոյլ տալով այնպիսի ստորութիւններ, այնպիսի գծուծ, միայն մարդուկներին վայել և երբէք տեղի չունեցած իրողութիւններով էր պարծեցել իրա Busenkamerad Խուստի-բէգի տանը, որ համբուրութիւնից ելած՝ յօդուածիս II-րդ մասը՝ որ ինքնաբերաբար բաւականին մեղմացրել էի, հիմնովին փոփոխութեան ենթարկեցի, որ ստորև առաջ եմ բերում:

II

ՍԽԱԼՄԱՄԲ Մ Ա Ր Դ ԿՈՉՈՒՄԸ

Յարգս յարգեցաց, պատիւ արժանաւորաց:
Ժողովրդ. ասացուած:

Այդ պատկաւիւնստ Քամալիանց Ս. գրում է թէ գրաբըննիչը հանել էր Խ. Արովան բառերը: Անշուշտ շատ վատ էր արել, որ հանել էր. սակայն ի՞նչ արած՝ այդ նրա իրաւունքն էր ի-պաշտօնէ: Բայց ինքն ի՞նչ իրաւունքով հանած բառերի փոխարէն իրա անունը դրաւ. շատ, շատ՝ միայն կարող էր գրել՝ հրատարակեց սխալմամբ մարդ կոչուածը:

Սակայն այդ մի կողմը մնայ: Զէ-որ այդ գրական խուլիգանի սև-երեսը սպիտակացնող վերոյիշեալ բոլոր խոչընդոտները արդէն վերացած էին, երբ լոյս էր հանում անմոռանալի—ձշմարիտ հայ-հեղինակ Ծերենցի՝ հայ-մարդու իսկական աւետարանը—«Երկունք Թ Դարու»-ն. հապա ինչո՞ւ գրքի ճակատին Ծերենց սիրեցեալ անունը չի դրուած, այլ լիբր «կազմողի» կտրուելու անունը: Այդ սրբապղծութիւ-

նը կատարելու իրաւունքը ո՞վ տւաւ նրան. մի՞թէ յարգելի պ. Ադ. Մելիք-Ազարեանցը. բայց ո՞չ նա և ոչ էլ իրա ազ- ջիկները այդ իրաւունքը չունին՝ ո՞չ բարոյական և ոչ իրա- ւական տեսակէտով:

Ծուռը ճանապարհով, քծնելով, եզուխտի խորաման- կութիւն բանացնելով ամեն մի շուն ու գէլ կարող է այս կամ այն յարգուած հեղինակի աշխատութիւնը շահագործու- թեան միջոց շինել, ինչպէս-որ արել է պասկվիլանտ կրօ- նուսոյցը՝ Ստ. Նազարեանի, Խ. Աբովեանի, Ծերենցի և մօ- տերս էլ Փիլ. Վարդանեանի պատրաստի ընտիր գրքերը ի- րան սեպհականելով *). բայց միմիայն հեղինակին պատկա- նած փառք ու պատուից մի նշանախեցի չափ անգամ ո՞չ-որ իրաւունք չունի տալու ոչ-որի, առաւել ևս՝ Կան նստող Մու- տուրկան հաջողին—զրպարտիչ թղթակցութիւններ գրող պասկվիլանտ կրօնուսոյցին:

Ո՞չ թայֆայութիւն անողի, այլ ճշմարիտ գրական մարդու աչքում քանի գոռշի արժէք կարող է ունենալ այն անբարտաւան, լպիրշ պարծենկոտութեամբ գրած անհամեստ յառաջարկները, որ պասկվիլանտ կրօնուսոյցը սիրում է կպցնել խուլիգանութեամբ իւրացրած գրքերի սկզբին, որ- պէսպի իրանմանակ խելահամների աչքին թող փչէ՝ լեզուական տգիտութիւնը ծածկելու նպատակով: Մածուն չի, թան չի, գերմաներէնից օրինաւոր ու կարգին թարգմանելը ամեն մար- դու բան չի:

Քանիցս անգամ շեշտուել է մեր մամուլի մէջ, թէ յի- մարութիւն է և վերին աստիճանի քմահաճ ու բռնազրօսիկ բան՝ Արևելեան բարբառը Արևմտեանի և Արևմտեանը Արև- ւելեանի վերածելը, քանի-որ ամենքիս բուն տենչանքն է այդ երկու բարբառները միացած կամ գոնէ շատ մօտեցած տեսնել. մինչդեռ այդ վերածումները միմիայն դանդաղե- ցնում են միութեան կամ մերձեցման ցանկալի գործը:

Արդ՝ մեր ունեցած սահմանափակ թուով ընտիր գրքե- րից մինը, այն էլ ամենալաւը՝ հայ-մարդու բնիկ աւետա- րանը ինչո՞ւ չնպաստէր, այլ արդեւք հանդիսանար մի բա-

*) Տեսնենք այսուհետև յափշտակուելու հերթը հեղինակների կամ թարգմանիչների նր աշխատութեանն է գալու:

նի, որ իւրաքանչիւր մտածող հայի կէտ-նպատակն է եղել, է և պէտք է լինի՝ Ազգիս մտաւոր յառաջադիմութեան գոր- ծը աւելի յաջող կերպով առաջ տանելու և աւելի մեծ ար- դիւնք ստանալու համար:

Անմոռաց Ծերենցի սրտի ամենաքնքուշ ու սրբազան լարերից հիւսած ձօնը ի՞նչ իրաւունքով է ապիկար ու ապի- րատ «կազմողը» վերցրել և՛ համարեա նոյն ձօնի բառերով ու մտքով իրբև սեպհականութիւն իրա կողմից ընծայել տիկին Մելիք-Ազարեանի յիշատակին: Այո՛, ի՞նչ իրաւունքով:

Ձէ՞-որ պասկվիլանտ կրօնուսոյց Շմեղը եթէ գրական խուլիգան չէ, հաղա ուրեմն պէտք է, ո՞չ, այդ քիչ է՝ պար- տաւոր էր իմանալու, որ մէկի սեպհականութիւնը չի կարելի վերցնել և ընծայել սեպհականատիրոջ:

Հանգուցեալ Թագուհի Մելիք-Ազարեանը «Երկունք Թ Դարու»-ն արդէն նուէր էր ստացել իրա հարազատից նրա կենդան ժամանակ, երբ դեռ ինքը օրիորդ Մենիկ էր:

Արդեօք սրտեղ, սր երկրում և կամ սր աշխարհում է ըն- դունուած այդպիսի բաշխուղուկութիւն, այդպիսի աններելի սրբապղծութիւն, որ գրական գողութիւնից ու յափշտակու- թիւնից անգամ գղուելի է և անփառունակ:

Սակայն ձայն-ձայտուն հանեց մեր մամուլը, արդեօք իրա էջերում անզգամին ըմբերանելու փորձ արա՞ւ. հար- կաւ ո՞չ:

Դէ, էլ ի՞նչպէս չասեմ նորից՝ թիւհ... մեր մամուլի նամուսին: Եթէ այդ մամուլը իր բարոյական, իր իսկական կոչման բարձրութեան վրայ կանգնած լինէր, մի՞թէ կը լուէր այդպիսի անպատուարեր երևոյթների հանդէպ՝ թոյլ տալով որ անզգամները իրանց անզգամութիւնները աւելացնեն միայն:

Երբ լիրբ ու անամօթ մարդու երեսին թքում են, նա ո՞չ-միայն չի վիրաւորվում, այլ դեռ Աստուծոն էլ փառք է տալիս, որ վերից ցօղում է ու ապա հանգիստ կերպով փչ- շովը սրբում է երեսի թուրը: Կէտ-առ-կէտ նոյն բանն է անում նաև սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ա.-ը:

Պ. Չաք. Գրիգորեանը *) իրա իսկ գրախանութում

*) Տիկին Նադիրեանին համոզողներից մէկն էլ դա էր՝ սխալմամբ «մարդ» կոչուածին արտասահման ուղարկելու:

պ. պ. Միք. Սալամբէկեանի և Ղազ. Կարապետեանի ներկայ-
 ութեամբ յայտնում է սխալմամբ մարդ կոչուածին, որ ինքը
 Ծերենցից ստորագրութիւն ունի առած, որով նրա «Երկունք
 Թ Դարու» գրքի բացի Առաջին տպագրութիւնից, որ դեռ
 չի սպառուած, իրան է վերապահուած նաև Բ-րդ տպագրու-
 թեան իրաւունքը, որի համար ինքը կանխիկ դրամ է վճարել
 հանգուցեալ հեղինակին. ուստի-և զայրացած յանդիմանում է,
 կծու-կծու խօսքերով նախատում, նրա մտադրումիւնը տմարդի կոչում,
 և այլն, և այլն:

Իսկ միայն ստուծիւններ, զրպարտութիւններ ու պասկ-
 վիճներ գրելու սովոր կրօնուսոյցը իր սեպհական ականջնե-
 րով լսած այդ բոլոր նախատինքերը կուլ է տալիս և առանց
 կարմրելու գրում՝ «Աշխատանքս վերջացած էր, երբ (բնւ
 լսեցէք) պատահմամբ լսեցի թէ պ. Զաք. Գրիգորեանը պրե-
 տենզիաներ է յայտնում»:

Ընթերցող, համեմատեցէք վերի ընդգծածս խօսքերը և
 ասացէք՝ այլևս պէտք է որևէ բացատրութիւն:

Բայց որպէս-թէ այդ անամօթ սուտը քիչ է, մի ուրիշ՝
 առաջին ստից աւելի ամօթալի սուտ էլ է աւելացրել, գրելով.

«Սովորաբար գրքերի ճակատին լինում են հրատարա-
 կող անձանց կամ հաստատութիւնների անունները: Այդպէս
 ոչ մի նշան չկար յիշեալ գրքի կազմի վրայ»:

Այդ մի այնպիսի լիբբ սուտ է, որին ընդունակ է զըր-
 պարտիչ թղթակցութիւններ գրող Մխիթարիկը, պասկվի-
 ւանտ Շմեղը, սխալմամբ մարդ կոչուած կրօնուսոյցը: Վասն-
 զի «Երկունք Թ Դարու» գրքի կազմի վրայ՝ հրատարակիչ-
 ների սիրած շղատառերով տպուած է երկու տող՝ Հրատա-
 րակութիւն Զաք. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավածառանոցի:

Ցերեկուայ լսի պէս պարզ է, թէ այդ սխալմամբ մարդ
 կոչուածը ինչ ստոր, ինչ վայիս միջոցների պէտք է լինի դի-
 մած՝ պ. Աղ. Մելիք-Ազարեանից իրաւունք կորզելու
 համար:

Այն-ինչ եթէ եղածը չեղած չցոյց տար, այլ պ. Զաք.
 Գրիգորեանի ասածները ճշտութեամբ անդրադարձնէր և ըստ
 ամենայնի իրազեկ արած լինէր պ. Մելիք-Ազարեանցին,
 կասկածից դուրս է, որ նա գոնէ քիչ էլ է կը յարգէր այն ստո-
 րագրութիւնը, որ տուել է իրանից շատ յարգուած հանգուցեալը:

Յամենայն դէպս՝ անկարելի բան է որ պ. Մելիք-Ազա-
 րեանցը իրան թոյլ տար այնպիսի իրաւունք տալու, որ նաև
 նշանակէր՝ ազատ էք ջնջելու աներոջս սիրտ խշխշացնող
 ձօնը և նրա իսկ բառերով, կամ թէկուզ աղաւաղուած՝ ձեք
 կողմից նուիրարերել հանգ. ամուսնուս յիշատակին:

Ո՛ւու... Աստուած իմ. ինչ անտանելի ծանր, սրքան
 սրտմաշուկ բան է, երբ մարդ ստիպուած է յարգելի ու
 խնկելի անձանց հոյակապ անունների հետ միաժամանակ
 ոչ-միայն յիշել, այլև գրի առնել միմիայն զգուանք ու
 նողկանքի զգացմունք յարուցանողի անունը:

Արհամարհանքիս թնւքը այդ ինձ անելու բռնադատո-
 զի անամօթ երեսին:

Սրտի անհուն կսկիծով զգում եմ որ սխալմամբ մարդ
 կոչուածի մասին գրելով՝ ինքս ինձ եմ անարգած լինում-
 վանդի դա այն տեսակ արարածներից է, որոնց անունը լոկ ար-
 տասանելն անգամ անարգանք ու անպատուութիւն է արտա-
 սանողի համար, ուր մնաց թէ գրի առնելը:

Այդ զրպարտիչ թղթակցութիւններ կազմողը, այդ
 պասկվիւանտ կրօնուսոյցը՝ իմ շնորհիւ, իմ ջանք ու աշխա-
 տանքով է իսկապէս մարդամէջ մտել ոչ-մարդ տեղովը,—
 վկայ ասածիս մեր ծանօթները, Յովն. դպ. վարժապետ-վար-
 ժուէիները իրանց տեսուչ պ. Փիլ. Վարդանեանի հետ.— իմ
 ճաշակիս շնորհիւ է առաջ գնացել, իմ խորհուրդներիս շնոր-
 հիւ է, որ թէև խեցգետինից էլ ստոր կենդանի է, բայց
 ձուկ է դարձել և հիմա վեր է կացել գրում՝ խուլերի *)
 ճաշակը հաշուի չեմ առնում»: (Անպատկան, երախտամոն
 արարած):

Այդ՝ միայն արտաքինով մարդանմանը մօտ 19—20
 կտոր մեծ ու փոքր գրքեր է լոյս ընծայել. դրանցից շատը
 իմ ձեռքի տակովն են անցել—ես եմ սրբագրել ու կոկել

*) Թող ընթերցողը «Մշակի» խմբագրութեան նման միամտաբար
 չխաբուի այդ բառի յոգնակի ձևից—ընդհանուր միտք ունենալուց. այդ-
 պէս գրել է երկիւղից—վատերը միշտ երկչոտ են լինում—այն, այդ խո-
 րամանկութեանն է դիմել, որ ծանօթները ուղղակի երեսին չթքեն, մինչ-
 դեռ բերանացի անունն է տալիս և «իբ բնատուր շնորհքը՝ գործ գնում—
 վրաս հաջում: Ասածիս վկայ շուրվերցի Գ. Ա.-ը և ուրիշ յարգելի
 անձինք:

լեզուն, ահագին կտորներ, նոյնիսկ երեսներ եմ ջնջել գրածից, շատ անգամ տեղը ուրիշը գրելով, հակասութիւնները վերացնելով, որ ներքին կապը աւելի սերտանայ, աւելորդ նիւթին չվերաբերող տիրացուական տափակ դատողութիւնները միշտ դուրս եմ գցել, որի համար «Արձագանքի» հանգ. խմբագիր Արգ. Յովհաննիսեանը իրա գոհունակութիւնն էր յայտնում և բուկը բռնած խնդրում, որ համբերող լինիմ գրա գլուխ տանող շատախօսութեան համար, կայլն, կայլն, իսկ ինքը ամեն անգամ շնորհակալութիւն էր յայտնում ինձ. բայց հիմա անամօթ մարդու պրտկերեսութեամբ չի քաշուել գրելու «խուլերի ճաշակը հաշուի չեմ առնում», և այդ միայն նրա համար, որ ոտքս պոչին գրի և փառաւոր սեղմեցի:

Դա ևս անկարող լինելով կշիռ ունեցող սրէէ փաստ հանել գրածիս դէմ, ցանկացաւ յարգելի պ. Ա. Աղայեանի նման, առանց ամաչելու, մարմնական պակասութիւնս յիշել: Սակայն այս անգամ ևս չեմ ծանրանալ այդ կէտի վրայ, այլ կրկին կը թողնեմ հասարակութեան, որ նա ինքը գնահատի և անուն յատկացնի այդ անանուն վարմունքին:

Միայն այսքանը կ'ասեմ, որ հազար անգամ լաւ կը համարեմ խլութեանս հետ զոյգ աչով էլ կոյր լինել, ամենաանճաշակը յորջորջուել բարեկամներին, ծանօթներին շքրջանում, միայն-թէ, այն, միայն-թէ չլինիմ սխալմամբ մարդ կոչուածի նման լսող ու տեսնող, մանաւանդ նրա նման, նրա պէս «ձաշակաւոր»—թողի ամպի մէջ (անմեղ աշակերտներին) «սեղանների երկար սրբել սովորեցնող»...

Աշխարհներ տեսած և միքանի օտար լեզուների հիմնովին տեղեակ մի ապահով ու յարգելի անձն իմ ամենամօտ ընկեր-բարեկամիս—Մին. Չմշկեանին հետեանքն էր ասել.

- Ո՞վ է այդ Լևոն Մելիք-Աղամեանցը:
- Իմ ամենալաւ ընկերս ու բարեկամս:
- Ա՛յ բալամ, ի՞նչ սարսափելի բարեկամ ես ունեցել. գրա տունը շինուի, այդպէս էլ կ'ծու լեզու... Թէ հայերէն և թէ ուրիշ վեց լեզուով շարունակ կարդացել եմ ու կարդում եմ ամեն օր, բայց այդպիսի

խիստ, այդպիսի սպանիչ բան դեռ չեմ կարդացած ոչ մի լեզուով: «Մխարմամբ մ'արդ կոչուած»... հէնց մենակ այդ վերնագրի մէջ ասուած է ամեն բան, այն, ամեն բան: Ո՛րքան յիմար պէտք է լինի այդ Բամալեանը, որ չի կարողացել հասկանալ թէ ում է գրիւում իրա դէմ: «Զարկի» խմբագիրը en toutes lettres—իր ամբողջ ստորագրութեամբ քննադատել էր այդ յիմարի գրքերը, նա պէտք է կամ լուէր, որ շատ աւելի խելօքութիւն արած կը լինէր, և կամ պէտք է կարգին պատասխանէր և ոչ թէ միայն հայհոյելով բաւականար, ինչպէս որ արել էր «Մշակի» մէջ: Բայց այն անխելքը կարծես հայհոյելն էլ քիչ համարելով, ամեն երկրի մամուլի մէջ ընդունուած կանոնների հակառակ նա իրան թոյլ էր տուել յիշելու մարմնական պակասութիւնը մի մարդու, որ խնդրի հետ ամենեւին կապ չունի, հետեապէս նրա մարմնական պակասութիւնը աւելի ևս կապ չէր կարող ունենալ: Մի գրագէտի կողմից շատ ստոր վարմունք է այդ: Զարմանալի է թէ «Մշակը» ինչո՞ւ էր տպել: Մախլաս: Միւրելի Սինաքսար, եթէ այդ Բամալեանցը, կամ աւելի լաւ է բարեկամիդ պէս ես ևս ասեմ՝ եթէ այդ սխալմամբ մ'արդ կոչուածը ամենաչնչին, մանանեխի մի հատի չափ իսկ պատուոյ զգացմունք ունի, նա պէտք է կամ անմիջապէս դատարանին դիմէ անհերքելի փաստերը ձեռքին և կամ գլուխն առնի-կորչի մի այնպիսի տեղ, ուր չկարողանայ հանգիպել այդ քո սարսափելի բարեկամի սարսափելի յօդուածը կարդացողներին ոչ-ոքի:

Սակայն սխալմամբ մ'արդ կոչուածը այդքան պատուազգած չէր, և նա ոչ մէկն արաւ, ոչ էլ միւսը, այլ բաւականացաւ միայն վրաս լուսնահաջ տալով: Ապա սկսեց նամակներ տեղալ գիւղ՝ «ուսուցիչ» եղ-

բօրը, նախկին «սիրելի» աշակերտներին ու իրա նմաններին, որ մի կերպ պաշտպանեն իրան, այլապէս կը վռնդուի ներս. Դպրանոցից: Սակայն ոչ իրանմանակ եղբօր ջանքը և ոչ էլ միւսների աշխատանքը արդիւնք չտուին:

Ի պատիւ Շուլավէրու երիտասարդութեան պէտք է ասեմ, որ շատ անտարբեր գտնուեցին դէպի իրանց նախկին ոչ-բարով վարժապետի կլանչոցները—աղերսանքները, նոյնիսկ ուրախացան, որ իրանց ուղիղ ճանապարհից հանողն այդպէս արգարացի կերպով խայտառակութեան սիւնին էր գամվում հրապարակով և այդ անողն էլ իրանցից սրտանց սիրուած ու յարգուած համազիւղացին էր, որից երբէք վատ բան չեն տեսել, չեն տեսնում և ոչ էլ լսել են երբևիցէ:

Պ. Յ. Թում. շատ էր աշխատել (թէ ինչո՞ւ, այդ իմանալու համար պէտք է բարոյագէտներին հարցնել), արիւն-քրտինք մտած շատ ճիշտ էր թափել, որ յօդուածիս երկրորդ մասը—յատկապէս այդպիսի շարունակութիւնը չտպուէր, բայց ամեն անգամ խրմբագրից մերժումն էր ստացել: Սակայն նա չէր յուսահատուել, այլ մի աւելի լաւ նպատակի հասնելու արժանի եռանդով նորից ու նորից ամեն հնար գործ էր դնում, որ զոնէ մնացածը—III-րդ մասը չտպուի: Խնդիրն ահա այդ դրութեան մէջ էր, երբ պ. Թումանեանի բողոքից Թիֆլիզ եկաւ պ. Վ. Մեհրաբեանը, որ ինչպէս գրում է պ. Բալ.-ը, «գահագով» գնալով խմբագրատուն՝ կարծէք պ. Թումանեանին օգնութեան, «բուկը բռնած խնդրել, պաղատել էր», որ սխալմամբ մարդ կոչուածի դէմ գրածիս շարունակութիւնը չտպուի:

«Ահա թէ ինչ էր ասում նա» (Մեհ.), գրում է պ.

Գր. Բալասանեանը իր նորերս հրատարակած «Հեռու փախիր գրական խուլիզանից» գրքոյկում.

—«Քամ.-ին սաղ-սաղ մեռցրել էք: Ամօթից (միթէ ք. էլ ամօթ ունի) տնից չի դուրս գալիս, ընկեր-ուսուցիչները և աշակերտները երես են թեքել նրանից, ուսումնարան (Ներս. Դպրանոց) չի յաճախում այլևս դասաւանդելու, հիւանդ տանը պառկած հազում է և արիւն թքում. այդ բաւական համարեցէք և խնդրում եմ վերջ տաք նրա դէմ զբուծիւններին»:

«Ես չէի հաւատում,—շարունակում է Բալ.-ը.—եկան և միքանի պարոններ, նոյնը կրկնեցին. էլի դժուարանում էի հաւատալ, մինչև որ աչքովս տեսայ Բ.-ի զրաւոր մեղայականը իր մի ծանօթին գրած, որի մէջ յայտնել էր նա, թէ քիչ է մնում անձնասպանութեան դիմէ. նոր հաւատացի»: (Էջ 7 և 8):

Ես անտեղեակ այդ ամեն անցած-դարձածին, մի երեկոյ մտնում եմ «Զարկի» խմբագրատուն, ուր խմբագիրը, Թումանեանը և Մեհրաբեանը խիստ տաք-տաք խօսում էին: Զրոյցի առարկան իմ յօդուածն էր: Բալասանեանի խօսքերից հասկացայ, որ Թումանեանի նոր դաշնակիցը թարմ ուժերով կուռի մէջ մտնելով՝ այնքան մօտ են յաղթութիւնը շահելու, որ այլևս զուր էր ճակատամարտը շարունակելը, ուստի գայրոյթով նկատեցի.

—Բարի, բարի... խնդրեմ վերադարձնես յօդուածը:

—Ինչ եղել, եղել է. բաւական համարեցէք այդքանը, նկատեց պ. Թում.-ը:

Միւս կողմից էլ պ. Մեհրաբեանը վրայ բերաւ.

—Լևոն, ախր դու այն մարդուն...

—Մարդ ցաւի դայ ու Աստու կրակի,—ընդհատեցի նրա խօսքը.—նա մարդ չէ, այլ սխալմամբ է մարդ կոչվում. նա շուն է և այն՝ քոսոտ-շուն:

—Դեռ սպասիր խօսքս վերջացնեմ. դու նրան

կենդան գերեզմանի մէջ ես դրել, միթէ այդքանը հերիք չէ:

—Նախ՝ հերիք չէ: Երկրորդ՝ թէ ուզում էք որ ձեր ուզածը լինի, թող ձեր երկսի պաշտպանեալը «Մշակի» մէջ տպել տայ այսպէս՝ «Իմ ոչ-բարով բացատրական նամակիս մէջ թիւրիմացութեամբ է մըտել խոսկրի ծաշակը հաշուի շեմ առնում խօսքը, ուստի և սրանով յետ եմ վերցնում»: Եթէ նա այդ խօսքը անսպասելաբար գրած չլինէր, կամ գոնէ գրելուց յետոյ շան նման չհաջար վրաս, չէին լինիլ նաև մերկացումներս:

—Ո՛չ, նա այդ չի անիլ,—նկատեց պ. Թումանյանը:

—Ինչո՞ւ չի անիլ. ի՞նչ մի դժուար բան է նրա նման լինը գրագէտի համար ստեր, կեղծիքներ, անազնիւ զրպարտութիւններ յերիւրելը, միայն գրական պոռնիկին վայել անամօթութեամբ գրածներն ուրանալ և յետոյ էլ տեսակ-տեսակ և աւելի ստորացուցիչ մեղայականներ գրելը և նոյնիսկ առանց ամաչելու ուրիշների կազմած մեղայականների տակը իր կտրուելու անունը դնել ու հրատարակելը:

—Ո՛չ, այդպէս մեղայական գրելը շատ դժուար է, վրայ բերաւ պ. Մեհրաբեանը:

—Իսկ անմեղ աշակերտներին պղծելը շատ հեշտ է, այնպէս չէ,—նկատեցի ես զգուանքով:—Բայց եթէ նա չգրի այդ մեղայականը, ես պատասխանատու չեմ լինիլ հետևանքի մասին...

Թ՛վում է թէ ընդգծածս խօսքը պ. Մեհրաբեանը հասցրել է սխալմամբ մարդ կոչուածի ականջին. բայց այդ մասին միբիչ վարը:

Դերասանուհի տ. Օլգա Մայսուրեանի՝ մի փոքրիշատէ բարեկիրթ կնոջ համար անգամ անվալել ձևով գրած նամակին իբրև տղամարդ, անկարող լինելով նոյն դրամով հատուցանել, բարկութիւնիցս եղանակի վատութեան վրայ ուշ չգնելով՝ մրսեցի և անկողին ընկայ: Մօտ 42 օր ծանր հիւանդ էի: Յարգելի բժիշկներս՝ դօկ. Յակ. Աղամեանը և դօկ. Իս. Խուրաբաշեանը խօսելն ինձ արգելել էին, հետեապէս ոչ-միայն տանից չէի կարող դուրս գալ, այլև ինձ այցելողներին հետ չէի խօսում, որ ասել է դրսի աշխարհից կտրուած էի մօտ ամիսուկէս: Ահա այդ միջոցին Ներս. Դպր. ուսուցիչներից պ. պ. Արեղեան և Միրզոյեան մանկավարժական ժողովներից մէկում հարց են զարթեցրել «Զարկում» տպուած մերկացումներիս առիթով և պահանջել, որ իրանց՝ հրապարակապէս խայտառակուած պաշտօնակից Քամայեանց Սարգիսը պարտաւոր է կամ դատարանում անհերքելի փաստեր առաջ բերելով՝ մաքրուել մեղադրանքներից և կամ դպրոցն ազատել իր անպատուաբեր ներկայութիւնից:

Իսկ երբ այդ հարցի մասին, ինչպէս ինձ պատմեցին, պ. Թում.-ը հարցնում է «մանկա...վարժին»՝

—Բարեկամ, ճիշտ է որ Ներս. Դպր. մանկավարժ. ժողովում հարց է զարթած՝ կամ զիմէք դատարանին և կամ Դպրանոցից հեռանաք: Այդ ի՞նչ բան է:

Սխալմամբ մարդ կոչուած «մանկա...վարժը» պատասխանել է.

—Է՛հ, չգիտես, Լևոնի ինտրիգաներն են (?). նա Արեղեանին (որին ճանաչում էի, բայց դեռ ծանօթ չէի այդ-ժամանակ) և... Միրզոյանին (որի հետ մինչ այս ըսպէիս էլ անծանօթ եմ և աչքով իսկ չեմ տեսած) գրդել է որ այդպէս հարց զարթեցնեն (ուրեմն դրանց էլ եմ իմ ազդեցութեան ենթարկել նոյնիսկ առանց

ծանօթ լինելու, առանց երեսները տեսնելու. Բիսմարկը փաստ ինձ մօտ), սակայն ոչ-ոք էլ ուշադրութիւն չդարձրեց նրանց վրայ և այդպէս էլ անցաւ: (Շատ, շատ ճիշտ է. դրա անհերքելի ապացոյցը դպրոցից ատօք-փատօք վննդուելը):

Ի՛նչու է՛ առաջ բերեմ յօդուածիս 3-րդ—վերջին մասը.

III

ՍԽԱԼՄԱՄԲ Մ Ա Ր Դ ԿՈՉՈՒԱԾԸ

Այն՝ «յարգս յարգևորաց, պատիւս արժանաւորաց»: Փողովդ. ասացուած:

Ինչպէս վերև ասուեց՝ այդ գրական շահատակի «կազմած» և թէ աղատ (?) փոխադրած գրքերի մասին մատենախօսականը գրել էր «Զարկի» խմբագիր Գր. Բալասանեանը: Դէ, ի-սէր Ալլահի, ի-սէր բոլոր սրբութիւնների, խնդրեմ ասէք, ընթերցող, հապա ինչո՞ւ էր ինձ ևս մէջ բերել իրա պատասխանում այդ գրական խուլիզանը: Ասում եմ՝ գրական խուլիզան. վասնզի ո՞վ որ լսի՛ր զ պարծենկոտութեամբ (ուղղակի գերմաներէնից իւրացրած) փրօն ու անհամեստ յառաջաբաններով իրան է սեպհականում ուրիշների գրական վաստակները, իսկ իր սեպհական գրածները միշտ անամօթաբար ուրանում և պատէպատ ընկնելով կամ տեղնուտեղ գողութեան մէջ բռնուածի նման կմկմալով իրան արգարացնել է ճգնում, ո՞վ որ գրողուած անձնական փնթի, գծուծ ու սին հաշիւներից թիֆլիզ նստած անամօթ ստութիւններով ու անազնիւ գրպարտութիւններով լի թղթակցութիւններ է «դրկում» Շուրալէրից, կամ այս ու այն հարուստից խնդրած դրամը մերժուելու դէպքում՝ հասարակութեան տակաւնը ստոր սրիկաների նման իբրև վրէժ գողելի պասկվիլներ է յերիւրում և յարգանաց միայն արժանի ընտանիքներին վիշտ պատճառում, այդպիսին՝ իմ խորին համոզմամբ, գրական խուլիզան է: Իսկ ո՞վ-որ լինելով անազնիւ կամ մտաւոր անանկ, չի կարողանում յարուցած հարցին ըստ էութեան պատասխանել և անճարութիւնից՝ գործի հետ կապ չունե-

ցող մարդկանց է մէջ խառնում, կամ հրապարակով իրա վրայ բարձած մեղադրանքները մագաչափ անգամ հերքելու փաստ չունենալով՝ լռելու փոխարէն չի խղճահարվում հանդուցեալների յաւիտենական նինջը վրդովել կամ անմեղ էակների հանգստութիւնը խանգարել, այդպիսին՝ իմ խորին և անսասան համոզմունքով՝ ոչ-միայն գրական խուլիզան է, այլև մտքի պոռնիկ:

Այն, ինչո՞ւ էր Բալասանեանին տուած պատասխանի մէջ ինձ էլ խառնում, այն էլ անուն չունեցող ստոր ձևով— մարմնական պակասութիւնս յիշելով: Այդ խօսք հոտած ցեխն է, որ թէ իրա վրայի ոտքն է ապականում և թէ շուրջը գարշահոտութիւն տարածում: Ուրեմն արժէ՞ր՝ ոչ-բարով աստուածաբանութիւն սովորելու պատրուակով գնալ Գերմանիա միմիայն հոտած ցեխի յատկութիւն ձեռք բերելու համար:

Եւ՛ դարմանալի է, չնայելով յօդուածս բաւական ուշ լոյս տեսաւ, սակայն չգտնուեց մէկը, որ այդ ստոր արարքի համար հրապարակով թքնէր գրական խուլիզանի անամօթ երեսին: Բայց եղան միքանի քնքուշ սիրտ ունեցող «բարեհոգիներ» և Սուստի-բէգեր, որոնք «յայտնի» դասակարգի կանանց նման առանց կարմրելու միայն իրանց ատամները ցոյց տալու շնորհք և անբարոյական հրէշին պաշտպանելու անպատուաբեր քաջութիւնն ունեցան անկիւններում:

Սխալմամբ մարդ կոչուած Գամալեանց Սարգսի—այդ ամենքից արհամարհուածի հրատարակած գրքերից, ասում են, միմիայն «Օտվինարն է» իսկապէս փոքրիշատէ յաջողուածը: Ինչո՞ւ—վասնզի ինքը—գրական պոռնիկը այդ առասպելը ճիշտ թէ անճիշտ գրի առնելուց զատ այլևս ո՞րևէ մասնակցութիւն չի ունեցել ոչ Ա-ին և ոչ էլ Գ-րդ տպագրութեանը: Բացի նրանից որ ձեռագիրը ամեն տեսակ փոփոխութեան եմ ենթարկել, պատմուածքը մթնացնող ահագին կտորներ ջնջել, կապերն աւելի սերտացրել, լեզուական անհարթութիւնները վերացրել, այլև տարիներից յետոյ Բ-րդ տպագրութեան համար էլի ես եմ կարդացել Ա-ին տպագրութիւնը, հարկաւոր յապաւումներն արել և տպուելիս էլ նորից ու նորից ուղղել ու կոկել լեզուն:

Յիմա թո՞ղ գրականութիւնից բան հասկացողն ու «խելանաս ընթերցողները» դատեն, թէ ինչ պէտք է եղած լի-

նէր ընագիրը՝ թէ լեզուի և թէ մտքերի կապակցութեան ու դասաւորութեան կողմից: Եւ հիմա այդ ամենը ուրանալով՝ առանց խղճի խայթ դգալու զգուելի պարծենկոտութեամբ գրում է՝ «խուլերի ճաշակը ես հաշուի չեմ առնում»:

Նորից եմ կրկնում և հարցնում սողոմեցի հրէշին պաշտպանող խարդախ հողիներին—այդ կեղծաւոր փարիսեցիներին՝ ինչո՞ւ էր նա ինձ ևս գործի մէջ խառնում անազնուաբար, որ պատճառ դարձաւ այս բոլոր անախորժութիւններին:

Երբ համոզուած էի թէ դա մարդածին արարած է և ոչ դժոխքի բնակիչներից որևէ ճիւղի արգանդից լոյս աշխարհ եկած երկոտանի հրէշ, յանուն բարեկամութեան ես անուշադիր եմ գտնուել՝ երբ մանաւանդ համագիւղացիներիա շահն էլ աչքիս առաջն է եղել, նոյնիսկ կորցրածս դանձր՝ լսողութիւնս նորից ձեռք բերելու վերաբերմամբ: Փոխանակ իրա ժամանակին ինձ համար խնդրելու ո՞ւմ պէտք էր, որ զընայի արտասահման բժշկուելու, ես այդ գրական պոռնիկի համար էի խնդրում-աղաչում Պետերբուրգում հանգ. Կ. Եղեանին, այստեղ—Թիֆլիզում՝ Բաֆֆու մեկենաս հանգ. զնդապետ Աղ. Մելիք-Հայկազեանին՝ միջոց տալ մեր գիւղի վարժապետին զնալ ուսումն շարունակելու, որ գալով՝ գիւղի վրայ քահանայ ձեռնադրուի:

Ես դրա համար՝ հէնց իրա իսկ ասութեամբ և զրութեամբ, ոռւս զրականութեանը պարծանք բերող Բելինսկիի եմ հանդիսացել իրա համար՝ թէ բերանացի և թէ նամակներովս պակասութիւնները ձաղկելով անխնայ:

Ես դրա համար... սակայն ո՞ր մէկը թուեմ, ընթերցող: Ուրեմն սրբան ստոր ու անորդ արարած է այդ սխալմամբ մարդ կոչուածը կամ՝ ինչպէս լաւ իմացաւ Բաֆֆու մեկենասը, սրպիսի ապականուած ներքին աշխարհ պիտի ունենայ, որ թոյլ տայ իրան գրելու՝ «խուլերի ճաշակը ես հաշուի չեմ առնում»:

Այդ մի նյնպիսի հրէշային ապերախտութիւն է, որ վայել է միայն ամենքից արհամարհուած վայիս մարդուն, նյնպիսի պախարակելի երախտամոռութիւն, որ յատուկ է միայն անաղուհացակեր քրդի շանը:

Եւ իսկապէս, ինչպէս առաջին երեսներում գրեցի, պատճառը սխալմամբ մարդ կոչուածի այդպիսի անշնորհա-

կալութիւնն ու ապերախտութիւնն էր — ճշմարտութիւնը անարգելու այդ աստիճան անամօթ լրբութիւնը, որ ստիպուած եղայ՝ կամքիս ու համոզմունքիս հակառակ և սրտի կակիծով, միշտ սուրբ համարածս մամուլի մէջ այսպիսի անսովոր լեզուով խօսելու:

Այն միայն Աստուծոն է յայտնի, թէ քառորդ դարուայ մէջ ինչքան նիւթական փլասաներ եմ քաշել, սրբան անախորժութիւններ եմ ունեցել, ինչ վիրաւորանքներ եմ կրել թէ խմբագիրներից և թէ նրանց թերթերի խելօք ու յիմար աշխատակիցներից՝ մամուլի մասին այդպիսի բարձր համարումն ունենալուս համար:

Եւ հիմա, փնօք Քեզ, Աստուած, տեսէք թէ ո՞վքեր են ուղղում ինձ թելադրել, թէ ինչ լեզուով ու ինչ ոճով պէտք է խօսել մամուլի մէջ, որ դէմ չլինի էտիկային, Գեղարուեստին, Վայելչութեան...

Բայց այդ մարդիկ՝ կամ այն է որ իրօք մտաւոր կոյր են, ուստի-և չեն հասկանում, և կամ այն՝ որ կեղծ ու անազնիւ լինելով դիտմամբ չեն կամենում հասկանալ (երևի իրանց ձեռնտու չէ), որ այդ գրական խուլիզանն ու մտքի պոռնիկը այնքան ընկել է բարոյապէս, որ դրան ըմբերանելու, դրա՝ ամենքի համար զգուելի լարչութիւնն ու մեծամտութիւնը վերացնելու, ցածահոգի ստոր մարդուն միայն յատուկ բամբասանքներ անելուց և տմարդի զրպարտութիւններ յերիւրելու տգեղ փէշակից ձեռք վերցնել տալու ուրիշ կըք, ուրիշ ձար չկայ:

Թող հասարակական շահը անձնական օգուտից վեր դասող բարոյական ու բարեմիտ ընթերցողները ցոյց տան՝ այդ ազնիւ նպատակիս հասնելու մի այլ միջոց, համոզեն ինձ այդ միջոցի աւելի նպատակայարմար լինելը և ես պատրաստ եմ բոլոր գրածներս յետս առնել և հասարակութիւնից անկեղծօրէն ներողութիւն խնդրել: Իսկ մինչ այդ՝ մինչև զրական խուլիզաններին և մտքի պոռնիկներին ուղիղ ճանապարհ ցոյց տուող միջոցի գտնուելը թոյլ տուէք որ ես մնամ իմ համոզմունքիս մէջ:

Նորից եմ կրկնում՝ ուրիշ ելք, ուրիշ ձար չկայ այդ սխալմամբ մարդ կոչուած անզգամ Քամախանց Սարգսին

ըմբերանելու, դրան իրա չափը ցոյց տալու, պարծենկոտութեան, ինքնագովութեան զգուելի ախտից բուժելու:

Երկար ու ճիգ տարիների ընթացքում տեսածներս, իմացածներս ու դիտածներս մատնացոյց արին այս միակ ելքի վրայ:

Գուցէ ոմանք միամտաբար և կամ փարիսեցիաբար առարկեն, թէ այնուամենայնիւ իբրև հայ-քրիստոնեայ պէտք էր ներողամիտ լինել:

Նախ՝ ներում են նրանց, որոնք իրանց սխալները խօստովանելու, իրանց վատ ու անազնիւ ընթացքն անկեղծօրէն ուղղելու առաքինութիւնն ունին: Մինչդեռ հայ-ղարոյններին անպատուութիւն բերող Քամալեանց Մարգիսը՝—որից ներս. Դպրանոցի համարեա ամբողջ ուսուցչական խումբը զգուելով զգվում է և անունը լսելիս զայրոյթով թքում,— իսպառ զուրկ և թափուր է այդ առաքինութիւնից:

Երկրորդ՝ շնորհիւ մեր անբարոյական հոգեւորականների ընդհանրապէս և մասնաւորապէս բարոյականութեան մասին խայտառակ ու անպատուաբեր հասկացողութիւնն ունեցող, փութկոտութեամբ արուամոլների համար դասեր զանոց բարձրաստիճան արհիների և մանաւանդ՝ ստոր, խաբեբայ, անազնիւ, ցածահոգի և սնու-քրիստոս ոչ-բարով աստուածաբան քահանայի և ամեն տեղ եկեղեցու բեմից՝ «ճշմարտութիւն», «ճշմարտութիւն», «միայն ճշմարտութիւն» քարոզող, իսկ կեանքի մէջ անազնուաբար ստող ու խաբող աստուածաբան վարդապետի, այն, շնորհիւ դրանց հետզհետէ դադարեցի հայ-քրիստոնեայ լինելուց և դարձայ հայ-մովսիսական, ուստի-և սրբազան սկզբունքս է՝ «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման». սկզբունք՝ որի նման լաւը ոչ եղել է, ոչ կայ և ոչ էլ կը լինի աշխարհիս երեսին:

Իսկ եթէ չէք կամենում որ «ակն ընդ ական և ատամն ընդ ատաման» սկզբունքը տիրապետող լինի, ապա ուրեմն միք անիլ ուրիշներին այն, ինչ-որ չէք ուզում որ ուրիշներն անն ձեզ:

Եւ որպէսզի փայտ վերցնելու էլի իմանան—արձակաձս նետը այս անգամ ևս նախկինների նման ամենափոքր չափով իսկ չլրիպէ իր կէտ նպատակից, բարոյական պարտքս եմ համարում ասելու, որ այդ՝ ոչ-բարով աստուածաբանների մէջ չէ բարձր. Կարապետ վարդապետը:

Եթէ կեղծաւոր փարիսեցիք արգելք եղած չլինէին «Դիտակ» շաբաթաթերթի մէջ այլանդակ բարոյականի տէր Շմեղի՝ X հարուստից խնդրած դրամը մերժուելու համար յերկրած տմարդի պատկվելի առիթով բողոք-նամակիս լոյս տեսնելուն, գուցէ հիմա ես ստիպուած չլինէի 10—12 տարուայ պատուաւոր լուծիւնս խզել և կամքիս ու համոզմունքիս հակառակ՝ սխալմամբ մարդ կոչուածի մասին այսքան գրել, որ մեծ, շատ մեծ պատիւ է այդ գրական խուլիգանի, այդ մտքի պոռնիկի, ի-մի բան՝ այդ զգուանքի զգացմունք յարուցանող, խեցգետնից էլ ստոր կենդանու համար:

Եւ այդ տեսակ անարգ արարածը համարձակվում է ոչ-միայն սիրոյ—այդ սրբազնագոյն զգացմունքի մասին բերան բանալ, այլ դեռ անամօթութիւն ունի լրագրի մէջ ևս գրելու այդ սիրոյ մասին, նրանով նուէրներ անելու հանդուցեալների լիշտատակին, երբ ցերեկուայ լոյսի պէս ոլարդ է, թէ այդ այլանդակ բարոյականի տէր, այդ աննօրմալ հակուժով տանջուող սողոմեցի հրէշը սէր ասելով «ինչ» է հասկացել ու հասկանում:

Իբրև Լևոնիկիս՝ այդ ազնիւ հոգու կեանքի վերջին մասում եղած նրա միակ մտերիմ ընկերը հոգոյս բոլոր զօրութեամբ, իմ ամբողջ էութեամբս բողոքում եմ այն սրբապղծուծութեան դէմ, որ գործել է սխալմամբ մարդ կոչուածը՝ գողացած «Միրտ» գիրքը նուիրելով նրան և անմոռանալի Մելիքսեղէկ Մեհրաբեանին:

Յատուկ կը խնդրէի որ ոչ-ոք՝ ինչքան էլ ինքը բարձր կարծիքի լինէր իրա մտաւորականի ու բարոյականի մասին, ինձ իրա չափով չչափէր: Այն, յատուկ կը խնդրէի՝ յանուն ազնուութեան, յանուն ճշմարտութեան: Ինձնում խօսողը կոյր կիրքը չէր, այլ արդար ու սրբազան զայրոյթը, դէպի որը պարտաւոր են յարգանքով վերաբերուել Ազգիս յոյս մատաղ սերնդի լաւ ապագայի նախանձախնդիրները—բոլոր ազնիւ, ճշմարտասէր և բարոյական մարդիկ. եթէ իրօք ազնիւ են, ճշմարտասէր և բարոյական և ոչ-թէ այդպէս են համարվում միայն դժբաղդ թուրիմացութեամբ՝ շնորհիւ իրանց զիրքի, ճակատագրի խաղով ստացած բարձր կրթութեան, պաշտօնի և կամ հագուստի:

Յօդուածիս սկիզբը «Չարկում» տպուելիս յարգելի պ. Զաք. Գրիգորեանը ևս իրա կողմից էր պատասխան գրել և ուղարկել «Մշակին», սակայն չէին տպել թէ երկար է:

Երբ մէկը մի հարցի մասին բան է գրում և իսկոյն չի տպւում, կարգալով նոյն հարցի մասին ուրիշները գրածները, բնական է որ օգտուի նրանցից և փոփոխութիւններ անէ՝ իրա պատասխանը աւելի ազդու և մանաւանդ աւելի անսխալ դարձնելու համար: Բայց որովհետեւ այդ փոփոխութիւնները գրական գողի հաշուին չեն գալիս, նրա տունն աւելի են քանդում, պարզ է թէ նրան չէին դուր գալ, ուստի-և յարգելի պ. Զաք. Գրիգորեանի խիստ հետևողական, անձնականից հեռու և հասարակական օգտի շրջանակում եղող ուշագրաւ ու խրատական յօդուածը չակերտաւոր մանկավարժը անուանում է՝ գոեհիկ ու սին հայհոյանք, ապա այնքան է լրբանում ոչ-բարով աստուածաբանը, որ այդ էլ քիչ համարելով՝ հաջում է նրա վրայ:

Սակայն առաջ բերեմ այստեղ պ. Զ. Գրիգորեանի պատասխանը, որ բարեմիտ ընթերցողները անձամբ տեսնեն այդ ուշագրաւ պատասխանի «գոեհիկ» լինելն ու այլ «պակասութիւնները»:

«ԹԵԹԵՒ ԹԻՒՐԻՄԱՅՈՒԹԻՒՆ»

Թիֆլիզ, 17 փետ. 1907 թ.

Պ. Ս. Քամալեանցը «Մշակի» անցեալ տարուայ նոյեմբերի 2-ի № 240-ի մէջ, ըստ իր տգեղ սովորութեան, սխալ ու ստերով ի տեղեկութիւններ է հաղորդել հասարակութեան, վասնորոյ ճշմարտութիւնը վերականգնելու համար խնդրում եմ, որ իմ այս պատասխանիս էլ մի անկիւն շնորհէք «Հովիւ»-ի մէջ, քանի-որ «Մշակ»-ը չկամեցաւ տպել իրա ժամանակին:

Պ. Ս. Քամալեանը պարապում էր ժողովրդի մէջ եղած հէքեաթներն ու առակները՝ յաջող թէ անյաջող, հարազատութեամբ թէ ոչ, գրի առնելով: Սակայն երբ տիկին Նադիրեանի ծախսով գնաց Գերմանիա աստուածաբանութիւն ուսանելու, վերադառնալուց յետոյ՝ իբրև կրթութիւն ստացած մարդ այլևս լայն չարաւ հէքեաթների ու առակների գրի առնելը շարունակել, այլ սկսեց իրա համար փէշակ շինել — հայ հասարակութեան աչքում յարգանք վայելող յայտնի հեղինակների երկերը կրճատել, հարկաւ տեղ-տեղ էլ աղաւաղել՝ փոփոխելով ըստ իրա քմահաճոյքի, և իբրև սեպհականութիւն իրա անունով՝ իբր «կազմողի», հրատարակել: Ահա այդ կերպ է վարուել պ. «աստուածաբանը»՝ Ստ. Նազարեանցի, Խ. Արովեանցի, Ծերենցի և Փիլ. Վարդանեանցի հեղինակութիւնների ու թարգմանութիւնների հետ: Իսկ թէ ապագայում ո՞ւմ տպուած-պատրաստի աշխատութիւնները պէտք է սրբազրելով ու բարեփոխելով (!?) «կազմէ» ու հրատարակէ որպէս իրա մտքի արգիւնք, այդ ի-հարկէ նոյն «աստուածաբանի» գաղտնիքն է:

Այսուհետև մեր մանուկ կարդացողները այլևս նեղութիւն չպէտք է կրեն գլուխ կոտրել և ուսանիլ՝ կարգալով Նազարեանցի, Արովեանցի, Ծերենցի և այլոց գրուածքները, այլ կը ճանաչեն միայն մի անձնաւորութիւն — Քամալեանց Ս. անունով, որի մէջ կ'ամփոփուի հայ ազգի բոլոր նշանաւոր հեղինակութիւնները և... պրծաւ-գնաց: Հետևապէս պ. Ս. Քամալեանցը մեծ, շատ մեծ ծառայութիւններ պիտի անէ մեր յարաճուն մանկութեանը — մի կողմից թեթևացնելով ուսանող սերնդի՝ պատահող լեզուական, քերականական կանոնների ու մտքերի բմբունողութիւնը, միւս կողմից իրա մէջ պարունակելով մեր բոլոր հեղինակների սրբազան ու վեհ զգացմունքներն ու գաղափարները... Որպիսի՞ յանգստութիւն, որից կը քաշուէր ու կամաչէր ամենախայտառակ թերուն անգամ, եթէ պատիւ ասուած գաղափարի մասին պարզ գիտակցութիւն ունենար:

Առհասարակ՝ որքան նկատել են ինձ հետ նաև շատերը, պ. Քամալեանցը շատ մեծ կարծիք ունի իրա մասին, այնքան մեծ, որ այդ բանը իրա մէջ պահել ու պարտկել չկարողանալով, լրագրութեամբ էլ հրապարակ է հանում, որպէսզի

ամենքը ևս իմանան, թէ իրա հրատարակած գրքերը «ընտիր ընթերցանելի եւ նուէրներ տալու գրքովներ են»...

Ընդունուած ու վայել բան չէ, որ իրա պատիւը գնահատող ճրեկ գրական անձը հրապարակ դուրս գայ և անձամբ գովաբանէ իրա գրքերը... Երևի թէ Գերմանիայում սովորած «աստուածաբանութիւնն» է թելադրել պարոնին այդ «համեստութիւնը» բանացնելու, որ այդպիսի տարբական քաղաքավարութիւնն անգամ չի հասկանում: Սակայն տեսէք թէ «աստուածաբան» պարոնը ինչ երկդիմի բառեր է գործածում իրա «կազմած» և հրատարակած գրքերի մասին:

«Ինչ վերաբերում է, գրում է նա, այն կէտին, թէ ճրքան հաւատարիմ եմ մնացել բնագրի ոգուն և լեզուի քաղցրութիւնը պահպանել, այդ գգում է իսկոյն ամեն մի խելահաս ընթերցող»:

Սակայն այդ պարբերութիւնից ամենևին չի իմացվում, թէ ում լեզուի քաղցրութիւնն է պահպանուել՝ հեղինակի, թէ՞ «կազմողի»: Յամենայն դէպս չի կարող հեղինակինը լինել, քանի-որ «կազմողը» ըստ քմահաճութեան թէ կրճատել և թէ փոփոխել է և այն... «ազատ փոփոխել»:

Մի կողմ թողնելով բուն հեղինակների աշխատութիւնների ուսումնասիրելը՝ թէ լեզուաբանական, թէ քերականական և թէ դասաւորութեան կողմից, և այն՝ թէ բնագրի այս ինչ կամ այն ինչ կտորը ինչ զգացմունքներ, ինչ մըտքեր ու խոհեր է զարթեցնում ընթերցողի հոգու և սրտի մէջ, անցնենք ուղղակի մեզ վերաբերեալ խնդրին:

Պ. Քամալեանցը գրում է.

«Սովորաբար գրքի ճակատին լինում են հրատարակող անձանց կամ հաստատութիւնների անունները: Այդպէս ոչ մի բան չկար յիշեալ գրքի կազմի վրայ»:

Պարոնի այդ ասածը մի այնպիսի փաշկարայ պոչաւոր սուտ է, որ միանգամայն անվայել է աստուածաբանութիւն ուսուցանող ուսուցչի, եթէ չասենք ուրիշ բան: Յանկացողը կարող է մի ըրպէով մտնել գրախանութս և ստուգել իմ ասածի ճշմարիտ լինելը, իսկ «աստուածաբան» Ս. Քամալեանցի միտումաւոր եւ անպատուարեք ստախոսութիւնը:

Սակայն այդպիսի դիտաւորեալ ստեր հնարելը, ինչպէս ամենքս էլ գիտենք լրագրութիւնից, պ. Քամալեանցի սիրած

փեշակն է, ուստի զարմանալու չէ, որ այդպիսի անպատուաբեր բաները՝ պարոնի հասկացողութեամբ «թեթև թիւրիմացութիւն է»:

Բայց դիտէք բանն ինչու՞ն է, ընթերցող: «Հրատարակութիւն Չաք. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավածաւանոցի» խօսքերը տպուած է, ինչպէս անհասասակ սովորութիւն է, գրքի արտաքին գունաւոր թղթակազմի (обложка-ի) ճակատին: Հետևապէս եթէ որևէ պատճառով այդ թղթակազմը զջլին—պոկեն կամ գիրքը կազմեն առանց այդ թղթակազմի և այդ վերտառութիւնը այլևս չլինի, ինչ ասել կ'ուզէ որ պ. Քամալեանցի նման յանդուգն ու անբարեխիղճ մարդու համար կարող է պատճառ լինել լրագրական ասպարէզ դուրս դալու և առանց կարմրելու գրել՝ «այդպէս ոչ մի նշան չկար գրքի վրայ»:

Աղգային առածն ասում է ստախոսի պոչը կտրծ կը լինի: Միթճմ—իբրև-թէ պ. Քամալեանցը չգիտէր, որ հանգուցեալ Ծերենցի երեք պատմական վէպերի հրատարակչը տողերիս գրողն է: Ես այդ բանին անկարող եմ հաւատալ, այլապէս պէտք է ընդունել, որ պարոնը տարիներով ոչ-թէ վարժապետ է եղել, այլ մի հասարակ չօրան, կամ առ-առաւելն՝ մի տղետ տիրացու, և այդպէս էլ մնացել է, չնայելով Գերմանիայում ուսած լինելուն:

Ախր այդ ինչպէս է որ ամենքին յայտնի է այդ բանը և մօտ քառորդ դար է՝ շարունակ երկրագնդի ամեն կողմերից ինձ են դիմել և դիմում՝ իբրև հրատարակողի, ու պահանջում Ծերենցի պատմական վէպերը, իսկ մեզ հետ միևնոյն քաղաքում ապրող և հայ դպրոցներում ուսուցչութիւն անող Քամալեանց Ս.-ին յայտնի չէր այդ բանը: Չլինի թէ այդ անգիտանալը ևս լոկ «թեթև թիւրիմացութիւն է»:

Սակայն ես համոզուած եմ, որ այդ բանը շատ լաւ գիտէր պ. «աստուածաբանը», և եթէ ինքը խալիս ոսկի, այս ինքն՝ ազնիւ մարդ լինէր, ուղղակի կը խոստովանուէր եղածը: Բայց ինչպէս երևում է պ. Քամալեանցը ազնիւ մարդ լինելու զաղափարի մասին հասկացողութիւն չունի, քանի-որ պարոնի համար ամեն բան էլ «թեթև թիւրիմացութիւն է»:

Օրինակ՝ նա իմ իրաւունքը ոտի տակ տալով ինձ նիւթական վնաս է հասցնում և այդ պարզ բանը «թեթև

թիւրիմացութիւն է համարում: Մի խայտառակ տգէտ տիրացուն անգամ իրան թոյլ չէր տալ այդ բանը: Նոյնիսկ ինձ օտար մարդիկ իմ փոխարէն վրդովվում և զայրոյթով պախարակում են պարոն «կազմողմին» իր տգեղ ու անազնիւ արարքի համար, իսկ ինքը այդ ևս չնչին բան է համարում և «թեթև թիւրիմացութիւն» անուանում:

Սակայն ուրիշ ինչ կարելի է սպասել մի մարդուց, որ թէև «աստուածաբան», «մանկավարժ» (երանի մեր ազգին) ու էլ չգիտեմ ինչ ու ինչ է համարում ինքն իրան, բայց մի բոլորովին անկիրթ մարդու նման առանց քաշուելու, առանց ամաչելու մէջ էր բերել գործից բոլորովին հետու և գործի հետ ոչ մի կապ չունեցող մարդու մարմնական պակասութիւնը—չսելը և լրագրի ու խօսակցութեան նիւթ շինել, որ յատուկ է միմիայն տգէտներին:

Եւ այդպէս սամարգորէն էր վերաբերուել մի մարդու վերաբերմամբ, գէպի որը, որքան ինձ յայտնի է, խորին լարզանքից ու երախտադիտութիւնից զատ ուրիշ ոչ մի զգացմունք չպէտք է ունենար պարոն «աստուածաբանը», եթէ իրօք ազնիւ մարդ է և ոչ թէ գլխովին դրա հակառակը: Արդեօք բնական չի չինիլ հարցնելու—պ. Քամալեանց, դուք տիկին Նազիրեանի փողերը միթէ նրա համար էիք ստանում, որ այդ տեսակ գովելի «աստուածաբանութիւն» և անպատուաբեր երախտամոռութիւն ուսանէիք արտասահմանում: Ամօթ:

Ահա այդ պարոն Քամալեանցն է, որ գրել է՝ դարձեալ առանց ամաչելու, նաև հետևեալը.

«Երկրորդ գիրքը, որ ձեռնարկեցի համառօտել և լեզուն կոկելով կովկասահայ պատանիներին մատչելի դարձնել, այդ Ծերենցի «Թ. Դարու Երկունք» էր: Աշխատանքս վերջացած էր, երբ լսեցի պատահմամբ (նրախի անամօթ և անպատկան ստախօսութիւն), որ պ. Զ. Գրիգորեանցը պրետենդիաներ է յայտնում Ծերենցի աշխատութիւնների վրայ»:

Պարզ երևում է որ պ. Քամալեանցը՝ իրա ուզածը յաջողեցնելու համար ոչ-միայն չի կամենում ոչ մի իրաւունք ձանաչել, այլև շատ տեսակ ծանապարհներ գիտէ իրա նպատակին հասնելու համար:

Մի օր այդ «բարեկիրթ» պարոնը ըստ սովորականին մտնում է գրախանութս և խօսակցութեան միջոցին ասում.

«Ես այժմ զբաղուած եմ Սասունցի Յոզեանը մեր կովկասահայ բարբառի վերածելով»:

Այդ լսելով ես իսկոյն բողոքեցի և յանդիմանեցի: Մեր խօսակցութեանը ներկայ էին պ. պ. Միքայէլ Սալամբէկեանը և Ղազարոս Կարապետեանը: Ամեն կերպ աշխատեցի հասկացնել պարոնին, որ ոչ-միայն առաջին տպագրութիւնը՝ որ դեռ սպառուած չէ, այլ երկրորդ տպագրութեան իրաւունքը ևս ինձ է պատկանում, որի համար կանխիկ դրամ եմ վճարած և գրաքննիչի պահանջմամբ նոյնիսկ ստորագրութիւն էլ ունիմ Ծերենցից, և եթէ ինքը իրա մտադրութիւնն իրագործի, վերին աստիճանի տմարդի բան արած կը չինի՝ ինձ նիւթական վրաս հասցնելով:

Հիմա թող ընթերցողը իմ այդ բոլոր ասածներս հատեմատի «պատահմամբ լսեցի» խօսքի հետ և ըստ այդմ էլ գաղափար կազմի պ. Քամալեանցի ներքին աշխարհի մասին: Վասնզի նա այդ ամենը առ-ոչինչ համարելով՝ թեթև սրտով դիմում է Ծերենցի փեսայ պ. Աղ. Մելիք-Ազարեանցին և՛ խարդախներին միայն յատուկ ուզած ձևով ու մտքով պատկերացնում եղելութիւնը, ուստի-և զարմանալի չէ, որ կարողանում է իրաւունք դուրս կորզել նրանից: Իբրև-թէ այդ խարդախութիւնը քիչ էր, նեղն ընկնելով՝ ճարպիկութեամբ ուրիշի օձիքից է կպչում: Տեսէք թէ այդ՝ «պատանիների համար ստացաւ» Քամալեանցը ինչ է գրում.

«Թիւրիմացութիւնը մէջտեղից վերացնելու համար դիմեցի Ծերենցի միակ ժառանգին—նրա փեսայ մեծ պ. Աղէքսանդր Մելիք-Ազարեանցին. նա խիստ զարմացաւ, երբ ինձանից լսեց (ծեղանից լսողը ուրիշ կերպ չէր կարող անել), որ Զ. Գրիգորեանցը իր հանգուցեալ աներոջ գրքերի վրայ իրաւունք է ուզում բանացնել»:

Իսկ ես ասում և պնդում եմ՝ պ. Աղ. Մելիք-Ազարեանցին եթէ անազնուաբար խաբած չլինէր պ. Քամալեանցը, նա չէր կարող խիստ զարմանալ, քանի-որ նրա աներոջ—Ծերենցի կենդան ժամանակն եմ տպագրել բոլոր պատմական վէպերը. հետևապէս չէր կարող որևէ կեղծիք տեղի ունենալ և միակ ժառանգից ծածուկ մնալ և ուրեմն պ. Աղ. Մելիք-Ազարեանցը ոչ կը զարմանար և ոչ էլ՝ առաջին պատահածին իրաւունք կը տար, եթէ միայն պ. Քամալեանցը ան-

վայել միջոցներով չմոլորեցնէր նրան և ապա խաբէր հասարակութեանը՝ իրա խարդախութիւնը քողարկելու համար:

Կրկնում եմ՝ ես համոզուած եմ, որ պ. Աղ. Մելիք-Ազաբեանցը շուլավերցի «մանկա...վարժ» Ս. Քամալեանցի կարծած մարդը չէ. եթէ նա գիտենար, որ իր հանգ. աներոջից ստորագրութիւն ունիմ ոչ-միայն առաջին, այլև երկրորդ սպագրութեան համար, նա երբէք ոչ-ոքի և այն առաջին պատահածին որևէ իրաւունք չէր տալ, ուր մնաց թէ ասէր՝ «հրատարակեցէք, ինչպէս կ'ուզէք»: Այո՛, պ. Աղ. Մելիք-Ազաբեանցը նախ՝ չէր ցանկալ որ ես ֆլաս կրեմ, և երկրորդ՝ նա վերոյիշեալ լեզուով խօսելով չէր կամենալ անպատուած լինել իրա աներոջից յարգուած մարդուն:

Եւ այդ ամենը՝ պատանիների սրտացաւ և շուլավերցի «մանկա...վարժ» Քամալեանց Ս.-ի հասկացողութեամբ «թեթև թիւրիմացութիւն է»:

Հիմա թո՛ղ մեզ դատեն «խելահաս ընթերցողները»:
Չաք. Գրիգորեանց

1907 թ. «Հովիւ» №№ 6 և 7.

Մերկացուցներինցս յետոյ մի այդպիսի տեղին ու ազդու պատասխանը կատարեալ մի շանթ էր, որ ընկաւ սողմեցու ապականութիւններով լի գլխին: Ողորմելին, ինչպէս ասում են, զրկի-փրկի—յանկարծակիի եկաւ:

Թէ մինչև ո՞ր աստիճան ծանր ու զգալի էր պ. Չ. Գրիգորեանցի բարոյական հարուածը, այդ պարզ երևում է այն անազնիւ և միայն խուլիզանին վայել քայլից, որ թոյլ տուաւ իրան ամեն բան «թեթև թիւրիմացութիւն» համարող «մանկա...վարժը»:

Անկարող լինելով իրական որևէ փաստ առաջ բերել, շամած ու շուարուած, այլև զգուելի մեծամտութիւնից չկարողանալով լռել, բայց-և չիմանալով թէ ինչ գրի, գիմեց իր ծերունի և իսկական Busenkamerad-ին.

— «Պատուական Busenkamerad. իմացածովս դուք

սրանից 25—30 տարի առաջ գրքերի հաշիւ էք ունեցել գրավաճառ Չաք. Գրիգորեանցի հետ. խնդրում եմ պատմէք ինձ մանրամասն, որպէսզի պատասխանիս մէջ գուցէ կարողանամ ապացուցել թէ նա ազնիս մարդ չէ...

—Որ մենք իբրև ընկերներ կարող էինք հաշիւներ ունենալ իրար հետ, շատ ճիշտ է,—պատասխանում է փորձառու ծերունին.—սակայն քեզ ի՞նչ և ես ինչո՞ւ պէտք է այդ ամենը քեզ պատմեմ և այն էլ մանրամասն: Ամօթ չէ, այսքան տարուայ (ոչ-բարով) վարժապետ ես, բայց դեռ այնքանն էլ չես հասկանում, որ հակառակորդի դէմ այդպիսի հարցեր զարթեցնելը ուղղակի ցածութիւն է: Եթէ սեպհական հաստատ փաստեր չունիս նրա գրածները հերքելու, խելօքութիւն արած կը լինիս, եթէ բոլորովին լռես: Քեզ աստուածաբան ես համարում, հապա չէս ամաչում, որ դեռ չգիտես, թէ շատ դէպքում լռութիւնը ոսկի է: Գնահ և խելօք կաց—չափդ ճանաչել իմացիր»...

Ուզածի փոխարէն այդպիսի կործանիչ պատասխան ստացողը եթէ պատիւ ասուած զաղափարի մասին հասկացողութիւն ունենար, պէտք է ամօթից դետինը մտնէր:

Բայց որովհետև չակերտաւոր մանկավարժը հէնց էն-գլխից թափուր է ամօթից, ուստի-և՛ իբրև հիւանդագին մեծամիտ, չլսեց այդ խորհրդին. այլ ինքն իրա մասին շատ մեծ կարծիք ունենալով՝ ուզեց ցոյց տալ, թէ ինքը այնքան խելօք է, որ անփաստ էլ կարող պապանձեցնող պատասխան գրել: Եւ... գրեց ու տուաւ «Հովիւին»:

«Հովիւի» Հայր-խմբագիրը այդ անփաստ և միայն հայնոյանքով լի պատասխան-խմբմանը արհամարհան-

քով վերադարձրեց ոչ թէ մէջը կծու խօսքեր լինելու համար, ինչպէս անազնուաբար ճգնում է ցոյց տալ խարդախ գրչակը, այլ հետևեալ խօսքերով.

— «Պառաւական բամբասանքները գրի առնելու բաներ չեն, պ. «աստուածաբան»: Ընթերցող հասարակութեան համար որևէ նշանակութիւն չի կարող ունենալ այն բանը, թէ այս կամ այն անձը նամակ է գրել, սա կամ նա համակրում կամ հակակրում է ձեզ. դրանք բոլորը մասնաւոր բաներ են, որոնց տեղը մամուլը չէ և որոնք յարուցած խնդրին չեն վերաբերում...: Իսկն ասած՝ դուք պէտք է շնորհակալ լինիք, որ չեմ տպում. որովհետև գրածներդ ուղղակի անպատուութիւն են աստուածաբանի տիտղոս կրող մարդու համար: Յօդուածիդ վերնագիրը հայհոյանք է, ապա սկսվում է հայհոյանքով ու քամքասանքներով, շարունակվում անվայել հայհոյանքներով և վերջանում էլի նոյն անվայել հայհոյանքներով»...

Դէ, երբ մի մարդ այնքան անխելք է, որ չըլսեց գրականութեան մէջ ծերացած, փորձառու ծերունուն, այլևս ինչպէս կարող էր լսել Հայր-խրմբագրին, որի դէմ շատոնցուանից մուռ էր պահում՝ թէ ինչո՞ւ «Հովիւի» մէջ չի հիւրընկալում իրա գրած յօդուածները, այլ միշտ խմբագրական գամբիւղն է գցում:

Յետ ստացած յօդուածը փոխանակ դէն շարտելու, որ այնքան նախատինք կուլ տալու պատճառ էր դարձել, ողորմելին գրածները վերև-ներքև արաւ, սկզբի գրած հայհոյանքները յօդուածի մէջ սփռեց, արտագրեց ու նորից բերաւ *): Սակայն «Հովիւի»

*) Իբրև «Հովիւի» խմբագրութեան մօտիկ մարդ, կարողացել եմ գրական պոռնիկի այդ երկու գրածն էլ:

խմբագրութիւնը էլի մերժեց, թէպէտև շատ խընդրեցի տպելու, որպէսզի ես էլ իմ ասելիքն ասէի և տեսնէինք՝ ո՞ւմ մէքն է լաց լինում: Ուրեմն անազնուաբար ստում է գրական պոռնիկը. թէ այդ և թէ առաջին բերածը շաբաթներով չի պահուել, այլ երբ եկել է, այն-ժամանակն էլ յետ է ստացել. թող շուտ գար, շուտ էլ յետ ստանար. խմբագիրը խօմ չէր տանելու: Ինքը՝ գրական պոռնիկը կարող է իրան շատ մեծ ... երևակայել և դրանով էլ մխիթարուած մնալ և ուրախացնել Խուստի-բէգերին ու նմաններին, բայց դա պատճառ չէ որ ուրիշները իրան մարդատեղ դնեն:

Բայց որպէսզի անբարոյական յօդուածագրի երեսը չտեսնի, Հայր-խմբագիրը ծերունի Busenkamerad-ի միջոցով յետ տուաւ մի տոմսակի հետ, որի բովանդակութիւնն էլ մօտաւորապէս այս էր.

«Պ. Քամալեանց, նորից կրկնում եմ որ այդպիսի անփաստ, «Հովիւի» մէջ յարուցած խնդրի հետ հեռաւոր կապ իսկ չունեցող գրութիւնը չեմ կարող տպագրել. բայց եթէ ըստ էութեան պատասխանէք, խոստանում եմ տպել»:

Հէնց այդ ժամանակն էր, որ «Հովիւի» № 10-ի մէջ ԱՅԼԵԻԱՅԼՔ բաժնում այսպիսի հարց էր տուած.

«Ինչո՞ւ այն ուսուցիչները, որոնց բարոյականի դէմ առարկութիւններ են լինում, տակաւին շարունակում են իրանց պաշտօնը»:

Ասում են Ներսիսեան Դպրանոցի բարձր դասատանցիների համբերութեան բաժակի մէջ փոթորիկ յարուցանողը այդ հարցը եղաւ: Նրանք գնալով «մանկա...վարժի» մօտ մօտաւորապէս հետևեալ վերջնորոշումն են առաջարկել.

— Դուք պէտք է կամ հրապարակով անհերքելի փաստեր բերէք և վերականգնէք ձեր շօշափուած

պատիւը (անմեղ պատանիք, գոյութիւն չունեցող բանը երբէք չի կարելի շօշափել) և կամ դասի չգաք, այլ պէս ամբողջ Դպրանոցի աշակերտներէ առաջ դասադուլ կ'անենք:

Հարուածը խիստ էր և բարոյապէս սպանող, ոչնչացնող մի ուսուցչի համար. ուստի ճարահատեալ պատասխանում է աշակերտներին.

— Միքանի օր ժամանակ տուէք, յետոյ ազատ էք ձեր ուզածն անելու:

Չուրն ընկնողը ազատուելու յուսով ծեղիցն էլ է բռնում: Այն՝ ինչ-որ անկարող եղան հասկացնել փորձառու ծերունին և «Հովիւի» Հայր-խմբագիրը, կարողացաւ անել աշակերտների սպանալիքը, ուստի և պասկիլիաձև պատասխանը մի կողմը դրաւ և՛ անիծելով թէ՛ աշակերտներէ աչքը բաց անողներին և թէ՛ իրանց՝ աշակերտներին, գլխի մէջ դեռ միքիչ մնացած խելքով հազիւ հազ կարողացաւ մի անգոյն ու անփաստ բաց նամակ գրել:

Այդ բաց նամակն ստանալուն պէս «Հովիւի» խմբագրութիւնը գրեց պատասխանների մէջ.

Թիֆլիզ. Ս. Քամալեանցին:—Ձեր նամակ կը տպագրուի:

Բայց որովհետե՛ ինչպէս սովորութիւն է, Չատկի տօներէից յետոյ հայ պարբերական թերթերը մի կամ միքանի № լոյս չեն տեսնում, «Հովիւը» ինչո՞ւ պէտք է բացառութիւն կազմէր. սակայն «մանկա... վարժի» համար ի՛նչ նշանակութիւն ունի «ընդհանուր սովորութիւնը», մանաւանդ-որ ինքը աշակերտներից միայն միքանի օր ժամանակ էր խնդրել, իսկ պայմանաժամն անցնում էր: Այդ բանից սարսափահար ու լեզապատառ իսկոյն մի նամակ է գրում ծերունի Busenkamerad-ին, որի մէջ փեղ-ցփեղ խօսքեր էր

ուղղել նաև «Հովիւի» խմբագրի հասցէին՝ իրա բաց նամակը անմիջապէս չտպագրելու համար:

Հայր-խմբագիրը՝ սխալմամբ մարդ կոչուածի այդ աստիճան անպատկառ լրբութիւնից վրդովուած, թէև ուզեց նամակը զամբիւղ գցել, սակայն չարաւ, վասնզի արդէն հրապարակով խօսք էր տուել տպագրելու, և տպագրեց: Ահաւասիկ այդ անգոյն, ուղղակի ծիծաղելի պատասխանը.

ԲԱՅ ՆԱՄԱԿ Պ. ՉԱՔԱՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻՆ

Խելացի բան չէք արել, որ չնչին առիթից անտեղի վերաւորուելով «Հովիւի» 6 և 7 №№-ում գետեղել էք մի գոհիկ գրութիւն:

Ձեր հայեցողքները թողում եմ անպատասխան: Ասացէք խնդրեմ, Դուք չէիք 1898 թ. երբ իմացաք թէ տիկ. Նաղիրեանը վճռել է ինձ արտասահման ուղարկել, էլ չգիտէիք ինչպէս գովաբանէք ինձ բարերարունուս մօտ առանձին, Վեհափառի մօտ առանձին, Սուրէնեանց սրբազանի մօտ առանձին: Այն ժամանակ ես ընտիր մանկավարժ էի, ազնիւ մարդ էի, ընդունակ գրող, իսկ այժմ... բոլորովին դրանց հակառակ: Արդեօք ինչ գաղափար պէտք է կազմած լինին ձեր յիշողութեան մասին էջմիածնում: Ձեր խանութ յաճախողներից միայն ճուղուրեանց Տէր-Յ. թող ասի, թէ ինչ գովասանքներ է լսել իմ մասին Ձեր բերանից: Ձեմ յիշում այն ներբողներով լի նամակները, որ ոգևորուած գրում էիք ինձ Դորբաս եղած միջոցիս: Աստուածարանութիւն ուսանելու մի խրախուսողն էլ Դուք էիք, էլ ինչո՞ւ էք գրութեանդ մէջ աստուածաբան խօսքն անթիւ անգամ կրկնում: Դուք չէիք առաջին անգամ ցնձացողը, երբ երկու տարի առաջ լսեցիք թէ Վեհափառն ինձ իբրև կրօնուսույցի իւր գոհունակութիւնը յայտնելու համար Ս. Գրքի մեկնութեան վերաբերեալ զբքեր է նուիրել: Խորէն էֆէնդին ասածիս վրկայ է:

Թէ արտասահման գնալուց առաջ, թէ վերադառնալուց ետ Դուք եղել էք ինձ հետ ամենամօտ բարեկամ. ընդամենը

մի տարի է, որ ձեր աչքում դարձել եմ «անազնիւ մարդ, տգէտ տիրացու, ապիկար մանկավարժ և այլն»: Այդ էլ այն պատճառով, որ երևակայում էք, թէ ձեզ միքանի շահու զնաս եմ հասցրել: Իրողութիւնը կ'ասեմ, թող ընթերցողը դատի, թէ ո՞վ է անարդարը:—Բարձր դասարանի աշակերտներին հարցուփորձ անելով նկատել էի, որ Ծերենցի պէս վիպասանի գրքերը շատ քիչ են կարդացվում: Հետաքրքրուելով իմացայ, որ պատճառը մասամբ արևմտեան բարբառն է. իբրև Ծերենցի ջերմ համակրող՝ վերցրի նրա «Երկունք թ Դարու» երկը («Աղբիւր-Տարազի» 1895 թ. պրէսիան, գունաւոր երեսով, հեղինակի պատկերը վրէն—գինը 2 ուրբլի: Չաքար Գրիգորեանցի ազգանուն հետքը չկայ) և հիւսեցի «Սասունցի Յոզնան» գրքոյկը: Որոշել էի տպել ընտիր թըղթի վրայ և գինը նշանակել 30 կոպ.: Ծերենցի միակ ժառանգ ճանաչում էի մեծ. պ. Աղ. Մելիք-Ազարեանցին. գիմեցի իւր ժամանակ ու հրատարակելու իրաւունք ստացայ:

Դուք, պ. Չաքար, այդ լսելով զայրացաք, ասելով թէ Ծերենցի գրքերի մինչև երրորդ հրատարակութեան իրաւունքը Ձեր ձեռին է, ահագին փող էք վճարել հեղինակին և ստորագրութիւն ստացել. Մելիք-Աղ.-ը մազիչափ իրաւունք չունի, ևն ևն: Ձեր փորացաւը պարզ էր, բայց ինչ դժուար էր դրան ձար գտնելը: Եթէ իրաւ հանգ. Ծերենցից ստորագրութիւն ունէիք, ուղղակի ներկայացնէիք նրա փեսային: Փառք Աստծու, պ. Մելիք-Ազարեանցը ոչ աղքատ մարդ էր, ոչ անյայտ: Արդէն «Մշակ»-ում գրել էի, որ իրաւունքը նա է ինձ տուել, իմ միջոցով ձեր կրած նիւթական զնասը կարող էիք նրանից պահանջել: Եթէ նա կ'ասէր, որ ինքը տեղեկութիւն չունի այդ բանից, այն ժամանակ դատարան կար, գանգատի միջոցով ինձանից մէկին երկու տուգանք կ'առնէիք: Ինչո՞ւ մինչև օրս ձեր մօտի ստորագրութիւնը ձածուկ էք պահել նրա միակ ժառանգից. գոնէ ինձ անձամբ պ. Մելիք-Ազարեանցը յայտնեց, որ ամենևին տեղեկութիւն չունի այդ ստորագրութեան մասին, ուստի յանձնարարել է պ. Հ. Առաքելեանին, որ ձեզ հետ խօսի, եթէ իրաւ ստորագրութիւն ունէք, իմանայ թէ ի՞նչ պայմանով կարելի է գնել: Այնուհետև ինձ յայտնի չէ, թէ ինչո՞ւ այդ մտադրութիւնը մինչև օրս անկատար է մնացել:

Այժմ ընթերցողը թող ասի. ես ինչո՞վ եմ մեղաւոր ձեր առաջ: Ձեր գործը պ. Մելիք-Ազարեանցի հետ պէտք է լինէր և ոչ ինձ հետ: Եթէ ցանկանայիք գործը կարճ վերջացնել, Ձեր մօտի ստորագրութիւնը լոյս կը հանէիք:

Դուք գրքոյկներիս մասին էլ միքանի կարծիքներ էք յայտնել—որոնց անհեթեթութիւնը արժէ պարզել:

1. Երեք տարի առաջ ես Փր. Հոֆմանից հայացրել եմ մի պատկերազարդ գրքոյկ «Ժամանակը ոսկի» անունով: Բնագիրը կոչվում է «Zeit ist Geld»: Այդ նիւթը 50 տարի առաջ «Հիւսիսափայլի» համար թարգմանել է հանգ. Ս. Նազարեան և անունը դրել «Ժամանակը արծաթ է»: Դուք ինձ մեղադրում էք, որ ես Ս. Նազ.-ի փառքը խլել եմ, այսինքն ինչո՞ւ նրա անմարսելի լեզուին չհաւանելով, ինքս գերմաներէնից աւելի պարզ աշխարհաբարի եմ վերածել՝ բնագիրը տեղ տեղ յապաւելով:

2. «Վէրք Հայաստանի» գրքի հերոս Աղասին ընթերցող պատանեկութեան մատչելի դարձնելու նպատակով ամենայն խնամքով կազմել եմ «Միրելի հերոս» գրքոյկը: Ամեն մի հայ կը խոստովանի, որ Խաչ. Աբով.-ի բնագիրը դժուար է կարդացվում: Իմ աշխատանքը եղել է միայն դիւրացնել պատանի ընթերցողի գործը: Բայց արի տես, որ ձեր կարծիքով ես աղաւաղել եմ «Վէրք Հայաստանին» և ինձ սեպհականել:

3. Էդ. Ամիչիսի «Միրտ» գրքից թարգմանել եմ 9 պատմութիւն և պատկերազարդ գրքոյկով լոյս ընծայել: Ձեր կարծիքով իրաւունք չունէի այդ անելու, որովհետև 20 տարի առաջ այդ «Միրտ» գիրքն արդէն թարգմանուած է պ. Փիլ. Վ.-ի միջոցով: Ի՞նչ զնաս. ես թարգմանել եմ գերմաներէնից աւելի լրիւ օրինակից, նա թարգմանել է ֆրանսերէնից. ես հրատարակել եմ միայն 9 ամսօրեայ պատմութիւնները 10 պատկերով, նա ամբողջ գիրքն առանց պատկերի: Էլ լեզուի պարզութեան, գնի էթանութեան, տիպի գեղեցկութեան, թղթի լաւութեան վրայ չեմ խօսում: Ձեր կարծիքով ես Փիլ. Վ.-ի թարգմանութիւնը սեպհականել եմ:

Թող ընթերցողն ասի արդեօք այդպէ՞ս է.

Ս. Բամակեանց

Մտքի պոռնիկին միայն վայել խարդախութիւնը, որ կատարել էր «Խնչձու էր հերսոտել» («Սխր ինչձու է») պատկերի հետ, նոյն կերպ է վարուել նաև այդ «Բաց նամակը» արտատպելիս. նախ՝ էլի գրական խուլիզանութիւն է արել—փոխանակ «Հովիւից» նոյնութեամբ արտատպելու իրա պատկեր-բրօշուրի մէջ, երկու տեղ իրան ձեռնառու տողեր է աւելացրել, իսկ մէկ տեղ էլ տողեր հանել, որոնց մասն այնքան էլ ձեռնառու չէր իրան պէս խարդախի համար:

Երկրորդ՝ որպէսզի այդ՝ միայն բարոյապէս ընկած մարդու ստոր խարդախութիւնը ոչ-որ չկարողանայ իմանալ, ոչ-միայն չի նշանակել «Հովիւի» Ա-ը, այլև զիտմամբ խարդախել է և՛ տարեթիւր, և՛ ամսաթիւր. փոխանակ 1907 թ. մայիսի 6, նշանակել է՝ 1906 թ. ապրիլի 6:

Հիմա թոյլ ընթերցողը ձեռքը խղճի վրայ դնէ և ասի՝ արդեօք իրաւունք չունիմ այդպիսի ահնյայտնի անաղնիւ և ստոր խարդախին գրական խուլիզան և մտքի պոռնիկ անուանելու. որովհետև այդպիսի խարդախութիւնը չի կարող ոչ lapsus calami լինել և ոչ էլ սովորական վրիպակ:

Այդ բաց նամակը թէպէտ մի անհերքելի ապացոյց է սխալմամբ մարդ կոչուածի անամօթ ստախօս լինելուն, բայց ողորմելին կարծել է թէ գրանով պապանձացրել է պ. Զաք. Գրիգորեանցին, և էլի նորից, առանց խղճի խայթ զգալու, թոյլ է տուել իրան՝ երեսի արուար վէր եկած անպատկառ պոռնիկի բերանին միայն սազական պակաս խօսքեր ուղղել յարգելի ծերունի ուսուցչի հասցէին:

Որպէսզի պարզ ցոյց տամ, թէ այնքան լիբըն է Քամ. Ս. ասուած անարգ արարածը, որ ամենքից արհամարհուած լինելը անամօթաբար սուտ չտեսնե-

լու է դնում *) և ամեն բան բացատրում ու մեկնութիւն է տալիս գրական խուլիզանին վայել կերպով, այստեղ առաջ կը բերեմ՝ յատկապէս պատմանձունը բառի առիթով իմ գրած նամակը պ. Զ. Գրիգորեանցին և նրա պատասխանը.

Յարգելի Ուսուցիչ

Պարոն Զաքար.

Նամակիս հետ ուղարկում եմ՝ սխալմամբ մարդ կոչուած Սարգիս Քամալեանցի ամիսների տքնութեան ու ճգնութեան արդիւնք-բրօշուրը, որի մէջ, ինչպէս կը տեսնէք, այդ գրական գողը և (ներեցէք) պոռնիկը ըստ իր սիրած հին փեշակի և ընտուր ծիրքի ուրիշների հետ Ձեզ ևս նորից կծելու փորձ է արել երկու տեսակ. մին՝ ուղղակի հայնոյել է Ձեզ, մէկ էլ՝ իրա իսկ գրածը Ձեր դէմ, որ տպուեց «Հովիւի» մէջ, փոփոխել է, ինչ-որ անվայել և ստորութիւն է մի ճշմարիտ, պատուի զգացմունք ունեցող ազնիւ գրագէտին և միայն վայել՝ լաւի ու վատի միջև եղած տարբերութեան գիտակցութիւնից թափուր մնացած գրական խուլիզանին և բարոյապէս ընկածին, որի համար՝ ինչպէս Ձեզ էլ ու շատերին էլ յայտնի է, ստելն ու խարդախելը վաղուց է մարմին ու արիւն դարձած:

Խնդրում եմ կարգաք և բարի լինիք հետևեալ երկու հարցիս պատասխանելու.

ա) Ճիշտ է արդեօք, Յարգելի Ուսուցիչ, այդ գրական պոռնիկի ասածը, թէ «Հովիւի» մէջ իրա գրածները այնպիսի անհերքելի (?) փաստեր էին, որ Գուք ճարհատեալ լուռ մնացիք. մինչդեռ ևս համոզուած էի թէ Ձեր լուրթեան բուն պատճառը Ձեր խորին արհամարհանքն էր դէպի մի բարոյապէս ընկածի անճարակ կմկմոցը:

բ) Առհասարակ ի՞նչ եզրակացութեան եկաք սխալմամբ

*) Ասածիս ապացոյցը լրագիրներում տպուած յայտարարութիւնը. ներսիտեան Դպրանոցից նորերս վանդուեց իբրև անբարոյական, բայց այնքան պրտկիբես, այնքան անամօթն է որ առանց կարմրելու դրել է՝ «Ուսուցիչ (թէ՛ չակերտաւոր մանկա...վարժ) Քամալեանց Ս. մասնաւոր դասեր է տալիս»:

մարդ կոչուած պասկվիլանտի մասին՝ կարդալով նրա այդպիսի լպիւրը ու անպատկառ տոնով գրածը:

Չմոռանամ ասելու որ «Ինչո՞ւ էր հերսոտել» պատկերը,—որ մի շատ անմեղ պատմուածք էր «Արձագանքում» «Ախր ինչո՞ւ է»... վերնագրով, որի մէջ մի հատիկ վիրաւորական խօսք անգամ չկար, իսկ ամբողջ պատմութիւնից աւելի շուտ պատմողի ապականուած ներքին աշխարհն է փայլում, և ուրեմն աւելի վիրաւորական է իրա համար, քան ինձ համար,—խարդախել է, ուզած տեղերը փոփոխել, բայց իբրև անպատկառ լիրք ստել է հրապարակով՝ թէ «նոյնումնամբ է արտատպում»...

Երբ մի մարդ այնքան ստոր է ընկել, այնքան աներեսն է ու աննամուսը, որ իրան թոյլ է տալիս հրապարակում եղած և արդէն հասարակութեան սեպհականութիւն դարձած փաստերը ևս անամօթարար աղաւաղել և այդ զգուելի խուլիզանութիւնը լրբաբար «նոյնութեամբ արտատպել» է անուանում, էլ կարող էք երևակայել, թէ ինչ ու ինչ ստորութիւններ պէտք է կատարած լինի՝ իրա սեպհականութիւն դարձած զժբաղդ նամակներն զլսին:

Միշտ Ձեզ յարգող և երախտապարտ նախկին աշակերտ՝

Վեոն Մելիք-Աղամեանց

27 օգոստոսի 1907 թ.

Թիֆլիզ:

Ահա նաև այդ նամակիս պատասխանը.

Սիրելի Լեւոն.

Դուք ինձ հարցնում էք՝ ի՞նչն էր պատճառը, որ չպատասխանեցի «սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ին»: Պատճառը, սիրելիս, չէք սխալուել՝ իմ խորին արհամարհանքս էր ու խղճահարուցութիւնս:

«Աստուածաբանի» պատասխանը «Հովիւ» շարաթաթերթում լոյս տեսնելուց զեռ շատ առաջ երբ Ներսիսեան Դպրանոցի Մանկավարժական ժողովում և թէ Հոգաբարձութեան խորհրդարանում հարց էր զարթեւել՝ Քամալեանց Սարգիսը կամ պէտք է դատարանում մաքրուի մամուլի մեղադրանքներից և կամ հեռանայ Դպրանոցից, որ ուղղակի անպատուութիւն է բերում իրա ներկայութեամբ,—իսկ նա

(«աստուածաբանը») փոխանակ անմիջապէս դատարանին դիմելու, ինչ-որ կ'անէր ոչ-թէ բարոյական վարժապետը, այլ մի տղէտ օրբանն անգամ, սկսեց պատէպատ ընկնել և դատարանից փախչել,—մարգարէ չպէտք է լինէր մարդ՝ գուշակելու, թէ չափերտաւոր մանկավարժի օրերը համարած էին և որ նա անպատճառ վռնդուելու էր Դպրանոցից, ինչպէս և իրօք տեղի ունեցաւ յետոյ:

Ահա այդ աչքի առաջ ունենալով, լաւ համարեցի արհամարհել «աստուածաբանի» կմկմոցը՝ հետևելով այն առածին, թէ ընկածին այլևս չեն խփում. իսկ Քամալեանց Ս. ասուած պարօնը խօսք բարոյապէս էր ընկած: Մանաւանդ-որ այն բոլորը, ինչ-որ գրել էր «Հովիւում» իմ մասին, իսկ այժմ նորից տպել է, այն էլ տեղ-տեղ խեղաթիւրելով, «Ինչո՞ւ էր հերսոտել» և այլն գրքոյկում, իբրև-թէ ես իրան խորհուրդ եմ տուել Աստուածաբանութիւն ուսանելու, իբրև թէ վեհափառ կաթողիկոսի, Առաջնորդի և ուրիշ մարդկանց մօտ գովել եմ իրան, այդ բոլորը ոչ այլ ինչ են, բայց եթէ «ցնդաբանութիւններ և հիւանդ ուղեղի վիժմունքներ»...

Կարծում եմ որ առաջին հարցիդ պատասխանած լինելով՝ պատասխանած եղայ նաև երկրորդ հարցիդ: Ախր ուրիշ ի՞նչ կարելի էր սպասել բարոյապէս ընկած մի մարդուց, եթէ ոչ անպատիւ ու անազնիւ վարմունքներ:

Երբ մի մարդ՝ աստուածաբանի տիտղոս է իրան սեպհականում, բայց այնքան էլ չի հասկանում, թէ մէկից խնդրած դրամը մերժուելու համար չի կարելի ջգրու այնպիսի մուրտառ պասկվիլ շարագրել, ինչպիսին որ այդ տարօրինակ «աստուածաբանը» գրել էր X հարուստի մասին բաւական չէ, այլև վստահացել է առանձին գրքի մէջ էլ լոյս հանել, որպէսզի թէ բարոյապէս վստած լինի X հարուստին և թէ երկու՝ իրար հետ խաղաղ ապրող ամուսինների մէջ գժտութիւն գցի և այնքան է իր այդ պախարակելի շաւղով առաջ ընթացել, որ առանց կարմրելու նոյնիսկ X հարուստի հանգուցեալ ծնողի մարմնական պակասութիւնը ևս մէջ է բերել, ինչպէս-որ չէր ամաչել ձեր չլսելը ևս խօսակցութեան և լրբագրութեան նիւթ շինել, այլևս ի՞նչ կարելի է պահանջել իրերի մասին այդպէս սխալ ու անպատուաբեր հասկացողութիւն ունեցող «աստուածաբանից»:

Երբ մի մարդ ինքն իրան մանկավարժ է անուանում և միևնույն ժամանակ չի հասկանում, որ եթէ ինքն անկարող է իր սիրած հին փեշակից—զրպարտելու սովորութիւնից ձեռք վերցնել, բայց զոնէ պարտաւոր է ննջեցեալներին՝ բերան չբերել, այլևս ինչ լաւ բան կարելի է յուսալ այդպիսի փր- չացած մտածողութիւն ունեցող «մանկավարժից»:

Երբ մի մարդ իրան զրազէտի տեղ է ուզում ծախել հասարակութեան վրայ, բայց զոնէ այնքանն էլ չի հասկա- նում, որ վերին աստիճանի անազնիւ վարմունք և ստորու- թիւն է ուրիշների անունով եկած նամակները բանալը և կամ առանց իրաւունքի ուրիշից ստացած մասնաւոր նամակ- ները հրատարակելը, այն էլ ազատազած, ինչպէս գրում էք, ինչ-որ, այն, պատիւ չէ իսկական զրազէտ և փոքրիշատէ բարեկրթութեան տէր մարդու համար, այլևս ինչ վատ բանի տէք որ ընդունակ չլինի այդպիսի «զրազէտը»:

Երբ մի մարդ՝ զրդուած մնափառութիւնից և լոկ իրա գր- պանի օգտի համար առանց խղճահարուելու ուրիշների մտքի յղացումներով կամենում է իրան նշանաւոր հեղինակ ցոյց տալ, այդպիսի մնափառը ինչից կարող է այլևս ամօթ ու պատկառանք ունենալ:

Երբ մի մարդ բարեկամութեան անունով է երդվում հրապարակով և միևնույն ժամանակ ապականուած հոգու բո- լոր զօրութեամբ ձգտում է զանազան հնարքներով 40 տարի իրար պատիւ ու մեծարանք տուող, դէպի միմեանց յար- զանքով վերաբերուող բարեկամներին—ինձ ու պ. Աղ. Մե- լիք-Ազարեանցին կոռւացնել՝ մեր մէջ անհամութիւն ու ա- նախորժութիւն սերմանելով, կարող է այլևս այդ տեսակ մարդու համար սրբութիւն լինել:

Երբ մի մարդ ինքն իր ցուցակ ծառայութիւնն է տա- լիս և ի-միջի այլոց իրան «25 տարուայ գրող» կոչում, բայց չի հասկանում որ տարիներ առաջ գրած ու հասարակու- թեան սեպհականութիւն դարձած մի անմեղ պատկեր՝ եթէ իրքև փաստ է առաջ բերում, իրաւունք չունի նոյնիսկ ամե- նաանշան փոփոխութիւն իսկ անելու, այնինչ ինքը՝ պատկեր շարադրողը անազնուաբար փոփոխում է այնպէս, որ վերա- ւորական դասնայ, և դեռ այդ էլ քիչ համարելով հրապարա- կով ուրանում է արածը, ասելով՝ «նոյնութեամբ եմ ար-

տատպում», այլևս կարող է այդպիսի խարդախ մարդը ըն- դունակ լինել անկեղծ բարեկամութեան, ազնիւ գործունէու- թեան և ինչ արժէք կարող է ունենալ օրինաւոր մարդկանց աչքում այդպէս մարդու ասածն ու գրածը:

Երբ մի մարդ իրան՝ և՛ զրազէտ է ցոյց տալիս, և՛ հե- ղինակի տեղ ծախում, և՛ 25 տարուայ գրող անուանում իրան, և՛ «գերմանական աստուածաբանի» տիտղոս իրան սեպհականում, բայց այնուամենայնիւ դեռ չզիտէ, դեռ չի հասկանում, որ չի կարելի մի քահանայ խմբագրի դէմ այն- պիսի անհամեստ խօսքեր ու ակնարկութիւններ գրել լոկ միայն նրա համար, որ արժ. Տէր-Եղնիկը իր բարոյական պարտքն է կատարել, այն է՝ իրա շարաթաթերթում իմ «Թեթև թիւ- րիմացութիւն» յօդուածիս հետ ամենեին կապ չունեցող հայ- հոյական յօդուածները մերժել է միշտ՝ խոստանալով բո- տանական պատասխանը տպելու, այն, երբ այդ տարօրինակ թէ նորօրինակ «աստուածաբանը» այդ էլ չի հասկանում, դէ, ասացէք, սիրելի Լևոն, այլևս որեւէ լաւ գործ, ազնիւ վարմունք կարելի է յուսալ մի այդպիսի բարոյապէս և մը- տաւորապէս ընկած մարդուց: Մնխաւս:

Բայց ամենից հետաքրքիրը և թէ միանգամայն ծիծա- ծաղելին այն է, որ ինձ դատարանի դուռն է ցոյց տալիս այն մարդը, որ նոյն դատարանից ինքը հատ ոտքով է փախ- չում առանց յետ մտիկ տալու: Ուրեմն պարզ է թէ այդ նորօ- րինակ «աստուածաբանը», այդ չակերտաւոր մանկավարժը իրա գրածի միտքն անգամ լաւ չի ըմբռնում, այլապէս ին- քը իրա գլխին չէր խփել, այն է՝ ինքը դատարանից փա- խուստ չէր տալ, իսկ ինձ նոյն դատարանի դուռը ցոյց տալ: Այն, պարզ է շատ որ ինքը իրա գրածը ևս չի հասկանում: Իսկ եթէ հասկանում է, բայց այնուամենայնիւ սուտ չգի- տեցողս է իրան ցոյց տալիս, ասել է այդ տարօրինակ «աս- տուածաբանը» այն տեսակ խարդախ մարդկանցից է, որից ամեն տեսակ վատ և անազնիւ բան սպասելի է:

Որ վերի բոլոր գրածներս ճիշտ են, ազնիւ մարդկանց մէջ դրանց մասին երկու կարծիք չի կարող լինել թէև, բայց-և-այնպէս մեղաւորը Քամալեանց Սարգիս աստուած պարոնը չէ, այլ այն կաթը, որ ծծել է նա, և այն շրջապա- սը, որ մանկութեան ժամանակ կրթել է նրան և ազդեցու-

Թիւն ունեցել վրան: Այժմ արդէն շատ ուշ է, ոչնչով չի կարելի ուղղել այդ տեսակ մարդուն, վասնզի ըստ ժողովրդական առածի՝ «Ծծի կաթի հետ ներս դնացածը հոգու հետ միայն դուրս կը գայ»:

Հաւատացէք ինձ, սիրելի Լեոն, հիմա ինչքան էլ գրուի այդ չակերտաւոր մանկավարժի մասին, ինչքան էլ նրա հոգու այս կամ այն տղեղ կողմը մերկացնուի, էլի ոչինչ չի օգնիլ, ոչ մի բանով չի ուղղուիլ ու բարելաւուիլ այդ արդէն հասակն առած-պրծած մարդու փշացած ներքին աշխարհը՝ լինէր դա «աստուածաբան» Քամալեանց Սարգիս, թէ մի այլ անձնաւորութիւն:

Ըստ առաջնայն Ձեզ սիրող և միշտ բարեղ կամեցող՝
Չար. Գրիգորեանց

3 սեպտեմբերի 1907 թ.
Քիֆիդ:

Անչափ ցաւում եմ, որ այս բոպէիս ձեռքի տակ չունիմ ոչ «Վէրք Հայաստանին» ու «Սիրելի Հերոս» գրքերը և ոչ էլ «Հիւսիսափայլի» №№-ը: Իսկ թէ «Սասունցի Յովնան» գրքի և թէ յարգելի պ. Աղ. Մելիք-Ազարեանցին սխալեցնելու մասին արդէն խօսուեց վերը:

Ի՛նչ վերաբերում է «Ժամանակը ոսկի» գրքին, այսքանը միայն կ'ասեմ, որ «Zeit ist Geld»-ը հայերէն պէտք է լինի՝ «Ժամանակը ոսկի է» և ոչ թէ «Ժամանակը ոսկի»: Սակայն խարդախ ազատ (!) փոխադրողը դիտմամբ է այդպէս արել որ իրականութեամբ անէ, որպէսզի ոչ-ոք չիմանայ թէ այդ պատմութիւնը արդէն վաղուց կար հայերէն թարգմանուած և հետաքրքրուողը չհամեմատէր և չտեսներ նոր թարգմանչի գրական շահատակ լինելը:

Գալով «Սիրտ» գրքին, զգուելի պատկվիւնան ու բանագողը մեծամտութեամբ միայն իրա գլուխն է գովել, այն է՝ որ ինքը լրիւ օրինակից է թարգմա-

նել, որ իրա թարգմանածի լեզուն անլի պարզ է, թուղթն անլի լաւ, զինը անլի էժան, տիպը անլի զեղեցիկ, բան պ. Փիլ. Վարդանեանինը:

Այդ մի այնպիսի բեկլամ է, որ սազական է միայն Քամալեանցի նման ուրիշների վաստակներից օգտուող... գրական անագնիւ շահատակին:

«Buch für die Knaben» գրքի լրիւ լինելը միայն միքանի՝ մանկավարժական տեսակէտից աւելորդ բառերն ու նախադասութիւններն են, ուրիշ ոչինչ:

Թղթավաճառների և թէ մշտական գրքեր հրատարակողների կարծիքով պ. Փ. Վ.-ի գրքի թուղթը ոչնչով պակաս չէ ընկլամաւորի թղթից:

Պ. Փ. Վ.-ի գրքի տիպը զերիվնր է այժմեան ըողոր արագատիպ տպարանների տպածից:

Շատ կարելի է տիպ ասելով այդ խարդախ տիրացու աստուածաբանը տառեր է կամեցել ասել:

Ճիշտ է իրա հրատարակածը № 12-ով է, իսկ Փ. Վ.-ինը № 10-ով, սակայն այդ ոչինչ չի նշանակում. այդ կարող է տպագրական գործին անտեղեակ մէկին գուցէ շլացնել և ոչ թէ գործից տեղեակին. վասնզի պ. Փ. Վ.-ի գրքում բոլոր ընկլիկնները նոր տողից են, որով ընթերցողը անչափ հեշտ է ըմբռնում կարգացածը, իսկ չմոռանանք որ գիրքը դեռևս լեզուից բոբիկ պատանիների համար է. այնինչ գրական խուլիզանի հրատարակածի մէջ շարուած են համարեա միապաղաղ, որպէսզի քիչ տեղ բռնեն և ծախսը քիչ զնայ. իսկ թէ այդ լաւ չէ պատանի ընթերցողի համար, այդ այնքան էլ չի հետաքրքրում շահախնդր գրչակին, նրանը իրա գրպանի շահն է:

Միայն անամօթ խարդախը գնի մասին կը խօսէր. ախր պ. Փ. Վ.-ի թարգմանութիւնն ամբողջն է, ինչպէս ինքը՝ պատկվիւնատը ևս խոստովանում է, և

բաղկացած է ժողով 350 անդամից, այն-ինչ իրա հրատարակածը ժողով 150 անդամից, այլևս ինչ համեմատութիւն կարող է լինել դրանց մէջ, որ գրական պոռնիկը համեմատում է:

Իսկ ինչ վերաբերում է լեզուին, որի մասին գրելով ու դէսուդէն խօսելով ուղղակի զանազան է տարել, ես այստեղ առաջ կը բերեմ երկու թարգմանութիւններից միջանի կտոր դէմադէմ դրած, թող ընթերցողը տեսնի թէ «գերմաներէնից աւելի լրիւ օրինակից»-ի առաւելութիւնը ինչու՞ն է կայանում. թող լեզուից բան հասկացողն ու լեզուի ճաշակ ունեցող ընթերցողները համեմատեն և ըստ այնմ գաղափար կազմեն և տեսնեն Քամ. Ս.-ի զգուշի պարծենկոտութիւնը, դրա լեզուի անկանոն, գծուծ, աղքատ ու ձգձգուած, ճապաղ, կորովից և ազդու շեշտից իսպառ զուրկ լինելը.

Պ. Փիլ. Վարդանանի Թարգմանութիւնը.

Մտածիր. եթէ այս շարժումը զաղարէր, մարդկութիւնը նորից բարբարոսութեան մէջ կ'ընկնէր: Այս շարժումն է աշխարհի յառաջադիմութիւնը, յոյսը, փառքը: — Արդ՝ զօրացիր, անհուն բանակի փոքրիկ զինուոր: Գրքերդ են քո զէնքերը, դասարանն է քո գունդը, ուղմի դաշան է ամբողջ աշխարհը և լուսաւորութիւնն է յաղթանակդ: Ուրեմն մի վճատիր ու կրտ-

Սիրամամր մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի Թարգմանութիւնը.

Մտածիր, եթէ այդ շարժողութիւնը դաղարի, ինչ կ'լինի մարդկութեան վիճակը, չէ՞ որ նորից բարբարոսութեան մէջ պիտի ընկնէր: Շարժողութիւնը աշխարհի յառաջադիմութիւնն է, յոյսն է, նրա փառքն է: — Միրտ առ, դու էլ, անհուն բանակի փոքրիկ զինուոր. գրքերդ քո զէնքերն են, դասարանդ քո գունդը, պատերազմի դաշտը ողջ աշխարհն է և յաղթանակը

բիճ կաց, իմ Հենրիկօ: (Երես 22):

Ո՛չ, ես չեմ վճատիլ, չեմ ծուլանալ. (Եր. 22):

Սպանիայի Բարցելօնաքաղաքից մի Ֆրանսիական շոգենաւ մեկնեցաւ դէպի Գէնովա: Շոգենաւում նստած էին Ֆրանսիացիք, իտալացիք, սպանիացիք, զուիցերացիք և նրանց հետ կար տասնևմէկ տարեկան վատ հագնուած մի պատանի: Նա կանգնած էր մեկուսի, մի փոքրիկ կենդանու նման և խոժոռ նայում էր ուրիշներին: Իրաւունք էլ ունէր այդպէս նայելու: (Եր. 22):

...այն ծնողների, որոնք վաճառել էին նրան իրրև մի անասուն: Խեղճը ցնցոտիներ ունէր հագին և սաստիկ նիհարել էր: (Եր. 23):

...Իմ հայրենիքը նախատողներից ես ողորմութիւն չեմ ընդունում: (Եր. 25):

մարդկային ցեղի կրթութիւնը: Վախկոտ զինուոր մի լինիլ, սիրելի Հայնրիխ: (Երես 8):

Ես վախկոտ զինուոր չեմ լինիլ, ամենևին չէ: (Եր. 8):

Իսպանիայի Բարցելօնաքաղաքից մի Ֆրանսիական շոգենաւ գնում էր Գենովա: Նրա վրայ կային Ֆրանսիացիք, իտալացիք, շվեցարացիք: Ճանապարհորդների մէջ կար և մի 11 տարեկան տղայ, վատ հագնուած, բոլորովին մենակ, վայրի փոքրիկ կենդանու պէս խոյս էր տալիս բոլորից և խէթ աչքով էր նայում վրաները: Մարդկանց վրայ այդպէս ժողոված նայելու բաւական հիմունքներ ունէր: (Եր. 8 և 9):

...այն ծնողների, որոնք նրան իբրև անասուն վաճառել էին: Խեղճ տղէն փաթաթուած էր ցնցոտիների մէջ և հիւանդ էր: (Եր. 10):

Ինձ պէտք չէ այն մարդկանց ողորմութիւնը, որոնք անպատում, անարգում են իմ հայրենիքը... (Եր. 13):

Մի փոքր հեծելազօր
վաշտ: (Եր. 49):

Սիրուն տղայ էր՝ արիադէմ,
խոշոր ու կապոյտ աչքերով,
երկայն ու շէկ մազերով,—
առանց բաճկոնի, պարզ
շապկով, կուրծքը բաց: (Եր.
50):

—Կեցցես, քաջ պատա-
նեակ:

—Բարև մնաս, խարտեաշ
մանուկ: (Եր. 54):

—Առաջ երբէք չէր պա-
տահում, որ առիթ տայիր՝
քեզ յանդիմանութիւն անե-
լու, Ջուլիօ,—ասաց նա.—
դու խարում ես ինձ, դու
միանգամայն փոխուել ես.
լաւ չէ: (Եր. 73):

Սա է ինձ վիշտ պատ-
ճառում: (Եր. 74):

Միւս առաւօտ երբ նա
աչքերը բաց արաւ, արևն
արդէն փայլում էր. իսկ նրա
կողքին, բարձի վրայ, հանգ-
չում էր հօր սպիտակ գլու-
խը. այդպէս էր անցկացրել
նա բոլոր գիշերը և տակա-
ւին չէր զարթել... (Եր. 79):

—Միաքո պահիր. բոլոր
վաշտի փրկութիւնը կա-

Մի փոքր հեծելաՎաշտ
(Եր. 13):

Նա մի գեղեցիկ պատանի էր
խիզախ երեսով, մեծ կա-
պոյտ աչքերով և երկար
խարտեաշ մազերով. շապ-
կանց էր և կուրծքը բաց:
(Եր. 13—14):

Մնաս բարև, տղայ:

Հանգիստ քնիր, շէկլիկ
սիրուն գլխանի: (Եր. 20):

—Առաջ երբէք այդպէս
բան չես արել, Ջուլիօ, դու
քո պարտականութիւնը չես
կատարում, դու այժմ այն
չես, ինչ որ առաջ: Արածդ
ինձ չի դուր գալիս: (Եր. 24):

Սա է, որ սիրտս կոտ-
րում է: (Եր. 25):

Հետևեալ առաւօտ երբ
աչքերը բաց արեց, արևը
վաղուց ծագել էր, զգաց ու
տեսաւ, որ հայրը ալևոր
գլուխը բարձին դէմ տուած
քնած էր: Ողջ գիշերը անց
էր կացրել խեղճը ճակատով
որդու սրտին յենուած և
դեռ չէր զարթել: (Եր. 32):

—Տես, մտածիր, այս ան-
ջատուած վաշտի փրկու-

խուած է այժմ քո քաջու-
թիւնից և ոտքերիդ արա-
զութիւնից:

—Վստահ եղէք իմ վրայ,
պարոն գնդապետ: (Եր. 99):

...հարկ եղաւ կտրել ու-
տը... Ոհ, բայց... կտրի՞ն
տղայ է, հաւատացէ՞ք, մին-
չև անգամ ձայն չհանեց, մի
կաթիլ արտասուք չթափեց:
Պարծենալու տէ՛ղիք ունինք.
ահա այսպէս են մեր իտա-
լական մանուկները. պա-
տիւս վկայ, լաւ ազգ ենք:
(Եր. 105):

Այն երեկոյ Փերուչիօի
տունը սովորականից աւելի
խաղաղ էր: (Եր. 181):

Անձրևը հեղեղի պէս թափ-
վում էր. գիշերը մութն էր:
Ջուլիօն եկաւ յոգնած, ցե-
խոտուած, թրջուած. բաճ-
կոնը պատուած էր, մի
աչքը ջարդուած—սովորու-
թեան համեմատ կռուել էր
ընկերներից մէկի հետ, տա-
նել էր տուել իւր բոլոր սու-
ղիներն ու գլխարկը կորց-
րել: (Եր. 182):

Թիւնը կախուած է քու քա-
ջութիւնից և քո ոտերի
զօրութիւնից: — Վստահու-
թիւն ունեցէ՞ք ինձ վրայ,
պարոն գնդապետ: (Եր. 35):

Անպատճառ հարկաւոր էր
կտրել հեռացնել: Բայց ճ,
ինչ քաջասիրտ տղայ է, էլ
լեզուով ասել չի լինիլ: Ոտը
կտրելիս ոչ մի հատիկ սու-
տասուք թափեց և ոչ մի
հառաչ բերանից հանեց:
Սրտումս հպարտանում էի,
որ իտալիան այսպիսի տը-
ղաներ ունի. պատուաւոր
խօսք եմ ասում. գովասան-
քի արժանի տղայ է: (Եր. 43
—44):

Այսօր Փերուչիօյանց տա-
նը աւելի խաղաղ էր քան
թէ ուրիշ անգամ: (Եր. 59):

Անձրևը թափուում էր և
քամին կաթիլները դիպցը-
նում էր լուսամուտի ապա-
կիններին: Մութ ակնակիր
գիշեր էր. Փերուչիօն եկել
էր տուն յոգնած, ցեխուած
մտած, շորերը պատուած,
ճակատի վրայ քար դիպչե-
լուց կապոյտ նշան ստա-
ցած: Ընկերների հետ քա-
րապարանուկի էր տուել,
իրար հետ կպել էին, իրար
մազից քաշքշել ամենօրուայ

—Կտրիճ կաց, Մարկո-
ջան, դու գնում ես մի սըր-
բազան գործի համար և թող
Աստուած քեզ օգնէ:

Խեղճ Մարկո: Նա ունէր
մի զօրեղ սիրտ. և մինչև
անգամ այդ երկար ճանա-
պարհի փորձանքներին դի-
մանալու ընդունակ սիրտ.
սակայն երբ տեսաւ... (Եր.
247):

Եւ նա ասաց այս բոլո-
րը մի այնպիսի շերմու-
թեամբ... (Եր. 253):

Մի քանի տարի առաջ՝
դեկտեմբեր ամսին, առա-
ւօտեան, մի մեծ շոգենաւ
խարիսխ վերցրեց Լիվեր-
պուլի նաւահանգստում: (Եր.
319):

Մի անձրևային առաւօտ,
մարտ ամսին, Նէապոլի
գլխաւոր հիւանդանոցի դրո-
նապանին մօտեցաւ գիւղա-
ցու պէս հազնուած մի կեղ-

պէս և վերջը խաղ էր ա-
րել, բոլոր սուղիները տա-
նուլ տուել և գտակն էլ մի
փոսոււ թողել, եկել: (Եր.
60—61):

—Քնջ եղիր, Մարկո, դու
սրբազան գործի պատճա-
ռով ես ուղևորոււմ. Աս-
տուած քեզ օգնական կը
լինի:

Խեղճ ու կրակ Մարկո,
ճիշտ է, նա ունէր մի ա-
մուր սիրտ, ուղևորութեան
ամենադժամ փորձանքնե-
րի համար նախապատրաս-
տուած սիրտ, բայց երբ
տեսաւ... (Եր. 83):

Եւ նա այս խօսքերն այն-
պէս զգացուած ասեց... (Եր.
91):

Մի քանի տարի առաջ
էր, որ դեկտեմբեր ամսի
մի առաւօտ Լիվերպուլի
նաւահանգստում մի մեծ
շոգենաւ խարիսխ վերև քա-
շեց: (Եր. 134):

Մարտ ամսի մի անձրե-
ւային օր էր. գիւղի հան-
գը հազած մի տղայ,
անձրեկից մինչև ոսկորը
թրջուած ու ցխոտուած,

տոտ ու թրջուած տղայ: (Եր.
127):

մի շորի կապոց կոնատա-
կին մօտեցաւ Նէապոլի մեծ
հիւանդանոցի դոնապանին:
(Եր. 44):

Եւայն, կայն, կայն:

Եւ այդպիսի ողորմելի թարգմանութիւնը որ արել
է «գերմաներէնից աւելի լրիւ օրինակից» «25 տարի
հայ դպրոցներում հայերէնի ուսուցիչն ու «գրողը» և
4—5 տարի գերմաներէն սովորողը... համարձակվում
է իր անհամեստ յառաջաբանում գրել.

«էդմ. Ամիչիսի «Սիրտ» գիրքը (սկսեցի) մաս-
մաս կարգալ: Աշակերտները հիացած էին (հարկաւ
ոչ քո թարգմանութիւնից, այլ գրուածքի՝ սրտեր
խշխշացնող բովանդակութիւնից). իւրաքանչիւրն իւր
պատկերը տեսնում էր (?) գրքի մէջ (դարձեալ ոչ
նրա համար որ քո թարգմանութիւնն էր. անիծած
խարդախ, այնպէս գրիր, որ պարզ լինի և ոչ-թէ Ա-
միչիսի արժանիքն էլ ինքդ քեզ յատկացնես): Սկզբից
փորձել էի մեծ. պ. Փ. Վարդանեանցի թարգմանու-
թիւնը, յաջողութիւն չեղաւ, լեզուն ծանր էր: (Ան-
պատկառ մեծամիտ, քո այդ զգուանք յարուցանող
անհամեստ յառաջաբանդ կարդալուց յետոյ երկուսիդ
թարգմանութիւնն էլ դիտմամբ կարդացել եմ մօտ 10
պատանու մօտ և քո պնդածի հակառակ արդեօք ստա-
ցել և հէնց այդ-ժամանակից էլ նշանակել այն կտոր-
ներից միքանիսը, որ վերև առաջ բերի):

Վերև այնքան օրինակներ առաջ բերելուս նպա-
տակը կրկնակի էր. մին՝ որ ցոյց տայի զգուելի մե-
ծամտի ինքնագովութեամբ ուղղակի մարդու զահլան
տանելը և մէկ էլ՝ որ իցէ-թէ յարգելի Փիլ. Վարդա-
նեանի լեզուի մասին կազմուած նախապաշարմուն-

քը ցրեմ և ակամայ կոյրերի աչքերը բանամ, որպէս-
զի հայերէն լեզուն նահատակող մեր պարբերական
թերթերի մէջ լեզուի մասին ծակլաբուն—լիւլիպուտ
լեզուական քննադատների խելքազօռութեամբ ասած-
ները այլևս կուրօրէն չընդունեն ընթերցողները, այլ
միքիչ էլ իրանց սեպհական խելքով դատեն գոնէ
նրա մասին, ինչ-որ երկու աչքով տեսնում են և
անձամբ կարգում:

Բերածս օրինակներից հայերէն իմացող, լեզուի
ճաշակի տէր ընթերցողը պարզ տեսնում է թէ պ.
Փ. Վարդանեանի լեզուն գերիվեր է գրական խուլի-
գանի լեզուից և որ Փ. Վարդ.-ի լեզուն յանիրաւի է
բամբասուած: Հայերէն լաւ չիմացող խիկար մատե-
նախօսներից մէկը՝ մի բան ասած լինելու համար,
գրել է թէ Փ. Վարդ.-ի լեզուն վատ է և ահա միւսնե-
րն էլ՝ որոնք աւելի են բոբիկ մատենախօսից, թու-
թակի նման անգիտակցաբար կրկնել են նոյնը, մա-
նաւանդ-որ այդ սխալ կարծիքը իրանց ձեռնառու էլ էր-
փող չէին տալնրա գրքերն առնելու: Իսկ ձեռն չէ յայտնի,
թէ ինչպէս է մի կարծիք, նոյնիսկ յիմար կարծիք
տիրապետող դառնում մեր մէջ և թէ ինչպէս
են տարածվում մեզանում ուղղակի վասակար և
թէ անբովանդակ գրքերը ի-վնաս օգտակար և բովան-
դակալից գրքերի:

Մեր նոր ոտի կանգնող աշխարհաբարը այսօ-
րուայ ողորմելի գրութիւնը—բարեկոնեան խառնա-
կութիւնն ու աջաբանդալը չէր ներկայացնիլ, եթէ
հրապարակում մեր գործողներից՝ մեծախօս ու մեծա-
միտ գրիչ շարժել իմացողները՝ շատ չէ, գոնէ պ. Փ.
Վարդանեանի կիսի, կիսի չափ իրօք հայերէնին աի-
րապետէին:

Քիտեմ որ նման խօսքերն ու առարկութիւն-

ները մէջ բերելով՝ երկարում է ասելիքս, սակայն
ինչ արած որ այդ անհրաժեշտ էր, որպէսզի մէջտե-
ղը այլևս չմնար սրնէ, այն, սրնէ կասկած կամ թիւ-
քիմացութիւն սխալմամբ մ'արդ կոչուած Գամ. Ս.-ի՝
զգուելի մեծամիտ, դանելի անբարհաւած և խուլի-
գան գրչակ լինելու մասին:

Մի առժամանակ ինձ այնպէս թուաց, թէ ներ-
սիսեան Դպրանոցի Մանկավարժական ժողովի, Հո-
գաբարձութեան և բարձր դասատանց աշակերտների
պահանջմամբ ու ստիպմամբ պատուազուրկ «ուսու-
ցիչ» Գամ.-ը աննպատակ լուսնահաջ տալուց գերադա-
սել է դատարանին դիմելը, ուր միայն կարող էր կոյր
հասարակութեան համար ամեն բան պարզուել և մե-
ղաւորը՝ մեզանից սով էլ ուզում է լինի, արժանի պա-
տիժը կրէր: Աւանդ, էլի էի սխալուել սխալմամբ մարդ
կոչուածի վերաբերմամբ. նա միտք էլ չի ունեցել
դատարանին դիմելու այն պարզ ու բնական պատ-
ճառով, որ ինքը միշտ անպատիւ է եղել, այդ մէկը
ինձնից էլ ու շատերից էլ լաւ իրան է յայտնի: Ու-
րեմն գիժ հօ չէ՞ որ դիմէ դատարանին. չէ՞-որ հարիւր
հոգու մէջ կը գտնուին միքանի միամիտը թէ ան-
միտը, որոնք հաւատ են ընծայում մարմնացած ա-
նազնիւ ստախօսի բերանացի անմիտ բացատրութիւն-
ներին ու խուլիգանավայել յերկրած գրութիւննե-
րին, այն-ինչ դատարանում այդ վերջին յոյս միքա-
նի հոգին էլ պէտք է կորցնեն իրանց հաւատը և երես
թեթեն իրանից: Հապա էլ ձեռն հետ խօսի. չէ՞-որ այդ-
պիսի գրութիւնը մահից էլ վատ է: Ախր մարդ պէտք է
մի աննշան բարոյական յենակէտ էլ է ունենայ, որին
կոթնել կարողանայ. իսկ եթէ այդ աննշան յենակէ-
տից էլ զրկուի, ինչպէս-որ մաքուր պատուից է զըր-

կուել, յետոյ ինչ հողը տայ իր սև ու մութ գլխին ու արևին:

Բայց եկէք-տեսէք որ դատարանից եօթն օրուան ու եօթը գիշերուայ ճամբայ հատ ոտով հեռու փախչողը՝ իբրև խարդախ հոգու տէր, այլ կերպ էր բացատրել իրա նման փչացած ներքին աշխարհ ունեցողներին: Որպէս-թէ ինքը դատարանին չի դիմում նրա համար որ այս ու այն «խիկարը» ասել է, թէ «Zukunft»-ը, ներողութիւն՝ «Ձարկը» փողոցային թերթ է, իսկ ես՝ իբրև ճշմարտախօս, խելագար, որովհետև հոտած ուղեղների ճահիճը խառնխտելու խիզախութիւնն ունեցայ. հետևապէս չարժէ դատարանին դիմելը: Ողորմելի լողիկայ:

Երբ իմ արած մերկացումներիս նման մերկացումները տպվում է այս կամ այն կուսակցութեան օրգանում, թերթը գովասանքի արժանի է համարվում, խմբագրողը «խիստ» զարգացած, ազնիւ գործիչ, նոյնիսկ ազգի փրկիչ է գառնում. երբ՝ ինչպէս վերևը գրուեց, նոյն մերկացումները գրվում են գերմանական թերթերում, թերթերը կոչվում են ազգեցիկ, գերման խմբագիրներն ու աշխատակիցները ազնիւ՝ իբրև քաղաքական քաջութիւն ունեցող պարտաճանաչ հասարակական գործիչներ, արմանք-զարմանք քաջ ու խելօք: Բայց երբ միևնոյնը—նոյն գրուելի արատի—արուամուտութեան մասին գրվում է «Ձարկ» մասնաւոր հայ շաբաթաթերթում, յանկարծ թերթը դառնում է փողոցային, խմբագիրը տգէտ, իսկ մերկացումներ անող հայը խելագար: Վայ խելքներիդ ազ անեմ ես՝ շիզակն ու մէտակը:

Ահա այդ է մեր իրականութիւնը, ընթերցող, և սակայն այդ աննախանձելի իրականութեան համար է գլխին վայ տալիս գրական խուլիզանն ու մուրտառ

պասկվիլանտը: Որպիսի անշնորհակալութիւն Քամալեանց Ս.-ի նման մի պոռնիկ ուսուցչի կողմից:

Շան կոնձկոնձայն ու կլանչելը միշտ անգուր է եղած, իսկ Քամալեանց Սարգսի պէս քոստաշան ոռնալը ուղղակի զգուելի էր. հետևապէս անհրաժեշտ էր կտրացնել այդ անհանդուրժելի անախորժ ձայնը:

Այդ իսկ նպատակով մի բաց նամակ գրեցի յարգելի պ. Ղ. Աղայեանին: Եւ որովհետև նոյն միջոցին «Ձարկը» լոյս չէր տեսնում, այլ պէտք է վեր սկսուէր մայիսին, պարզ է թէ մինչև «Ձարկի» վեր սկսուելը չէի սպասելու, և ինչո՞ւ սպասէի: Ահա հէնց այդ պատճառով տուի «Նովիւին», որ և ապագրեց. բայց ոչ-թէ նրա համար որ սխալմամբ մարդ կոչուածի դէմ էր, այլ որ գրածս՝ դաստիարակութեան տեսակէտից հասարակական մեծ նշանակութիւն ունէր, աւելի մեծ, քան գերման Մարքսիմիլիան Հաոգէնի մերկացումները դժբաղդ հայ ընթերցողների համար:

Ահաւասիկ այդ նամակս.

ԲԱՅ ՆԱՄԱԿ Պ. Ղ. ԱՂԱՅԵԱՆԻՆ

Դուք, յարգելի պ. Աղայեան, երկնակամարի ամենավերին մասերում սլացող թևաւորների նման ազատ էք Ձեր՝ ըստ-ամենայնի խոտելի հերձուածին—անհիմն հիւնամուրութեանը չյարելուս համար, իբրև վրէժ, սխալմամբ մարդ կոչուածի մասին անուն-անուն ու տեղին, ի-մի-բան՝ փաստացի գրածներս անտեղի բաներ համարել ժողովներում, որպէսզի իմ ցորու սրևէ կերպով պաշտպանած լինիք այն «մանկա... վարժին», որ Ձեր հոգատարութեանը յանձնուած Դպրանուցին և թէ նրանում պաշտօնավարող ուսուցչական կազմին միմիայն անպատուութիւն ու նախատինք է բերում...

Այն, Դուք կատարելապէս ազատ էք այդ բանում:

Սակայն, յարգելի պ. Աղայեան, թո՛ղ տուէք Ձեզ իշնեցնելու, որ Դուք Ձեր «բազմամեայ հասակի փորձով» նոյնչափ ազատ

չէք փողոցներում զրօսնելիս և թէ-մանաւանդ «մագաղին-ներում» զրուցելիս Ձեր հիւնամոլութեան մասին օրինաւոր ծանապարհով առարկողի վրայ ճօշալու կամ նրան խելագար անուանելու. որպէսզի յետոյ, իբրև տրիտուր փողոցներում Ձեր անփառունակ ձրի փաստաբանութեան, պատուից ու արուոյց թափուր ֆուսցած «մանկա...վարժը» հասարակութեան մէջ տարածի Ձեզ «պատիւ» բերող փաստաբանութիւնդ, իսկ ինձ «անպատուութիւն» բերող իմ հասցէին ուղղած խօսքերդ:

Դուք առանց խղճի խայթ զգալու կամեցել էք պաշտպանած լինել մի «մարդու», որ «աննօրմայ» հակման տէր է, որ պատիւ ասուած սրբազնագոյն գաղափարի մասին ամենաթոյլ հասկացողութիւն անգամ չունի (եթէ ունենար, մինչև հիմա դիմած կը լինէր դատարանին) և որի բստմնելի արարքն ու կերած շան քօթակը Գանձակում և թէ այլ արարքներն այլուր եթէ իմանայիք, ամօթից ոչ թէ Դուք, այլ հագիդ շորերն անգամ կը կարմրէին Ձեր անփառունակ փաստաբանութեան համար: Գուցէ Ձեր այդ աննախանձելի վարմունքի իսկական շարժառիթը հիւնամոլութիւնդ մերժողիս տարիներ առաջ և գործի—«Ձարկի» մէջ տպուած յօդուածիս հետ ոչ մի կապ, ոչ մի առնչութիւն չունեցող զրաժս նամակներն են: Բայց եթէ Դուք և թէ ձոի խելք ունեցողները կարգայիք այդ նամակների պատճառ կամ հետևանք, աւելի շուտ պատճառ, քան հետևանք նամակները, որոնց մէջ ցոյց է տուած թէ ես ուս զրականութեան պարծանք Բելինակու դերն եմ կատարել պատճառ-նամակներ «զրոզի» վերաբերմամբ, վստահ եմ որ ամենքիդ հորթային ուրախութիւնը կը փոխուի մի թիզ քնակախումբան:

Հետևապէս ո՞ր կողմն էլ որ շուտ գաք, դարձեալ «բազմամեայ հասակի փորձ» ունեցողդ ազատ չէք լինիլ: Աւելին կ'ասեմ.

Դուք իրաւունք չունիք վայր իջնելու դէպի մի մակըրելոյթ, որ միայն և միմիայն «մանկա...վարժին» և նմաններին է յատկացուած այն հասարակութիւնից, որ անկեղծօրէն Ձեզ յարգել և յարգում է: Սակայն մի-գուցէ հասարակութիւնը սխալվում է, յարգելի պ. Աղայեան, Ձեր ներքին աշխարհի—բարոյականի և թէ մտաւորականի վերաբերմամբ: Եթէ այն, յայն-դէպս Դուք այդ բանում ևս ազատ էք դաշտի հողմի նման, պ. Աղայեան:

(«Հովիւ» № 8):

Թէպէտև այդ նամակս պակաս խիստ չէր ու անողոք, նոյնիսկ աւելի անողոք էր, քան «Ձարկում» զրաժներս, բայց-և-այնպէս՝ ի-բաց առեալ քանիմի անբարոյականները, ամենքն էլ հաւանեցին: Եւ այդ հասկանալի է. որովհետև ես այդտեղ խօսում էի ինձանից ու հասարակութիւնից միշտ յարգուած մարդու հետ. իսկ յարգելի մարդու հետ ուրիշ կերպ չի կարելի խօսել, բայց եթէ անկեղծ յարգանքի զգացմունքով լցուած միայն:

Ճիշտ է, պ. Աղայեանը բարեկամս էր, սակայն մերկապարանոցճշմարտութիւնը էլ աւելիլաւ բարեկամս է:

Այդ բաց նամակս շատ ազդեց մանաւանդ Ներ. Դպրանոցի Մանկավարժական ժողովի անդամների վրայ և ինչպէս իմացել եմ արժանահաւատ աղբիւրներից, իսկապէս այդ նամակս պատճառ դարձաւ Ներս. Դպր. նման մի սրբավայրից իսպառ վռնդելու՝ բարձրաստիճան արհիի առաջարկած սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ին:

Ուրեմն թո՞ղ ուրախանան կեղծաւոր Խուստի-բէգերը, որ իրանց յիմար փաստաբանութեամբ այդ արջի ծառայութիւնն արին իրանց իսկական Busenka-merad-ին. չլինէր այդ արջային անմիտ ծառայութիւնը, չէր լինիլ նաև պ. Աղայեանին զրաժս այդ բաց նամակը:

Եւ երբ Դպրանոցի հոգաբարձութեան նախագահ թեմակալ Առաջնորդից առաջարկուած մի ուսուցիչ՝ իր անպիտան բնաւորութեան, անազնութեան, ստա-խր անպիտան բնաւորութեան ու զգուելի վարք խօսութեան, անասելի լըբութեան ու զգուելի վարք ու բարքի համար վռնդվում է Ներս. Դպրանոցի նըման մի սրբավայրից, այլևս կարող է գտնուել մի քաղաք կամ գիւղ, որի դպրոցական հոգաբարձութիւնը կամ տեսչութիւնը այնքան տխմար և զուրկ

լինի բարոյական սկզբունքից, որ թոյլ տայ՝ իրան յանձնած դպրոցի համար հրաւիրել մի ուսուցիչ, որի գլխաւոր գործը անմեղ աշակերտների բարոյականը սպասելը—նրանց մէջ զգուելի արուամոլութիւն տարածելն է եղել:

Կամ կարող է գտնուել մի հայ-ընտանիք, որ բարոյականութեան հետ այն աստիճան պախարակելի կօմպրոմիսսներ անող լինի, այնքան փշացած, այնքան անբարոյական, որ վճռի իրա աչքի լոյս սիրասուն գաւակների համար ուսուցիչ կամ դաստիարակ հրաւիրել Քամալեանց Ա.-ի նման սխալմամբ մարդ կոչուած հրէշին—այդ զգուելի սողոմեցուն:

Դժուար-թէ Ազգիս գոյութիւնը պահպանող և ուրիշ ազգերից կուլ գնալուն արգելք եղող սուրբ բարոյականութեան մասին այդպէս այլանդակ, այդպէս հրէշային հասկացողութիւն ունեցող դպրոցական և թէ այլ հոգաբարձութիւն, տեսչութիւն և կամ հայ-ընտանիք գտնուի, որ վճռի այդ կործանիչ քայլն անելու վասնզի այդ կը լինի մի անհանդուրժելի սրբապղծութիւն այն ամենի վերաբերմամբ, ինչ-որ վեհ, ինչ-որ սուրբ ու նուիրական են ճանաչուած և այդպէս էլ պէտք է մնան:

Այդ բաց նամակս երբ կարդացել էր մի «խիստ գեղարուեստասէր» պարոն, բացականչել էր.

—Մեր մէջ ընդունուած սովորութեանը (հր՛մ) այդպէս ակնյայտնի դէմ գնացողին եթէ Աղայեանը լայաղ անէ (իսկ-և-իսկ «գեղարուեստասէրի» վայել ոճ) պատասխանել, ես կը թքեմ Աղայեանի վրայ և այլևս հիւն (ւ) չեմ գործ ածիլ զրուածքներիս մէջ...

Առանց սրկէ յարգելի պատճառի թոյլ էր տուել իրան այդպիսի անպատկառ լեզուով խօսել մեր ժողովրդական յարգելի բանաստեղծի հասցէին մի մարդ՝

որ Աղայեանի կօշիկները կապը քանդելու իսկ արժանի չէ, այդ՝ էտիկայի, Գեղարուեստի դէմ չէ, Մամուլի կոչմանը վայել է. իսկ երբ ես Քամալեանցի նման անբարոյականի կրած կեղծ դիմակը պոկելով ցոյց եմ տալիս հասարակութեան, որ դիմակի տակինը ուսուցիչ չէ, այլ մի հրէշ մարդկային կերպարանքով, այդ՝ նոյն «խիստ գեղարուեստասէրի» կարծիքով դէմ է՝ և՛ էտիկային, և՛ Գեղարուեստին, և՛ անվայել Մամուլի կոչման ու Վայելչութեան...

Ահ, կոկորդիլոսի ծնունդներ. ձեզպէս հոտած ուղեղով բարոյական հաշմանդամներին կեղտոտ ցախաւելով պէտք է վռնդել դպրոցներից էլ, մամուլից էլ և դեռ դժբաղդ հայ հասարակութեան միջից էլ, որպէսզի թէ անմեղ մանուկների և թէ միամիտ ընթերցողների բարոյականը ազատ մնայ ձեր ապականիչ մտքերից:

Երբ յարգելի պ. Աղայեանը, ասում են, իմացել էր «խիստ գեղարուեստասէր» պարոնի «գեղարուեստօրէն» արտայայտութիւնը, նա էլ իրա կողմից հետևեալն էր նկատել.

—Ճիշտ է, Լևոնը իմ դէմ գրում է, շատ բանում հականակ է ինձ, իսկ ինքը ընդհակառակը, բայց քանի-որ, ինչպէս տեսնում է «գեղարուեստասէր» պարոնը, Լևոնին պատասխանել եմ, դէ ուրեմն թող դայ որ ես իրա երեսին թքեմ:

Այդ խօսքերի ճշտութիւնը ես չեմ երաշխաւորում, այլ իբրև բնորոշ իրողութիւն, որ սխալմամբ մարդ կոչուածի մասին արածս մերկացումների ազդեցութեան տակ այդպիսի բաներ էլ են խօսում, առաջ բերի այնպէս, ինչպէս-որ իմացել եմ:

Ահա նաև պ. Աղայեանի պատասխանը.

ԲԱՅ ՆԱՄԱԿ Գ. Լ. ՄԵԼԻԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻՆ

Մեծարգոյ պ. Լեոն, կարգացի «Հովիւ» շաբաթաթերթի 8-րդ համարում Ձեր բաց նամակը:

Ձեր ակնարկած մանկավարժին ես չեմ պաշտպանել: Ես ասել եմ, որ Ձեզ դատի հրաւիրի, իսկ ինձ պատասխանել է, թէ Լեոնի և մեր ընդհանուր բարեկամը թոյլ չի տալիս այդ բանին դիմելու:

Ես անձամբ դիմել եմ մեր ընդհանուր բարեկամին և ասել, որ նա սխալվում է, քանի-որ մեղադրվում է մի դատարարակ, որի վարքի մասին կասկած չպէտք է լինի: Կարճ՝ Ձեզ դատի հրաւիրելը ես համարել եմ անհրաժեշտ, և այն էլ եմ ասել մինչև անգամ, թէ՛ Լեոնը ձեռք վերցնողը չէ. նա փոխանակ իրա ասածը յետ առնելու, կրկնելու և պընդելու է: Շատ ուրախ եմ, որ Դուք Ձեր բաց նամակով հաստատեցիք իմ կարծիքը:

Ղ. Աղայեան

(«Հովիւ» № 10).

Դրդդոց հանող բաց նամակիցս յետոյ յարգելի պ. Աղայեանի այդ շատ բան ասող երկտողը ուղղակի ֆուրոր հանեց՝ բառիս ընդարձակ իմաստով:

Սխալմամբ մարդ կոչուածը երևի զգալով ընդմիշտ քարոյապէս մեռնելու—Ներս. Դպրանոցից վըռընդուելու առաջին ազդանշանը, ամեն ճիգ ու ջանք թափեց և մի կերպ կարողացաւ մտնել «Փայլակի» խմբագրատուն և խնդրել որ յանձնառու լինին ընկերական դատի անդամներ լինելու, իսկ երբ խնդիրը կտրականապէս մերժեցին, նոր ծոցից հանեց նամակը ասելով՝

—Գոնէ բարի եղէք՝ այս նամակս տպագրելու:

Խմբագրութիւնը՝ խղճալով թէ ինչ-ինչ փափկանկատումներով (այս, այդ փափկանկատումները), յանձն առաւ և տպեց հետեւեալ նամակը, որ լոյս տեսաւ «Փայլակի» № 14-ում.

ԲԱՅ ՆԱՄԱԿ Գ. Ղ. ԱՂԱՅԵԱՆԻՆ

Թիֆլիզ, 25 ապրիլ.

Մեծարգոյ պարոն, «Հովուի» № 10-ում Լ. Մ.-Ա.-ին ուղղած բաց նամակում գրում էք, որ նրա ակնարկած մանկավարժին (ձեր վկայութեամբ՝ ինձ Քամալեանցիս) չէք պաշտպանել: Չգիտեմ՝ պաշտպանել ինչպէս էք հասկանում, բայց ես ձեզ յիշեցնում եմ պ. Ս. Տիգրանեանի նախագահութեամբ եղած մանկ. ժողովը, ուր ներկայ էիք դուք և պ. Յով. Թումանեանը իբրև հոգաբարձուներ: Դուք չէիք, որ իմ բացատրութիւնը լսելուց ետ 25—30 հոգու ներկայութեամբ Լ. Մ.-Ա.-ի հասցէին ուղղեցիք շարախօս սրիկայ բառերը: Եթէ դուք ձեր ասածը մոռացել էք, ժողովականներից շատերը կը մտքբերեն, մանաւանդ պ. Ա. Աբեղեանը, որ Լ. Մ.-Ա.-ին պաշտպանելու համար սրիկայ խօսքի պատճառով ձեր դէմ առարկեց: Միևնոյն խօսքերը մի ժամից ետ նոյն դառնութեամբ կրկնեցիք պ. Ն. Մատուրեանի խանութում պ. Յով. Թումանեանի ներկայութեամբ:

Երբ գործը ընկերական դատի կը յանձնուի *) ու իմ դէմ եղած զրպարտութիւնները միառմի կը քննուեն, այն այն ժամանակ, պ. Ղազարոս, ինքներդ կը զգաք, որ ձեր ասած սրիկայ խօսքը ներկայ չարալիզու Լ. Մ.-Ա.-ի վերաբերմամբ շատ թեթև է: Եթէ մինչև օրս ես լռել եմ, այդ ոչ թէ նրա համար, որ մազաշափ ճշմարտութիւն եմ նկատել նրա գրածների մէջ (թէկուզ «Հովիւ» № 8-ի բամբասանքները) (?!), այլ որ նրան հիւանդի տեղ դնելով **) մի կերպ համբերել եմ ***):

Քամալեանց Ս.

Այդ անմիտ նամակը թէև դեռ չէի կարդացել, սակայն ուրիշներից իմացած լինելով բովանդակու-

*) Միթէ դու մարդ ես, որ մեր միջև ընկերական դատը հարաւոր լինի:
**) Իսկ-և-իսկ տեղն է ասելու՝ ցից) վասնզի այնքան ստոր ես, որ չեմ կարողացել պարզ գրել ուղղա՞ր:
***) Գլուխդ քարոզի ես տուել ու երեսդ պատովը. եթէ միայն արտաքինդ չէ մարդու, այլ ներքինդ, էլ մի համբերելի այլ գնա և զանգատուիլ:

Թիւնը, երեկոյեան գնացի պ. Յովհ. Թումանեանի մօտ:

— Յովհաննէս, ճիշտ է «Փայլակի» մէջ տպուածը՝ որպէս-թէ պ. Աղայեանը իմ հասցէին վիրաւորական խօսքեր է ուղղել Մանկ. ժողովում:

— Ձէ, անպէր, այդպէս բան լսած չեմ. հարց էր զարթել գրածներդ մասին, իսկ Քամ.-ը բոլորովին աւելորդ բացատրութիւններ էր տալիս հարցին չվերաբերեալ, բայց «Փայլակում» տպուած բառերը աւանջովս չեն ընկել:

— Սակայն չակերտաւոր մանկավարժը գրել է, որ մի ժամից յետոյ նոյն բառերը պ. Աղայեանը ասել է նաև մեր Եփրեմի խանութում հէնց քո ներկայութեամբ:

— Ձէ, Լևոն, Քամայեանցը սուտ է ասում. իմացել չեմ, հաւատա՛մ: Պ. Ծատուրեանն ի՞նչ է ասում:

— Նրա խանութում այդպիսի կամ նման խօսք չի արտասանուել:

Միւս օրը գնացի «Փայլակի» խմբագրութիւն. № 14-ը խնդրեցի և կարգացի հէնց խմբագրատանը: Նամակի հակասութիւններն ու երկդիմութիւնը, այլև այն անագնիւ սասախօսութիւնը, որ իբրև-թէ ընկերական ղատ է լինելու, ինչի մասին որ հրէջ «մանկա... վարժը» գիշեր-ցերեկ երազում էր, որ մի կերպ ազատի ապականութեամբ լի գլուխը, պարզ ցոյց տուին, որ զրպարտութիւններ ու պասկիվիւներ յերկրորդ Քամ.-ը միմիայն իր սիրած փէշակն է ընտանացրել— հասարակութեանը խաբելու համար չեղած բաներ է հրապարակ հանել:

Խմբագրութիւնից դուրս գալուն պէս հէնց Ֆրէյ-լինեան փողոցի ծայրին հանդիպեցին պ. պ. Առ. Սարուխանեանը և Լ. Բաբայեանը: Հարցիս թէ՛

— Պ. Բաբայեան, ճիշտ է շաբաթ օրուայ «Փայլակում» տպուած նամակի բովանդակութիւնը, պատասխանեց.

— Ո՛չ, բոլորովին անձիշտ է, սուտ է. այդպէս բան ժողովում տեղի չի ունեցել: Քամայեանցի կողմից ուղղակի լրբութիւն է և շատ անվայել մի ուսուցչի համար՝ ժողովում տեղի չունեցածների մասին այդպէս հրապարակով պնդելը:

— Այդ նրա սիրած հին փէշակն է, պ. Բաբայեան,— ասացի ու շտապեցի յարգելի Պերճ Պոռեանցի մօտ, որ Շաբլիեվի խանութի առջ նստած ինձ ձեռքով էր անում: Մօտենալուս պէս իսկոյն ասաց.

— Լևոն-Չան, երևի արգէն կարգացել ես էն յիմար մեծամտի անճարակ ու անմիտ նամակը. մի նեղանար, հոգիս, մի բարկանար, այդպէս բան չի եղած, հաւատա՛մ: Ես կուռս կը տամ կարելու, եթէ Ղազարօսը այդպիսի բառեր հանած լինի բերանից: Կարելի է թէ ուրիշ խօսք է ասել, բայց որ նա բեզ շարախօս սրիկայ ասէր, այդ լինելու բան չէ, երբէք չհաւատաս:

— Որ այդ բառերը պ. Աղայեանը չի ասել ո՛չ Մանկ. ժողովում և ո՛չ էլ մեր Եփրեմի խանութում, հաստատեցին Եփրեմն ու Յովհաննէսը: Հէնց այս բուպէիս էլ պ. Լ. Բաբայեանը՝ որ ժողովականներից է, պ. Ա. Սարուխանեանի մօտ ուղղակի լրբութիւն անուանեց Քամ.-ի վարմունքը: Ես չեմ նեղացել պ. Աղայեանից, չեմ բարկանում նաև արգէն ըստոյապէս ընկածի Ք.-ի վրայ, վասնզի շրում խեղդուողը՝ ազատուելու տենչով, ծեղին է ձեռք մեկնում, բայց ես վերին աստիճանի զարմացած եմ «Փայլակի» խմբագրութեան անհասկանալի վարմունքից, եթէ շատեմ ուրիշ բան: Ներս. Դպրանոցում պատահածները, անգամ

նկուղի մկների ծրւծընոցը իրանց բոլոր մանրամասնութեամբ ու մեկնաբանութեամբ յայտնի է լինում «Փայլակի» խմբագրութան, որի մի անդամն է նոյնիսկ այն հոգաբարձուն, որ պ. Աղայեանի հետ ներկայ է եղել Մանկ. ժողովին: Այդ այդպէս լինելուց յետոյ ինչպէս չգարմանամ և չասեմ. — արդեօք այդ ինչ փափկանկատումներ են, որ զրդել են խմբագրութեանը տպագրել իրանց էլ շատ լաւ յայտնի... շեղած քանը: Այդ անտակտութիւնը ես ուղղակի վերագրում եմ խմբագրողի անփորձութեան: Փորձ մարդը միայն այս կարող էր ասել Քամալեանցին:

— «Պարոն չակերտաւոր մանկավարժ, որպէսզի դուք նորից, դիւթական գորութեամբ, թէպէտ հրաշքների դարը վաղուց է անցել, այն, որպէսզի դուք նորից անչակերտ մանկավարժ դառնաք, զրա համար միակ հնարաւոր միջոցը դատարանին դիմելն է և ոչ թէ մամուլին, ուր հարկաւորից էլ աւելի պարզուած է հարցը: Չէ՛-որ նոյն բանն են պահանջում և՛ ձեր պաշտօնակիցները, և՛ ձեր աշակերտները, և՛ Հոգաբարձութիւնը, և՛ նոյնիսկ ձեր հակառակորդը: Եթէ ձեր մասին նրա գրածները զրպարտութիւններ են, ինչպէս ասում էք, էլ ո՞ր օրուան էք սպասում մեղաւորին արժանի պատիժը տալու: Խորհուրդ եմ տալիս փտած աստուածաբանական «մեծահոգութիւնը» ծալէք-ջէքներդ դնէք, վասնզի շատ թանգ է «աչքի լոյսի պէս փայփայած մարդկային պատիւ» ասած բանը...: Ս.հա այդ և նման խօսքեր պէտք է ասէք «Փայլակի» խմբագրութիւնը և ոչ թէ տպագրէր մի անբարոյական մարդու նամակ, որ գրուած էր մի միայն հասարակութեանը կրկին սխալեցնելու—նորից խաբելու նպատակով: Յտեսութիւն, յարգելի Պերճ:

Մտայ դերձակ Մալեանի խանութ, ուր էր պ. Պօղ. Հովիւեանը:

— Պօղոս, — դիմեցի նրան, — ուղիղն ասա. սրկէ ճշմարտութիւն կա՞յ սխալմամբ մարդ կոչուածի գրած նամակում:

— Լեոն, անկեղծ եմ ասում, ընդորը սուտ է գորած: Քամալեանցի կողմից այդ մի այնպիսի լրջութիւն է, որ կեանքումս չեմ տեսած:

Այդպէս ուրեմն՝ ստայօգ նամակի մէջ մատնանշուած մարդիկ ոչ-միայն ժխտեցին չակերտաւոր մանկավարժի գրածները, այլև այդպիսի ստեր «գրող», մարդուն՝ ուղղակի լիքը, շտեմնուած լիքը անուանեցին: Դէ այլևս դրանից աւելի լաւ փաստ կարող է լինել, որ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Սարգիսը մարմնացած ստութիւն ու խարդախութիւն է, և այդպէս էլ պիտի մնայ ընդմիշտ. վասնզի մօտ 50 տարի ստութեան, անազնութեան ու անբարոյականութեան տղմի մէջ թաւալուող այլևս անկարող է մաքրութեան մէջ շնչել ու կեանք ունենալ:

Հէյնէի դեղատան մօտ հանդիպեցի պ. Աղայեանին, որ հետևեալ նամակը տուաւ ինձ.

Յարգելի Լեոն.

Կարդացել էք անշուշտ մեր մի Մանուսի *) նամակը: Նրա սուտը բռնելու համար՝ կարող էք հարցնել իր ցոյց տուած վկաներին—պ.պ. Եփրեմին, Օհանէսին և այլոց:

Բայց մի բոպէ ենթադրենք նոյնիսկ որ ես ձեզ հայհօյել եմ նրա (Մանուսի) ասածից եօթն անգամ էլ աւելի, միթէ դրանով նա կ'ազատուի այն աղուէսադրօջից, որ դուք խարանել էք նրա ճակատին: Ո՛չ, բարոյական վերքերը նոյնպէս թողնում են անջնջելի սպիներ:

Ո՛վ կ'ուզի՝ թող մեղաւոր լինի այս գործում, բայց ես

*) Աննամուսի:

ինչո՞ւ պէտք է մեղադրուեմ, եթէ պահանջել եմ միայն, որ բամբաստուած ուսուցիչը կրթական գործից հեռու մնայ *):

Ղ. Աղայեանց

28 ապր. 1907 թ. Թիֆլիզ:

Եւ չի կարելի չհամաձայնել յարգելի նամակագրի հետ. վասնզի խնդիրը հայհոյուած ու չհայհոյուած լինելու մէջ չէ, այդ շատ մասնաւոր բան է, հեռու հասարակական սրէէ նշանակութիւն ունենալուց. այլ այն բանի մէջ, թէ քարոյսալէս ընկած ու ամենքից արհամարհուած վարժապետը իրաւունք ունի՞ այլևս դպրոց յաճախելու. սրբապղծութիւն չէ՞ որ այդպիսի հրէշը ուսուցչի և դաստիարակի սրբազան անունն է կրում: Ահա այդ էր, է և պիտի լինի ամենքիս զբաղեցնող վերին աստիճանի փափուկ և հասարակական կարևորութիւն ունեցող խնդիրը, որ ես յարուցել եմ:

Առարկել թէ միայն Բամալեանցը չէ այդպէս անքարոյական հրէշ, այլ նրա նման ուրիշներն էլ կան, այդ ոչ մեղացուցիչ և ոչ էլ արդարացուցիչ միջոց է:

Միայն բարոյալէս փչացած, առաքինութիւնից ու մաքուր սկզբունքից զուրկ մարդիկ կարող են իրանց թոյլ տալ այդպիսի առարկութիւններ անելու:

Եւ կամ ասել թէ այդպիսի այլանդակութիւնները երևան չպէտք է հանել, դրանց մասին չպէտք է գրել, այդ մի այնպիսի անմտութիւն է, որին ուրիշ անուն չի կարելի տալ, բայց եթէ՝ քարոյսական սնանկութիւն:

Հետաքրքիր է՝ հապա ինչի՞ մասին կարելի է և պէտք է գրել. Բրիւսէլ և այլուր եղած ժողովների մէջ

*) Յետ գրութեան մէջ պ. Աղայեանը խնդրում է չտպել այդ նամակը. բայց որովհետեւ ես ազատ եմ խնդիրն ընդունելու կամ ոչ և հարցն էլ այսպիսի սուր կերպորանք է ստացել, ուստի-և հէնց հարցի պարզաբանութեան համար հարկ համարեցի սպազբութեան տալ, որի համար և յարգելի նամակագրի ներողամտութիւնն եմ խնդրում:

խօսեցած ճառերի՞, որոնց մանրամասնութիւնը հայ հասարակութեանը այնքան է օգուտ, որքան Մանջուրիայում ամուսնը տեղացող անձրևները կովկասի դժբաղդ գիւղացիների ծարաւ ցանքսերին ու այգիներին:

Եթէ այդ լօգիկայով դատելու լինինք, ասել է իշխանութիւնը բոլոր բռնուած գողերին պատժելու փոխարէն պէտք է ձեռքի խարջուի էլ տալով ազատէ միմիայն նրա համար, որ շատ գողեր կան, բայց դեռ բռնուած չեն:

Իմացել եմ ուրիշներից, այդ մասին բաւական կարգացել էլ եմ և ուրեմն գիտեմ, որ անսորմալ հակումը մի սոսկալի, մարդուն արհամարհելի, խեցզեանից էլ ստոր ու զգուելի կենդանի դարձնող անբուժելի հիւանդութիւն է, որով բռնուածը ամենաթրշուառ մարդկանցից մինն է, որին միայն խղճալ կարելի է, ինչպէս-որ խղճում են քաչալին, քոստտին, եթէ զգուելի արուամուր իրա չափը ճանաչէ, իրա կարպետին համեմատ ոտը մեկնի: Բայց միթէ դա մի յարգելի պատճառ է որ մեր դատապարտելի անտարբերութեամբ թոյլ տանք, այլև նպաստենք, որ մարդկութեան անուշաբոյր ծաղիկները — Ազգութեանս յոյս մանուկները ևս թառամեն և մի-մի թշուառ մարդ դառնան:

Այս անմեղ մանուկների բարոյականութեան դէմ ուրիշ ի՞նչ փափկանկատութիւն կարող է հակակշիռ կազմել:

Ուրեմն ինչո՞ւմն է կայանում էտիկայի, Գեղաբուստի և Վայելչութեան դէմ գնալս, որ զանյաս տարան իրանց կուսուցներով ու կուսուցներով «խիստ զարգացած» և «զեղարուեստասէր» խիկար իմաստունները:

Այդ սխալմամբ մարդ կոչուածը՝ որին սոսկ մարդ էլ չեն ուզում համարել, առանց ամաչելու ինքնիրան անուանում է՝ «պարոն Բամախանց», «հշ-նոր մարդ» (ճիշտ է, իբրև ուղիական վարժապետ շատ հին էս), «երկար տարիներ հայ դպրոցներում ուսուցչութիւն» (թէ՛ «մանկա... վարժութիւն») անող», իբրև ուսուցիչ՝ «25 տարի թողնու մաշող» (մաքուր վարժութեան, ազնուութեան, ճշմարտութեան, առաքինութեան ու այլ վեհ գաղափարների մասին շատ խօսելուց, թէ՛ անմեղ աշակերտների դո՛ւրստ սողոմութիւն պատուաստելուց. — «սիրելիս, այդպէս բանից չպէտք է նեղանալ»), «հայ մանուկների համար (գողանովի— ուրիշների մտաւոր վաստակները սեպհականելով) զրքեր զրոզ», և այլն, և այլն, հետեւապէս այդ աստիճան ակըն- յայտնի բազմակողմանի և աչքի ընկնող ընդունակութիւնների տէր մարդը եթէ ոչ-շատ, բայց գոնէ բաւականաչափ զարգացած պէտք է լինի և իբրև այդպիսին՝ պէտք է պարզ հասկանայ, թէ ինքը՝ դեռ մի կողմը մնան միւս յանիրաւի իւրացրած տիպոսները, իբրև ուսուցիչ-դաստիարակ, իբրև հայ ընտանիքներ յաճախող հիւր, իբրև ոչ-բարով զրազետ, չպէտք է մնայ, աւելին՝ իրաւունք չունի մնալու մամուլի մէջ արածս մեղադրանքների տակ:

Ախր 25 տարի մանուկների համար «զրոզ» վարժապետը գոնէ միքիչ էլ է բարձր պէտք է լինի մի տղէտ ու անբարոյական խոզարածից, որն է բաղաբի վարկաբեկ արուարձանում եղող բարոյապէս փչացած օղեպանից— միկիտանից, հասարակութեան տակաճք դրամաշորթ ստոր սրիկայից, և ուրեմն չի կարող մի վարժապետի, այն էլ ոչ-բարով «չորս-աստիճան ունեցող տիրացու վարժապետի» համար նշանակութիւն չունենալ, թէ ինչ է գրում մամուլի մէջ՝

իրա իսկ անութեամբ ամենքից ևս սիրուած ու ազնիւ ճանաչուած անձը և ինչ ուրիշները և թէ ինչ են խօսում անհասարակ հասարակութեան մէջ իրա մասին:

25-որ ուսուցիչ-դաստիարակի վարքի մասին ամենաաննշան կասկած անգամ չպէտք է լինի, որի վերաբերմամբ երկու տարբեր կարծիք չի կարող լինել իրօք բարեկիրթ և բարոյական հասարակութեան մէջ:

Երբ բաց-աշկարայ հրապարակով մէկին մեղադրում են որն է յանցանք գործելում, մեղադրուողը եթէ իրօք առողջ ուղեղի տէր է, «գոեհիկ լաղաբից» չէ, նամուսով, արուսով մարդ է, պատուոյ զգացմունք ունեցող մարդածին արարած է, նա իր բարոյական պարտքն է համարում անմիջապէս, եթէ հնար է, անհերքելի փաստերով իրա վրայ բարձուած մեղադրանքից արդարանալ օրինակաւ ճանապարհով: Իսկ եթէ հնար չկայ այդպէս անելու, այն-ժամանակ՝ եթէ փոքրիշատէ խելօք է, ի-սէր և յանուն ճշմարտութեան գոնէ լռելու առաքինութիւնն է ունենում:

Մինչդեռ սխալմամբ մարդ կոչուած Գամալեանց Սարգիսը լինելով՝ և՛ գոեհիկ լաղաբից, և՛ աննամուս, և՛ անաբուռ, և՛ ամօթի ու պատուի զգացմունքից իսպառ թափուր ոչ-մարդածին անարգ արարած, լիովին հակառակն արաւ. փոխանակ անմիջապէս ուղղակի հատարանին դիմելու և այնտեղ՝ իրա սեպհական ձեռքով կազմած հոգաբարձական ծիծաղելի վկայականներով ու իր «նախկին աշակերտների» և «ազնիւ երիտասարդներին» վկայութեամբ մաքրուելու մամուլի տասարգներին՝ ևս սկսեց դեռ բերումէջ արածս մեղադրանքներից, նա սկսեց դեռ բերումէջ արածս հաջալ գործի հետ մաղաչափ անգամ կապ, նացի վրաս հաջալ գործի հետ մաղաչափ անգամ կապ, առնչութիւն չունեցող տասնեակ տարիներ առաջ

գրածս նամակները ծոցը դրած տնօրհնէք մանուկա-
լով՝ խիկար իմաստուններին, լեզու և պատմութիւն
չիմացող լեզուաբաններին ու պատմաբաններին և
ծրի-խելքով Սուստի-բէկերին շլացնել, ապա անմեղ
անձանց վրայ լուսնահաջ տալ, իմի բան՝ պատէպատ
ընկաւ, բուն խնդրից վատաբար փախուստ տուաւ ու
ձեռք առաւ իր սիրած հին փէշակը—Մանկավ. Ժո-
ղովում տեղի չունեցած իրողութիւններ հրատարակեց
լրբաբար ստելով, որ մի կերպ, գոնէ չնչին չափով էլ
է արդարանայ: Բայց երբ տեսաւ թէ դրանցով ոչ-
միայն բան չդարձաւ, այլ աւելի վարկաբեկ եղաւ ինքը,
սպառնաց պապերին մասին պարսաւազրեր յիւրիւրե-
լու. իսկ երբ պարզ տեսաւ թէ այդ անմիտ սպառնա-
լիքն էլ ոչ-միայն չօգնեց, այլ ուղղակի ծաղր ու ծա-
նակի առարկայ դարձրեց իրան, ճարահատուած՝ ջուրն
ընկնողը ծեղիցն էլ է բռնում, հրատարակեց ողորմելի
պասկվիլ-բրօշիւրը: Ասում եմ՝ ողորմելի, վասնզի մարդ
պէտք է բարոյական սնանկութեան հետ նաև մտաւոր
սնանկ լինի բոլորովին, որ չհասկանայ թէ՛ եթէ աշ-
խարհիս երեսին եղած բոլոր անմեղ ու մաքուր ան-
ձանց վրայ լուսնահաջ տայ, բոլոր հին ու նոր յար-
գելի ննջեցեալների յաւիտենական նինջը վրդովի՛նը-
րանց միայն օրհնանքի արժանի յիշատակը անարգե-
լով, էլի, էլի չի կարող արդարանալ հրապարակով,
մամուլի մէջ արածս սոսկալի մեղադրանքներից ա-
ռանց անառարկելի փաստերով դատարանին դիմելու:

Դատարան և կամ կրկնակի, եռակի ու քառակի
լալկումն, պապանձումն, եթէ այդ սխալմամբ մարդ
կոչուածը իսպառ գուրկ չէ ամօթի սրբազնագոյն
զգացմունքից, եթէ ամենափոքր չափով գոնէ գաղա-
փար ունի սյն անգին, անփոխարինելի մաքուր գան-
ձի մասին, որ կոչվում է մարդկային անբիծ ու ան-

աղարտ պատիւ, որից թափուր մարդը լաւ է որ
իսկի ծնուած իսկ չլինէր:

Աշխարհիս ստեղծագործութիւնից մինչև օրս ճշ-
մարտութիւնը դեռ ոչ մի անգամ լոյսից չի վախե-
ցել, գոնէ այդքանը, անշուշտ եմ, յայտնի պէտք է
լինի եթէ ոչ 25 տարուայ «գրողին», բայց գոնէ ոչ-
բարով «տիրացու աստուածաբանին». հետեապէս՝ էլ
ինչու է վախենում դատարանից, ուր պայծառ լոյս
է սփռուելու գործի վրայ:

Պարզ է թէ մեծամտութեան զգուելի ախտից այն-
քան է տարուել, այնքան ամբարհաւաճ է, որ կար-
ծում է թէ լոյսից չվախեցող ճշմարտութիւնը այս
անգամ՝ յատկապէս իրա նման չակերտաւոր մանկա-
վարժի վերաբերմամբ բացառութիւն կը կազմի—պայ-
ծառ լոյսից կը դողայ, անս այդ պատճառով էլ՝ երևի-
թէ ճշմարտութեանը մեղքանալով, դատարանին չի
դիմում:

Հապա ուրիշ ինչ կերպ բացատրել իր ծիծաղելի
վարմունքը, քանի-որ դատարանից եօթն օրուան ու
եօթը զիշերուայ ճամբայ հեռու փախչողը չի դադա-
րում ոչ բերանացի լուսնահաջ տալուց և ոչ էլ գրա-
ւոր կերպով վրաս հաջալուց ու ոռնալուց: Չէ՛-որ
այդպիսի վարմունքը վայել է միմիայն քարոյապէս
ընկած եւ ամենքից արհամարհուած ստոր սրիկային:

Դատարանից այդպէս անի-զարհի եկողը իրա
պասկվիլի մէջ ասում է թէ թշնամիներ ունի. իսկ
ես պնդում եմ որ դրանք թշնամիներ չեն, այդ շատ
պատիւ կը լինէր իրանման բարոյապէս ընկած ա-
նարգ արարածի համար, այլ իրան արհամարհող և
նարգ զգուողներ են. վասնզի «այդ ողորմելին մի
իրանից զգուողներ են. վասնզի «այդ ողորմելին մի
հատ բարոյական և խելքը գլխին անկեղծ բարեկամ
չունի և չի էլ կարող ունենալ», ինչպէս լաւ նկատեց

իմ յարգելի բարեկամ Իս. Յար.-ը: Հետևապէս ինչ կ'ասեն այդ «թշնամիները». չէ՞-որ թէ դրանք և թէ ամենքը ևս հաւատում են, որ ճիշտ են մամուլի մէջ արած սոսկալի մեղադրութիւնները: Մի-գուցէ անբարոյական, վարկաբեկ եղած կանանց միայն յատուկ տխմարութեամբ իրան «բամբասանքից բարձրն է համարում», ուստի-և դրանց արհամարհում է բարոյապէս ընկածը: Իսկ-և-իսկ անամօթի լողելիայ:

Հապա այդ «թշնամիների բոլոր համալսարանական և ոչ-համալսարանական, բոլոր բարոյական ու պատուաւոր բարեկամներին»: Չլինի՞ թէ դրանց էլ է արհամարհում այդ ամենքից արհամարհուածը: Բայց այդպէս կ'անէ, այդպէս կը մտածի ու այդպէս յիմարաբար կը դատէ միայն երեսի եօթը փարզան պատուած անառակը և կամ ամօթի սրբազնագոյն զգացմունքից բոլորովին թափուր մնացած գրական ու մտքի պոռնիկը:

Ուրեմն թող դեռ օրինական ճանապարհով—դատարանով մաքրուի իրան բարոյապէս ոչնչացնող մեղադրանքներիցս և ապա՝ եթէ այլևս ուրիշ լաւ բանի շնորհ չունի, ամբողջովին նուիրուի իր սիրած հին փէշակին—անագնիւ ստեր ու գրպարտութիւններ շարադրելուն և կամ վերջերս կատարելութեան հասցրած իր անփառունակ նոր արհեստին—տմարդի, զըզուելի պասկվիլներ յերիւրելուն:

Իսկ մինչ այդ սխալմամբ մարդ կոչուած չակերտաւոր մանկավարժը, այդ՝ ամեն բան «թեթե թիւրիմացութիւն» համարող «սողոմեցի տիրացու աստուածաբանը» իրաւունք չունի վեհ գաղափարներ արտայայտող բառերն իր մուրտառ բերանն առած նորից ու նորից սխալեցնել հասարակութեանը: Բաւական է ինչքան որ խաբել է դժբաղդ հասարակութեանը շնոր-

հիւ մեր մամուլի անհասկանալի և ուղղակի դատապարտելի անտարբերութեան:

Մարդ չի հասկանում թէ մեր մամուլը ում է համակրում՝ ճշմարտասէր ու խիզախ բարոյականներին, թէ՞ ստութիւնների սիրահար, անպատկառ, լիրբ, անամօթ ու եզուիտ անբարոյականներին: Այնպէս-որ մարդ ակամայ փորձվում է մտածելու՝ չլինի՞ թէ մեր մամուլի մէջ այս ու այն վեհ գաղափարի անունով երդուող և հրապարակով ճառող ու ճամարտակողները՝ ոչ-աւելի և ոչ-պակաս միմիայն գրպանին լքցնելու և իրանց փնթի կրքին բաւականութիւն տալու համար մտածող սրիկաներ են:

Չէ՞-որ մեզանում մամուլը հասարակութեան վրտաւոր առաջնորդն է՝ բառիս լայն ու ընդարձակ իմաստով: Հապա եթէ այդ մտաւոր առաջնորդը՝ առանց ծիծաղելի ու տխմար փափկանկատումների իրա դերը ճշտութեամբ ու սրբութեամբ կատարի—քթին կպածները թողած զանազան հովերով բռնուած հեռուները չդեգերի, այլ պարզ ցոյց տայ ամաշկարայ բարին ու չարը, ակնյայտնի լաւն ու վատը, այլևս հասարակութիւնը երբեքից էլ հանդուրժի՞ Քամալեանց Ս.-ի նման այլանդակ բարոյականի տէր երկոտանի հրէշներին, որոնք անամօթութեամբ դեռ լրագրով մասնաւոր դասեր էլ են առաջարկում հասարակութեան՝ գպրոցից վճարուելուց յետոյ *):

Փամանակը չէ՞, որ կեղծ էտիկայ ու մետիկայ, շինծու գեղարուեստ ու մեղարուեստ ծալուրի, մի կողմը

*) Աչքի առաջ ունենալով դրա այդ աստիճան անհաւատալի անամօթութիւնը, երևի մի օր էլ կը յայտարարի, թէ «մանկա...վարժութեան» մասին դատախօսութիւն է կարգաւորու՝ հիմնուած գերմանական նորագոյն աղբիւրների—Փօն Մօլալէ-Հառդէնի յայտնի դատի վրայ:

դրուի և իրերը իրանց բուն նշանակութեամբ ու անուններով հրապարակ հանուեն և հասարակական անաչառ ու անողոք դատաստանին յանձնուեն: Եւ եթէ Մամուլը միշտ այդպէս անէ, խնամիների խաթրը չտեսնելու դնէ, փչացած ազդեցիկներին ազնուաբար քամահարէ, անձնական բարեկեցութիւնն ու շահը հասարակութեան օգուտից վեր չդասէ և իբրև կուռք չերկրպագէ, այլևս ո՞ր աշխարհականը կամ ո՞ր հոգեւորականը կարող էր յանդգնել հրապարակով ստել, խաբել, խարդախել, մեծամտել, սողոմութիւնը ջատագովել, տարին տասներկու ամիս հասարակութեանը կեղծիքներով կերակրել, այս կամ այն հաստատութիւնը, եկեղեցին, դպրոցը բաց-աշկարայ անառականոց դարձնել և՛ ըստ ամենայնի այլանդակ բարոյականի տէր հրէջ տեղներովը անմեղ ու մաքրակենցաղ հրեշտակներ — գաղափարական գործողներ երևալ...

Սակայն չլինի՞ թէ «խիստ» զարգացածների ու գեղարուեստասէրների հասկացած և գոված «մամուլի» ու «գեղարուեստի» մի ճիւղն է այդ, որ վերը նկարագրածս պախարակելի ուղղութիւնն է մտցրել մեր մէջ. — այսօր կարելի է ամեն տեսակ փճութիւններ կատարել, այս ու այն զգուելի արատի մասին խօսել ու գրել, իսկ վաղը չի կարելի. մեր օրգանում կարելի է ամեն բանի մասին գրել, ուրիշինների մէջ ոչ մենք արտօնուած ենք մեր ուզած, քէֆներս տուած ժամանակ ու՛մ ասես յանիրաւի ամեն բան ու ամեն ինչ ասելու, նոյնիսկ արդարներին ցեխոտելու, իսկ դուք՝ նոյնիսկ անառարկելի փաստերը ձեռքներիդ սողոմեցի մարգակերպ հրէջների և թէ մարգասպանութեամբ անուն հանող վայրսների մասին ձայն-ձայտուն հանելու անգամ իրաւունք չունիք...

— Եթէ այո՛, ապա ուրեմն թքած այդ տեսակ փը-

չացնող մամուլի ու այդպէս անբարոյականացնող գեղարուեստի վրայ:

Մի ազգի գոյութեան հիմնաքարը՝ լայն իմաստով բարոյականութիւնն է և ոչ թէ ընդհակառակը:

Չէ՛-որ մեր ամենքիս կէտ նուազապէս դժբաղդ Ս. զգիս գոյութիւնը պահպանելն է եղել, է և պիտի լինի:

Կամ չլինի՞ թէ զգուելի նոր հովերը այնքան խորն են արմատ բռնել մեր մէջ, որ այլևս կարիք չկայ սեպհական ազգութեան պահպանման մասին անհրաժեշտ հարկաւոր չափով հողալու, այլ միայն այնքան՝ որ հնար լինի անպիտան ու դատարկ գլուխնիս պահելու համար Ս. զգից ապրելու միջոց ստանալ՝ ինչ ճանապարհով էլ ուզում է լինի... Թի՛ւհ:

Մի՞թէ չգիտեն այդ խիստ «զարգացածներն» ու «գեղարուեստասէրները», թէ մի մանուկ — մի անմեղ աշակերտ, որ ժամանակով կարող էր մարդկութեան մեծ երախտաւորներից մինը դառնալ, շատ աւելի գին ու արժէք ունի, աւելի պաշտպանութեան ու խնամքի է կարօտ, քան հարիւր, հազար, 100,000 և աւելի հակաբնական հակման տէր Ս. Գամալեանցներն ու նմանակները, եթէ նոյնիսկ այդ նգովից արմատներից իւրաքանչիւրն իրա տաղանդով բարձր իսկ լինէր մարդկութեան երախտիքին արժանացած Ֆրէօրէլից, Պեստալլացուց, Սպենսէրից և նման ականաւորներից:

Մի ուսուցիչ, մի դաստիարակ՝ որքան էլ շնորհալի, որքան էլ տաղանդաւոր, նոյնիսկ որքան էլ հանճարեղ, բայց եթէ արդէն անուղղելի անբարոյական է — աննօրմալ հակումով է տանջվում, այդպիսին հասարակութեան համար՝ որպէս գլխովին վնասակար անդամ մի քօռ գոօջ չարժէ. պէտք է այդպիսի վրտանդաւոր երկոտանի հրէջի աչքում թքնել ու դէն

զցել. այդպիսի այլանդակ բարոյականի տէր գրագէտը, տեսուչը, ուսուցիչը, վերակացուն, ծխատէր քահանան, քարոզիչ վարդապետը և թէ արհիւն իրաւունք չունին ոտք դնելու սրբազան վայրերի—գրպրոցի, եկեղեցու և ընտանիքների շէմքի վրայ. այդպիսիք պէտք է դուրս անուեն այդ սուրբ վայրերից և նոյնիսկ վաճառու են հասարակութիւնից իբրև քոսոտ շներ, որ իրանց գգուելի ախտով չվարակեն ուրիշներին:

Եթէ ճիշտ չէ, կամ սխալ կայ ասածներն մէջ, հերքեցէք փաստերով, ցոյց տուէք սխալներս, եթէ բարոյական քաջութիւն ունիք, այ ողորմելի խիստ «գարգացածներ» և «գեղարուեստաէրներ»,—զրգուելի ու կեղծաւոր փարիսեցիներ, որ սովորել էք՝ հասարակութեան աչքին թող փչելու համար մօեղները քամել, բայց ուղտերը կլանել գաղտնի:

Նախատինքի թնօք ձեզ պէսների անամօթ երեսին: Իսկ եթէ գրածներս ուղիղ են և ճշմարիտ, ասել է՝ միայն համակրանքի ու խրախուսանքի է արժանի, դէ գոնէ լռելու, պապանձուելու առաքինութիւնն ունեցէք: Սյլևս ինչո՞ւ համար են ծակուծուկերում ձեր փսփսուկն իմ դէմ. փսփսուկ՝ որ երբեմն գորտային անտանելի կրկոցի է փոխվում, իսկ շատ անգամ էլ լուսնահաջի ու անհանդուրժելի կլանչոց ու ոռնոցի:

«Մանուսի», «ուղղակի լրբի», «անասելի լրբի» ստայօդ նամակի պատասխանը գրեցի և տուի «Փայլակի» խմբագրութեան և իբրև գրածիս հաստատութիւն մօտներն էլ կարգացի պ. Աղայեանի գրած նամակը: Սակայն խմբագրութիւնը, որ մեծ թուլութիւն ունէր այդ միջոցներին փութկոտութեամբ «խմբագրական պատասխաններ» տալու, հարկ իսկ չհամարեց երկտողով յայտնել նամակիս վիճակի մասին,

լաւ գիտենալով, որ եթէ գրէր թէ պատասխանամակս չի տպվում «շատ խիստ տոնով գրուած լինելու համար»*), հէնց դրանով իսկ նպատակիս հասած կը լինէի, այն է՝ ճշմարտասէրներին գոհունակութիւն պատճառած, իսկ աննամուսի խաւարասէր բարեկամների հորթային ուրախութեան վրայ սառը ջուր ածած: Ի՛նչու է:

Նամակիս սկզբին մի փոքր բան աւելացրի և տարայ «Մշակին», բայց դա էլ դադարած էր՝ նահանգապետի կարգադրութեամբ «Հերմէս» տպարանի փակուելու պատճառով:

Նոյնութեամբ տարայ «Հովիւին»:

—Լևոն, գրածդ անչափ խիստ է,—նկատեց Հայրխմբագիրը կարգալուց յետոյ,—բայց եթէ՝ անհայտ կտորները հանես և շատ կծու բառերը ջնջես, այնժամանակ կը տպեմ: (Լսում ես, գրական խուլիզան Քամ. Ս., որ «Հովիւի» խմբագիրը «ուրախութեամբ չի ընդունել քո դէմ գրածները», ինչպէս-որ անագնուաբար ստել ես):

Երբ թէ մեղմացրի և թէ շատ կծու ակնարկութիւններն ու բառերը ջնջեցի և տարայ, խմբագիրը կարգալով նկատեց.

—Վայ. իրաւ է, ինչ-որ նկատել էի, հանել ես և շատ բան ես ջնջել, բայց հիմա աւելի խիստ է դուրս

*) Երևի արդէն մտահան էին արել իրանց գործ դրած և՛ խիստ, և՛ անպատշաճ, և՛ նոյնիսկ ուղղակի անվայել տոնը, որ գործ էին գնում «Մուրճ» ամսագրի խմբագիր պ. Լ. Սարգսեանի դէմ: Որպէսզի սխալ ու թիւր մեկնութիւն չտան այդ արդարացի նկատողութեանս, հարկ եմ համարում ասելու, որ ես և պ. Լ. Սարգսեանը շատ էլ քնքուշ զգացմունքներ չենք տանում միմեանց համար, բայց ճշմարտութիւնը չասել անկարող էի:

նմանակները՝ անկիւններում քսփսոցն ու քրթմնջիւնն ընդմիջաւ կտրելու և թէ, մանաւանդ, հասարակութեան կասկածը փարատելով համոզելու, որ ժողովականները ոչ-որ երբէք համամիտ ու համակեր չի եղել և չէ՝ սխալմամբ մարդ կոչուած ոչ-բարով աստուածաբան Քամալեանց Ս.-ի «մանկա... վարժութեան» և ոչ էլ տրամադիր այդ տեսակ կասկածելի բարոյականի տէր անձանց պաշտպանելու և դրանց զգուելի ունակութիւնները քողարկելու՝ ի-Ֆլասա ճշմարտութեան, ի-Ֆլասա մեր ամենքիս յոյս մատաղ սերնդի բարոյական դաստիարակութեան և ի-Ֆլասա Ազգիս գոյութեան պահպան հրեշտակ Հայ-ընտանիքի անաղարտ պատուի:

Փակագծի մէջ ասեմ, որ բարոյական պարտք կայ նաև պ.պ. Ղ. Աղայեանի, Յովհ. Թումանեանի և Ա. Աբեղեանի վրայ՝ «Փայլակում» լոյս տեսած նամակի վերաբերեալ իրանց բոլոր գիտցածը հրապարակ հանելու: Վասնզի բերանացի ասել և կամ չտպելու համար մասնաւոր գրածով պնդել՝ թէ «Քամալեանց Ս.-ի գրածը սուտ է», «անպիտանը խարդախ մարդու յերիւրանք է» տպել «Փայլակում», «Քամալեանցի կողմից ուղղակի չտեսնուած և անամօթ լրբութիւն է՝ չեղած բաների մասին հրապարակով պնդելը», եայլն, ևայլն, բաւական չէ, այլ անհրաժեշտ է՝ եթէ ճշմարտութեան հետ կոմպրոպմիսս անողներից չեն իրանք, որ հրապարակով ևս պընդեն իրանց ասածները՝ եթէ ոչ մանրամասնօրէն, գոնէ շատ համառօտակի, որպէսզի հասարակութիւնն էրագեկ լինի բուն ճշմարտութեան:

Հայ ժողովրդի կարծիքով անբան արարած շունն անգամ անբան երես—պատիւ, նամուս, արուս ունի, որ եկեղեցի չի մտնիլ, եթէ նոյնիսկ դուռը կընկի վրայ բաց լինի: Եւ մինչդեռ Դուք, մօտ 30 հոգի ժողովականներդ (զուցէ բացառութեամբ մի 2—3 հոգու) փախուստ էք տալիս անդուզական «մանկա... վարժից» իր անհանդուրժելի յատկութիւնների համար, անունը լսելիս զգուանքով թքնում էք, արհամարհանքով էք լսել նրան ու յանդիմանել նրա բերանացի խնդրի հետ ամենևին կապ չունեցող, անազնիւ մարդուն միայն վայել բացատրութիւնը և դատարանի դուռն էք ցոյց տուել ու տալիս, ականջալուր եղաք բարձր դասատանց աշակերտները բողոքներին՝ որ չեն կամենում այդպէս անպատիւ

վարժապետին. բողոք՝ որ բարոյական մահ է մի ուսուցչի համար. այո՛, մինչդեռ Հոգաբարձութիւնը ևս արհամարհանքով է մերժել «մանկա... վարժի» նոյնիսկ գրաւոր բացատրութիւնը և էլի դատարանի դուռը ցոյց տուել, բայց-և-այն-թիւնը և էլի դատարանի դուռը ցոյց տուել, բայց-բոլոր թուք պէս այդ՝ բնական մահից էլ սոսկալի մահը, այդ բոլոր թուք ու մուրը երկնային ցօղ է թվում չակերտաւոր մանկավարժ Քամալեան և նա ոչ-միայն շարունակում է դպրոց յաճախել (հարկաւ ըստ կարելոյն խուսափելով Ձեր՝ ուսուցիչներից սենեակը ոտ դնելուց, չնայելով որ դուրսն էլ աշակերտների արհամարհական ծաղրին է ենթակայ լինում), այլ և դեռ երեսունի նորից ու նորից սրան-նրան դիմելով պաշտպանութիւն մուրալ, կամ դեռ իրանից չխաբուած միամիտ խմբաբուրութիւնների հովանաւորութիւնն աղերսել:

Չկայ մի խմբագրութիւն, որի հետ գործ ունենալով խաբած չլինի:

Եւ անա թէ ինչու ժողովականներդ եթէ սիրող էք ճշմարտութեան, եթէ իրօք նախանձախնդիր էք Հայ-դպրոցի և Հայ-ընտանիքի պատուին և մանաւանդ եթէ հրապարակով ճշմարտութիւնն ասելու առաքինութիւնը ևս ունիք, ապա ուրեմն Դուք կրկնակի պարտաւոր էք գոնէ յիշածս նիստեանց եզրակացութիւնը հրապարակ հանելու: Վասնզի միայն այդ կերպով Հայ-դպրոցին ու Հայ-ընտանիքին կպած ժողոտս պալարը արմատահան կ'անուրի և զգուանքով դէն կը շարտուրէնդմիշտ:

Եւ որպէսզի համոզուած լինիք, թէ Ձեր կողմից դատարանի դուռը նրան ցոյց տալու համար ինչքան շնորհապարտ եմ Ձեզ, անա հրապարակով ասում եմ՝ զգուանքով պարտ եմ խորամանկօրէն և խարդախ նպատակով «Փայլակի» մէջ ականարկած ընկերական (!!) դատը, ինչից որ իսկապէս խաբուել է «Փայլակի» խմբագրութիւնը և տպել ա-նամօթ լրբի ստալոդ նամակը: Այո՛, խորին զգուանքի զգացմունքով եմ մերժում սողմեցու արդէն խանգարուած ուղեղի մէջ հոլովուող մօտ վեց ամրս իր համար idee fixe դարձած ընկերական դատը և ինքս էլ մասնացոյց եմ ա-նում նոյն դատարանի դուռը: Վասնզի անյատիղ, միայն անյատեղ հնարաւոր է շատ ու շատ բան մերկացնելուց յետոյ՝ կամ աւրել—ջնջել և կամ վաւերացնել անյատաւակու-

Թեան դամդէն—աղուէսադբողմը, որ ես՝ ի-սէր Հայ-դպրոցի
և Հայ-ընտանիքի, ազատութիւնս վտանգի ենթարկելու գնով
խարանել—դամդել եմ սխալմամբ մարդ կոչուածի անամօթ
ճակատին:

Յանցաւորը՝ ով էլ ուզում է լինի, պէտք է արժանի
պատիժը կրէ. վասնզի այդ անհրաժեշտ է նախ և առաջ՝
յանուն ճշմարտութեան և ապա յանուն սրբազան Մամուլի վեհ
կոչման, ինչպէս-և յանուն Ազգիս յոյս մատաղ սերնդի կրթու-
թեան սուրբ տաճարի—դպրոցի և յանուն Ազգիս այդ յոյ-
սերը սննդող, նրա գոյութեան հաստատուն նեցուկը եղող
Հայ-ընտանիքի մաքուր պատուի:

Եթէ ճիշտ չեն գրածներս, հերքեցէք փաստացի, այլա-
պէս Ձեր լուծութիւնը կը համարեմ բոլոր գրածներս հետ հա-
մաձայն լինելու անհերքելի ապացոյց: Բայց այդ վերջին
դէպքում ճշմարտութիւնը հրապարակով պաշտպանելու ա-
ռաքինութիւնից Դուք շատ հեռու կը լինիք, յարգելի Պա-
րօններ:

12 մայիս:

Սակայն «Հովիւի» խմբագրութիւնը այդ նամակս
չտպեց, այլ շաբաթաթերթի № 18-ում գրեց իրա կող-
մից հետևեալը.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Թիֆլիզ, Լեոն Մ.-Ադ.-ին.—Չարժէ Գամ. Ս.-ի մասին
այլևս բան գրել. այդ մարդը բարոյապէս պատժուած է ար-
գէն: Բարոյական պատիժ չէ արդեօք, որ նրա ընկեր-ու-
սուցիչները արհամարհանքի զգացմունքով երես են դար-
ձրել նրանից և խզել նրա հետ իրանց ընկերական կապը,
իսկ աշակերտները պահանջել՝ որ հեռանայ դպրանոցից: Թէ
ուսուցիչները, թէ Հոգաբարձութիւնը և թէ Դուք նրան դա-
տարանի դուռն էք ցոյց տուել և տալիս, իսկ նա պատեպատ
է ընկնում և խուսափում: Մամուլի միջոցով հարկաւորից
էլ աւելի արդէն գործը պարզուած է. մնում է միայն մի մի-
ջոց—դատարան: Պարօնը՝ եթէ քաջութիւն ունի, թող դիմէ
դատարանին, զուցէ այնտեղ կարողանայ սրբել իրանից այն
բոլոր մեղադրանքները, որ Դուք բարդում էք նրա վրայ:

Այդպիսի մեղադրանքների տակ մնալով՝ կարելի բան չէ ու-
սուցիչ լինել: Մենք ևս Ձեզ հետ միևնոյն միակ խորհուրդը
կը տայինք Գամ. Ս.-ին—գնալ վարդապետ դառնալ և մի
խուց մտնել:

Խմբագրութեան այդ հիանալի պատասխանը թէ և
տեղին էր, խիստ կտրուկ և շատ անզուրկ, թէ և դրա-
նով գրածներս՝ հակառակ բոլոր գրական խուլիզան
չարչիւնների, աւելի զին ու արժէք էին ստանում բա-
րեմիտ ընթերցող հասարակութեան աչքում, բայց-և-
այնպէս շատ անբաւական մնացի. որովհետև եթէ
Ներս. Դպր. Մանկ. Ժողովին ուղղածս բաց նամակը
տպուէր իրա ժամանակին, իցէ-թէ՝ թէ շատ և շատ
անախորժութիւններից ազատ մնայի, թէ հիմա ստի-
պուած չլինէի գործս թողած՝ այս գիրքը գրելու տը-
խուր պարտականութիւնը կատարել և թէ ինքը՝ Հայր-
խմբագիրը ազատ մնար սխալմամբ մարդ կոչուածի
կլանչոցներից—անազնիւ զրպարտութիւններից:

Իսկ թէ ես իրաւունք ունիմ այդպէս ասելու,
դրա մի անհերքելի ապացոյցն էլ «Հովիւի» խմբագրի
դէմ՝ մտքի պոռնիկի գրած հետևեալ նամակն է.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիզ, 2 յունիսի.

Խնդրում եմ մի անկիւն շնորհել երկտողիս, որ բնորո-
քողում է մեր գրական բարքերից մինը:
Անցեալ տարի Տէր-Եզնիկը պարծենում էր, որ ես իր
շաբաթաթերթին աշխատակցում եմ, իսկ այս տարի սկսել
է իր թերթում ինձ անվերջ հայհոյել ու վիրաւորել: Ի՞նչ է
այդ փոփոխութեան պատճառը, կը հարցնի ընթերցողը: Ահա
թէ ինչ: Անցեալ տարի «Հովիւ» թերթում աշխատակցում
էր նոյնպէս պ. Ս. Մանդինեանը, որին բարեկրօն խմբագի-
րը գրաւոր խոստում էր արել տողավարձ տալ: Սակայն ա-
միսներ անցնելուց ետ հօծօրար չտուեց բարեկրօնը, թէ և
քանիցս նրա տուն գնացին հիւանդ մանկավարժի թէ կինը

և թէ որդին: Գուժարն ընդամենը 65 ո. էր, մի չնչին գուժար Տ. Եզնիկի պէս հարուստ քահանայի համար: Ս. Մանդ. նամակներ գրելուց յոգնելով՝ մարդիկ մէջ գցեց, որ բարեկրօնին համոզեն: Ամեն միջնորդութիւն զուր անցկացաւ (ասածիս վկայ է Ս. ք. Սահակեանը): Վերջը ճարահատած Ս. Մ. դիմեց դատարանի օգնութեան և դատաստանական պրիստաւի միջոցով հանեց իր քրտինքի վարձը:

Եթէ կը լինեն անձինք, որ կը դժուարանան տողերիս հաւատալ, թող այդպիսիները դիմեն պ. Ս. Մ.-ին և ստուգեն: Հիւանդ մանկավարժին, իբրև նախկին աշակերտ, յաճախ այցելողը ես էի: Տ. Եզնիկին իր վարձունքի համար բուռն զգուանքս յայտնելով՝ թողի նրա թերթին աշխատակցելը: Այդ ժամանակից բարեկրօնը խայթուած օձի պէս միջոց էր փնտրում թոյնը թափելու վրէս: Այդ էր ահա պատճառը, որ «Հովիւի» մէջ տեղ տուեց այնքան ստոր ինսինուացիաների իմ դէմ և դեռ շարունակում է իր կողմից լրացնել բարեկրօն խմբագիրը («Հովիւ» № 18 մայ. 27):

Այդպիսի ստոր վարձունքի գնահատութիւնը թողնում եմ արդարադատ ընթերցողին:

(«Փայռ» № 19.)

Ս. Քամայլանց

Պրտկերեսին միայն սազական այդ ամբարհաւածութեամբ գրած և գրաբան, ներողութիւն՝ ոչ-բարով աստուածաբան սուտ-քրիստոս քահանայի վկայութեան վրայ հիմնուած ծիծաղելի նամակը կարդացի շուրջվերցի երկաթավաճառ Գր. Մովսէսեանի խանութում, ուր էր նաև շուրջվերցի Արտեմ Նադիրեանը:

Երբ նամակի ընթերցումը վերջացրի, դիմեցի Մովսէսեանին.

—Գրիգոր, սրտակից բարեկամիդ այս արածը ուղղակի խելագարի գործ է: Ինչո՞ւ չես հասկացնում որ ձեռք վերցնի այսպիսի անմիտ քայլեր անելուց: Վերջապէս՝ ամօթ է:

—Հն, ի՞նչ ա. մի՞թէ վատ է արել:

—Ո՛չ-միայն վատ է արել, այլ ուղղակի գլուխը քարոզի է տուել հէնց իրա օգուտի տեսակէտից... Այո, նա իրաւունք չունէր իր ընկած անունը մի կերպ վերականգնելու համար յարգելի Ս. Մանդ.-ի անձնական հաշիւները մէջ մտնելու: Բարեկամդ իր ճգմած ուղեգով կարծել է թէ այդ հաշիւը մէջ բերելով Տէր-Եզնիկին կը վնասի, բայց դրա փոխարէն նա վնասել է յարգելի մանկավարժին— մեր լաւ մըտածողներից մէկին:

—Հն, ի՞նչ ա. Տէր-Եզնիկը ի՞նչ ա, Ֆլանը ի՞նչ ա, դո՞ւ ի՞նչ ես:

—Ե՛ս. ես՝ Ղևոն՝ եմ. այս մի հատիկ խօսքը բաւական է որ ամեն բան ասուած լինի և քեզպէսները գլխաբաց ու գլխակոր կանգնեն առաջիս: Սակայն կարիք չկայ այսպիսի ճշմարտութիւնների մասին խօսելու: Փոխանակ անմիտ ու ծիծաղելի նամակներ գրելու, աւելի լաւ չէ՞ որ իմ դէմ գանգատուի բարեկամդ:

—Ձի ուզում:

—Ձի ուզում... Ես նրան կըստիպեմ. որ սնտկի պիտի գանգատուի:

—Ձէ, չէ, չի գանգատուիլ, բայց նա քեզ կը յողթի:

—Ինձ ի՞նչպէս պէտք է յողթի, երբ դատարանի անունը լսելիս շան դողոցն է ընկնում:

—Այ, կը տեսնես:

—Ախ, այո. չէ՞-որ նա սպառնացել էր պապերիս նկարագիրը տալ: Ձեմ զարմանում. կան նստող, Մուգուրկան հաջող երկոտանի զրպարտիչ շունը ամեն տեսակ ստորութեան ընդունակ կարող է լինել... Այո, X հարուստից խնդրած դրամը մերժուելու համար՝ հասարակութեան տակա՞նք ստոր սրիկայի պէս

իբրև վրէժ մուրտառ պասկվիլներ յերիւրելով անմեղ ընտանիքներ վիրաւորողից ամեն բան սպասելի է: Բայց-և-այնպէս ոչ մի նկարագրով, ոչ մի սրամիտ պասկվիլով չի կարող հերքել, որ ինքը բարոյապէս ընկած չէ, այլանդակ հրէշ չէ, սալախանայ վարժապետ չէ: Եւ վերջապէս իմ պապերի հէրն էլ անիծած, եթէ վատ մարդիկ են եղել, իրա պապերի հէրն էլ անիծած, որոնք՝ ինչպէս երևում է, շատ վատ մարդիկ են եղել, ու դեռ իրա հէրն էլ անիծած, որ դրա պէս շանը աշխարհ է բերել: Այլ խելքի տոպրակ, ի՞նչ ունի սրտակից բարեկամդ իմ դէմ, յատկապէս իմ դէմ. անհամ ու մնամ հասակովս մին ձգուած, ճակատս բաց:

Մովսէսեանը՝ երևի իրան միայն յայտնի պատճառով, շատ վշտացաւ այդ խօսքերիցս և սկսեց այնպէս եռանդով պաշտպանել չակերտաւոր մանկավարժին, այնպէս տաքացած խօսել, որ գոյնը թռաւ, շրթունքները կապտեցին և սկսեցին դողդողալ:

— Տես, տես, Արտեմ. տես, թէ ինչպէս է այն երկոտանի քոսոտ-շանը պաշտպանում. սրա այս տեսակ ձրի փաստաբանութիւնը անհասկանալի է ինձ համար. այո՛, ուղղակի մի հանելուկ է: Մի՞թէ սա էլ նրա նման զգուելի անբարոյական է... Չեմ հաւատում, չեմ ուզում հաւատալ որ ազնիւ Լևոնիկիս հարազատը մի հրէշ լինի: Ինձ շատ է զարմացնում սրա վարմունքը... Սակայն սա միշտ արջի ծառայութիւն է արել սողմեցուն— իր սալախանայ բարեկամին, յոյս Աստուած, որ այս անգամուայ ծառայութիւնը արջային ծառայութիւնից էլ անցնի:

Մովսէսեանը այս անգամ արդէն բոլորովին իրան կորցրեց և սկսեց այնպէս խօսել, որ ես սրեւ բառը մբռնել այլևս չկարողացայ, այլ միայն Արտեմ Նազիրեանն սկսեց նրան յանդիմանել:

— Մի՞թէ ամօթ չէ, Գրիգոր. ինչո՞ւ ես այդպէս քեզ կորցնում. Լևոնը քեզ վատ բան չսաց, այլ լաւ խորհուրդ տուաւ, որ դու բարեկամիդ ասես՝ այդպիսի յիմար բաներ չգրէ և աւելի լաւ է լուռ մնայ: Ել նեղանալու ի՞նչ կար. եթէ նա քո հայրենակիցն է, չէ՞-որ սա էլ է. ինչո՞ւ ես նրան անտեղի կերպով պաշտպանում, իսկ սրան ի-գուր տեղը վշտացնում:

— Լաւ իմացիր, Գրիգոր, որ բարեկամդ իր այս յիմար ու անմիտ նամակով՝ ուրիշներին մասնաւոր— անձնական հաշիւներին մէջ ինքնազուլ խառնուելու անագնիւ վարմունքով ինքն իրա գլխին մի այլ մեծ բար գցեց: Այս ասածներս միտքդ պահիր. դու էլ, Արտեմ,— ասացի ու հեռացայ:

Տուն գնալով իմացայ որ Տէր-Եղնիկը ինձ կանչել է: Գնացի:

— Օրհնիր, Տէր. ի՞նչ կայ:

— Խնդրեմ իրաւունք տաս «Հովիւի» աշխատակցին, որ քո շտպուած նամակից օգտուի. ուզում է բան գրել սխալմամբ մարդ կոչուածի դէմ:

— Լիովին աշխատակցիդ տրամադրութեան տակն եմ դնում նամակս. կամենում է՝ թող ամբողջովին արտագրի:

Երեք-չորս օրից յետոյ «Հովիւի» № 22-ի մէջ լոյս տեսան հետևեալները.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Թիֆլիզ, Ս. Քամալեանցին.— Դուք «Ժայռ»-ում (№ 19) գետեղել էք տուել մի նամակ, որի մէջ ասուածը միանգամայն կապ չունի «Հովիւ» № 18-ի մէջ մեր գրածի հետ: Թէև ձեր պախարակելի արարքը ուսուցչական ասպարէզում, որ հրապարակի վրայ են գրել պ. Լևոն Մ.-Աղամեանցը և ուրիշները, այնքան են գցել ձեր վարկը հասարակութեան աչքում, որ դուք դարձել էք միայն արհամարհանքի արժանի:

մարդ, բայց մենք դարձեալ կը պատասխանենք: Դուք, պ. Ս. Ք., գրում էք, իբր-թէ ես պարծենում էի որ իմ շաբաթաթերթում աշխատակցում էիք: Ուղղակի հիւանդ երևակալութիւն: Ձեր գրածները ամիսներով ընկած են եղել խմբագրատանը, որոնցից միայն երկուսն են արժանացել տը պագրութեան «Հովիւի» անցեալ տարուայ №№-ում և ընթերցողներին յայտնի են, թէ ինչ զոգ են: Հետևապէս ես չէի կարող պարծենալ. ուրեմն դուք... պարծենկոտ էք և անազնիւ ստախոս, երբ ուզում էք այդ աստիճան համակրող ցոյց տալ ձեզ պ. Մանդինեանին: Մէջ բերելով մեր ունեցած մասնաւոր հաշիւը պ. Ս. Մանդինեանի հետ, դուք արջի ծառայութիւն էք արել նրան: Մենք «Հովիւի» հրատարակութեան գործի սկզբին խոստացել էինք մեր աշխատակիցներին վարձ տալ՝ ոմանց տողին 3 կ., ոմանց 2¹/₂ և ոմանց աւելի պակաս: Պ. Մանդինեանը սկզբում ստանում էր տողին 3 կ., բայց երբ «Հովիւը» նիւթական փաստ (դիֆիցիտ) ունեցաւ 1200 ռ. և այնուհետև դժուարացաւ վճարել իրա աշխատակիցներին խոստացած վարձատրութիւնը, բոլորեքեան սիրով հրաժարուեցան իրանց ստանալիքից, իսկ պ. Մանդինեանը դիմեց դատարանին և ստացաւ: Լաւ, սակայն այդ ամենը ինչ կապ ունի մեր այն ասածների հետ, որ դուք արժանի էք վանք մտնելու, ուր ազօթելով զուցէ կարողանաք՝ թէ ձեր մեղքերից թեթևանալ և թէ մեծամտութեան ախտից բուժուել:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիզ, 19 յունիսի.

Հայր-Խմբագիր.

Ինչ համոզմունք էլ որ կազմած լինիք բարոյապէս ըստ արժանւոյն պատժուած ու ամենքից արհամարհուած Ս. Քամալեանցի մասին, բայց-և-այնպէս կը խնդրէի «Հովիւի» առաջիկայ №-ում զետեղել նամակս յատկապէս այն մարդկանց համար, որոնք, ինչպէս երևում է, շատ թիւը հասկացողութիւն ունին այն ամենի մասին, որ բարոյականութեան կնիք է կրում իրա վրայ:

Մինչև հիմա չէի հաւատում, որ Ս. Քամալեանցը հոգեկան հիւանդութիւն է ստացել վերջերս ստացած բարոյական

ցնցումներից. այն, չէի հաւատում, թէպէտև իրա խոստովանութիւնը կարդացել էի. սակայն այսօր կարդալով «Ժայռի» № 19-ում այդ՝ իրա իսկ խոստովանութեամբ, հոգեկան հիւանդի նամակը, լիովին համոզուեցի, որ այդ մարդը ինչպէս բարոյապէս, այնպէս էլ մտաւորապէս այն աստիճան հիւանդ է, որ կարդացածի բուն միտքը չի ըմբռնում, ուստի-և անկարող է լինում յարուցած խնդրին ըստ էութեան պատասխանել, ինչպէս կատարեալ հոգեկան հիւանդ Պուրիշկևիչն ու Կրուշևանը Պետական Դումայում:

Դաշնակցութեան օրգանի—«Ժայռի» էջերում կարդալով այդպիսի մարդու նամակը, մտաբերեցի հայ ժողովրդի այն խօսքը, թէ «շունն ինչ է, անբան արարած շունն էլ այնքան էրես ունի (այսինքն՝ թասիբի, պատուի, նամուսի տէր է), որ եկեղեցի չի մտնիլ, եթէ գուռը կրնկի վրայ բաց իսկ լինի»:

Մտաբերեցի այդ և ամօթից կարմրեցի Դաշնակցութեան օրգանը խմբագրողների փոխարէն և սաստիկ ցաւ զգացի այն կուսակցութեան համար, որի հիմնադիրներէ աջ թևն էի, որի համար առանց վարձատրութեան, առանց մի կոպէկ ստանալու ահնկալութեան տարիներով գլուխս յետ և կեանքս վտանգի մէջ դրած աշխատել եմ լուիկ-մնջիկ, առանց սղմուկի, առանց թմբկահարութեան:

Եւ ինչպէս չկարմրել ու ցաւ չզգալ, երբ տեսայ շատ և շատ բան, հիմա ևս տեսնում եմ, թէ ինչպէս համակրութեան արժանի կուսակցութեան օրգանի ղեկավարները իբրանց թոյլ են տալիս թերթի էջերը կեղտոտել այնպիսի նամակներով, որոնց հեղինակի տեղը ոչ խմբագրութիւններն են, ոչ պատուաւոր հայ-ընտանիքները և ոչ էլ սրբավայր հայ-դպրոցը, այլ՝ ինչպէս ճիշտ նկատել էր «Հովիւ»-ի խմբագրութիւնը, որեւէ... յետ ընկած մի «վանքի խուց»:

Մի մարդու՝ «որից արհամարհանքի զգացմունքով երես են թեքել ընկեր-ուսուցիչները և իրանց ընկերական կապը կտրել նրանից, որի հեռանալն են պահանջել զպրանոցի սաները». պահանջ՝ որ բարոյական մահ է մի վարժապետի համար, և Ֆիդիքական մահը հազար անգամ լաւ է այդ տեսակ ապրելուց:

Մի մարդու՝ «որ այլևս իրաւունք չունի ուսուցիչ լի-

ներու, քանի-որ գտնվում է այնպիսի սոսկալի մեղադրանք-ների տակ, բայց քաջութիւն չունի դատարանին դիմելու» («Հովիւ» № 18):

Մի մարդու՝ «որի մշտական փեշակն է եղել», ինչպէս գրել է իրաւամբ պ. Զ. Գրիգորեանցը, «դիտաւորեալ ստեր հնարելով հասարակութեանը սխալեցնել»:

Մի մարդու՝ «որ երախտամոռ է և անազնիւ ստախոս» («Հովիւ» № 6 և 7):

Մի մարդու՝ «որ բերանը բաց է անում միմիայն ա-նազնիւ ստեր հնարելու, գրիչ է վերցնում, միմիայն լիտի ու զզուելի պասկվիչներ յերկրելու՝ խնդրած դրամական օգ-նութիւնը զոլուանքով մերժուելու համար»:

Մի մարդու, որի մասին գրում է պ. Լևոն Մ.-Ադա-մեանցը, թէ «նա (Ս. Քամալեանցը) այն տեսակ արարածներից է, որոնց անունը լոկ արտասանելն անգամ անարգանք ու ան-պատուութիւն է արտասանողի համար, ուր մնաց թէ գրի առնելը» («Զարկ» № 3 և 4, 1906 թ.):

Մի մարդու՝ «որ աննօրմալ հակման տէր է, որ պատիւ ասուած սրբազնագոյն գաղափարի մասին ամենաթոյլ հաս-կացողութիւն իսկ չունի (եթէ ունենար մինչև հիմա զիմած կը լինէր դատարանին)» («Հովիւ» №№ 8, 10 և 18):

Եւ հիմա (տեսէք աշխարհի քօռութեանը) մի այդպիսի եղակի հրէշային ներքին աշխարհ ունեցող մարդը, որպիսին է Սար. Քամալեանցը, վեր է կացել և գրում՝ բարոյականու-թեան, գրական բարբերի, արդարութեան ու ազնուութեան մասին... Փնօք Քեզ, Աստուած:

Բայց չէ՞-որ այդ մի լիրբ ծաղր է այդ սրբազան գա-ղափարների վերաբերմամբ, որոնց մասին, ինչպէս վերև ա-սուեց, ամենաթոյլ հասկացողութիւն անգամ չունի պարոնը: Եւ Ս. Քամալեանցի նման անբարոյական ու մտաւոր այլան-դակ հրէշը այդ և նման սրբապղծութիւնն անում է ռրտեղ-մամուլի մէջ և այն՝ փնօք շատ, Աստուած, մաքուր գա-ղափարական կոիւ վարող կուսակցութեան օրգանում:

Մի՞թէ ցաւալի չէ:
«Իրօշակի» մայիսի № 5-րդը համարեա ամբողջապէս արտատպեց «Ժայռը». էլ ինչ կարիք կար արտատպելու, երբ պէտք է գործով հակառակը ցոյց տային: Զէ՞-որ կու-

սակցութեան IV Ընդհանուր Ժողովը վճռել է գտել-մարքել կազմակերպութիւնը այն չունն ու գէլերից—սրիկայ ու կաս-կածելի վարքի տէր, ազնուութեան ու պատուի մասին թիւր հասկացողութիւն ունեցող անհատներից, որոնք իրանց չնչին ծառայութեան համար այժմ կերցաւ են դարձել դժբաղդ ժո-ղովրդի գլխին՝ թէ գիւղերում և թէ քաղաքներում...

Եւ եթէ դրամական ֆրաս տուողը կերցաւ է, հապա ռրպիսի սոսկալի ցաւ պիտի լինի մատաղ սերնդին բարոյա-պէս փչացնողն ու ֆրասողը: Մի՞թէ այդքանն էլ պարզ չէ «Ժայռը» խմբագրողների համար. մի՞թէ կարիք ունին Սար-գիս Քամալեանցի նման մի հոգեպէս հիւանդացած, մի այ-լանդակ բարոյականի տէր պասկվիլանտի համակրութեան և աշխատակցութեան, որով պարծենում է ողորմելի մեծա-միտը իրանմանակ անբարոյականների մօտ:

Այո, ցաւալի է. ուստի-և հրապարակով բողոքում եմ այդ կարիքի դէմ, որ զգուանքով ու զայրոյթով մերժել է կազմակերպութեան IV Ընդհանուր Ժողովը:

Կամ. Ա.

Մեր յարգելի մանկավարժ պ. Սեդրաք Մանգի-նեանը՝—որ միշտ եռանդագին պաշտպանում էր սխա-մամբ մարդ կոչուածին, հարկաւ ոչ նրա ձրի փաս-տաբանութեան կամ «փորացաւով» մի-մի անգամ իրան այցելելու համար, այլ լոկ բարութիւնից զրը-ղուած, —այդ երկու գրութիւնը կարդալուց յետոյ ոչ-միայն դադարեց իրա անուանն արատ բերող ան-փառունակ պաշտպանութիւնից, այլև մի օր լրջօրէն նկատեց.

—«Հովիւի» № 22-ի մէջ տպուածներից յետոյ եթէ Քամալեանցը փաստերը ձեռքին ուղղակի չգիմէ դատարանին, այլ նօրից սկսէ պատէպատ ընկնել—արգաբանալու նպատակով ձեր դէմ էլի ուրեք անմիտ ըան գրի ու հրատարակի, այդ ասել է թէ նրա մա-սին ինչ-որ գրել էք, բոլորն էլ ճիշտ է. հետևապէս

այսուհետև նա քարոյապէս ընկած մարդ կը լինի և հէնց այդպէս էլ կը մնայ ամենքի աչքում...: Այո՛, Քամալեանցը այլևս կորած մարդ կը լինի բարոյական հասարակութեան համար ընդհանրապէս և զըպրոցական ասպարէզի համար մասնաւորապէս:

Բայց որովհետև, զժբազդաբար, հասարակութեան անդամների հստ մեծամասնութիւնը շատ հեռու է Սեդրաք Մանգինեան լինելուց, հետևապէս զուրկ իրերը իրանց իսկուկան գոյնով տեսնելու, նոյնութեամբ ըմբռնելու ընդունակութիւնից և զրա համեմատ էլ իրանց համար անհրաժեշտ հաստատ ու որոշ կարծիք և համոզմունք կաղմելու շնորհքից, ահա այդ իսկ պատճառով՝ Քամալեանց Ս.-ի անբարոյական լինելու մասին այդպիսիների մօտ մնացած մանանխի հատի չափ թերահաւատութիւնը ևս փարատելու նըպատակով ստիպուած եմ՝ ստորև առաջ բերել՝ վերի բոլոր գրածներս հաստատող և նօտարական կարգով վաւերացնող հետևեալ երեք նամակը.

I

Յարգելի Հետն!

Ներփակեալ կըստանաք երկու նամակ, որոնցից մինը ուղղած եմ իմ նախկին արուստու-ուսուցիչ, այժմ մուրտառ պատկիլանտ Շմեղ-Քամալեանց Ս.-ին, իսկ միւսը՝ «Արօրի» խմբագրութեան, որով խնդրել էի նամակ տպագրել անփոփոխ:

Եւ որովհետև խմբագրութիւնը յայտնեց թէ չի կամենում Քամալեանց Ս.-ի նման մի պատուազուրկ մարդու մասին այլևս բան տպագրել իրանց թերթում *), իսկ Դուք, ինչպէս լսեցի յարգելի Պ. Ա. Յ.-ից, Ձեր դալդի պատասխան էք տալու մեր գիւղի երիտասարդութեանը անպատուութիւն բե-

*) Նոր խելքի եկան: Ոչինչ, լաւ է ուշ, քան երբէք:
Լ. Մ.-Ա.

րող սալախանայ վարժապետին, այդ պատճառով լաւ եմ համարում այդ երկու նամակս էլ Ձեզ յանձնել:

Լիովին իրաւունք եմ տալիս Ձեզ այդ նամակներին հետ վարուել այնպէս, ինչպէս Դուք յարմար և բարւոք կը դատէք՝ զգուելի արուստուին բոլորովին դիմակազուրկ անելու համար, որպէսզի զոնէ այսուհետև չկարողանայ անմեղ երեսխանց անբարոյականացնել:

Մնում եմ միշտ յարգանքով դէպի Ձեզ՝
Պ. Բ. Շ. *)

9 սեպտ. 1907 թ.
Թեֆլիզ:

II

«ԱՐՕՐ» ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Խնդրում եմ՝ այս բաց նամակ տպագրէք «Արօրի» ժողովայն համարներից մէկում անփոփոխ. հակառակ դէպքում վերադարձնել ինձ:

Յարգանքով՝ Պ. Բ. Շ. *)

6 սեպտ. 1907 թ.
Թեֆլիզ:

III

ԲԱՅ ՆԱՄԱԿ Պ. ՄԱՐԳԻՍ ՔԱՄԱԼԵԱՆՇԻՆ

Կարդացի, պարոն, ձեր հրատարակած «Ինչո՞ւ էք հերստտել» և այլն բրօշիւրը և՛ ուղիղն եմ ասում, զգուեցի. որովհետև մարդ չի հասկանում թէ իսկապէս ինչ էք կամեցել ասել այդ ողորմելի բրօշիւրով: Միթէ այն՝ որ պ. Լևոն Մ.-Սդ.-ը չի լսում: Բայց ինչ կապ կայ նրա չլսելու և ձեր մուրտառ պատկիլանտ ու զգուելի արուստու լինելու մէջ: Ամօթ՝ ձեզ:

*) Ճշմարտութեան նախանձախնդիր այդ քաջ երիտասարդը թէև ստորագրել է իրա անունն ու ազգը և դէմ չէր տպելուն, սակայն ինքը բարւոք եմ համարում այդ ստորագրութիւնը դնել: Լ. Մ.-Ադ.

Յարգելի Լևոնի խնամքով խնամքով անհատական ցաւ չէ իրա համար, այդ դժուար էլ շատ լաւ գիտէք, պարոն չարկերտաւոր մանկավարժ, որքան ցաւ ու խայտառակութիւն է ձեզ համար այն՝ որ հրապարակով, մամուլի մէջ ձեզ ասում են, թէ դուք անազնիւ, աւելի ճիշտը՝ մուրտառ պատկաւով իմանալ էք եւ անամօթ արուամուր:

Պարզ է թէ դուք ձեր այդ ողորմելի բրօշուրով կամեցել էք հասարակութեան աչքին թող փչել ըստ ձեր հնաւանդ սովորութեան, կամ ինչպէս գրավածառ պ. Զաք. Գրիգորեանցն էր ճիշտ նկատել՝ դուք ձեր սիրած հին փէշակն էք ըմբարտել, կամեալով հասարակութեանը սխալեցնել: Փոխանակ որ համոզիչ փաստեր առաջ բերէիք ապացուցանելու մամուլի մէջ ձեր վրայ բարձած մեղադրանքների անհիմն լինելը, դուք ձեր բրօշուրով աւելի հաստատեցիք, որ յարգելի Լեւոնի ընդ որ զրաճնները ձեր մասին զուտ ճշմարտութիւններ են՝ շատ մեղմ ձեռով ասուած:

Նախ՝ իսկ-և-իսկ պատկաւի է ձեր բրօշուրը, որորովհետև դուք ամենևին իրաւունք չունէիք ուրիշի մասնաւոր նամակները հրատարակելու, այն էլ սովորեալ թէ ինչ ձեռով, քանի-որ մամուլի միջոցով հասարակութեանը միշտ խաբելը ձեր սիրած մշտական փէշակն է եղել, ինչպէս գիտեն ընթերցողներից շատերը և թէ մեր գիւղացիք: Տարիներով արտասահմանում եղողը եթէ շատ բան չսովորէր, այդքանը պէտք է որ հասկանար, և կամ գոնէ ձեր սովորած աստուածաբանութիւնը պէտք է ձեզ թելադրէր այդ բանը:

Երկրորդ՝ մերկապարանոց ճշմարտութիւնից այն-

քան մեծ է եղել ձեր շփոթութիւնը, որ ձեզ արդարացնելու համար փոխանակ անհերքելի փաստեր առաջ բերելու, դուք միայն պատէպատ էք ընկել, նոյնիսկ հանգուցեալներին անհանգստացրել և այնքանն էլ չէք նկատել, թէ ինքներդ ձեր բերանով հրապարակով խոստովանվում էք ձեր զգուշի մեղքերը: Միայն ափսոս որ չէք հասկացել, թէ պարզապարզոյ խոստովանուելով, աւելի խելօքութիւն և թէ կեանքիդ մէջ գոնէ մի ազնիւ քայլ արած կը լինէիք, քան այդ նոր յիմար քայլն անելով:

Արդեօք ինչ բաւականութիւն է միշտ այդպէս ասել, զրպարտութիւններ ու յիմարութիւններ գրելը:

Առաժն ասում է՝ «Մզրազը ջրալում չի ծածկուիլ»:

Իսկ ձեր քարոզած Աւետարանն էլ ասում է՝ «Զի ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեացի»:

Ես՝ որպէս ձեր նախկին աշակերտ, ահա յայտնում եմ հրապարակով ի-լուր ամենեցուն, որ մեր սիրելի հայրենակից Լեւոն Մելիք-Աղամեանցի ձեր վրայ բարձած բոլոր մեղադրանքները դպրոցական ասպարիզում կէտ-առ-կէտը ճիշտ են, ինչպէս-որ ճիշտ է թէ՛ $2 \times 2 = 4$ ին: Եւ որովհետև յարգելի Լեւոնը մեզ ամենքիս, իսկ ձեզ աւելի ևս, յայտնի է իբրև ազնիւ և միայն ճշմարիտը խօսող մարդ, ցիրեկուայ լոյսի պէս պարզ է թէ նրա միւս բոլոր մեղադրութիւնները ևս ճիշտ են: Հետևապէս՝ կրկնակի ամօթ ու նախատինք ձեզպէս անպիտան ուսուցչին և խարդախ գրագէտին:

հարկը պահանջած դէպքում պատրաստ եմ ուր հարկն է անձամբ անձին ներկայանալ և անտառակելի փաստերով հաստատել վերի բոլոր գրածներս:

Սակայն մի բան ինձ շատ է զարմացնում, պարոն սողոմեցի, թէ ինչո՞ւ մինչև այժմ դեռ վարդապետ չէք ձեռնադրուել, որովհետև դուք... իսկապէս վարդապետացու էք:

1888 թուականի ձեր աշակերտ:

6-ին սեպտ. 1907 թ.
Թիֆլիզ

Ասել է թէ կէտ-առ-կէտ ճիշտ է եղել տարիներ առաջ բարեկամիս գրածը, որ այդ սխալմամբ մարդ կոչուած՝

«Քամալեանց Սարգիսը իր կեղտոտ վարքով իւրաքանչիւր մանուկ աշակերտի անարատ հոգու մէջ անբարոյականութեան թոյն է կաթեցրել՝ մինի վարքն առատաւորելով, միւսի քաղցր վստահութիւնը հէնց օրրանում խեղդելով, մէկին ընկերական շրջանին իսպառ հաշմանդամ դարձնելով, միւսի ունեցած անկեղծ հաւատը մեղցնելով...»:

Եւ այդ տեսակ զազրելի սխրագործութիւններ կատարող անփառունակ «ուսուցիչը», այդ անարգ արարածը փոխանակ ամաչելու և ամօթից գետինն անցնելու, ընդհակառակը դեռ յանդգնում է իրանից բարոյապէս հարստահարուած աշակերտներից ակնածութիւն ու պաշտպանութիւն ակնալել, կամ իրանից միշտ խաբուած հասարակութեան աչքին թող փչելու համար ճառել՝ ազնութեան, արդարութեան, մամուլի, զրական բարքերի, խղճի, մարդկային պատուի, ճշմարտութեան և այլ վեհ գաղափարների մա-

սին, որոնց միշտ հակառակ է գնացել իր ողջ կեանքում:

Մի՞թէ ցերեկուայ լոյսի պէս պարզ չէ, որ այդ նստովից արմատ սողոմեցին ինչ-որ եղել է մի տեղ, նոյնը եղած պէտք է լինի նաև ուրիշ տեղեր, որքան էլ՝ «Լումայի» վերջին Ռ-ում տպուած «Իպրոցները էլ՝ «Լումայի» վերջին Ռ-ում տպուած «Իպրոցները փակուելու օրերից» յիշողութիւնների նման կեղծ, շինծու, բռնազբօսիկ, սրամայ լինելու չափ միտումաւոր գրութիւններով հասարակութեան աչքին թող փչել ճգնի: Ա. փսոս «Լումային»:

Միայն հետաքրքիր է՝ մոռացել է թէ՞ դիտմամբ չի բացականչել՝ «Աւանդ, փառացս «մանկա... վարժի»... նզովք, նզովք, այդպէս շուն «ուսուցչին» և խարդախ «գրագէտին»:

Իսկ բիւր ամօթ այն հասարակութեան և մամուլին, այո՛, մանաւանդ մամուլին, որոնք հանդուրժում են այդպէս հրէշին:

Ո՛վ իմանայ թէ 1888 թուականի ճշմարտասէր ազնիւ աշակերտի նման քանիսը կան, որոնք սակայն շնորհք ու քաղաքացիական քաջութիւն չունին, որ հրապարակ դուրս գալով անմեղ մանուկների բարոյականը այլանդակող՝ աշխարհական թէ հոգևորական երկրոտանի հրէշների անամօթ երեսներին թքնէին և խայտառակութեան ու նշանակութեան սիւներին դամէին:

Սակայն որքան լաւ կը լինէր, եթէ ճշմարտութեան անկեղծ բարեկամ այդ ազնիւ աշակերտը ամեն տեղ շատ հետևողներ ունենար. այն-ժամանակ սխալմամբ մարդ կոչուած Քամալեանց Ս.-ի նման խայտառակ բարոյականի տէր անարգ արարածները՝ տե-

սուչ, ուսուցիչ, վերակացու, չքահանայ, վարդապետ, գերապատիւ և թէ արհի դժուար-թէ կարողանային գոյութիւն ունենալ մեզանում:

Եթէ խաչն իմն է, գօրութիւնը ինձ է յայտնի. ես շատ լաւ եմ ճանաչում մեր հասարակութեանը, աւելի ևս մեր հասարակական ամեն տեսակ գործիչներին. ուստի-և գիտեմ, թէ ինչ տեսակ-տեսակ փաստներ եմ կրելու այս խիզախ ճշմարտախօսութեանս համար: Սակայն պարծանքով աւելի գերադասում եմ ճշմարտութեան լիակատար յաղթանակի համար ամեն տեսակ փաստ կրել, յիմարներից ու անբարոյականներից խելագար կոչուել, քան իմ օգուտի գնով ճշմարտութիւնը փաստելի թէկուզ ամենափոքր չափով:

Այժմ ինքնաբերաբար հետևեալ բնական հարց է ծագում.

Արդեօք ի՞նչ շահեց անմեղ աշակերտների այդ չար հրեշտակը դէսուդէն հաջալուց և զգուելի ամբարհաւածութեամբ ծիծաղելի նամակներ տպելուց յետոյ էլ՝ ստերով, կեղծիքներով և խեղաթիւրած փաստերով իրա պասկվիլ-բրօշուրը հրատարակելով: Միթէ արժէր ծտի-խելքով Խուստի-բէգերին ու նմաններին հորթային ուրախութիւն պատճառելու համար այդ անմիտ քայլն անել:

Այո, ի՞նչ շահեց այդ սխալմամբ մարդ կոչուածը: Հինգ բան:

Նախ՝ «Հովիւ» շաբաթաթերթի հետևեալ գրածը.

«Թիֆլիզ, Գ. Հ. Թ...ին.—Դուք գրում էք, որ Քամալեանց Սարգիսը մի բրօշուր է հրատարակել, որի մէջ, իմիջի այլոց, խօսքեր է շարտել և մեր հասցէին: Մենք «Հովիւ» մէջ այդ պարոնին էլ չենք արժանացնիլ պատասխանի. իմացողին մէկ, չիմացողին հազար, այլ Ձեզ կ'ասենք՝ ոչ-թէ բրօշուր, այլ եթէ 12 հատոր գրքեր շարադրէ, դարձեալ չի կարող արդարանալ: Դատարան կամ խնաց, անն թէ ուր նա կարող է քաւել իրա վրայ բարդուած յանցանքները»:

Երկրորդ՝ Գրիգոր Բալասանեանի նորերս հրատարակած Չաջախիչ պատասխանը՝ «Հեռու փախիր գրական խուլիզանից» վերնագրով գրքոյից:

Երրորդ՝ իր շուն-«ուսուցիչ» լինելը հաստատող՝ նախկին աշակերտներից մէկի հրապարակով վկայութիւնը, որ բարոյական մահ է մի ուսուցչի համար և աւելի սոսկալի, քան տանջալից Ֆիզիքական մահը:

Չորրորդ՝ հասարակութեան սպանիչ ծաղրը, որ արդէն փոխուել է արհամարհանքի ու զգուանքի, այդ մուրտառ սողոմեցու՝ խելքից-մաքից վեր, արմանք-զարմանք պնդերես ու անամօթ լինելու պատճառով. և

Հինգերորդ՝

Այս անհերքելի փաստերով ու անառարկելի փաստաթղթերով զերքս:

(Լի-ու-լի բարի վայելումն քեզ այդ ամենը, ո՞վ դու՝ անմեղ մանուկների անգին բարոյականը սպանող Քամալեանց Սարգիս. քո յանցանքն այնքան շատ է և այնպէս մեծ, որ դու պարտաւոր ես՝ իբրև մեղապարտ ներողութիւն խնդրել և չօքած մեղայ

16. «Վրէժ», Գի դը-Մօպասանի և «Հիւանդապահ» աղջիկը», Ֆր. Կօպպէի, ժողովրդական.	} թիֆլ. հրատ. 5 կ.
17. «Երկրաշարժ և հրաբղխային լեռներ», ժողովրդական:	
18. «Գիւղական վարժուէի», ժողովրդական.	25 »
19. «Հայրենասէր վարժապետը», ժողովրդ.: (Սպանուած)	5 »
20. «Իգնատիոս Լոյսլա» (իրա պատկերով), ժողովրդ.	30 »
21 «Տրիլբի», գրամա չորս արարուածով: (Հրատար. Գ. Գալստեանի).	25 »
22 «Ոգեհարցութիւն (Spiritisme), թատերգութիւն 3 արարուածով	50 »
23. «Երեք վէպիկ»—ա. Մայրական սէր, բ. Առանձին և գ. Վրէժ, երիտասարդների համար: (Սպանուած).	20 »
24. «Իմ պատասխանը բարոյապէս ընկած և ամենքից արհամարհուածին	50 »

Վերոյիշեալ գրքերը ձեռք բերել փափազողը թող դիմէ
Թիֆլիզի գրավաճառներին. իսկ 10, 11, 12, 22 և 24
գրքերի համար նաև Բազուլի և Երևանի գրախանութներին:
Այդ վերջին գրքերի համար ուղղակի ինձ դիմողը Մեծ
ԶԻՉՈՒՄՆ կըստանայ:

Իմ հասցեն՝ Тифлис, Орбелиановская ул. д. № 24.

Левону Вардани Меликъ-Адамянь

« Ազգային գրադարան



NL0385026

66